

ԱԼԲԵՐՏ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ  
ALBERT A. STEPANYAN

# ARMENO - CLASSICA

ԶՈՒԳԱԿՇԻՈՒ  
PARALLELS





**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԱԼԲԵՐՏ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ**

**ARMENO – CLASSICA  
ԶՈՒԳԱԿՇԻՌ**

•

**Գաղափար  
Մեկնություն  
Հասկացում**

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2024

YEREVAN STATE UNIVERSITY

ALBERT A. STEPANYAN

ARMENO – CLASSICA  
PARALLELS

•

Idea  
Interpretation  
Comprehension

YEREVAN  
YSU PRESS  
2024

Հրատարակության է երաշխավորվել  
ԵՊՀ գիտական խորհրդի կողմից:

**Գրախոսներ՝**  
**Սմբատ Խ. Հովհաննիսյան,**  
**Տիգրան Ռ. Եփրեմյան**

**Խմբագիրներ՝**  
**Դավիթ Վ. Պետրոսյան,**  
**Լիլիթ Ռ. Մինասյան**

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63  
Ս 887

Ա. Ա. Ստեփանյան  
Ս 887 ARMENO – CLASSICA ՉՈՒԳԱԿՇԻՌ / Ա. Ստեփանյան.–  
Եր.: ԵՊՀ, 2024.– 368 էջ:

Մենագրությունը խնդիր ունի լուսաբանելու հայոց մտահոգևոր առնչությունները անտիկ (հունահռոմեական) միջավայրի հետ: Պարառում է պատմական տարբեր դարաշրջաններ՝ սկսյալ դասական Աթենքից մինչև անկում ապրող Հռոմեական Հանրապետություն և վաղ միջնադարյան Հայք: Բովանդակային առումով համաբերում է իմաստասիրության և պատմության, սոցիալական խաղի և թատրոնի, պատմագրության և ազգային ինքնության տարակերպ հարացույցներ: Այս մոտեցումներն էլ պայմանավորել են մենագրության կառույցը բաղկացած երեք տիպաբանական հանգույցից՝ «Իմաստասիրություն և պատմություն», «Ընկերային խաղ, թատերայնություն և պատմություն», «Իմաստասիրությունը պատմության համաձիրում»: Այս դիտանկյունները դիմավորված են անցյալի ականավոր դեմքերով, որք ներգրավված էին Արևմուտքի ընդհանրական մտահոգևոր պլագմայում՝ Պյոտինոս և Մովսես Խորենացի, Պերիկլես–Սոկրատես և Արտավազդ Բ, Սալլուստիոս և Եղիշե: Նրանց հանդիպման հարթակը արդի հետազոտողի հակառակ հեռանկարն է՝ ունակ հարթահարելու պատմական ժամանակի և տարածության առարկայական սահմանները:

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63

ISBN 978-5-8084-2670-2  
DOI: <https://doi.org/10.46991/YSUPH/9785808426702>

© ԵՊՀ հրատ., 2024  
© Ստեփանյան Ա., 2024

*In memoriam Prof. Grigori Areshiani,  
amici clarissimi.*

*“What we should lament is not the loss of houses or  
of land, but the loss of men’s lives. Men come first;  
the rest is the fruit of their labour.”*

*Thucydides, Peloponnesian War, I, 143, 5*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## CONTENTS

<b>Նախաբան</b>	
<b>Introduction</b> .....	9
<b>Հանգույց Ա Իմաստասիրություն և պատմություն</b>	
<b>Part I      Philosophy and History</b> .....	19
Պլուտինոս. տիեզերական թատերախաղի հանդիսատեսը.....	20
Narrative Fiction in Moses Khorenatsi (A conceptual perspective).....	90
<b>Հանգույց Բ Ընկերային խաղ, թատերայնություն, պատմություն</b>	
<b>Part II      Social Play, Theatricality, History</b> .....	137
Play and Theatricality in Classical Athens (Plots, masks, and characters).....	138
Tragedy and the Interpretation of the Historical Present (The experience of Artavazd II).....	193

<b>Հանգույց Գ Իմաստասիրությունը պատմության համաձիրում</b>	
<b>Part III Philosophy in History</b> .....	223
Սալլուստիուս. հանրապետական Հռոմի ճգնաժամը (ներկայի, անցյալի և հնարավոր ապագայի լույսով) .....	224
Narrative Fiction in Elishē Vardapet: “About Vardan and the Armenian War” .....	282
 <b>Մակարան</b>	
<b>Epilogue</b> .....	312
 <b>Մատենագիտություն</b>	
<b>Bibliography</b> .....	319
 <b>Հակիրճանք</b>	
<b>Abbreviations</b> .....	350
 <b>Դասիչ</b>	
<b>Index</b> .....	355





## ՆԱԽԱԲԱՆ

Մենագրությունն այս երկարամյա աշխատանքի արգասիք է. սկսել է ուրվագծվել ավելի քան քսան տարի առաջ: Եվ ավելի շատ՝ անդրական, քան հստակ ստեղծագործական մղումով: Հընթացս աշխատել ենք տարբեր հետազոտական տիրույթներում՝ պատմություն և պատմագրություն, պատումագիտություն և իմաստասիրություն՝ դասական Հունաստանի, հելլենիզմի, Հռոմի, վաղ միջնադարյան Հայքի պատմանյութի հիմամբ: Այս նույն ծիրի մեջ ներբերել ենք նաև պարսից (հատկապես գրադաշտական) ու ասովա-ծաշնչյան նյութը:

Մեկնակետը այն մտահոգևոր պլագման է (պատմական իրականություն, արժեքանություն, տեխնոլոգիաներ, ազգային ինքնություն), որի ծիրում ծավալվում են անցյալը, ներկան և ուրվագծվում ապագայի ինչ-ինչ հատկագծեր: Հիմնախնդրին հետամուտ՝ որդեգրել ենք հետազոտության համադրական ուղին՝ խնդիր ունենալով ի մի բերել հիշյալ տիրույթների կարևորագույն ձեռքբերումները: Հանդերձ այսու, մեր սևեռումի խնդիրը, հարկավ, մնում է հայոց ինքնությունն իր պատմական տարակերպերով. համոզված ենք, որ նման մոտեցումը հնարավորություն կընձեռի դրանց ընդհանրական ընկալման: Եվ դա էլ իր հերթին ի գորու է բացահայտելու պատմական տեքստերի մեկնության և հասկացումի նոր հնարավորություններ: Անցած տարիների փորձը համոզում է, որ այս մոտեցումն ունի անժխտելի հեռանկար:

Արդ, որոշել ենք կատարել հաջորդ քայլը՝ *հետազոտության համադրական մեթոդը* վերաձևակերպել իբրև *հետազոտության առարկա* և հարադրել անտիկ ու հայոց մի շարք պատմական նշանակալից իրողություններ ու տեքստեր: Ավանդական պատմության հոլովությունում դրանց հանդիպման հնարավորությունն անհավանական–աննշան է, սակայն միանգամայն հնարավոր՝ անդրական ընկալման պարագային: Իսկ դա պահանջում է պատմության խաղընթացի ինչպես համաբերողի, այնպես էլ հանդիսատես–դիտարկողի (կամ ընթերցողի) նոր կերպար: Նրանց պետք է առանձնացնի մի կարևոր հատկանիշ՝ երկխոսային կապը պատմանյութի նկատմամբ: Հուսկ նրանց հակառակ հեռանկարը (գիտելիք, մտավոր փորձառություն, հետազոտական ճաշակ) պետք է հույժ ներունակ լինի, զի պահանջվում է տիպաբանական և համակարական (սիմպաթետիկ) հարաբերությամբ ազուցել դեպքեր, դեմքեր, իրադարձություններ, որոնք պատմականորեն հեռու են միմյանցից: Եվ նման գործառույթը անհրաժեշտություն է, զի հնարավորություն է տալիս բացահայտելու նկարագրական պատմության աներևույթ–անդրական կողմերը: Մի բան, որ արդ՝ ճանաչվում է իբրև հետազոտության կարևորագույն խնդիր:

Ավելի առարկայական անդրադարձով՝ խնդիր ենք դրել մենագրությունում համաբերելու տիպաբանական երեք հանգույց՝ վերտառելով դրանք «Իմաստասիրություն և պատմություն», «Ընկերային խաղ, թատերայնություն, պատմություն», «Իմաստասիրությունը պատմության համաձիրում»:

Մենագրության *առաջին իմաստային հանգույցը* միավորում է երկու հետազոտական ակնարկ՝ հեղինակված Պլոտինոսի և Մովսես Խորենացու կողմից: Պլոտինոսը Զ. հ. 3-րդ դարի ակնավոր մտածող էր, որ նպատակ էր դրել հաղթահարելու ժամանակի հիմնական իմաստասիրական դպրոցների հարյուրամյակներ տևող հակասությունները տիեզերքի, մարդու, ընկերային կյանքի այլևայլ հիմնահարցերի շուրջ: Արդյունքներն ամփոփված են իր «Էնենտադների» վեց հատորներում: Անհավանական այս խնդրի լուծման ճանապարհին ստեղծել է մտածական մի մեզահամակարգ, որտեղ ստղիկները, ակադեմականները, պերիպաթետիկները, էպի-

կուրականները և այլք (հանդերձ իրենց տարասեռություններով) երկխոսում են գոյակարգի և բարոյական արժեքների, մարդկային բանականության և համակեցական ձևերի շուրջ: Պոտինոսը դիտարկում էր տիեզերքը և մարդ էակին համընդհանուր մտահոգևոր շարժման հոլովություն՝ սկսյալ առտնին–նյութականից մինչև աստվածային–հավերժականը: Նաև՝ հակընդդարձ ուղղությամբ: Համաձայն իմաստասերի՝ այս շարժումը հակակշռում էր տիեզերքի պատկերի անշարժությանը և հաղորդում նրան կենդանություն:

Քրիստոնեությունը որդեգրեց այս համակարգը, շնորհիվ որի Աստվածաշնչի առասպելաբանական և ալգորիթմիկ իմաստությունը ձեռք բերեց իմաստասիրական ապացույցի հմայք ու խորություն: Կենդանի Աստված, Որդին և սբ. Հոգին կենդանի տիեզերքի նախահիմքերն էին այլևս: Եվ այս ըմբռնմամբ առանձնանում էին Աղեքսանդրիայի և Կապպադոկիայի հոգևոր հայրերը, որոնց ազդեցությունը հայոց քրիստոնեական մշակույթի վրա աներկբա է:

Մովսես Խորենացին այս աներկբա ազդեցության ծնունդն է: Ապրել և ստեղծագործել է 5–րդ դարում, շարագրել է «Պատմութիւն Հայոց» երկասիրությունը, որի առաջնահերթ նպատակն է համաբերել հայոց պատմական ուղին՝ սկսյալ աստվածաշնչյան ջրհեղեղից մինչև իր օրերի ընկերային քառոր, որ պայմանավորված էր հայոց պետության անկմամբ (428 թ.): «Քառսից քառս» հանուր շարժման ծիրում էլ ծավալվում է պատմության հոլովույթը, որի ալգորիթմը համադրելի է նորպլատոնական մտահոգևոր շարժմանը՝ նյութականից դեպի աստվածայինը: Դրանում կողավորված է հայոց փրկության գաղափարը ըստ ռետրո–հելլենիստական (կամ մտավոր–քրիստոնեական) մշակութային հարացույցի: Այս լույսով «Պատմութիւն Հայոցը» նկատվում է իբրև տվյալ գաղափարի մարմնավորում: Իսկ նրա հեղինակը ներկայանում է իբրև հայոց պատմական ուղին ուղենշող մտավորական հանգույն մի նոր Մովսեսի:

Մենագրության *երկրորդ ինաստային հանգույցը*, ինչպես հատկանշել ենք, վերաբերում է ընկերային խաղին, թատերայնությանը և պատմությանը: Մեկնակետը ընկերային խաղի տեսությունն է: Այս հանգույցը նույնպես բաղկացած

է երկու հետազոտական ակնարկից: Առաջինը միտված է դիտարկելու հիմնախնդիրը դասական Աթենքի օրինակով: Մեկնարկում է այն գաղափարից, որ մշակութային ու քաղաքական նշանաբանության առումով Քաղաքի տարածքը բաղկացած էր չորս տարասեռ հատվածից, որք նույնական էին ընկերային պահվածքի և մտածողության չորս բևեռներին՝ Արեուպագոս, Ագորա, Ակրոպոլիս և Դիոնիսական թատրոն:

Դրանք համապատասխանաբար ներկայացնում էին ընկերային պահվածքի ազնվապետական, ժողովրդավարական և քարիզմատիկ-մենիշխանական տեսլականները: Իսկ թատրոնը դրանց համադրելիության և հավասարակշռության միջավայրն էր: Աստ տարասեռություններից հյուսվում էր ողբերգական խաղընթաց, որի մաքրագործությունը (կատարսիս) աներկբա աղերս ուներ *Պերիկլյան դարաշրջանի* հետ: Պատմական մի կարճ ընթացք (Ք. ա. 450-430-ականներ), երբ Ագոբայի շուրջ համախմբվեցին մնացած բևեռները:

Հետազոտողներն ավանդաբար այն բանաձևում են իբրև ժողովրդավարության բարձրակետ: Սակայն իրականությունն ավելի բազմաշերտ է. թերևս ճիշտ կլիներ խոսել, այսպես կոչված, *խառն վարչակարգի* մասին՝ ժողովրդավարություն ականավոր անհատի (և նրա մերձավոր շրջապատի) առաջնորդությամբ: Եվ իրավիճակն ուներ երկու դիմակ. մեկը՝ ընկերային և քաղաքական, մյուսը՝ բարոյական և իմաստասիրական: Առաջինը պատկանում էր Պերիկլեսին, իսկ երկրորդը՝ Սոկրատեսին: Միմյանցից տարբեր անհատականություններ, որք, սակայն, խոսում էին քաղաքացիների իրավաբարոյական համարժեքության մասին և գոհ գնացին իրենց իսկ գաղափարին:

Այս հանգույցի մյուս հետազոտական ակնարկը վերաբերում է Արտավազդ Բ-ի դարաշրջանի Մեծ Հայքին (Ք. ա. 55-34 թթ.): Հիմնագաղափարն առնչվում է թատրոնին՝ ներմուծված այս երկիր ըստ հելլենիստական տարակերպի: Այս առումով հատկանշելի է հետևյալ իրողությունը. ի տարբերություն դասական թատրոնի՝ հելլենիստականը գործառում էր հույժ աստիճանակարգված ընկերային միջավայրում և խնդիր չէր հետապնդում իրավաբարոյական խթանով հա-

մահարթելու ընկերային տարասեռությունները: Ընդհակառակը, կոչված էր շեշտադրելու դրանք: Կապը հունական մշակույթի հետ առանձնահատուկ հասարակական կարգավիճակի ցուցիչ էր:

Հելլենիստական Մեծ Հայքի երկու մայրաքաղաքներում (Արտաշատ, Տիգրանակերտ) կար թատրոն, որտեղ ներկայացում էին տալիս հույն շրջիկ թատերախմբերը: Հատուկ դեպքերում ներկայացումներ կազմակերպվում էին նաև արքայական դոլյակում: Դրանցից մեկի մասին, շնորհիվ Պլուտարքոսի, ունենք հավաստի տեղեկույթ: Հավաքված էր հայոց և պարթևաց ընտրանին, տոնում էին հայոց արքայադստեր և պարթև արքայազնի հարսանիքը: Բայց ավելի կարևոր էր Մ. Կրաստուսի պարթևական արշավանքի անփառունակ ավարտի արվեստական հաստատագրումը (Ք. ա. 53 թ.): Եվրիպիդեսի «Բաքոսուհիների» խաղընթացի հմուտ խմբագրմամբ Արտավազդ արքան բանաձևում էր այն միտքը, թե Մայր Հռոմը պատասխանատու չէ իր գավակի անփառունակ մահվան համար. նա գործել է ըստ իր ընչատենչ մղումների: Հայամ՝ սխալի չնչին հավանականությամբ կարող ենք պնդել, որ արքայի արվեստական հնարքը խորքային իմաստով ուղերձ էր հռոմեական, պարթևական և հայկական ընտրախավերին՝ վերականգնելու խաթարված status quo-ն:

Մենագրության *երրորդ իմաստային հանգույցը* նպատակ ունի բացահայտելու իմաստասիրության դերակատարությունը պատմության համատեքստում: Այս պարագային այն պատմական գրույթի ներքին–անօտարելի բաղկացուցիչն է դառնում և օգնում խուսափելու նրա նկարագրական տաղտուկից: Հետազոտական նման մոտեցումը ներկայացված է երկու ակնարկով՝ նվիրված երկու ականավոր պատմագիրների փորձառությանը: Մեկը Ք. ա. 1–ին դարի հռոմեական պետական գործիչ, իմաստասեր, պատմագիր Սալլուստիոսն է, մյուսը՝ Ք. հ. 5–րդ դարի հայ քրիստոնեական մտավորական, իմաստասեր և պատմագիր Եղիշեն: Բացի պատմագագացողության իմաստասիրական հենքից՝ նրանց միավորում է մեկ այլ հատկագիծ ևս. նրանց հետազոտական սևեռումի առարկան ընկերային ճգնաժամն է: Եվ խնդիր

ունեն ուրվագծելու այն ուղին, որով հնարավոր է հաղթահարել դա:

Սալլուստիուսի պարագային խոսքը Հանրապետության համակարգային քայքայման մասին է, որն ընդգրկում էր նրա կառույցի բոլոր հարթակները: Հեղինակը դա նկարագրում է ամենայն մանրամասնությամբ, հետևողականությամբ և ավաղելի ներհայացով: Հայսմ նա լիովին առանձնանում է հռոմեական այլ պատմագիրներից: Հետազոտողներից ոմանք նրա գրություն տեսանում են ողբի աներկբա հատկագծեր:

Ասվածը նախ և առաջ Սալլուստիուսի «Կատիլինայի պատերազմի» մասին է: Արդի եզրաբանությամբ՝ այն *կենսապատմություն* ժանրին է պատկանում: Այսինքն՝ միտված է պատմության կարճ տևողության մեջ բացահայտելու նրա ընդհանրական գծերը (*pars pro toto*): Խոսքը Զ.ա. 60–ականների մասին է, երբ անկումը ծնունդ էր տվել երկու հակադիր հանրային բևեռների բախման: Երկու կողմում էլ հռոմեացիներն էին՝ իրենց տարասեռ շահերով, պատկերացումներով ու ապագայի տեսլականով:

Շարադրանքի սկզբում հեղինակը պաշտոնական տեսակետի կրողն է՝ ընդդեմ *տնանկների և ըմբոստների*, որոնց դեկավարում է Կատիլինան: Հընթացս պատումի ծավալման՝ պատկերն աստիճանաբար փոխվում է. պարզվում է, որ *հարուստներն ու քշերը* նույնպես մեղքի բաժին ունեն հին ու բարի Հանրապետության հիվանդության ու անկման մեջ: Այլորեն՝ մեղավոր են բոլորը, հարկավ, տարբեր համակշռով: Հուսկ եզրակացություն. Հանրապետությունը կարելի է բժշկել նոր հանրային համերաշխություն ձևավորելու ճանապարհով: Անհրաժեշտ են խոշոր անհատականություններ, ընտրախավեր և ապագայատեսական ծրագրեր:

Նույն իմաստային հանգույցի երկրորդ հետազոտական ակնարկը վերաբերում է Եղիշե վարդապետին և իր «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկասիրությանը: Այն նույնպես *կենսապատմություն* ժանրին է պատկանում, զի սևեռված է 450–451 թվականների հայոց հակասասանյան ապստամբության վրա: Երկասիրությունն սկսվում է հայոց հանրակարգի անկման նկարագրությամբ, որ արդյունք

էր սասանյանների վարչական, կրոնական և մշակութային ուժացման քաղաքականություն: Իրավիճակի գրույթային ձևակերպումն ունի ողբի աներկբա երանգ:

Սակայն Եղիշեի (ինչպես և Խորենացու) ողբն իր կառույցով ու իմաստային կողով բավական մոտ է անտիկ ողբերգությանը: Այն ավանդական-անպարագիծ կոծր չէ, այլ ելք է ուրվագծում ստեղծված ծանր իրավիճակից: Հեղինակի գրույթում այս միտումը մարմնավորում է հայրենասերների «Աստուծո Ուխտը», որի ծիրում տիրում է քրիստոնեական հավասարարական տեսլականը՝ տերերի և ծառաների, այրերի և կանանց, հայրերի և որդիների, մանուկների և իմաստուն ծերերի: Բոլորը պատրաստ են ինքնագոհողության, իսկ դա անմիջական առնչություն ունի ողբերգական մաքրագործում–կատարսիսի հետ: Հակառակորդը սա տեսնում է հրնթացս Ավարայրի ճակատամարտի: Այս կետից նա ընկրկում է՝ պատրաստ վերականգնելու նախնական խաղաղությունն ու անդորրը: Հարկավ, այս բանին նպաստում են նույնպես նրա արտաքին քաղաքական դժվարությունները:

Իմաստային երեք հանգույցների մեր բնորոշումները հիմք են ստեղծում ի մի բերելու մենագրության հիմնադադափարը: Այս կապակցությամբ, կարծում ենք, հարիր է կրկին անդրադառնալ նրա ելակետային գաղափարին. մենք չունենք որևէ հիմք խոսելու քննարկվող անտիկ և հայոց հեղինակների անմիջական շփումների մասին. դրանք տիպաբանական են ու համակարական (սիմպաթետիկ): Սակայն այս հանգամանքը չի նսեմացնում առաջարկվող իմաստային գուգակշի արժանահավատությունը, զի դիտարկվող հեղինակները գտնվում էին միևնույն մտահոգևոր պլագմայի ծիրում: Դա համահարթում է նրանց տարբերությունները ժամանակային, էթնիկ, քաղաքական, մշակութային, կրոնական և այլն: Եվ նրանք «մոտենում են» միմյանց:

Հարդյունս Պյոտինոսի և Խորենացու «մոտեցման» ցուլանում է հետևյալ պատկերը. թե՛ իմաստասերը, թե՛ պատմագիրը ապրում են ճգնաժամի պայմաններում. մեկը՝ մտավոր–հայեցողական, մյուսը՝ ընկերային–ինքնութենական: Երկուսն էլ ձգտում են հաղթահարելու ճգնաժամը՝ ձևավո-



րելով մեզահամակարգեր՝ իմաստասիրական և համապատմական: Դրանք կառուցված են գոյաբանական, մտավոր և բարոյական միջինի տրամաբանությամբ: Երկուսն էլ արգասավոր հետք են թողել. մեկը նպաստել է ինտելեկտուալ քրիստոնեության, մյուսը՝ հայոց ազգային ինքնագիտակցության կայացմանը:

Ընկերային խաղի և թատերայնության հղացքի համատեքստում միմյանց «մոտեցել» են մի կողմից՝ Պերիկլեսն ու Սոկրատեսը, մյուս կողմից՝ Արտավազդ Բ-ն: Երկու կողմն էլ մերձ են ճգնաժամի սահմանագծին, որը ողջ զորությամբ ծավալվելու է շուտով: Կյանքի վերջում Պերիկլեսը տեսնում էր վերջինիս նախանշանները, բայց համոզված էր, որ հանրախաղի կանոնով ձևավորված աթենական համերաշխությունը կհաղթահարի դա: Մխավեց: Սոկրատեսն ապրում էր հենց այդ համընդգրկուն ճգնաժամի պայմաններում և դարձավ դրա գոհը:

Ինչ վերաբերում է Արտավազդ Բ արքային, նրա հայացքն ուղղված է աշխարհաքաղաքական այն խոր ճգնաժամին, որ գոյացել էր ի հետևանս Կրասսուսի արշավանքի (Ք.ա. 54–53 թթ.): Թատերական խաղընթացի օգտագործմամբ արքան ցուցանում է, որ դա արդյունք է սթափ բանականության բացակայության: Ելքը վերջինիս վերահաստատումն է ըստ գիտելիքի և ստեղծագործ կամքի: Նա նույնպես սխավեց. գոհ գնաց իր իսկ գաղափարին: Սակայն փորձառությունն իզուր չանցավ. ավելի քան հարյուր տարի անց՝ նոր բախումներից և պատերազմից հետո կնքվեց *Հռանդեսայի դաշնագիրը* (Ք.հ. 63 թ.), որով նույնարժեք բարեկամական հարաբերություններ էին հաստատվում Պարթևստանի, Մեծ Հայքի և Հռոմի միջև:

Ի վերջո, Սալլուստիոսի և Եղիշեի իմաստասիրական «մոտեցումը» թերևս ամենաանհավանականն է, բայց իմաստային առումով ամենասերտը: Հետնախորքը կրկին ճգնաժամն է՝ ներհանրության երանգով: Երկու հեղինակների գրույթները սկսվում են ողբով (ողբերգության իմաստով) և, անցնելով խաղընթացի շրջափուլերով (սկիզբ, զարգացում, ավարտ), հանգում հանգուցալուծում–մաքրագործման: Այն նույնական է հանրային նոր համաձայնության ձևավորման

ձգտումին: Աստ, սակայն, բացահայտվում է նրանց էական տարբերությունը. Մալլուստիուսի տեսականը Հռոմեական Հանրապետությունն էր ընդ առաջնորդությամբ ականավոր անհատի, Եղիշեինը՝ հայոց ինքնանորոգ քրիստոնեական ինքնությունը:

Այլով բանիվ, առաջարկվող մենագրությունը հյուսված է մի կարևորագույն հիմնախնդրի շուրջ՝ ճգնաժամի: Բայց ոչ անդուռ ու անպարագիծ փլուզումի, այլ անկումի, որն ունակ է ուրվագծելու ինքնահաստատումի նոր ուղեծիր: Այս առումով հույժ հատկանշելի է *ճգնաժամ* հասկացության հունական ստուգաբանությունը՝ κρίσις – «ընտրություն, որոշում, դատողություն»: Մա նույնպես այն ընդհանուր իմաստային պլագմային բաղադրիչներից էր, որի ծիրում ապրում ու ստեղծագործում էին մեր այսօրվա տարբեր հեղինակները: Հավելենք, որ նման ըմբռնումն արդիական է նաև մեր օրերում:

Կրկնենք մեկ անգամ էլ. մենագրությունը համաբերվել է տարբեր գիտակարգերի տվյալների յույսով՝ ինչպես անտիկ, հելլենիստական, վաղ միջնադարյան, այնպես էլ արդի՝ պատմության և բանասիրության, իմաստասիրության և աստվածաբանության, նշանաբանության և պատումագիտության: Տեքստի ամբողջականության համար անհրաժեշտ է հառաջացած ընթերցողի աչքը: Միայն նրա համագործակցության պարագային է հնարավոր առաջադրված հիմնախնդրի լիարժեք մեկնաբանությունը:

Ասվածին հարիր է նաև մենագրության լեզվական առանձնահատկությունը. այն գրված է հայերեն և անգլերեն: Ընդամին, նախատեսվում էր հայկական նյութը ներկայացնել անգլերեն, իսկ անտիկը՝ հայերեն: Սակայն հրնթացս աշխատանքի այս հակադարձ համաչափությունը խախտվեց. ընկերային խաղին և թատերայնությանը նվիրված իմաստային հանգույցն «ստացվեց» միայն անգլերեն: Կատարվել է դա ինքնաբերական մղումով. պատճառը թերևս այն է, որ դասական Աթենքի կյանքի այս կողմի մասին չունենք սկզբնաղբյուրային միասնական գրույթ: Ամեն բան վերականգնվում է համաբերմամբ և հետհայացությամբ՝ ըստ արդի գիտության ձեռքբերումների: Իսկ այժմ դրանք հիմնականում անգլերեն են:

Ամփոփելով այս հակիրճ նախաբանը՝ ցանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել այն անձանց, որք իրենց նպաստն են բերել մենագրության կայացմանը՝ Դավիթ Պետրոսյան, Նշան Քզբըր, Քաթրին Քարթիս, Լիլիթ Մինայան, Սմբատ Հովհաննիսյան, Տիգրան Եփրեմյան, Արաքս Ալեքսանյան, Ջուլիետա Կնանյան, Գևորգ Ճաղարյան, Նելլի Մուրադյան: Առանց նրանց մասնագիտական և բարոյական աջակցության հազիվ թե կարողանայինք գրուիս բերել այս բազմաշերտ ու բարդ գործը:

Երևան, օգոստոս, 14. 08. 2023

**Հանգույց Ա**

**Part I**

**ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
PHILOSOPHY AND HISTORY**

**ՊԼՈՏԻՆՈՍ.**  
**տիեզերական թատերախաղի**  
**հանդիսատեսը**

**Ներածություն**

Նորալլատոնականության փաստացի հիմնադիրն ու ամենաականավոր ներկայացուցիչն է: Նրա հայեցողական համակարգը հսկայական ազդեցություն է ունեցել իմաստասիրության, աստվածաբանության, բարոյագիտության, գեղագիտության հետագա ողջ զարգացման վրա ինչպես Արևմուտքում, այնպես էլ Արևելքում:

Կենսագրության փաստերը սուղ են: Ծնվել է 204 կամ 205 թվականին Եգիպտոսում՝ Լիկոպոլիս քաղաքում: Հիմնավոր ճարտասանական և իմաստասիրական կրթություն է ստացել ադեքսանդրյան Մուսեոնում՝ Ամնոնիոս Սակկասի ղեկավարությամբ: 240 թվականին տեղափոխվել է Հռոմ և ապա մասնակցել Գորդիանոս կայսեր արևելյան արշավանքին (242-243 թթ.)՝ նպատակավ հաղորդակցվելու «հոգևոր պարսկականության և հնդկականության» հետ [Porphyry., Vita, 3, 15]: Արշավանքի անհաջող ելքից հետո վերադարձել է Հռոմ և շուտով դարձել իմաստասիրության իր ժամանակի ամենահայտնի ուսուցիչը: Վայելել է Գալլիենոս կայսեր (260-268 թթ.) հովանավորությունը: Քայլեր է ձեռնարկել իտալական Կամպանիայում հիմնելու իմաստասիրական համայնք-մենաստան՝ թերևս Պյութագորասի

օրինակով: Ունեցել է բազում հետևորդներ, որոնց հետ անցկացրած իմաստասիրական գրույցներում աստիճանաբար բյուրեղացրել է իր հայեցողական համակարգը: Կյանքի վերջին տարիներին, համարյա կուրացած, սկսել է մշակել իր «բանախոսությունները», սակայն ավարտին չի հասցրել: Մահկանացուն կնքել է 269 կամ 270 թվականին:

Ընդհատված աշխատանքը շարունակել է «սիրելի աշակերտը»՝ Պորփյուրիոսը, «[...] որին [Ուսուցիչը] վստահել էր իր գործերի խմբագրությունը» [Porphyr., 7, 45]: Նա մշակել, խմբագրել ու կարգաբերել է Ժառանգությունը: Հիսուն և չորս քննախոսություն՝ շարակարգված ըստ վեց իննյակի (Էննեադ)<sup>1</sup> յուրաքանչյուրը նվիրված իմաստասիրության առավելապես մեկ հիմնախնդրի:<sup>2</sup> Յուրօրինակությամբ և մշակվածությամբ առանձնանում են հատկապես վերջին երեք իննյակները: Հետազոտողները դրանք պայմանականորեն վերնագրում են «Հաղագու Հոգու» (ψυχολογία), «Հաղագու Բանականի» (νοολογία) և «Հաղագու Մեկի» (ένολογία):<sup>2</sup> Դրանցում բացահայտվում է մարդու և տիեզերակարգի համակերպության վրա խարսխված մի համընդգրկուն հայեցողական համակարգ՝ իր գոյաբանական և

<sup>1</sup> Ավելի ճիշտ՝ առաջինը քննախոսություններն սկսել է գրի առնել աշակերտներից Ամելիոս Կվինտիլիանոսը՝ կազմելով «համարյա թե հարյուր գիրք»: Հետագայում անսալով աշակերտների խնդրանքին՝ այդ բանը ձեռնարկում է և ինքը՝ Պլոտինոսը. սկզբում քսանմեկ քննախոսություն, ապա՝ քսանչորս, իսկ կյանքի վերջում ևս ինը. «Դրանք նախատեսված էին ոչ թե արագ և պարզ ընթերցանության համար, այլ՝ որպեսզի ընթերցողը համակ ձգտմամբ խորասուզվի դրանց մեջ» [Porphyr., Vita, 4, 15]: Իսկ Պորփյուրիոսն ավարտին է հասցրել գործը: Տե՛ս մանրամասն **Emilsson**, 2017, 9-14:

<sup>2</sup> Պլոտինոսի կյանքի և ներհայեցողական ինքնակայացման բարդ ու բազմաշերտ ընթացքի մասին տե՛ս մանրամասն **Rist**, 1967, 2-20; **O'Meara**, 2010, 301-306: Արդեն Պորփյուրիոսն էր նկատել, որ Ուսուցիչն իր կենսուղին հարացուցանել էր համաձայն իդեալական իմաստասերի կենսուղու՝ ինքնաժխտմամբ ճամփորդելով դեպի բացարձակ Մեկը: Տե՛ս **Michaelides**, 2018, 81-83:

իմացաբանական, գեղագիտական և տրամաբանական, բարոյագիտական և աստվածախոսական կառույցներով ու նրբերանգներով:<sup>3</sup>

## 1. Պլոտինոսի հայեցակարգի պատմական և ընկերային հիմքը

Հակասական ու բարդ էր իմաստասերի դարաշրջանը: Ժամանակը «ճեղք էր տվել» իր քաղաքակրթական հիմնական չափումներում՝ դասական-հունական, հելլենիստական, հռոմեական, հռոմեական-կայսերական: Արդեն խարխլվել կամ իսպառ վերացել էին անտիկ ընկերային համակեցության հիմնական ձևի՝ քաղաքացիական համայնքի (պոլիս, ցիվիտաս) կառույցները: Հարդյունս՝ քաղաքացուն փոխարինելու էր եկել հսկայածավալ տերության բնակիչը:<sup>4</sup> Իսկ դրանք տարբեր «հասարակական կենդանիներ» էին: Քաղաքացու կյանքի կենսաբանական ու հոգեմտավոր մակարդակները գոյություն ունեին զուգահեռաբար՝ երկրորդի անվերապահ գերակայությամբ: Եվ քանի որ վերջինս ներկայացնում էր «հավերժականը», «առաքինին» և «բարիքը», ապա եսակենտրոն մղումները արգելակված էին: Քաղաքացին ապրում էր առավելապես մշակութային ինքնարարումի շրջանով:

Այլ էր տերության բնակիչը: Նրա կյանքի կենսաբանական և հոգեմտավոր մակարդակները համընկնումի միտում ունեին՝ առաջինի անվերապահ գերակայությամբ: Կայսրության բնակիչն ապրում էր «ժամանակավորի», «հարմարի» և «օգտակարի» արժեքանու-

<sup>3</sup> Իմաստասերի կյանքի և ստեղծագործության մասին տե՛ս **Brisson and Prudeau**, 2006, 577-581; **Horn**, 2013, 596-597:

<sup>4</sup> Իրավականորեն այս անցումը բանաձևվեց Ք. հ. 212 թվականին Կարակալյա կայսեր էդիկտով (Constitutio Antoniniana): Տե՛ս **Lavan**, 2016, 26-39:

թյամբ: Նրա եսակենտրոն կառույցում զարմանալի կերպով համադրվում էին ճակատագրապաշտությունն ու պատեհապաշտությունը: Եվ կայսրությունն ապրում էր առավելապես նյութական ինքնարարումի շրջանով: Նրա ծիրում ժամանակը ճեղքվել-տրոհվել էր միմյանց ներհակ բազում «այժմների», իսկ տարածությունը՝ «այստեղների»: Ի վերջո (անկառավարելի դարձած) դրանք ծնեցին համակարգային էնթրոպիա, որի անբաժան ուղեկիցներն էին ընչաքաղցությունն ու իշխանատենչությունը: Բանակն սկսեց գործուն մասնակցություն ունենալ տերության ներքաղաքական կյանքին, երևացին բազում ինքնակոչներ: Ուժեղացավ արտաքին թշնամի՝ ալեմաններ, մարկոմաններ, գոթեր, դակեր, պարսիկներ և այլք: Քայքայումն իր բարձրակետին հասավ հատկապես Գալլիենուս կայսեր օրոք:<sup>5</sup> Ո՞րն էր ելքը. հարցին անտիկ ընկերային փորձն ուներ երեք հնարավոր պատասխան:

*Առաջին՝* ընդլայնել հռոմեական ժամանակն ու տարածությունը՝ հասցնելով մինչև Էկումենիկ ժամանակի ու տարածության սահմանները և այդու լուծարել դրանց ներքին «ճեղքվածքները»: Ռազմական ծավալումի այս ճանապարհը, սակայն, փակուղային էր: Դա էր վկայում թե՛ Ադեքսանդր Մակեդոնացու, թե՛ նրա հետևորդների փորձը: Վերջինն այդ շարքում համարվում է Տրայանուս կայսրը (96-117 թթ.):<sup>6</sup>

<sup>5</sup> Ինչքան էլ տարօրինակ հնչի, այս գործընթացն սկսվել էր տակավին Հանրապետության դարաշրջանում՝ Ք.ա 2-րդ դարում, երբ Հռոմն «ընդամենը մեկ սերնդի կեսընթացքի ժամանակ» վերածվեց միջերկրածովյան տերության: Եվ հիշատակված ընկերային, իրավական և հոգեբանական կերպափոխություններն սկսեցին քայքայել նրա «ավանդական կենսակերպը»: **Sherwin-White**, 1939, 54-58; **Nicolet**, 1976, 87-92; cf. **Martin**, 1995, 714-719; **Mathisen**, 2006, 1019-1027:

<sup>6</sup> Հռոմեական քաղաքական միտքը Տրայանուսին բնութագրում էր իբրև *optimus princeps* – լավագույն կառավարիչ՝ գերադասելով նրան անգամ Օգոստոսից: Հարկավ, անտեսվում էր նրա փակուղային ծավալապաշտությունը և շեշտադրվում հավասարակշիռ ընկերային քաղաքականությունը: Տե՛ս **Sutherland, Hammond**, 1992, 1088-1089:



*Երկրորդ*՝ խստիվ սահմանազծել հռոմեական ժամանակի ու տարածության շրջանակները՝ տալով դրանց ներքին հաստատությունական կառույց՝ ընկերային խմբերի և դասերի իրավունքների ճշգրիտ սահմանադրում, նահանգների ու դրանց կառավարման կարգի ճշգրիտ որոշարկում, բանակի կառուցվածքի ու գործառույթի հստակ կարգաբերում և այլն: Այս բոլորի վրա պետք է բարձրանար կայսեր (և արքունիքի) միավորիչ կերպարը և ռազմա-իրավա-կրոնական շաղախով շարակցեր հռոմեական ժամանակի ու տարածության տարասեռ բաղադրիչները: Տվյալ ուղին ընտրեցին Դիոկղետիանոս կայսրը (284-305 թթ.) և նրա հետևորդները՝ հիմք դնելով *դոմինատիոն*<sup>7</sup> բացարձակ միապետությանը:<sup>7</sup> Դա Հռոմին տվեց ևս հարյուր յոթանասուն տարվա տևողություն: Բայց ոչինչ ավելի: Քանզի լիովին ներհակ էր անտիկ ընկերային համակեցության ավանդույթներին:

*Երրորդ*՝ ի հակակշիռ քաղաքակրթականի՝ գորացնել մշակութային ժամանակի ու տարածության ներգործությունը՝ նպատակավ հարակարգելու համակեցության տարասեռ բաղադրիչները: Այդ ճանապարհին ուղենշել էր դեռևս Պղատոնը: Բ. ա. 5-րդ դարի վերջին, 4-րդ դարի սկզբին, երբ հունական պոլիսը (քաղաք-պետություն) ապրում էր իր քաղաքակրթական վերջալույսը, նա ստեղծեց գաղափարների (կամ մաքուր բանական ձևերի) «զուգահեռ տիրույթը» և այնտեղ «ի պահ տվեց» բոլոր կյուլթական գոյացությունների բացարձակ արժեքները: Հավերժական դադարի վիճակում, շարահասված ըստ ճշգրիտ կարգի, դրանք նպատակաուղղված էին առ Գեղեցիկը, Ճշմարիտը, Էությունը, Արդարն ու Բարիքը: Համաձայն Մտածողի՝ միայն վերջիններիս առկայությամբ է, որ ժամանակի ու տարածության

<sup>7</sup> Անցումը պրինկիպատից (հանրապետական միապետություն) դոմինատիոն (բացարձակ հրամայական միապետություն) հետագոտողները բանաձևում են նաև՝ մեկնարկելով գործընթացի ելակետային և վերջնական բևեռներից՝ «առաջին քաղաքացու իշխանություն» և «տիրոջ իշխանություն»: Kelly, 2004, 17-114; 209-232:

ցանկացած հատված ունի էությունական իմաստ ու նշանակություն:<sup>8</sup>

Այդ առկայությունն ապահովվում է «մեջբերման» հնարքով. նյութական տիեզերքում՝ բանական տիեզերքի, պոլիսում՝ իդեալական ընկերային կարգի (Եգիպտոս), իմաստասիրական դպրոցում՝ իդեալական մտածողի (Սոկրատես) կերպարի:<sup>9</sup> Ընդամին, բանական տիեզերքը, կաստայական-կայուն Եգիպտոսը, Սոկրատեսի դիմակը կազմում են այդ համատեքստի «կենտրոնը», մինչդեռ նյութական տիեզերքը, պոլիսը, իմաստասիրական դպրոցը՝ «ծայրամասը»:<sup>10</sup> Առաջիններն իբրև հարացույց պայմանավորում են երկրորդների՝ իբրև վերարտադրության գոյությունը: Երկրորդները ցուցնում են «հավերժի շարժուն պատկերը»<sup>11</sup>:

Այսու հայտնաբերվել էր շարունակականության մի առանձնահատուկ հայեցողական կառույց, որի գործառույթամբ մշակությային հիմնարար արժեքներից ար-

<sup>8</sup> Պղատոնական գաղափարների կամ մաքուր բանական ձևերի կառույցի ու իմաստաբանության և նյութական աշխարհի հետ նրա բազմարովանդակ հարաբերությունների մասին տե՛ս **Burnet**, 1928, 315-320; **Zeller**, 1931, 129-134:

<sup>9</sup> Այլով բանիվ՝ խոսքը այս երեք կառույցների համակերպության մասին է, որոնց բոլորին միավորում է Բանը՝ տիեզերական, ընկերային և ճանաչողական ընդգրկումներով: Ընդամին, մտածողին է վերագրված այս միասնության անընդհատ վերականգնման գործառույթը՝ մեկնարկելով իմաստասիրական դպրոցի հնարավորություններից: Պղատոնական հայեցակարգում, որին հետևում է Պլոտինոսը, համակերպությունների տարակերպերը խստով համակարգված են: Տե՛ս **Plashkov**, 2017, 130-133:

<sup>10</sup> Խորքային առումով աստ խոսքը Պղատոնի հայեցողական համակարգի երկու բաղադրիչների՝ գոյաբանության և իմացաբանության գուգականության մասին է: Իբրև վերջինիս առարկայական դրսևորում՝ քննարկվում է տիեզերական Հանուրի և իմաստասիրական դպրոցի համադրությունը տե՛ս **Halfwasso**, 2014, 185-188; cf. **Jaeger**, 1947, 61-62; **Stepanyan**, 2009, 189-190:

<sup>11</sup> Խոսքը ժամանակի պղատոնյան բանաձևի մասին է [**Plato**, *Tim.*, 37d]: Դրա ծիրում բացահայտվում է ընդհանրապես բացարձակի և հարաբերականի փոխհարաբերությունը:

տաժվում էին քաղաքակրթական հիմնարար արժեքներ ու կառույցներ: Այդ նա էր, որ կայունություն ու կարո- յություն տվեց Հունաստանին՝ պահպանելու իր ինքնակա ու ինքնավար կարգավիճակը նախ՝ հելլենիստական, իսկ ապա՝ հռոմեական դարաշրջաններում: Ավելին՝ իդեա- լական մշակութային Հունաստանը ներբերվեց ու դրվեց հռոմեական համատեքստի կենտրոնում, մինչդեռ ինքը՝ Հռոմը, «հոժարակամ» ընդունեց քաղաքական ծայրա- մասի (պերիֆերիա) դերակատարությունը: Այս «մշա- կույթ-քաղաքակրթություն» համադրությունը կառույց և կայունություն տվեց հռոմեական ընկերային կյանքին՝ հաղթահարելու ուշ հանրապետությունից վաղ կայսրու- թյան (պրինկիպատ) անցման դարաշրջանի (Ք. ա. 1-ին, Ք. հ. 1-ին դարերի) համակարգային էնթրոպիան:

Մի դիտարկում ևս: Պղատոնի հայեցողության ծի- րում (սոփեստների հետևողությամբ) թե՛ նյութական տիեզերքը, թե՛ պոլիսը, թե՛ իմաստասիրական դպրոցն ընկալվում են նախ և առաջ իբրև գուտ բառային-խոս- քային կառույց:<sup>12</sup> Այն կայանում է իբրև տրամախո- սական գրույց-խնջույք (ή σμποσία), որը նպատակ ունի հաղթահարելու բառի երևութենականություն- նը (հնչյուն, հոգեբանական վերապրում, կարծիք) և բացահայտելու նրա էությունական արքետիպը (ճշմար- տություն, գիտելիք, էություն): Այդ ընթացքին միմյանց հակադրվում են բառիմաստի ավանդական մի քանի այլազան ըմբռնումներ, և ապա տրամախոսական ժխ- տումի ու համաբերումի ճանապարհով բացահայտվում է մեկը՝ էությունական անհայտը:<sup>13</sup> Ինչպես առանձին բառերը, այնպես էլ դրանց շարակցությունը (ասույթ,

<sup>12</sup> Այս իմաստային համակերպությունների մասին տե՛ս ման- բամաս **Vernant**, 1966, 61-62; հմմտ. **Степанян**, 1995, 76-77:

<sup>13</sup> Ասվածի դիտանկյունից առանձնահատուկ կարևորվում է Պղատոնի մի ընդարձակ հատված [Soph., 203c-240c]: Դա ճշմա- րիտի ապաստական հաստատման օրինակ է, որ բացառիկ տեղ ունի տրամաբանության զարգացման մեջ՝ սոփեստներից մինչև Արիս- տոտել: Հմմտ. **Bondeson**, 1975, 37-39:

միտք, պատում) այս պարագային ներկայացնում են մտահոգևոր շարժման ձևեր՝ *առ-արկայից* դեպի *ենթ-ական* (ή ὑπόστασις), ժամանակի տիրույթից դեպի Հավերժը (τὸ αἰεί): Համաձայն Պղատոնի՝ Ենթական և Հավերժը ուրույն մեկերի փաստելի հարաբերությունների ամբողջություն են՝ միտված առ Բարիքը:<sup>14</sup>

Բարիքի նպատակաքանությանը կազմակերպված տիեզերքը, պոլիսը, իմաստասիրական դպրոցը, գրույց-խնջույքը արարումի միջավայրեր են՝ բազում մուտքերի և ելքերի առկայությամբ: Աստճո, օրենսդիր-կառավարչի, իմաստասերի կողքին արարումի իրավունք աստ վերապահված է նաև հասարակ մահկանացուին, քաղաքացուն, իմաստասիրության աշակերտին:<sup>15</sup> Նրանք ներկայի (իսկ որոշ առումով՝ նաև անցյալի ու ապագայի) համահեղինակներ են: Ըստ որում, տրամախոհական ժխտումի և հաստատումի սահմանները խիստ հարաբերական են: Բառիս բուն իմաստով դրանք համարժեք մտավոր գործողություններ են, քանզի հանգուցալուծվում են արտատեքստային (արտատարածական, արտաժամանակային) մի հարթությունում, որտեղ իսպառ բացակայում է իմաստային լուսաստվերը:<sup>16</sup>

<sup>14</sup> Plato, *Soph.*, 251a-259d; *Parm.*, 135d-137b. Աստ հույժ ակնհայտ է դառնում պղատոնական իմաստասիրության մաթեմատիկական ենթաշերտը: Տե՛ս **Muller**, 2004, 107-117: Նոր դարաշրջանի իմաստասիրության մեջ այս հարցերը համակողմանի քննարկված են հատկապես Չ. Փիրսի սեմիոտիկայի ծիրում: Տե՛ս **Peirce**, 1963, 239-246:

<sup>15</sup> Պոլիսային համակեցությունը և այն արտահայտող մշակութային տեքստերը (սկսած Ակրոպոլիսի ճարտարապետական կառույցից մինչև Սոկրատեսի գրույցներն ու Պղատոնի տրամախոսությունները) հարկ է դիտարկել արդի համակարգչային իմաստասիրության հիմնարար ստորգոյություններից մեկի՝ հիպերտեքստի դիտանկյունից: Այդ պարագային տեքստի «մուտքերը» և «սահմանները» ձեռք են բերում անընդհատ ընդլայնվելու հատկանիշ՝ կախված դրա և «ընթերցողի» փոխհարաբերության կերպից, մակարդակից և բովանդակությունից: Տե՛ս **Derrida**, 1981, 88-94; **Landow**, 1991, 30-33:

<sup>16</sup> Մտակառույցը գուգական է ազատ կամքի և ազատ ընտրության հետ: Դրանց տրամաբանական զարգացումը հանգեցնում է

Տիպաբանական դիտարկման պարագային այս հարթությունը միանգամայն համադրելի է անտիկ ողբերգության խորի տիրությոն: Եվ այս լույսի ներքո Պդատոնի յուրաքանչյուր տրամախոսություն ներկայանում է իբրև «մտքի թատրոն», որտեղ հայեցակետ-դիմակների հակադրության ու համադրության ճանապարհով բացահայտվում է Գիտելիքի ներդաշնակ կառույցը:<sup>17</sup> Դա վեր է առօրեական կարծիքներից ու գիտելիքներից, քանզի բացարձակապես ինքնանույնական է և չի պարունակում հակասություն-ճեղքվածքներ: Այն նյութական կեցության բանական (և այդու՛ ներգործուն) հարակն է, որի բացահայտմանը նպատակաուղղված ամեն մի գործողություն աշխարհաստեղծ նշանակություն ունի: Ուստի իմաստասիրական դպրոցի և գրույց-խնջույքի ծիրում մշակված բառային հարացույցներն ունակ են համակարգություն ներբերելու պոլիսի և նյութական տիեզերքի քառասային միջավայր: Այլ խոսքով՝ իմաստասիրական մտավոր ճիգն ընդունակ է նորոգելու աշխարհը:

Սա պղատոնական Ակադեմիայի հիմնարար գաղափարներից է՝ ժառանգված թերևս պյութագորականությունից: Դպրոցի անդրադարձով՝ այն ենթադրում է վերջինիս անընդհատ ինքնանորոգման ձգտումը: Այսինքն պղատոնական հայեցակերպն արդեն իսկ ենթադրում է նորպղատոնականության հնարավորությունը: Այն ի գորու է իրականություն դառնալու ընկերային, քաղաքական, մշակութային, հոգեմտավոր որոշակի

մեկ այլ հիմնարար առաքինության՝ ինքնագապման և ինքնակառավարման (ή σφροσύνη): Այս բոլոր առաքինությունները կազմում են պղատոնական ազատության բովանդակությունը: Չանագան տարակերպերով այն որդեգրվել է քրիստոնեական աստվածաբանության և արդի հումանիտար մտքի կողմից: Տե՛ս **Stalley**, 1998, 145-158; **Montanye**, 2019, 106-113:

<sup>17</sup> Հետազոտողներն ավելի ու ավելի անդրադառնում են այն մտքին, որ պղատոնական երկխոսությունները խորքային առումով հարացուցված են ըստ ողբերգական խաղընթացի: Տե՛ս **Wilson**, 1996, 19-30; **Regali**, 2015, 125-148:

նախադրյալների պարագային: Եվ դրանք, ինչպես ցույց տրվեց վերը, լիովին առկա էին 3-րդ դարի հռոմեական միջավայրում:

Ասվածի դիտանկյունից վերադառնալով Պլոտինոսին՝ նշենք, որ Պղատոնի հետևողությամբ նա նույնպես նպատակ ուներ անտիկ ժամանակի ու տարածության հարակարգությունը վերականգնել իդեալական-հաստատուն իմացական միջավայրի ձևավորման ճանապարհով: Նա հույս ուներ, այդ մասին նշվեց, հիմնել իմաստասիրական համայնք-մենաստան:

Ենթադրվում էր դա կազմակերպել իբրև համընդգրկուն գրույց-խնջույք կամ մտքի թատրոն, որի միջավայրում հայեցակետ-դիմակների դերը պետք է վերապահվեր անտիկ իմաստասիրական հիմնական դպրոցներին, որք հարյուրամյակներ ի վեր բանավիճում էին աշխարհաճանաչման հիմնախնդիրների շուրջ՝ բնափիլիսոփաներ, պլուրազորականներ, սոփեստներ, Ակադեմիա, Լիկեոն, ստոիկներ, սկեպտիկներ, Էպիկուրականներ: Անհրաժեշտ էր տրամաբանական ժխտում-հաստատումի հնարքով շարահյուսել մի հայեցողական մեզահամակարգ՝ ներունակ միմյանց հարաբերելու անտիկ մտքի բոլոր հիմնարար արդյունքները՝ զերծ գոյաիմացաբանական հակասությունից: Ընդամին, հանգուցալուծման բևեռ պետք է դառնար Պղատոնի դիմակը՝ ինչ-ինչ աստիճան վերացարկված պատմական Ակադեմիայից: Շիտակ այնպիսի դեր, որպիսին վերապահված էր Սոկրատեսին Պղատոնի հայեցակարգում:<sup>18</sup>

<sup>18</sup> Անհատական–հոգեբանական իմաստով Պղատոնը՝ Պլոտինոսի, Սոկրատեսը՝ Պղատոնի վերաբերմամբ ներկայանում էին իբրև alter ego – *ուրիշ ես*: Եվ նրանց միջև ծավալվում էր արգասավոր երկխոսություն, իրնթացս որի փոխլրացնում էին միմյանց: Ինչ վերաբերում է հիմնախնդրի ընկերային-մշակութային դիտանկյանը, այդ մասին հույժ դիպուկ է Վլ. Սոլովյովը. «Սոկրատեսը tertium quid էր՝ խարիվվող հունական կյանքի *երրորդ փնտրյալ հանգրվանը* [...]»: Տե՛ս **СОЛОВЬЕВ**, 1990, 585: Նույնը կարելի է ասել նաև Պլոտինոսի մասին. նա անտիկ խարիվվող քաղաքակրթական կյանքի *եր-*

Այսուհանդերձ, այս մտավոր դիմակները մինչև վերջ նույնական չէին: Սոկրատական դիմակում շեշտված էր մտավոր ինքնարարումի ճիգի ողբերգականությունը, որն արդյունք էր դրա բացարձակ հնարավորության և նույնքան էլ բացարձակ անհնարինության: Մինչդեռ պղատոնական դիմակում շեշտված էր այդ ճիգի ապացուցելիությունն ու էսթետիզմը, որն արդյունք էր դրա սահմանային հնարավոր-անհնարինության:

Հենց այստեղ է պլոտինյան հայեցակարգի աներկբա յուրօրինակությունը: Դրանում Պղատոնը (հակառակ իրական-պատմական Պղատոնի) նախ և առաջ անտիկ մշակութային տիեզերքի միասնության ցուցիչն է:<sup>19</sup> Միասնություն, որ ձեռք է բերվում, մեկ անգամ էլ շեշտենք, իմաստասիրական դպրոցի ծիրում՝ նպատակավ հարակարգելու նյութական (քաղաքակրթական) աշխարհը: Եվ պղատոնական դիմակում (ավել կամ պակաս հստակությամբ) ուրվագծվում են մերթ Պյութագորասի, մերթ Հերակլիտոսի, մերթ Արիստոտելի, մերթ Չենոնի, մերթ Էպիկուրոսի ինչ-ինչ հատկագծեր:

Այս ամենով հանդերձ, նորպղատոնական մտավոր ներուժին վիճակված չէր փրկելու անտիկ քաղաքակրթության կառույցը: Հռոմն այլևս անընկալուն էր իմաստասիրական դպրոցի բանական ազդակների նկատմամբ, քանզի արդեն վաղուց դադարել էր մշակութային ինքնարար քաղաքացիական համայնք լինելուց: Մինևույն ժամանակ կորցրել էր նաև իր ուժային և համակարական (սիմպաթետիկ) կապերը տերության հետ՝ աստիճանաբար վերածվելով երկրորդական քաղաքի, որտեղ թեպետ կայսրերը շարունակում էին կառուցել տաճարներ, պալատներ, բաղնիքներ, բայց չէին բնակվում:<sup>20</sup>

*որդի փնտրյալ հանգրվանն* էր: Հմմտ. **Gerson**, 2017, 316-327:

<sup>19</sup> **Siorvanes**, 2018, 851.

<sup>20</sup> Այս առումով հատկանշելի է հետևյալ փաստը. կայսր Դիոկետիանոսն առաջին անգամ այցելեց Հռոմ կառավարման միայն

Անտիկ քաղաքակրթությունը փլուզվեց 5-րդ դարի վերջին: Սակայն նորպղատոնականության ծիրում համադրված հայեցողական արժեքներն այնքան համապարփակ ու կենսունակ էին, որ ի գորու եղան բեղմնավորելու ամենատարբեր կրոնական ու իմաստասիրական համակարգեր պատմական ամենատարբեր դարաշրջաններում ու միջավայրերում՝ քրիստոնեական աստվածաբանությունից (հատկապես արևելյան՝ Ադեքսանդրիա, Կապպադոկիա, Հայաստան) մինչև սուֆիզմ:

## 2. Պլոտինոսի հայեցակարգը (բանական տիեզերքը)

Դրանում գոյաբանության, իմացաբանության, գեղագիտության և աստվածախոսության բնագծերը հույժ պայմանական են, քանզի յուրաքանչյուր իրողություն ներկայանում է միաժամանակ նշված բոլոր հարթություններում. բազմաչափ է՝ համակարգված ըստ Մտքի և Էության, Ճշմարիտի և Գեղեցիկի, Առաքինու և Բարիքի հարացույցների: Ուստի որ հարթությունից էլ սկսվի հայեցակարգի քննությունը, միևնույն է, մնացյալ բոլոր հարթությունները (հիպերտեքստի սկզբունքով) առկա են:

**Գոյաբանությունը** պլոտինյան իմաստասիրության համաձիրում խարսխված է երեք հիմնարար ստորոգությունների վրա՝ *Չգոյ-ունայն* (τὸ κενόν), *Գոյ* (τὸ ὄν) և *Չգոյ-քսոս* (τὸ μὴ ὄν):<sup>21</sup> Դրանց հարաբերությունները

---

20-րդ տարում իր Vicennalia-ն տոնելու առիթով: Տե՛ս **Mattingly, Woodward**, 1992, 347:

<sup>21</sup> Հունական մտավոր ավանդույթում առկա է քսոսի երկու հակադիր ըմբռնում: Ըստ դրանցից մեկի՝ դա աննյութ ունայնը, պարապը, դատարկն է (χαίνω — բացվել, տարածվել, հորանջել), որը նախագո կարություններից է [Hesiod., Theog., 116]: Մյուս ըմբռնումը՝ Քսոսը դիտարկում է իբրև նյութական անկազմակերպ զանգված՝ ջուր, հուր, օդ [**Vorsokr.**, fr. 7, 8, Bd II, S. 49-50]:

Պղատոնը փորձել է լուծել այս հակասությունը՝ ներկայացնելով



հակադրական են՝ հասցված բացարձակության:

Հակառակ համընդգրկուն սահմանների՝ պլոտինյան տիեզերքն (իր բանական ու նյութական դրսևորումներով), այնուամենայնիվ, վերջավոր է: Ծավալվում է Չգոյ-ունայնի և Չգոյ-քառուի հետնախորքի վրա, որոնք անսահման ու անորոշ են (*ἄπειρον καὶ ἄοριστον*) և տեղադրված չեն ժամանակի ու տարածության որևէ կոնկրետ հատվածում [Plot., VI, 6, 15, 35]:

Սակայն դրանք նույնական էլ չեն. հակառակ Չգոյ-ունայնի՝ Չգոյ-քառուն ունի նյութական բովանդակություն (ή *ὄλη*), որը, ճիշտ է, դեռևս գուրկ է մարմնից ու զանգվածից, որակից ու քանակից, ձևից ու սահմանից (*ἄπειρον καὶ ἄοριστον*): Պլոտինոսի խոսքերով՝ այն սուկ տարողություն է (τὸ *μεταληπτικόν*), որին ներհատուկ է իզական կրավորություն (τὸ *θῆλον*)՝ ընդունելու Գոյից եկող գրգռները [Plot., II, 4, 10-15; III, 6, 20]:

Չգոյն իր երկու դրսևորումներով, որքան էլ պարադոքսալ է հնչում, Գոյի համար անհրաժեշտ նախապայման է:<sup>22</sup> Այս իրողությունը Պլոտինոսի իմաստասիրական համակարգում դրսևորված է թույլ, հպանցիկ ակնարկների ձևով [Plot., V, 5, 6, 10; VI, 6, 30, 15]: Սա-

---

Քառուն իբրև նյութ, որ գուրկ է որակներից՝ այն աստիճան, որ «[...] նրան դժվար է վերագրել որևէ անուն» [Plato, Tim., 50e]: Պլոտինոսի կապակցությամբ մենք հակված ենք մտածելու, որ պատկերն այլ է. Չգոյը նրա հայեցակարգում սեռի ստորոգություն է, իսկ Ունայնը և Քառսը (> նյութ)՝ տեսակի: Դրանք Չգոյի աննյութ և նյութական դրսևորումներն են, ճիշտ այնպես, ինչպես «բանական տիեզերքը» և «զգայելի տիեզերքը»՝ Գոյի:

<sup>22</sup> Խնդրի այս կողմը բացարձակեցնելով՝ Պղատոնը շեշտում է. «Երբ խոսում ենք Չգոյի մասին, ըստ էության, նկատի չունենք Գոյի նկատմամբ [անսահմանորեն] հակադիր ինչ-որ բան, այլ՝ միայն ուրիշը»: Եվ ապա՝ «Չգոյն անխուսափելիորեն առկա է ինչպես Ծարժումի, այնպես էլ բոլոր սեռերի ծիրում: Չի ուրիշի բնությունը, ամենայն ինչ Գոյի նկատմամբ ուրիշ դարձնելով, վերածում է այն Չգոյի: Արդարև, մենք ամենայն ինչ կարող ենք անվանել Չգոյ, բայց միևնույն ժամանակ (քանի որ մասնակցում է Գոյին)՝ նաև գոյական» [Plato, Soph., 256c-257b]:

կայն դրանից հարցի էությունը չի փոխվում:

Անդրադառնալով «գոյ» ստորոգությանը՝ նշենք, որ Պլոտինոսի ըմբռնմամբ այն ունի առնվազն երկու այլազան նշանակություն: Մի դեպքում պարառում է համայն գոյակարգը՝ Հանուրը (τὸ ὅλος), մյուսում՝ բոլոր գոյացությունների էութենական բովանդակությունը (ἡ οὐσία):

Իբրև համայն գոյակարգի հարացույց՝ Գոյն ընդգրկում է *ամենայն ինչի երեք նահապիսթերը* (τρεῖς ἀρχαὶ καὶ ὑποστάσεις)՝ Մեկը (կամ Նախագույնը), Բանականը և Հոգին: Միասին դրանք խթանում են գոյակարգի երկու հակադիր վիճակներ՝ բանական և զգայական աշխարհները (ὁ κόσμος νοητός, ὁ κόσμος αἰσθητός):<sup>23</sup> Դրանք կազմակերպված են ըստ անդրադարձի սկզբունքի: Բանական աշխարհում՝ «այնտեղ» (ἐκεῖ), գտնվում են բազմաթիվ գոյացություններ, որոնք իրենց մարմնական հարակներն ունեն զգայական աշխարհում՝ «այստեղ» (ἐνταῦθα):<sup>24</sup> Ընդամին, առաջինները գտնվում են հավերժի տիրույթում (τὸ ἀεί), իսկ երկրորդները՝ ժամանակի (ὁ χρόνος):

Հանդերձ այդու, արտացոլումը հայելային չէ. ինչպես բանական, այնպես էլ զգայական աշխարհներում առկա են նաև բազում գոյացություններ, որոնք իրենց հարակները չունեն մյուսի ծիրում: Դրանք հատուկ են աշխարհներից միայն մեկին: Հակառակ պարազային, համաձայն Պլոտինոսի, անցումը մեկից դեպի մյուսը

<sup>23</sup> Այս հիմնարար ընկալումը նույնպես Պլոտինոսը որդեգրել է պոստոնական տեսությունից, հարկավ, այն հարմարեցնելով իր հայեցողական համակարգին: Տե՛ս **Findlay**, 1975, 670. Թե՛ բանականի, թե՛ նյութականի աշխարհներում այս երեք նահապիսթերը որոշարկում են ամեն բան, սակայն դրա համար անհրաժեշտ է նաև մարդ արարածի կամքը:

<sup>24</sup> Կրկին Պլոտինոսը մեկնարկում է Պդատոնի երկու աշխարհների հակադրության հիմնազաղափարից: Տե՛ս **Korak**, 2015, 52-57: Միաժամանակ առկա է նաև կապը քրիստոնեական վարդապետության հետ. այս կապակցությամբ հետազոտողներն ավելի շատ խոսում են Որիգենեսի մասին:

կլիներ ինքնաբերական՝ առանց ճիզի, նպատակի ու գիտակցության: Սակայն այդպես չէ. նրանց միջև գտնվում է մի միջակա-անցումային մակարդակ, որտեղ «[...] հավերժը լծորդվում է ժամանակի, իսկ միտքը՝ նյութի հետ» [Plot., II, 2, 3, 15]: Այդ մակարդակը զբաղեցնում է մոտավորապես այն դիրքը, ինչ հոգին մարդու կառույցում: Շեշտելով այս փաստը՝ Պլոտինոսը գոյակարգին վերագրում է մարդակերպություն (անթրոպոմորֆիզմ):

Հարդյուն՝ նրա տեքստում հաճախ դժվար է (կամ էլ պարզապես անհնար) որոշել ինչի մասին է խոսքը. գոյակարգի, թե՛ մարդ էակի: Ավելի ճիշդրիս՝ թե՛ մեկի, թե՛ մյուսի: Եվ տիեզերքը ներկայանում է իբրև մարդկային ներապրումի խնդիր, իսկ մարդը՝ տիեզերական ինքնաբարումի հարացույց: Անշուշտ, խոսքն իդեալական բանական էակի մասին է՝ պղատոնական դիմակով:

Ինչպես Պլատոնի, այնպես էլ Պլոտինոսի գոյաբանությունն սկսվում է մի չափազանց կարևոր հաստատագրումով. «Նախապես առկա էին Ունայնը և բացարձակ ստեղծագործ Սկիզբը» [Plot., II, 3, 4, 15; cf. Plato, Tim., 25a]: Առասպելամտաժողովությունից սերող այս միտքը երկու իմաստասերների մոտ տարբեր զարգացումներ է ստացել:<sup>25</sup> Համաձայն Պլատոնի՝ Գոյի կառուցիկ տիրույթն արդյունք է Արարչի ստեղծագործական ճիզի. նա բարի է (*ἀγαθός*) և ինքնաբավ (*παρ' αὐτόν*), ուստի «[...] ցանկացավ, որպեսզի ամենայն ինչ, ըստ հնարավորի, հանգույն լինի իրեն» [Plato, Tim., 30a]: Տիեզերքն արարելիս Արարիչը ձգտում էր, «[...] որպեսզի այն լինի ամբողջական ու կատարյալ կենդանի արարած՝ կատար-

<sup>25</sup> Բացարձակ Ունայնի հաստատմամբ Հեսիոդոսն սկսում է իր պատումը Տիեզերքի և աստվածների առաջին սերնդի մասին: Hesiod, Theog., 145: Նշենք, որ այս ըմբռնումն ընդհանուր է առասպելակախիթական բազում ավանդությունների համար՝ եգիպտական, իտալական, բաբելական, հնդկական և այլն: Հունական միջավայրում վերջիններս վերակերպվել են իբրև բանական հղացքներ և առայսօր ազդում են արևմտյան գիտական մտքի վրա: Տե՛ս Theodosiou, Kalacharis, Manimanis, Dimitrijevic, 2012, 211-221:

յալ բաղադրիչներով ու անդամներով» [Plato, Tim., 32d]: Եվ դժվար չէ նկատել, որ ասվածի դիտանկյունից սկզբունքային տարբերություններ չկան պրատոնական և աստվածաշնչյան արարչագործությունների միջև. երկու պարագային էլ Ունայնի անգործությանը հակադրված է Արարչի նպատակամետ-կամային գործունեությունը: Երկուսն էլ ապաժամանակային են, և նրանց միջև գործում է հակադարձ հարագոյության սկզբունքը:

Միանգամայն այլ է պատկերը Պլոտինոսի գոյաբանության ծիրում: Արարիչ Սկզբի դերում այստեղ ներկայանում է Մեկը կամ Նախագույնը (τό ἕν, τό πρῶτον). «[...] նրանից առաջ չկա որևէ բան, և նա չի գտնվում մեկ ուրիշի ծիրում» [Plot., V, 5, 9, 5]:<sup>26</sup> Ի լրումն նա չի գործադրում արարումի որևէ ճիգ (ἀνέν προαιρέσεως ἐστίν) և անգամ չի էլ գիտակցում, որ արարում է: Եվ ընդհանրապես, չունի ինքնագիտակցություն. արարում է, քանզի դա իր էությունն է, հակառակ պարագային Սկիզբը լինել չէր կարող: Եվ մյուս հիմնարար տարբերությունը, որի մասին ակնարկեցինք վերը. հակառակ իր բացարձակ ինքնաբավության (ή αὐτάρκεια)՝ Նախագույնը, այնուամենայնիվ, բացարձակորեն տարանջատված չէ Գոյի այլ նախահիմքերից՝ Բանականից և Հոգուց:<sup>27</sup> Միասին վերջիններս կազմում են եռամիասնություն: Նկատի ունենալով այդ իրողությունը՝ Պլոտինոսը (առասպելաբանությունից պատկերագրությամբ) Նախագույնը համադրում է Կրոնոսին՝ աստվածների երկրորդ սերնդի հորը, որը որդիներին պահում էր իր մեջ [Plot., V, 3, 12, 20, cf. He-

<sup>26</sup> Այս կերպափոխության գոյաբանական, իմացաբանական, գեղագիտական և բարոյագիտական դիտանկյունների մասին տե՛ս մանրամասն **Emilsson**, 2017, 70-84:

<sup>27</sup> Հարկավ, այս իրավիճակը վկայում է գոյակարգի մարդակերպության մասին: Ուշ նորայատոնականության (Պրոկլոս) և հատկապես քրիստոնեական նորպատոնականության ծիրում (Ավգուստինոս) այդ միասնությունը, չնայած արտաքո անփոփոխ, խախտվում է Նախագույնի ծայրահեղ բացարձակեցման հետևանքով: **Armstrong**, 261-263:

siod., Theog., 126-130]:

**Նախագույնը**, համաձայն իմաստասերի, «[...] ամենայն ինչի Սկիզբն է, Բարիքն ու Առաջինը, որից անդին չկա որևէ բան» [VI, 9, 3, 20]: Նա իր իսկ պատճառն է (ή αιτία αὐτοῦ) [VI, 8, 7, 25]: Եվ դրա հետ մեկտեղ՝ «Նրա բնությունն արարչական է [նաև մնացած] ամենայն ինչի համար (γενητική ... τῶν πάντων)» [Plot., VI, 7, 6, 40]: Հակառակ այս հանգամանքին՝ նա ծայրահեղորեն պարզ է ու ինքնակա. «[...] սահմանափակված չէ ո՛չ իր, ո՛չ էլ այլոց հարաբերությամբ, այլապես երկուս կլիներ» [Plot., V, 5, 11, 15]: Գտնվում է իր իսկ ծիրում [Plot., VI, 9, 3, 50]:

Այս ամենին հետևում է Նախագույնի, որ նաև Գերագույն Բարիքն է, ապաստան (ապոֆատիկ) սահմանումը. «[...] չունի որակ, քանակ, բանականություն և հոգի: Ո՛չ շարժվում է, ո՛չ էլ գտնվում դադարի վիճակում: Չի գտնվում ինչ-որ մի տեղ կամ ժամանակի [ինչ-որ հատվածում]: Ըստ ինքյան միակերպ է (μονοειδέες), ավելի ճիշգրիտ՝ զուրկ է կերպից՝ վեր լինելով ձևից ու կերպից» [Plot., VI, 9, 3, 45]: Եվ ապա դրան հավելվում է. «[...] վեր ամենայն ինչից՝ Նախագույնը գոյացություն չէ» [Plot., VI, 9, 3, 50]:<sup>28</sup>

Մոտավորապես այդպիսին է նաև *Ունայնը*: Սակայն նա «մասնակցում է» գոյակարգի կայացմանը և «ներկա է» դրա ծիրում իր անտարբեր անգործությամբ, մինչդեռ

<sup>28</sup> Պլոտինյան Նախագույնը կամ Մեկը, հետևաբար, չի բխում սուկ պղատոնական համապատասխան ստորոգությունից՝ իբրև դրական արժեքանությամբ և տրամախոհությամբ հաստատվող բացարձակ և վերացական արարիչ մեծություն: Անճառելի է (σὺ λελογισμένος) [Plot., VI, 18, 14, 30], հետևաբար նրա մասին կարելի է խոսել միայն ապաստան արժեքանությամբ և տրամախոհությամբ: **Nikulin**, 1998, 331-332: Մյուս կողմից, Մեկը բացարձակ մեծություն է, որը գոյակարգի բոլոր բաղադրիչների արարող, կազմակերպող ու գիտակցող Սկզբունքն է: Իմաստասերը նրան վերաբերում է խորագույն անմիջականությամբ ու սիրով: Նման մոտեցումը բխում է արիստոտելյան ակունքներից: Այլ խոսքով՝ այս նախահիմքի պլոտինյան հղացքում միահյուսված են պղատոնական և արիստոտելյան ըմբռնումները: **Лоев**, 289:

Նախագույնը կամ Բարիքը՝ արարչական (թեկուզև ճիգից ու նպատակից գուրկ) գործունեությամբ: Ընդամին, վերջինս «[...] կյանք է պարզևում այն ամենին, ինչ ինքը չունի» [Plot., VI, 7, 15, 15]: Բոլոր գոյացությունները գոյություն ունեն միայն նրա շնորհիվ, բայց նա նույնական չէ դրանցից որևէ մեկին կամ դրանց հանրությին. «[...] հակառակ պարագային, մեկ լինել չէր կարող» [Plot., VI, 9, 2, 40]:

Մինևույն ժամանակ, գրկված Նախագույնից, «գոյացությունները գոյացություններ չեն», քանզի չունեն էություն. «Չկա բանակ, եթե այն մեկ չէ: Ոչ էլ տունը կամ նավը կարող է գոյություն ունենալ, եթե չունի [իր] մեկը» [Plot., VI, 9, 1, 5]:<sup>29</sup> Նախագո Մեկից ածանցյալ այդ մեկով է պայմանավորված բոլոր գոյացությունների բարեկերպությունը, ըստ որի վերջիններս ապրում են բանական կյանքով՝ կատարելով ի վերուստ իրենց սահմանված դերը: Հենց այս իմաստով պետք է մեկնաբանել Պլոտինոսի միտքն այն մասին, թե Նախագույնը կամ Բարիքը «հավերժորեն ներկա է և չգտնվելով որևէ տեղ՝ ամենուր է» [Plot., V, 4, 2, 30]:

Չլինելով որևէ կերպ կարգաչափաբերված՝ Նախագույնը չի վերածվում մեծության կամ ծավալի. ինչպես նշվեց վերը, ծայրաստիճան պարզ է, «[...] զի ոչ մի բան նրան չի տիրում, նա էլ ոչ մի բանի չի պատկանում, [ընդհակառակը], ամենայն ինչ նրան է պատկանում» [Plot., V, 5, 9, 25]:<sup>30</sup>

Նրանից հավերժ ու անընդմեջ բխում-արտահոսք

<sup>29</sup> Հետագոտողները հաճախ առանձնացնում են Նախագո Մեկի որակների հետևյալ շարքը՝ մեկություն, պարզություն, անտեղայնություն, ինքնաչափելիություն և ինքնաժխտում: Տե՛ս մանրամասն **Pao-Shen Ho**, 2015. 34-55:

<sup>30</sup> Անցումը Նախագույնի չկարգաբերվածությունից դեպի տիեզերական կարգաբերվածություն որոշ հետագոտողներ դիտարկում են իբրև Պլոտինոսի արարչագործական տեսության կարևորագույն ելակետը, որը, սակայն, մանրամասն նկարագրված ու հիմնավորված չէ: Այն մնում է իբրև միտիկ փորձառության բաղադրիչ: **Bussanich**, 2006, 38-47; **Emilsson**, 2017, 351-365:

է կատարվում (էմանացիա – ó ἔξοδος), որը դեռևս չունի ո՛չ բանական, ո՛չ էլ նյութական բովանդակություն:<sup>31</sup> Համաձայն Պլոտինոսի բխումի պատճառը Նախագույնի հարամնա ինքնահագեցվածությունն է [Plot., VI, 9, 6, 15]: Լինելով նրա ինքնության (ή αὐτότης) բարձրագույն դրսևորումը՝ միաժամանակ նաև այլության (ή ἑτερότης) նախադրումն է, զի «[...] այն, ինչ կատարելության վիճակում է, սկսում է արարել և չի հանդուրժում մնալու ըստ ինքյան», քանզի «[...] յուրաքանչյուր բանի մեջ ներկա է իր էությանը ներհատուկ մի ներուժ: Բխելով էությունից՝ այն պետք է [անպայմանորեն] հետևի վերջինիս, լինելով, սակայն, նրանից տարբեր» [Plot., V, 4, 1, 25]: Ճիշտ այնպես, ինչպես կրակից ջերմություն, իսկ ձյունից պաղություն է անջատվում:

Բխում-արտահոսքը սկսում է ծավալվել Նախագույնի ինքնության երկու բևեռների՝ Կարության (ή ἐνέργεια) և Ուժի (ή δύναμις) հանգուցակետում [Plot., V, 4, 2, 30]: Հենց այստեղ էլ տեղի է ունենում նրա պարզ ու ինքնանպատակ ինքնաբավության խաթարումը: Հարդյունս՝ սկսում է երևան գալ բազումը (τὸ πλῆθος), որի նախնական բաղադրիչը՝ *Երկրորդը* (ὁ δεῦτερος), տարանջատված Նախագույնից, նրա նկատմամբ գտնվում է որդիական հարաբերությունների մեջ:<sup>32</sup>

Այդ որդեսերմամբ ծնունդ է առնում *Բանակսներ*,

<sup>31</sup> Բխում-արտահոսքի ստորոգությունը ստոիկյան գոյաբանության հիմնականգծի կառույցներից է: Միավորում է գոյակարգի տարասեռ բաղադրիչները՝ սկսյալ Բանական Հրից (Լոգոս) մինչև աստղերը, բույսերը, կենդանիները և մարդ արարածը: **von Fritz**, 1992, 1015-1016: Պլոտինյան հայեցակարգը, հարկավ, Ավաղեմիայի միջնորդությամբ, մեկնարկում է այս հղացքից: Դրա բովանդակության և ներքին կառույցի մասին տե՛ս **A. Armstrong**, 1937, 61-66; **A. Փ. Јоцев**, 1980, 336-337:

<sup>32</sup> Երկյակը մտընկալելի նյութին հաղորդում է ստեղծագործական հեռանկար, որն իր հերթին ճանապարհ է հարթում մտընկալելի բազումին: Տե՛ս **Rist**, 1962, 99-102:

Երեք նախագո նախահիմքերի մասին տե՛ս **Brisson, Prudeau**, 2006, 584-589; **Horn**, 2013, 597-599:

որին (նույն առասպելագրությունից պատկերագրությամբ) Պլոտինոսը նույնացնում է աստվածների երկրորդ սերնդի հորը՝ Կրոնոսին [Plot., V, 8, 12, 25]: Բանականը, «[...] ի գորու ջինելով պահել [Նախագույնից] ստացած Ուժը, մասնատում է դա և կրում ըստ առանձին հատվածների» [Plot., VI, 7, 15, 20]: Սակայն, ինչպես նախորդ մտածողների (Պյութագորասից մինչև Պդատոն), այնպես էլ Պլոտինոսի համակարգում տվյալ գործընթացը չի բացահայտվում անհրաժեշտ տրամաբանական հստակությամբ և ապացուցելիությամբ: Թերևս դա հնարավոր էլ չէ, քանզի գործ ունենք որակական առաջին և մեծագույն կերպավորության հետ, որն առայսօր էլ առեղծված է մնում:

**Բանականը** գոյակարգի երկրորդ նախահիմքն է: Նրա ծիրում «գոյ» ստորոգությունը բացահայտվում է իր երկրորդ հիմնարար նշանակությամբ՝ իբրև ամենայն ինչի էությունական բովանդակությունը: Դա Նախագույնից «[...] դեռևս շատ քիչ է հեռացել, և նախապես չէր էլ ցանկանում հեռանալ: Պարզապես հետ է շրջվել ու կանգ առել՝ վերածվելով էության ու հարազատ օջախի՝ մնացած բոլորի համար» [Plot., II, 5, 5, 10]:<sup>33</sup>

Ի տարբերություն Նախագույնի բացարձակ ու պարզ «մեկության» Բանականը բազում է, որ կարգաբերված է ըստ յուրահատուկ համաչափության «մեկ-բազումի» (ἕν-πολύ):<sup>34</sup> Ի հետևանս՝ «Բանականի տիրություն բազումը չարիք չէ. այն կազմակերպված է և չի կարող լինել [սոսկ] բազում ամենուր և բոլոր հարաբերություններում» [Plot., VI, 9, 2, 30]: Ինչպես պարզվում է Պլոտինոսի հետագա շարադրանքից, այն առաջին հերթին *մեկ-երկյակ* է, որից անխուսափելիորեն բխում են *մեկ-եռյակը*, իսկ ապա՝ բազումի մյուս բոլոր բաղադրիչները: Դրանք կազմում են, այսպես կոչված, բանական

<sup>33</sup> Տիեզերակարգի այս երկրորդ հիմնարար բաղադրիչի գոյաբանական և իմացաբանական բովանդակության մասին տե՛ս մանրամասն Օ՝Meara, 2006, 66-82; Emilsson, 2017, 104-111:

<sup>34</sup> Տե՛ս Nikulin, 1998, 326-329.



կամ մտըմբռնելի թվերի շարակարգությունը (οἱ ἄριθμοὶ νοητοί), որն արտահայտում է գոյակարգի էութենական վիճակներն ու հարաբերությունները [Plot., VI, 8, 6, 20]:<sup>35</sup>

Նախագույնի դիտանկյունից, հարկավ, Բանականն արդեն «այլ» է (ἕτερος) և ի տարբերություն նրա՝ ունի ինքնագիտակցություն և ինքնաճանաչողություն (ή κατανόησις αὐτοῦ) [Plot., V, 3, 4, 10]: Տվյալ կապակցությամբ առանձնակի կարևորություն են ստանում Բանականի երկու բևեռները՝ Միտքը (ή νόησις) և Մտածյալը (կամ ճանաչելին – τὸ νοητόν): Դրանք անքակտելի կապի մեջ են, քանզի « [...] Բանականը հայտում է ոչ թե արտաքո բաներին, այլ ինքն իրեն և նրան, ինչ իրենից վեր է» [Plot., VI, 9, 2, 30]: Ասվածը, սակայն, չի նշանակում, թե նշված բևեռները նույնական են: Ըստ Պլոտինոսի՝ դրանք ներկայացնում են Բանականի «փնքնությունը» և «այլությունը»: Վիճակներ, որոնք լիովին փոխշրջելի են, այնպես որ «Միտքն ու Մտածյալը [կրկին ու կրկին] մեկ են դառնում» [Plot., V, 3, 4, 25]:

Մտքի այս ուղիղ ու հակադարձ հարաբերումն իր իսկ նկատմամբ արդյունավորվում է Գոյով (τὸ ὄν, τὸ εἶναι)՝ բոլոր գոյացությունների էութենական կառույցով: Նրա առնչությամբ Բանականը ներկայանում է իբրև մեկ-եռյակ: Հենց այս իմաստով պետք է մեկնաբանել Պլոտինոսի միտքն առ այն, որ «Մտքից [անմիջապես] հետո Գոյն է» [Plot., VI, 6, 15, 20]:<sup>36</sup> Հեղինակի

<sup>35</sup> Բանական աշխարհի մաթեմատիկական հենքի և, հետևաբար, սպացուցելիության նախադրույթը հանգամանորեն մշակվել էր Պյութագորասի և իր դպրոցի ջանքերով: Կատարելության էր հասցվել Պլատոնի համակարգում: Այս մոտեցումը տիրական դարձավ հելլենիստական դարաշրջանի տարբեր իմաստասիրական դպրոցներում: Տե՛ս **Cambiano**, 1999, 585–599: Պլոտինոսը ժառանգել է դա և հարմարեցրել իր տեսությանը: **Heath**, 1921, 141-144; հմմտ. **Cherniss**, 1951, 409-415:

<sup>36</sup> Բանական տիեզերքի պատկերը Պլոտինոսը երփներանգում է՝ պաշտպանելով Պլատոնին իմաստասիրական այլ մոտեցումներից: Սակայն, որքան էլ տարօրինակ հենչի, հենց այս ճանապարհին նա սկսում է հեռանալ իր բնօրինակից և ձեռք բերում մտքի յուրօ-

տերստում վերջինս հաճախ ներկայանում է իբրև բանական թանձրույթ (τὸ ἄνω ὑποκείμενον), բանական բնություն (ή φύσις νοητή), էություն (ή οὐσία), Արքե-տիպ (τὸ ἀρχέτυπον), կամ էլ պարզապես Իմաստություն (ή σοφία, ή φρόνησις):

Գոյն անբակտելիորեն լծորդված է Մտքի կառույցին, «[...] քանզի նրանք ունեն մեկ ընդհանուր բնություն» [Plot., V, 9, 8, 15]: Այդ միասնությունն արդյունավորվում է «էութենական Մտքով» (ή οὐσιώδης νοησις), որի ծիրում իր տրամաբանական հանգուցալուծումն է ստանում մեկ-եռյակը՝ *Միտք-Մտածյալ-Գոյ*: Դրան են խարսխված բանական տիեզերքի մնացած բոլոր գոյացությունները:

Այդ գոյացություններից յուրաքանչյուրը, նման հանուր Բանականին, ապրում է մաքուր և կատարյալ կյանքով ու չարիք չի պարունակում. «[...] մաքուր բանական ձև է և յուրօրինակ պատկեր» [Plot., VI, 7, 16, 5]: Եվ կա ընդհանուր մի բան (τὸ κοινόν), որին հավասարապես մասնակցում են դրանք բոլորը:<sup>37</sup> Դա բացարձակ լինելիությունը կամ Կյանքն է, որի գործառույթով Բանականը ներկայանում է իբրև «կատարյալ կենդանի էակ» (τὸ παντελές ζῶον), որը պարառում է բոլոր կենդանի գոյացությունները [Plot., I, 6, 7, 15]:

Պլոտինյան տերստում բանական գոյացությունները ներկայանում են իբրև սեռի (τὸ γένος) և տեսակի (τὸ εἶδος) ստորոգությունների մի համաչափ կառույց, որի ծիրում գերակա դիրք ունեն առաջինները: Ընդսմին, իմաստասերը մերժում է արիստոտելյան տասը

րինակություն: Աստ բացահայտվում է նրա աներկբա կապը գնոստիցիզմի և քրիստոնեական վարդապետության հետ: Տե՛ս **Evangelion**, 1999, 37-46:

<sup>37</sup> Գեղեցիկի հղացքն սկզբունքային կարևորություն ունեւր անտիկ մտակերպի (առասպելամտածողություն, իմաստասիրություն, գեղագիտություն) մեջ: Նրա համընդգրկուն և առօրեական իմաստները կողավորված էին *Տիեզերք* եզրույթի մեջ – Κόσμος – կարգաբերվածություն, գեղեցկություն, արդարություն: Հմմտ. **Лосев**, 2000, 295-314:

ստորոգությունների հղացքն այն հիմամբ, որ դրանում անհրաժեշտ հասակությամբ շեշտված չեն «այնտեղի» և «այստեղի» որակական տարբերությունները [Plot., VI, 1, 2-3]: Նա հետևում է պրատոնական հինգ նախագո սեռերի հղացքին [cf. Plato, Soph., 254c-257d]: Դրանում սկզբնապես առկա է Գոյը (Միտք + Մտածելի), որի հարաբերումն իր իսկ նկատմամբ ծնունդ է տալիս Նույնությանն ու Այլությանը, Դադարին ու Շարժմանը [Plot., VI, 1, 4, 35; 2, 15, 30]:<sup>38</sup>

Այս մեկ-հնգյակի ծիրում Նույնությունը ներկայացնում է Բանականի անտարբերությունն իր իսկ վերաբերմամբ (ή ἀδιαφορία), իսկ Այլությունը՝ տարբերությունը (ή διαφορία): Դրանք «անառարկելի անհրաժեշտություն են», որպեսզի Բանականը լինի միաժամանակ և՛ Մտածողը, և՛ Մտածելին. հակառակ պարագային, «[...] կվերածվի մեկի և կո՞ի» [Plot., VI, 4, 3, 15]:

Համապատասխանաբար, Դադարը «նույն ինքը» լինելու, իսկ Շարժումը մտածելու և «այլանալու» կարողություններ են: Այս առնչությամբ Պլոտինոսը կրկին անդրադառնում է իր հայեցակարգի հիմնարար գաղափարներից մեկին. ի տարբերություն Նախագույնի՝ Բանականը միաժամանակ թե՛ ինքն է, թե՛ ուրիշը [Plot., VI, 4, 3, 20]:

Ուշադիր քննության պարագային պարզվում է, որ պրատոնական մեկ-հնգյակը Պլոտինոսի հայեցակարգում առավել շարժուն համակարգ է, որն ունի շարունակվելու ներուժ: Կարևորագույն քայլը մեկ-հնգյակի վերածումն է մեկ-յոթնյակի՝ շնորհիվ *Թ՛Վի* (կամ քանակի) և *Որակի* սեռերի ներմուծման:

Համաձայն իմաստասերի՝ Թ՛Վը ցուցանում է Բանականի ներքին կառույցի բազմազանությունը՝ ամբողջի (մեկի) շրջանակում, «[...] քանզի այն է, ինչ կա, գոյություն ունի ըստ Թ՛Վի (τὸ ἄρισμῶ)»: [Plot., VI, 6, 3,

<sup>38</sup> Մեռի և տեսակի ստորոգությունները կոչված են ցուցանելու երեք Նախահիմքերի ինքնությունը: Ընդամին, Նախագո տիեզերքն ընկալվում է իբրև մտածական գործունեության և՛ հոլովույթ, և՛ արգասիք: **Lavaud**, 2014, 378-381:

5]: Մինչդեռ Որակը այդ կառույցի յուրաքանչյուր բաղադրատարրի առանձնահատկությունն է, «[...] որից բխում է ամեն բան» [Plot., V, 1, 4, 40]:<sup>39</sup>

Իր վաղ քննախոսություններում Պլոտինոսը հատուկ ուշադրություն է դարձնում Գոյի (կամ Էության) և Որակի փոխհարաբերությունների խնդիրներին: Ըստ որում, Որակը զբաղեցնում է ածանցյալ դիրք, քանզի «[...] առանց դրա էլ Էությունն ի գորու է գոյություն ունենալ» [Plot., III, 7, 3, 25]: «Որակը տարբեր է», սակայն նրա կողը Էության հետ անկապտելի է՝ շնորհիվ բանական Կարության (ή δύναμις):<sup>40</sup>

«Գոյ-Այլություն-Որակ» եռամիասնությունն, ըստ իմաստասերի, Բանականի ծիրում արդյունավորվում է, այսպես կոչված, «բանական մարմնով» (τὸ σῶμα τοῦ νοῦ), «[...] որն ընկած է *այնտեղի* անյուրթ էությունների հիմքում» [Plot., II, 4, 1, 15]: Դա Մարմնի (կամ Ձևի) արքետիպն է, որը նյութի մեջ ներթափանցելու պարագային սկսում է արարել՝ կյանքի կոչելով նյութական մարմինները:<sup>41</sup>

Չնայած բանական տիեզերքում ունեցած բացառիկ դերակատարության՝ նախագո սեռերի շարքում տեղ չեն զբաղեցնում Մարմինը (կամ Ձևը), Կարությունը, Ուժը, Ծշմարիտը, Գեղեցիկը, Արդարը: Համաձայն

<sup>39</sup> Թիվը և որակը Պլոտինոսը դիտարկում է ի շարս մտրեկալելի անհատական ձևերի՝ վերջիններիս նկատմամբ գերակայումի հարաբերությամբ; Տե՛ս **Rist**, 1963, 226–228:

<sup>40</sup> Հայսմ *կարությունը* Պլոտինոսի հայեցակարգում նախ և առաջ տրամաբանական բովանդակություն ունի: Հետագոտողներն այն յծորդում են Արիստոտելի տրամաբանության հետ: Տե՛ս **Lloyd**, 1956, 146–149:

<sup>41</sup> Պլոտինյան «բանական մարմինը», թվում է, միանգամայն համեմատելի է գրադաշտական tan-i pasen-ին (սպազայի մարմին), որը, ինչպես հայտնի է, նույնպես գուրկ էր նյութականությունից: Յուրաքանչյուր բարեպաշտ հոգի, հասնելով *Ֆրաշագիրոյի* (Հրաշակերտ) դարաշրջանին, ստանում էր դա և ապրում երջանիկ կյանքով: **Boyce**, 1984, 44: Հավանաբար, Պլոտինոսի «հոգևոր պարսկականության» փնտրտուքն իզուր չի անցել: Տե՛ս **Lloyd**, 1956, 149–152:

իմաստասերի՝ դրանք համընդգրկուն նպատակ-միջոցներ են, որոնց գործառնությամբ մարմինը բարձրանում է բանական Հոգու, բանական Հոգին՝ Բանականի, Բանականը՝ Նախագույնի կամ Բարիքի մակարդակ: Եվ հարդունս՝ «Բարձրանալով ու հաստատվելով Նախագույնին առընթեր՝ Բանականը երջանկանում է, իսկ Հոգին հրճվում է նրա տեսքից: Եվ ընդհանրապես, ամենայն ինչ մաքրվում [և ազնվանում] է նրանից, ինչ վեր է իրենից» [Plot., 7, 31, 5]:<sup>42</sup> Նախագո սեռերին և նպատակ-միջոցներին հետևում են տեսակի ստորոգությունները, որոնք պլոտինյան բանական տիեզերքում ներկայանում են իբրև գոյեր կամ էություններ (τὰ εἶναι, τὰ ὄντα), մաքուր բանական ձևեր (τὰ εἶδη), բանական տարրեր (οἱ λόγοι), սկիզբներ (αἱ ἀρχαί), արքեստիպեր (οἱ ἀρχέτυποι): Դրանք «անփոփոխ ու անկիրք են»՝ գերծ ժամանակի ներգործությունից [Plot., V, 9, 6, 20]: Գտնվում են առանձնակի հարաբերությունների մեջ «այնտեղի» մյուս բոլոր գոյացությունների հետ, հարաբերություններ, որոնք կառուցված են ըստ «բացարձակ համաչափության»։ «[...] ժամանակի փոխարեն այնտեղ հավերժն է: Տարածությունն այնտեղ գոյություն ունի ըստ բանական սկզբունքի՝ մի հատված մյուսի ծիրում: Եվ քանի որ բոլորը մեկ են, ապա ցանկացած հատված գոյ է ու բանական տարր և մասնակցելով Կյանքին՝ [միաժամանակ] նույնն է և ուրիշը, շարժյալը և դադարի վիճակի եկածը, էությունը և որակը» [Plot., V, 9, 10, 5-10]:

Այլով բանիվ՝ սեռի ու տեսակի բաղադրիչները, լինելով միաժամանակ իդեալական և՛ էություններ, և՛ ձևեր, և՛ ներուժեր, կրկնում են Բանականին, «ինչպես զավակները հորը»:<sup>43</sup> Այստեղից՝ ընդհանրական եզրակա-

<sup>42</sup> Մասնակի հոգու վարընթաց և վերընթաց շարժումը, համաձայն Պլոտինոսի, կատարվում է ըստ որոշակի բարոյական և գեղագիտական սկզբունքների: Տե՛ս Song, 2009, 32-38:

<sup>43</sup> Մինչդեռ Պրոկոսի հայեցակարգում (5-րդ դ.) արդեն շեշտված է դրանց առավելապես ներուժային բովանդակությունը: Տե՛ս

ցություն. հակառակ Նախագույնի՝ «Բանականն ունի ներուժ՝ ըստ ինքյան սերունդ տալու և լցվելու իր իսկ զավակներով» [Plot., VI, 7, 15, 10]:

Եվ իբրև ասվածի տրամաբանական զարգացում՝ «Բանականը հենց այն է, ինչ մտածում է» [Plot., V, 9, 5, 15]: Այս դրույթում դրսևորվում է Բանականի՝ որպես ամբողջի և նրա առանձին հատվածների փոխհարաբերության ինդիքը: Համաձայն իմաստասերի՝ բանական Հանուրը մեկ է իր հատվածների հետ: Այն անհնար է տրոհել, քանզի «[...] Հանուրը և յուրաքանչյուրը, յուրաքանչյուրը և առանձնահատուկը, յուրաքանչյուրը և սահմանը ամենուրեք նույնական են միմյանց և ներկայացնում են փառքը» [Plot., V, 8, 4, 40]: Նույն համաչափությամբ է կազմակերպվում և բանական տարածությունը. վերջինս նույնպես իր հատվածների հետ գտնվում է «անքակտելի հարաբերումի մեջ»՝ չլինելով, սակայն, սահմանափակված որևէ կոնկրետ տեղանքում: Նրանք ամենուր են: Միմյանց նկատմամբ համաժամանակյա են և այդ պատճառով՝ մշտնջենական:

Սակայն, որքան էլ սերտ ու անմիջական, բանական հոր և զավակների հարաբերությունները միջնորդված են Բարիքով. «Բանականն ի զորու է առինքնել նրանց՝ Բարիքի էությունը մտահայելով (ὅτε ἐθεώρει τῆν τοῦ ἀγαθοῦ φύσιν)» [Plot., VI, 7, 15, 15]: Դա այն ճանապարհն է, որով Նախագույնը հավերժ ներկա է վերջինիս ծիրում:

Հարդյունս դրա՝ բանական Հանուրի և նրա առանձին հատվածների փոխադարձ անցումները միանգամայն բնական են, պայացուցելի և ըմբռնելի. նրանք բոլորը բարեկերպ են (οἱ ἀγαθοεῖδοι), և նրանց «մեկությունն» անընդհատ վերահաստատվում է փոխադարձ «այլության»

---

**Elsee**, 1908, p. 132; հմմտ. **Armstrong**, 1940, 61, 105; **Rist**, 1967, 68-71: Հավելենք, որ նման մոտեցումը տարածում ստացավ նաև մեր հարյուրամյակում, թերևս արդի ֆիզիկայի (մասնավորապես քվանտային ֆիզիկայի) ազդեցությամբ:

հաղթահարման ճանապարհով:<sup>44</sup> Ընդամին, հաղթահարումը Պլոտինոսը չի ներկայացնում իբրև շարժում երկրային իմաստով, այլ բացարձակ շարժում, որը վերաբերում է միայն էությունական վիճակներին ու հարաբերություններին: Եվ Դադարը երբեք չի խաթարվում, քանզի «[...] յուրաքանչյուրն ամբողջն է միավորված մեկի համաձիրում» [Plot., V, 8, 9, 15]:

Իր այսօրինակ շարժուն կայունությամբ բանական «մեկությունն» արմատականորեն տարբերվում է Նախագույնի ծայրահեղ պարզ ու անփոփոխ «մեկությունից»: Այդուհանդերձ, նրանք ունեն մի չափազանց էական ընդհանրություն. բացարձակապես զուրկ են ներքին հակասություններից: Ընդամին, քանի որ «վեր գտնվողն ավելի մաքուր ու կատարյալ է», ապա Բանականն առավել համապատասխանում է իր գաղափարին այն պարագային, երբ ամբողջովին շրջված է առ Նա և ներկա է Նրան [Plot., VI, 9, 3, 25]:

Բանականի այս վիճակն առավել պատկերավոր ներկայացնելու ակնկալությամբ, այդ մասին ակնարկվեց վերը, Պլոտինոսն օգտագործում է «հագեցումի և բանականության Աստծո»՝ Կրոնոսի առասպելությոթ: Դա ծնողի մասին է, որը շարունակում է իր ներսում պահել արդեն ծնված զավակներին, «[...] քանզի հրճվում և ուրախանում է իր իսկ ստեղծագործություններով ու զավակներով՝ պահելով դրանք իրեն առընթեր և գոհանալով թե՛ իր, թե՛ դրանց փայլով ու փառքով» [Plot., V, 8, 12, 15]: Սակայն, հակառակ առասպելի, գտնվելով Հոր ներսում՝ զավակները նույնքան հրճվանք և ուրախություն են ապրում, որքան նա: Չի միայն այդ դեպքում է հնարավոր Լինելությունն իր բացարձակ իմաստով:<sup>45</sup>

<sup>44</sup> Բանականի հարթությունում ծավալվող *նույնության* և *այրության* հարընթաց փոխշրջելիությունը պայմանավորում է նաև նյութական աշխարհի որակական տարասեռությունները և հակընթաց շարժումն առ *մեկություն*: Տե՛ս **Gurtler**, 2005, 197-203:

<sup>45</sup> Համաձայն առասպելի՝ Կրոնոսը կուլ էր տալիս իր նորածին զավակներին՝ Հեստիա, Դեմետրա, Հերա, Հադես, Պոսեյդոն: Միայն

Եվ այսպես. Բանականը՝ գոյակարգի երկրորդ նախահիմքը, որ բխում-արտահոսքի առաջին աստիճանն է, բացարձակ կենդանի էակ է (τὸ αὐτοζῶον), որը մեկբազումի համաչափությամբ պարառում է բանական գոյացությունները և այդու հանդիսանում նյութական բոլոր գոյացությունների կատարյալ հարացույցը:<sup>46</sup>

**Հոգին** գոյակարգի երրորդ նախահիմքն է և բխում-արտահոսքի երկրորդ աստիճանը: Նրա մասին ուսմունքը պլոտինյան հայեցակարգի ամենամշակված և ինքնատիպ հատվածն է: Այստեղ հատկապես ցայտուն է դրսևորված իմաստասերի ստեղծագործական անկրկնելի անհատականությունը: Ուստի հոգեբանությանը կանդախտանք ավելի հանգամանորեն:

Պլոտինյան ուսմունքում «հոգի» ստորոգությունը պարառում է գոյակարգի երկու տարատեղ մակարդակ:<sup>47</sup> Վերինը՝ բանական Հոգին (ή ψυχή νοητή) կամ բացարձակ Հոգին (ή αὐτοψυχή), անմիջական հարաբերումի մեջ է Բանականի հետ: Ստորինը՝ զգայական հոգին (ή ψυχή αἰσθητική), հեռու է Բանականից. ներթափանցումի տարբեր մակարդակներով այն գտնվում է նյութի ծիրում՝ կրելով դրա այլազան ազդեցությունները:<sup>48</sup>

մեկին՝ Չևսին, կինը՝ Հռեան, խոնաց: Ամուսնուն տվեց մի բարուրված քար: Մանուկին պահում էին Կրետե կղզու քարայրերից մեկում: Մեծանալով նա սպանեց հորը և ազատեց քույրերին և եղբայրներին: Տե՛ս **Rose, Park**, 1992, 573-574: Կար այս առասպելական պատումի նաև իմաստասիրական ընկալում՝ հիմնված հերոսների անունների (երևակայական) ստուգաբանության վրա. Կրոնոս – ὁ χρόνος (ժամանակ), Հռեա – ῥέω (հոսել), Չևս – ή ζώη (կյանք): Միասին՝ Ժամանակ և ապա Կյանք, որ հաղթահարում է նրա Հոսունությունը:

<sup>46</sup> Հանուր Բանականի գործառույթը և նրա արարչական կապը ինչպես Մեկի, այնպես էլ ստորակա աշխարհի (ի մասնավորի՝ մարդ էակի) հետ պլոտինյան հոգեմտավոր շարժի հիմնական բաղադրիչն է: Տե՛ս **Sinnige**, 2002, 292-295:

<sup>47</sup> Հոգու երկվությունը դիտարկվում է իբրև տիեզերքի ենթադրվող կամ (ապագա) իրական հոլովույթի պատճառ: Տե՛ս **Emilsson**, 2017, 174-181:

<sup>48</sup> «Հոգի» հոացքի մանրամասն և համակողմանի մշակումը համարվում է Պլոտինոսի կարևորագույն ներդրումներից մեկը:



**Բանական Հոգին**, իմաստասերի բանաձևմամբ, արդյունք է Բանականի ստեղծագործական ճիգի. «[...] այն Բանականի Միտքն է, հանուր Կարությունը և Կյանքը, որն արտամղվում է [նրանից]՝ մեկ այլ նախահիմք արարելու նպատակով» [Plot., V, 1, 3, 10]:<sup>49</sup> Ասվածի դիտանկյունից միանգամայն տրամաբանական է հնչում միտքն այն մասին, թե Հոգին ոչ այլ ինչ է, քան Լինելության բացարձակ սկզբունքը, որն «[...] անանց, անմեռ ու անխուսափելի է, զի ամենայն ինչի կենսական աղբյուրն է»: Ավելին՝ նա «[...] ինքնին Կյանքը, ինքնին Գոյը, [ուստի նաև]՝ առաջին Գոյը, առաջին Կյանքն է» [Plot., IV, 7, 9, 1]: Եվ դա է պատճառը, որ նա ոչ կայանում է, ոչ էլ ոչնչանում:

Հետազոտողներից ոմանք հակված են բանական Հոգին դիտարկել իբրև Բանականի կենսական դրսևորումը:<sup>50</sup> Սակայն այդ մոտեցմամբ թերագնահատվում է այն իրողությունը, որ Բանականի նկատմամբ Հոգին «այլ» է: Ըստ Պլոտինոսի «այլացումն» ընթանում է համարյա նույնական ճանապարհով, ինչ Նախագույնի պարագային. նորից վճռորոշ դեր են խաղում (ճիշտ է, այս անգամ արդեն Բանականի) Կարությունը և Ուժը. «[...] դրանք բխում են դադարի վիճակում գտնվող Բանականի էությունից և դառնում Հոգու սեփականությունը» [Plot., V, 2, 1, 15]:

Բանականի համեմատությամբ Հոգին պակաս կատարյալ է, քանզի «[...] արարիչն ամեն անգամ մնում է իր սեփական մակարդակին, մինչդեռ արարյալն իջնում

---

Տե՛ս այս մասին Կալուորիի հիմնարար հետազոտությունը **Caluori**, 2015, 69- 90:

<sup>49</sup> Երբեմն Պլոտինոսն այն բանաձևում է իբրև *այնտևի հոգի* (ή ἐκεῖνη ψυχή): Հմմտ. **Caluori**, 2015, 152:

<sup>50</sup> Անտարակույս, այս հղացքը զուգական է քրիստոնեական երրորդությանը, որտեղ բանական Հոգուն համապատասխանում է սբ. Հոգին: Ավելին, հետազոտողներից ոմանք աստ տեսնում են քրիստոնեական վարդապետության աներկբա ազդեցությունը Պլոտինոսի վրա: **Elsee**, 1908, 116-119:

է ավելի ցած» [Plot., V, 2, 2, 5]: Ըստ իմաստասերի՝ դա է պատճառը, որ Բանականը հավերժ ձգտում է «սնուցանել ու դաստիարակել Հոգուն՝ իբրև զավակի»: Եվ դա արդյունական է այն ժամանակ, երբ Հոգին սկսում է ինքնաճանաչել՝ լինելով իր իսկ նկատմամբ միաժամանակ և՛ «նույնը», և՛ «այլը» [Plot., IV, 7, 9, 25]: Նա հայում է Հորը և ըմբռնում նրա կարությունները՝ գտնելով բանական տիեզերքում այն ամենը, ինչ հարազատ է իրեն, «ինչ մտածում ու ներագդում է»: Ի հետևանս դրա՝ Հոգին հանապազ ներկա է Բանականի, իսկ Բանականը՝ Հոգու տարածքում:<sup>51</sup>

Սակայն նրանց փոխհարաբերություններում նույնքան էլ զորեղ է տարանջատման միտումը: Եվ բանական Հոգին իր հերթին հայրական հարաբերությունների մեջ է նրանց նկատմամբ, որոնց ինքն է կյանքի կոչում. «[...] իբրև հայր նա ամենուր է՝ միաժամանակ թե՛ մեկի, թե՛ ամբողջի երևույթով» [Plot., V, 1, 3, 20]: Նրա ստեղծագործական ճիգի շնորհիվ գոյություն ունեն անշարժ աստղերը, մոլորակները, երկինքը, երկիրը, ծովը, մարդիկ, կենդանի արարածները, բույսերը [Plot., V, 5, 9, 20]: Սակայն դրանք դեռևս չունեն մարմնական կառույց: Չունեն կյուծական ձև, գույն և այդու՝ անդին են զգայական և առօրեական ընկալումներից [Plot., IV, 3, 5, 15]: Դրանք գոյակարգի մտահոգևոր բաղադրիչներն են օժտված ստեղծագործական անառարկելի ներուժով:

Հակառակ ստոիկների ըմբռնման՝ առանձին բաղադրիչները Հոգու ծիրում ինքնակա գոյացություններ չեն [SVF, fr. 21, v. II, p. 296]: Եվ ոչ էլ բացարձակորեն նույնական են Հոգուն, ինչպես մտածում են պերիպատետիկները [Aristot., De animo, II, 1, 412a, 20]:<sup>52</sup> Պղատոնի

<sup>51</sup> Տե՛ս այս մասին մանրամասն **Caluori**, 2015, 82–86:

<sup>52</sup> Տե՛ս **Greaser**, 1972, 11–13. Անհամաձայնությունները ստոիկների նկատմամբ ակնառու են հատկապես մարդ էակի ազատ կամքի ու ընտրության հարցերում: Ստոիկներն անտեսում էին դրանք՝ նախապատվություն տալով Նախախնամությանը, մինչդեռ Պլոտինոսը դրանցում տեսնում է վերջինիս առանձնահատուկ դերակա-

հետևողությամբ Պլոտինոսը գտնում է, որ դրանք Հոգու սոսկ կարություններն են, և վերջիններիս (Հոգու և կարությունների միջև) հարաբերությունները կառուցված են նույն մեկ-բազումի համաչափությամբ: Այսինքն՝ գտնվում են անքակտելի լծորդումի մեջ և ունեն համատիեզերական ընդգրկում [Plato, Tim., 30a-d; Phaed., 89d]: Եվ պատահական չէ, որ այդ համաչափությունը Հոգու ծիրում նույնպես «[...] տարածականորեն չի տեղաշարժվում, այլ գտնվում է [հավերժական] դադարի վիճակում՝ իր իսկ նախահիմքի տիրույթում» [Plot., V, 2, 2, 10, cf. IV, 3, 19-20]:

Ինչպես նշվեց, բանական Հոգին պարառված է ինքնաբավ և արարիչ Մտքի ծիրում: Նրան նույնպես հատուկ չէ տրամախոհելու և տրամախոսելու ընդունակությունը (ὁ λογισμος): Համաձայն Պլոտինոսի՝ վերջինս սկզբնավորվում է այն պահից ի վեր, երբ խաթարվում է Հոգու ինքնաբավությունը. «[...] տրամախոհելու հատկանիշը ներհատուկ է նրանց, ովքեր գտնվում են զգայական ընկալումների ծիրում և ունեն ինչ-որ բանի կարիք» [Plot., IV, 4, 22, 5]: Բայց քանի որ Հոգին և նրա բաղադրիչները չունեն որևէ բանի կարիք, սպա չեն օգտվում ո՛չ տրամախոհությունից, ո՛չ էլ դրա հնչունային կառույցից՝ խոսքից: Ուստի Դադարին զուգընթաց նրանք գտնվում են նաև հավերժական Լռության վիճակում:

Այդ վիճակը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ Հոգին չի սկսել արարել՝ «կյանք պարգևելով բոլոր գոյացություններին» [Plot., V, 2, 1, 20]: Հավելենք, որ տվյալ պարագային ինքնաբավության խախտումն արդյունք է արդեն Հոգու կարության և ուժի աշխատանքի: Հարդյունս դրա՝ նա վերածվում է իրեղեն-երկրային շարժման աղբյուրի (ή ἀρχή τῆς κινήσεως) [Plot., IV, 7, 9, 5]: Եվ այդ պահից ի վեր անդառնալիորեն խախտվում է մեկ-բազումի համաչափությունը՝ տեղիք

տալով բազումի հարանուն ազդեցությանը:<sup>53</sup> Բայց դա արդեն ստորին հոգու տիրույթն է, որտեղ տիրապետող են նյութական թանձրույթը (τὸ κάτω ὑποκείμενον) և դրա այլազան դրսևորումները:

Նյութական թանձրույթը, մարմնական ձևերը և բազումը ստորակարգ դիրք են զբաղեցնում բանական Թանձրույթի, բանական (մաքուր) ձևերի և մեկ-բազումի հարաբերությամբ: Եվ տեղին պետք է նկատել իմաստասերի միտքն այն մասին, թե իբրև Բանականի որդի՝ Հոգին «[...] գտնվում է [իրենից] ավելի կատարյալ Հոր և ավելի անկատար զավակների արանքում» [Plot., V, 8, 12, 25]: Դա նշանակում է. բանական Հոգին եռյակ հարաբերությունների ամբողջություն է: Մի դեպքում նա շրջված է առ Բանականը՝ իբրև նրա կարություններից մեկը, մյուս դեպքում՝ առ ինքն իրեն՝ իբրև Բանականից «այլը», երրորդ դեպքում՝ առ Բնությունը՝ արդեն իբրև նյութական աշխարհից «այլը»: Դա «ինքնություն» է՝ երկու բեռային «այլությունների» միջև:<sup>54</sup>

Ասվածին հավելենք, որ առասպելագրթերիկ պատկերագրությամբ Բանականի Որդին հաճախ ներկայանում է որպես Չևսը, որ կապող օղակ է Կրոնոսի և աշխարհի միջև: Ուստի նա, որպես կանոն, պատկերվում է երկու այլազան բնությամբ՝ աներևույթ, որը պատկանում է բանական աշխարհին, և երևելի, որ պատկանում է զգայականին:

Համաձայն անտիկ պատկերացումների՝ տվյալ առումով Չևսը լիովին համադրելի է Էրոսին՝ տիեզերական միասնության և շարակարգության գերագույն սկզբունքին: Վաղ հունական արձակի նշանավոր ներկայացու-

<sup>53</sup> Բանական հոգու աստիճանակարգը, բովանդակությունը և նշանակությունը հետազոտական սևեռումի առանձնահատուկ խնդիրներ են: Ընդամին, աստիճանակարգի տարբեր մակարդակների միջև ընթանում է բխում-արտահոսք, որն իր հերթին արդյունավորվում է ինքնությունների շարքով: Տե՛ս **Aubry**, 2014, 310-314, 318-322:

<sup>54</sup> Հմմտ. **O'Brien**, 2011, 218-219:

ցիչ Փերեկիդեսը իր կոսմոգոնիական առասպելում այդ կապակցությամբ նշում է. «[...] նպատակ ունենալով դառնալ [տիեզերքի] արարիչ Չևսը վերածվում է Էրոսի» [Vorsokr., fr. 6, Bd I, S. 49]: Չարգացնելով իմաստասիրական այս ավանդույթը՝ Պդատոնը շեշտում է, որ Էրոսը «[...] միջակա դիրք ունի անմահության ու մահվան, ճշմարիտի ու կեղծիքի, գեղեցիկի ու տգեղի, բարիքի ու չարիքի միջև» [Plato, Symp., 200d-c]: Նույն ավանդության դրսևորում պետք է նկատել նաև այն, որ Պլոտինոսի գրությունը Հոգին երբեմն նույնացվում է Ափրոդիտեին [Plot., V, 8, 12, 25]:<sup>55</sup>

Այլով բանիվ՝ բխում-արտահոսքի քննարկվող տիրությունը ի հայտ է գալիս գոյակարգի մի նոր բաղադրիչ՝ Սերը, որն անհայտ է թե՛ Նախագույնին, թե՛ Բանականին, թե՛ բանական Հոգուն: Եվ պատճառն այն է, որ դրանք ծայրաստիճան ինքնաբավ են, մինչդեռ «[...] Էրոսն առաջին հերթին ձգտում է առ ինչ-որ մեկը կամ ինչ-որ բան» [Plat., Symp., 200e]: Ուստի պատահական չէ, որ մինչև այդ գոյություն ունեցող հայրություն ու որդիություն հարաբերությունները չեն ուղեկցվում սիրո պաթոսի որևէ դրսևորմամբ: Չի «ինքնությունն» ու «այլությունը» նրանց ծիրում չունեն բացարձակ իմաստ, և փոխադարձ անցումները բանական և օրինաչափ են: Բացարձակ իմաստ դրանք ձեռք են բերում բանական Հոգու և զգայական աշխարհի (Բնության) սահմանագծին: Այդ առումով բխում-արտահոսքի հետագա ողջ ընթացքը ներկայանում է իբրև Սիրո ճանապարհով բանական և զգայական աշխարհների երկկողմ «այլության» հաղթահարման ճիգ:

<sup>55</sup> Էրոսի բանական և զգայական դիտանկյունների, ինչպես նաև տիեզերքի բոլոր հարթակների միավորիչ դերակատարության մասին տե՛ս **Bertozi**, 2012, 113-125: Այս հղացքը համակողմանի վերլուծության էր ենթարկվել հունական մտքի առասպելական, էզոթերիկ և իմաստասիրական տիրություններում: Սակայն Պլոտինոսին առավել մոտ է հիմնախնդրի պղատոնական մեկնությունը: **Rosen**, 1965, 458-461; **Levy**, 1979, 285-291:

### 3. Պլոտինոսի հայեցակարգը (զգայելի տիեզերքը)

Հանդերձ այդու, բանական Հոգու և Բնության հարաբերություններն անմիջական չեն: Նրանց միջև գտնվում է մի մակարդակ ևս՝ *հանուր (տիեզերական) Հոգին* (ή ψυχή παντῶν): Խոսքը զգայելի տիեզերքի մասին է, և այս Հոգին համագոյության այն բացարձակ սկզբունքն է, որի շնորհիվ «ի մի են» նյութական բոլոր գոյացությունները: Նա բացարձակ Լինելության կամ Կյանքի նյութական հարակն է, «[...] բոլոր [նյութական] գոյացությունների մեջ ներկա համաժամանակյա մեկը» [Plot., IV, 3, 4, 1]:<sup>56</sup> Եվ նրան կարելի է նմանեցնել, օրինակ, ամեն մի բույսի ներսում առկա կենսական սկզբին, «[...] որն առանց ջանքի, անաղմուկ կառավարում է նրան» [Plot., IV, 3, 4, 25]:

Համաձայն իմաստասերի՝ հանուր Հոգուն վերապահված է արարել ու կառավարել «այս աշխարհը», քանզի առավելագույնս կապված է «այն աշխարհին»: Ըստ որում, նա անմիջականորեն հայում է բանական Հոգուն ու Բանականին, և հենց նրա միջնորդությամբ «այնտեղի» գոյացություններն իրենց բացառիկ ստեղծագործական կարությամբ ներթափանցում են «այստեղ» [Plot., IV, 3, 6, 20]: Միայն այդ պարագային է հնարավոր Բնության գոյությունը, որը գոյակարգի երրորդ նախահիմքի նյութական կայացումն է: Հընթացս դրա՝ բխում-արտահոսքի հետագա ծավալման և հանուր Հոգու «այլացման» հետևանքով ծնունդ է առնում *մասնակի հոգին*:

«*Բնություն*» ստորոգությունը Պլոտինոսի հայեցակարգում ունի երկու այլազան նշանակություն: Առաջին դեպքում ներկայացնում է գոյակարգի նախահիմքերի (և դրանց պատկանող գոյացությունների) որակական

<sup>56</sup> Հմմտ. **O'Brien**, 2011, 232-233: Համագոյությունը հաճախ ներկայանում է իբրև նյութականության հիմնարար չափում՝ *ժանս-նակային ներկան*: Տե՛ս **Smith**, 2006, 197-202:

առանձնահատկությունները: Այս առումով հույժ բնութագրական են իմաստասերի կողմից բավական հաճախ օգտագործվող «բանական բնություն» (ή φύσις νοητική), «հոգեկան բնություն» (ή φύσις ψυχική), «մարմնական բնություն» (ή φύσις σωματική) հասկացությունները:<sup>57</sup>

Երկրորդ դեպքում «բնություն» ասելով՝ Պլոտինոսը նկատի ունի բացառապես զգայական աշխարհը, որի ծիրում Հոգին՝ իբրև բանական Լույսի արտացոլում, ներթափանցում է նյութական խավարի մեջ և խորապես ներագրում դրա վրա, «[...] քանզի անհնար է սահմանակցել Լույսին՝ մնալով նրանից անմասն» [Plot., IV, 3, 9, 25]:<sup>58</sup> Եվ իմաստասերի համար դա հարմար առիթ է նորից անդրադառնալու Չգոյ-քառսին՝ նպատակավ արծարծելու զգայական աշխարհի ծագման, կառուցվածքի և կենսունթացի այլազան խնդիրներ:

Եվ այսպես, Չգոյ-քառսը նյութն է (ή ὕλη), որի ծիրում իսպառ բացակայում են սահմանն ու չափը, ծավալն ու թիվը, որակն ու մեծությունը, շարժումն ու դադարը:<sup>59</sup> Այդ բացակայության հետևանքով նա ծայրաստիճան անորոշ է (ἀόριστος) [Plot., II, 4, 16, 1]: Գոյակարգի հակավիճակն է, որին հատուկ չէ որևէ կառուցիկ բան. «Իսկ այն, ինչ չունի որևէ բան, կարիքի մեջ է, կամ, ավելի ճիշտ, հենց կարիքն է: Այդ պատճառով պետք է անպայմանորեն չարիք լինի» [Plot., II, 4, 16, 20]:

<sup>57</sup> Տե՛ս Owens, 1959, 408-410:

<sup>58</sup> *Բնություն* հոլացքի այս երկու այլազան ընկալումների մասին տե՛ս մանրամասն Deck, 1967, 64-80:

<sup>59</sup> Քառսոսիկ նյութի հիմնական հատկանիշը Պլոտինոսը բնութագրում է իբրև *խավար ու չարիք*: Հմմտ. Owens, 1959, 410-411: Հարկավ, նման ըմբռնումը զուգական է առասպելաբանության կատկերացումներին, որոնք աներկբա ազդեցություն ունեին ձևավորվող իմաստասիրական մտքի վրա: Հմմտ. O'Brien, 2011, 217-218: Հանդերձ այսու, հետազոտողներից ոմանք կարծում են, որ նյութի կապակցությամբ «խավարն ու չարիքը» հարկ է կիրարկել միայն ի տեղի և ո՛չ ընդհանրական իմաստով: Չի այն վերջին հաշվով ծագում է Մեկից և իր հերթին կյանքի է կոչում երկրային կյանքը, որ գուրկ չէ համաչափությունից: Տե՛ս Schäfer, 2004, 289-293:

Դրա հետ մեկտեղ, Չգոյ-քառսը նաև «կրավորական հնարավորություն է», որը հնարավորություն ունի իրականություն դառնալու սոսկ Գոյի ներգործության շնորհիվ: Ըստ որում, անգամ այդ պարագային նրա բնությունն սկզբունքորեն չի փոխվում. «[...] ինչպես հայելին, արտացոլելով նյութական աշխարհի [բազում իրողություններ], ուրիշ չի դառնում»: Ավելին՝ «[...] ինչպես կինը, որ հղիանալով տղամարդուց, առավել կանացի է դառնում» [Plot., II, 5, 4, 10]:<sup>60</sup>

Նշենք, որ այս հղացքը մանրամասնորեն մշակված է պղատոնական հայեցակարգում, որտեղ նախանյութն անվանվում է «ամենայն ինչ ընդունող մայր»: Այդո՛ւ շեշտվում է նաև այն իրողությունը, որ վերջինս նույնական չէ իրենից բխած որևէ բանին. ո՛չ հրին, ո՛չ օդին, ո՛չ ջրին, ո՛չ էլ հողին: Նա գուրկ է մարմնականությունից (ἀσώματα ἐστί) [Plato, Tim., 51a; cf. Plot., II, 4, 1, 15]:

Անցումն «անմարմին նյութական չգոյությունից» դեպի մարմնական գոյություն (Բնություն) պլոտինյան գոյակարգի ծայրագույն սահմանային վիճակներից է: Դա կայանում է հանուր Հոգու աստիճանական վայրէջքի ճանապարհով: Հընթացս դրա՝ վերջինս ներթափանցում է նախ նյութի վերին շերտերը, «որոնք ավելի թեթև ու նուրբ են», իսկ ապա՝ ստորին շերտերը, «որոնք ավելի ծանր ու կոպիտ են» [Plot., II, 4, 3, 20]: Եվ սկզբնավորվում է մի հոլովույթ, շնորհիվ որի հանուր Հոգին, որ մարմնավորում է նյութական տիեզերքի բանական սկզբունքը (ὁ λόγος), սկսում է ձև հաղորդել քառասային նյութին, ավելի ճիշտ՝ «[...] գոյություն ունենալով ըստ *այնտեղից* ծագող ձևի՝ նա այդ ձևը փոխան-

<sup>60</sup> Հիշենք, համաձայն անտիկ պատկերացումների՝ կինը սեփական սպերմա չուներ, նա միայն «հարմար գետեղարան» էր տղամարդու սպերմայի համար, որից զարգանում է պտուղը: Aristot., Gen. Anim., I, 1, 732a, 3-10: Հմմտ. Horowitz, 1976, 186-193: Խորքային առումով առնականությունը լծորդվում էր ստեղծագործ, իսկ կանացիությունը՝ կրավորական սկզբի հետ: Եվ նման ըմբռնումն ուներ շեշտված հասարակական հեռանկար:



ցում է իրենից ավելի ցած գտնվողներին» [Plot., IV, 3, 12, 30]: Սա է վայրէջքի (τὸ κατελθεῖν) իմաստը, որի ընթացքում «Հոգին, ինչ-որ բան տալով մարմնին, չի վերածվում, սակայն, դրան» [Plot., VI, 4, 16, 5]:

Եվ անորոշ ու քառասային նյութը ձեռք է բերում սահման ու չափ, որակ ու քանակ: Անցում է կատարում հնարավորությունից դեպի իրականություն՝ տիեզերական համաչափ ու ներդաշնակ կառույցի վերածվելու հեռանկարով: Վերջինս ունի բազում կառուցիկ բաղադրիչներ, որոնց միջև գործում են պատճառի (ή αιτία), համակարության (ή συμπαθεία) և համագագացության (ή συναισθησις) այլազան հարաբերություններ: Դրանց ազդեցությամբ նյութական տիեզերքը ներկայանում է իբրև անկապտելի ամբողջություն:<sup>61</sup>

Համաձայն Պլոտինոսի՝ այդ ամբողջությունը հարահոլով գործընթաց է, որի չափումները բացահայտվում են «հինգ սեռերի ծիրում»: Դրանք վերը քննարկված բանական սեռերի նյութական հարակներն են՝ էությունը, հարաբերումը, քանակը, որակը և շարժումը [Plot., VI, 3, 11-28]:

Կարևոր է նաև հետևյալ հանգամանքը. թեպետ իրենց նյութական բովանդակության առանձին բաղադրիչների «այլությունը» հանուր Հոգու նկատմամբ հարաբերական է՝ նման այն դեպքին, «[...] երբ գինին բաժանում են հատվածների, ապա առանձին անոթների պարունակությունը մարդիկ անվանում են ամբողջ գինու մասը» [Plot., IV, 3, 8, 20]:

Ասվածը հիմք է տալիս պնդելու, թե հանուր Հոգին զգայական աշխարհի լինելության այնպիսի հիմնակազմիկ սկզբունք է, ինչպիսին բանական Հոգին՝ բանական աշխարհի: Անկասկած, հենց այս դիտանկյունից պետք է մեկնաբանել իմաստասերի միտքն

<sup>61</sup> Պլոտինոսի գրություն այս կերպափոխությունը չունի հետևողական-հստակ նկարագրություն ու բացատրություն: Ամենայն հավանականությամբ, անցումը կատարվում է ըստ նախախնամական ազդրիթմի:

այն մասին, թե «[...] հասնելով երկրին և ցրվելով ըստ [առանձին] տների՝ Հոգին, այնուամենայնիվ, չի տրոհվում, մնում է մեկ» և հետո՝ «[...] նա ամենուր է՝ միաժամանակ թե՛ մեկի, թե՛ բոլորի ծիրում» [Plot., IV, 3, 2, 10; 3, 4, 20]: Նա ինքն է պարառում նյութը: Եվ զգայելի տիեզերքն այնքան է, որքան նա ծավալվում է [Plot., IV, 3, 9, 45]:<sup>62</sup>

Ծավալումն ունի մի քանի աստիճան: Առաջին աստիճանում բանական աշխարհի արեգակը, լուսինը, աստղերը, մոլորակները, աստվածները (Երկինք) բանական մարմնի փոխարեն ձեռք են բերում նյութական մարմին՝ դառնալով զգայրենկալելի. «[...] այս երկինքը զգայելի տիեզերքի լավագույն մասն է, քանզի սահմանակից է Բանականի սահմանային հատվածներին» [Plot., IV, 3, 17, 1]: Այդ պատճառով էլ՝ «[...] առաջինն է հոգեղենանում և մասնակցում [Բանականին]՝ դառնալով նրա վերարտադրությունը» [Plot., II, 3, 7, 5]: Ուստի երկնքի դիտարկումը (գիտությունների և մանևտիկայի հնարավորություններով) ճանապարհ է հարթում դեպի «այնտեղ»:<sup>63</sup>

Երկնային մարմիններին արդեն ներհատուկ է տարածական շարժումը: Այն ընթանում է բոլորակի հետագծով. մի կողմից՝ սեփական կենտրոնի շուրջ, մյուս կողմից՝ տիեզերական ամբողջին համընթաց: Այդ շար-

<sup>62</sup> Նյութական աշխարհի ձևավորման հոլովություն Հանուր Հոգու եզակի դերակատարության մասին, կրկնենք մեկ անգամ էլ, Պլոտինոսը խոսում է միայն ընդհանրական գծերով: Սակայն դա չի խանգարում արդի հետազոտողներին բացը լրացնելու տրամաբանական կառույցներով և հեղինակից առատ մեջբերումներով: Տե՛ս **Phillips**, 2009, 128-132; **Karfik**, 2014, 117-119: Հետազոտողներից ոմանք էլ շրջանառում են «Հոգի-հետագիծ» հասկացությունը իբրև միջակա վիճակ Հանուր Հոգու և նյութական աշխարհի միջև: Տե՛ս **Noble**, 2013, 254-257:

<sup>63</sup> Տեսանելի երկինքը՝ իբրև սահմանային վիճակ, «այնտեղի և այնտեղի» միջև ներկայացնում է մի հղացք, որն ապահովում է պլոտինյան ողջ գոյակարգի ամբողջականությունը: Հմմտ. **Wilbering**, 2015, 327; **Moro**, 2018, 20-24:

ժույճը բանական Շարժումի նյութական արտացոլումն է՝ միտված առ Բարիքը [Plot., II, 2, 1, 15; cf. Plato, Tim., 34b]: Ի հետևանս դրա՝ զգայելի տիեզերքն ունի կատարյալ (բոլորաձև) կառուցվածք, որի ծիրում «[...] կառավարող մեկը ներդաշնակում է բազումը և վերածում դա կենդանի գոյացության» [Plot., II, 3, 4, 20]:<sup>64</sup> Ավելին՝ հետևելով պլուտինարականների, Պլատոնի ու ստոիկների փորձին՝ Պլոտինոսը համոզված է, որ բացի մարմնից, տիեզերքն ունի զգայություններ և բանականություն [Plot., II, 3, 16, 10]: Եթե իբրև ամբողջություն զգայելի տիեզերքը հետևանք է հանուր Հոգու գործառույթի, ապա նրա առանձին բաղադրիչները՝ մասնակի հոգիների:

**Մասնակի հոգիները**, ըստ իմաստասերի, վայրէջք են կատարում Երկնքից և գոյություն ունեն նյութի ծիրում՝ ներթափանցումի ավելի ցածր աստիճաններով: Ընդ որում, «[...] վայրէջքի անխուսափելիությունն ամփոփված է բանական այն սկզբի մեջ, որը ստիպում է [հոգիներից] ամեն մեկին շարժվել առ այն, ինչին ձգտում է» [Plot., IV, 3, 13, 1]: Ի հետևանս դրա՝ նախ և առաջ «[...] երկնային Հոգուց տարանջատվում է նրա պատկերը և հոսելով վերից վար՝ արարում է երկրային գոյացությունները» [Plot., II, 1, 5, 5]: Այդ ընթացքին «[...] նա ասես թե դուրս է թռչում հանուրի ծիրից և կայանում իբրև հատված» [Plot., IV, 4, 16, 25]:<sup>65</sup>

<sup>64</sup> Անտիկ գիտակցության մեջ բոլորակն ընկալվում էր իբրև համաչափության միջավայր, որի իմաստային կողը «մեկ-բազումն» էր: Այսպես էին մտածում նախ՝ պլուտինարականները, ակադեմականները և այլ իմաստասիրական դպրոցներ: Պլոտինոսն այդ ավանդույթի կրողն ու զարգացնողն է: Տե՛ս **Wilbering**, 2020, 620-626: Հարկ է հավելել, որ նա նույնպես այս բոլորակ-համաչափությունը լծորդում է համատիեզերական երաժշտության հետ:

<sup>65</sup> Մասնակի հոգիների կոտորակումը նախնական Հանուրից և նյութեղենացումը Պլոտինոսի գրույթում կրկին տրամաբանականացված է, բայց ո՛չ մինչև վերջ նկարագրված և տիպաբանված: Հմնտ. **Caluori**, 2015, 91-105: Խնդիրը մնիչև վերջ կարող է բացահայտվել, թերևս, լոկ էքստատիկ ընկալման պարագային:

Ներթափանցումի առկա մակարդակը ևս ընթանում է «ըստ որոշակի կարգի», որի կարևորագույն նախապայմաններն են, մի կողմից, հոգիների ներքին հակումը (ή διάθεσις), մյուս կողմից՝ նյութի մոլորությունը (ή προσπαθεία): Եվ քանի որ հոգին Հավերժի բանական տարրն է, ապա «[...] կյանք է պարգևում այն ամենին, ինչ ունակ չէ գոյել ըստ ինքյան (ζή παρ' αὐτόν)» [Plot., IV, 3, 4, 20]: Այսու ծնունդ է առնում կոնկրետ մարմինը (τὸ σῶμα):<sup>66</sup>

Մեկ այլ կապակցությամբ իմաստասերն ավելի է մասնավորեցնում խոսքը՝ շեշտելով, որ հոգին Հավերժի, Լինելության, Գեղեցիկի և Բարիքի տարրն է ժամանակավոր, փոփոխական, անձև, անորոշ ու կեղծ նյութի ծիրում: Դրանով էլ պայմանավորված է նրա կենդանի բնությունը. «[...] մի կողմից նա պատկանում է աստվածայինին՝ կանգնած բանական աշխարհի ստորագույն աստիճանին, մյուս կողմից՝ ընդհանուր սահման ունի զգայականի հետ» [Plot., IV, 8, 7, 5]: Ուստի նա ո՛չ մարմնական կառույց է, ո՛չ դրա ներդաշնակությունը, ո՛չ էլ կայացումը (էնտելեխիա), ինչպես հակված են մտածելու պերիպատետիկներն ու ստոիկները [Aristot., De animo, II, 1, 412a, 20; Metaph., V, 1,403a, 15; SVF, fr. 12, v. II, p. 239]: Ընդհակառակը, դրանք բոլորն արդյունք են հոգու ստեղծագործական գործառույթի [Plot., IV, 7, 2-8; cf. Plato, Phaed., 65b-e; Symp., 106 a-107b etc.]:

Ասվածը, սակայն, չի նշանակում, թե հոգին գտնվում է մարմինների մի որևէ կոնկրետ հատվածում. օրինակ՝ բույսերի արմատներում, ճյուղերում, տերևներում, կամ էլ մարդկանց աչքերում, ականջներում, բերանում, կրծքավանդակում: Նա ներկա է մարմնի մեջ ընդհանրապես, «[...] ինչպես ճարտարությունը (ή τέχνη) գործիք-

<sup>66</sup> Այս հատվածական կամ անհատական հոգու համար մարմինը գետեղարան է: Դա ներունակ սկիզբն է, որ ձև ու բովանդակություն է հաղորդում մարմնին: Ծնորհիվ դրա՝ վերջինս ձեռք է բերում թե՛ զգացողություն, թե՛ հույզեր, թե՛ գիտակցություն: Տե՛ս այս մասին **O'Brien**, 2011, 234–237:

ների մեջ» [Plot., IV, 3, 21, 10]:<sup>67</sup> Նա չունի մեծություն ու ծավալ: Դա վկայում է այն մասին, որ ներուժ է, որը ներթափանցել է դրսից և ներկա է մարմնի միաժամանակ բոլոր հատվածներում [Plot., IV, 6, 3, 70]:

Որպես բանական աշխարհի վերարտադրություն՝ մարմինների աշխարհը ներկայացնում է պատճառական կապերի ու հարաբերությունների մի յուրօրինակ կառույց: Այս իրողությունը բացահայտելու նպատակով Պլոտինոսը նախ և առաջ անդրադառնում է իր համար անընդունելի երկու հայեցակետի: Առաջինը բնափիլիսոփաների և էպիկուրականների հայեցակետն է, որը ձգտում է գոյակարգի ներդաշնակ բազմազանությունն արտաձել նյութական նախատարրերի կամ ատոմների անկանոն շարժումից [cf. Plot., III, 1, 3, 1-5]: Երկրորդ հայեցակետը պատկանում է ստոիկներին և, ընդհակառակը, խնդիր ունի ինչպես հանուր գոյակարգը, այնպես էլ նրա առանձին բաղադրիչներն արտաձելու բացառապես հանուր Հոգուց [Plot., III, 1, 4, 5-20]: Պլոտինոսի արտահայտությամբ՝ մի դեպքում կեցությունը պատճառագրկվում է՝ ենթարկվելով պատահականությանը, իսկ մյուս դեպքում՝ ծայրահեղորեն պատճառայնացվում է՝ ենթարկվելով անհրաժեշտությանը:

Իմաստասերի համար նախընտրելի է երկրորդ հայեցակետը: Սակայն դա իրենը չէ: Իրենն առավել բարդ է. մեկնարկելով հանուր գոյակարգի անհրաժեշտությունից՝ տեսադաշտից բաց չթողնել նաև մասնակի գոյացությունների առանձնահատկությունները, հակումներն ու ձգտումները: Այլով բանիմպլիցիտային հայեցակետը խնդիր ունի համադրելու հանուր Հոգու և մասնակի հոգիների գործառույթները:<sup>68</sup>

<sup>67</sup> Այլոքեն՝ հատվածական հոգին զգայելի մարմնի մի-ությունն է, որը նրա ինքնության և ինքնագիտակցության ցուցիչն է: **Caluori**, 2015, 86-90, 193-196:

<sup>68</sup> Այս հոլովույթի ամենաակնառու դրսևորումներից մեկը մասնակի հոգիներում հիշողության առկայությունն է: Դրա գործառույ-

Այն պարագային, երբ մասնակի հոգին առաջնորդվում է գուտ բանական ազդակներով, հայտնվում է անբակտելի միասնության մեջ հանուր Հոգու և բանական Հոգու հետ՝ «[...] վերածվելով այնտեղի գոյացությունների մաքուր վերարտադրության» [Plot., III, 1, 4, 25]: Եվ մասնակի գոյացությունների «կամքը» համընկնում է տիեզերական անհրաժեշտության հետ: Համաձայն Պլոտինոսի՝ դա կեցության իդեալական տարբերակն է [Plot., IV, 3, 2, 10]: Սակայն ավելի հաճախ մասնակի հոգիներն առաջնորդվում են կրքերով ու նյութական գրգիռներով, ուստի ենթակա են շրջակա իրականությունից բխող ազդեցություններին:<sup>69</sup> Գոյակարգի և մասնակի հոգու կապն իրագործվում է հանճարի (ὁ δαίμων) միջնորդությամբ: Դա երկրային կյանքի ճշգրիտ հարացույցն է, որը վայրէջքից առաջ տրվում է հոգուն և դառնում նրա «ուղեցույցը»: Ընդամին, լավագույն հոգիները հետևում են դրան, վատագույնները՝ շեղվում [Plot., III, 4, 3, 1-30; cf. Plato, Rep., X, 617a-621b]<sup>70</sup>: Վերջիններիս հեղինակն, ըստ իմաստասերի, «ուրիշն է», որի ենթակայությամբ տվյալ գոյացությունն ապրում է ոչ թե ըստ ինքյան, այլ ըստ բախտի քմահաճույքի (κατὰ τύχην) [Plot., III, 1,7, 5]:<sup>71</sup> Հետևաբար, առօրեական հա-

---

թով վերջինս կապվում է ինչպես իր նման հոգիների (ներկա), այնպես էլ նախընթաց կյանքի հետ (անցյալ), երբ հոգիները չկային կամ էլ տակավին մի էին: **Warren**, 1965, 252-260:

<sup>69</sup> Համաձայն Պլոտինոսի՝ մասնակի հոգու և մարմնի միջև հնարավոր է հարաբերությունների երկու տարակերպ՝ *ա. մարմինը հոգու մեջ, բ. հոգին մարմնի մեջ*: Կրքառատ կյանքը նկատվում է իբրև երկրորդ տարակերպի ծայրահեղ դրսևորում: Տե՛ս **Caluori**, 2015, 180-185:

<sup>70</sup> Ինչ-որ առումով հանճարը համատեղելի է հնդկական կարմային: Սակայն վերջինիս հարաբերությունը հոգու նկատմամբ ունի ճակատագրական անխուսափելիության իմաստ: Մինչդեռ հունական մշակույթում հանճարն «էլաստիկ է»: **А. Ф. Лосев**, *указ. соч.*, с. 520:

<sup>71</sup> Բախտի վերաբերությամբ Պլոտինոսն առանձնացնում է մարդու բևեռային երկու տեսակ՝ իմաստունին և անկիրթին (պրո-

րարերություններում բախտը սոսկ արտաքին ազդակ է՝ պատճառականություն, որը «անհատական կամքի և ընտրության» բացակայության պարագային դառնում է հույժ ներունակ: Այն նյութական չարիքի դրսևորումներից է, որը հնարավոր է հաղթահարել հոգիների բնական ստեղծագործ ճիգի շնորհիվ:

Դրան զուգընթաց Պլոտինոսը հաճախ խոսում է նաև «վերին ճակատագրի» կամ Նախախնամության մասին (ή εἰμαρμένη), որը ներգործուն է տիեզերական անհրաժեշտության և անհատական «կամքի ու ընտրության» անմիջական աղերսի պարագային: Այն ենթադրում է մասնակի հոգու ծայրահեղ լարում և մշտական ինքնարարում:<sup>72</sup>

Անտիկ ողբերգության մեջ (հատկապես Սոփոկլեսի գործերում) ուրվագծված և ապա Պղատոնի կողմից իմաստասիրական մշակման ենթարկված այս հղացքը բացառիկ կարևորություն ունի նաև պլոտինյան հայեցակարգում: Դրանում շեշտվում է բանական էակի պատասխանատվությունը թե՛ իր, թե՛ աշխարհի համար:<sup>73</sup> Այստեղից՝ ուղիղ ճանապարհ դեպի մարդու քրիստոնեական ուսմունքը, որտեղ նա ներկայանում է իբրև «պատկերն Աստծոյ» (τὸ ἴνδαλμα τοῦ θεοῦ): Այստեղից՝

---

Փան): Առաջինի կյանքը պայմանավորված է իր բանական ընտրությամբ, կամքով և կրթությամբ, իսկ երկրորդինը՝ դրանց բացակայությամբ: Տե՛ս **Eliasson**, 2009, 421-424:

<sup>72</sup> Այս եզակի համադրության պարագային է, որ մասնակի հոգին ձեռք է բերում վերադարձի հակվածություն և ներուժ: Ի հետևանս ծնվում է կատարյալ մարդը: Իմաստասերն այս վիճակը բանաձևում է իբրև գերագույն երջանկություն: Հմմտ. **Emilsson**, 2011, 337-342: Քրիստոնեական աստվածախոսությունը լիովին կիսում է այս մոտեցումը: **Ispas**, 2022, 123-127:

<sup>73</sup> Հունական աշխարհատեսության հիմնարար չափումներից մեկն է, որը, թվում է, անմիջական աղերս ունի մարդ էակի գրադաշտական մտահոգևոր հղացքի հետ: **Zaehner**, 1961, 63: Վվելի ճշգրիտ՝ գրադաշտականության ճշմարիտ հետևորդը ամեն օր ընտրություն է կատարում Բարու և Չարի միջև՝ հետևելով *բարի մտքին*, *բարի խոսքին* և *բարի գործին*: **Boyce**, 1984, 39:

ճանապարհի դեպի Կանտի և Շոպենհաուերի մարդակենտրոն հայեցակարգերը:

Մասնակի հոգու դերի նման ըմբռնմամբ Պլոտինոսն անդրադառնում է նրա էության, կառուցվածքի և գործառույթի տարաբնույթ խնդիրներին: Այդ առնչությամբ հույժ կարևորություն ունի հետևյալ փաստը. Պղատոնի հետևողությամբ նա հոգուն վերագրում է եռամաս կառույց՝ բաղկացած բանական (τὸ λογιστικόν), ցանական (τὸ θυμαειδέες) և ցանկական (τὸ ἐπιθυμητικόν) հատվածներից: Առաջինով պայմանավորված է նրա բանական, երկրորդով՝ զգայական, երրորդով՝ վերարտադրողական գործառույթը: Այլով բանիվ, հոգին ընդհանուր գծերով վերարտադրում է Հոգու տիեզերական կառույցը՝ բանական Հոգի, հանուր Հոգի, մասնակի հոգի [Plot., IV, 3, 32, 10-25; cf. Plato, Rep., VIII, 550a-b, etc.]:

Ինչպես նշվեց վերը, այդպիսին է նաև Երկիրը, որն ընկալվում է իբրև կենդանի գոյացություն՝ նման աստղերին, մոլորակներին և համայն տիեզերքին: Բանականությունից և զգայություններից զուրկ բույսերն այստեղ ներկայացնում են վերարտադրության սկիզբը, բանականությունից զուրկ կենդանիները՝ վերարտադրության և զգայության, իսկ մարդիկ՝ միաժամանակ թե՛ վերարտադրության, թե՛ զգայության, թե՛ բանականության: Եվ մարդ էակին համակերպ Երկիրը նշված սկիզբների ներդաշնակ համադրությունն է [Plot., IV, 4, 22, 10-15]:<sup>74</sup>

Այսօրինակ կատարյալ ներդաշնակությունը բացառություն է մասնակի հոգիների շրջանում: Սովորաբար դրանցից յուրաքանչյուրի կառույցում տիրապետող է հատվածներից որևէ մեկը՝ «[...] կախված իր ճակատագրից, կենսակերպից և այն նյութից, որի մեջ

<sup>74</sup> Այս մարդակերպ համաչափությունը հասանելի է, երբ մարդ էակի երկու հարթությունները (նաև համապատասխանաբար երկու ինքնությունները) ներդաշնակում են միմյանց: Խոսքը բանական և նյութական էությունների մասին է: Տե՛ս **Remes**, 2009, 37-42:



նա ներթափանցում է» [Plot., IV, 3, 15, 5]: Ըստ այդմ էլ դրանք ենթաբաժանվում են երեք խմբի: *Առաջին*՝ հոգիներ, որոնք չնայած ներթափանցել են նյութի մեջ, բայց շարունակում են պատկանել իրենց՝ ապրելով ըստ Կեցության հանուր կարգի: *Երկրորդ*՝ նրանք, որոնք երբեմն պատկանում են իրենց, երբեմն ապրում են «այս աշխարհի» օրենքներով: *Երրորդ*՝ նրանք, որոնք ապրում են բացառապես «այս աշխարհի» օրենքներով [Plot., IV, 3, 15, 10]:

Առաջին խմբի հոգիներն ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ Լույսը, ներթափանցելով նյութական խավարի վերին շերտերը, արարում է «այս տեսանելի աշխարհը»՝ սկսած երկնքից: Հընթացս դրա՝ աստղերը, մոլորակները և անմահ աստվածները ձեռք են բերում երկնային մարմին (τό σῶμα οὐράνιον), որը դեռևս չունի կարծրություն: Ուստի նրանց հոգիները շարունակում են լիարժեք մասնակցել բանական Հոգուն, իսկ դրա միջնորդությամբ՝ նաև Բանականին [Plot., IV, 3, 17, 15]:<sup>75</sup>

Նման հոգիները Պլոտինոսը որակում է իբրև «վերին կամ լավ» շեշտելով, որ դրանք, լինելով առաքինի ու ազնիվ, ձգտում են խույս տալ «այստեղի» բազումից ու անորոշից, «[...] քանզի միայն այդ ձևով կարող են լինել թեթև ու ըստ ինքյանց» [Plot., IV, 3, 32, 20]: Մասնակցումը (ή μέθεξις) նրանց հնարավորություն է տալիս հարաբերվել իրենց արքետիպին: Միջակա օղակը Գեղեցիկի կառույցն է, որի միջնորդությամբ երկնային մարմինները և կատարյալ մարդիկ, «որք այստեղի ամենից ներդաշնակ ու ճշմարիտ գոյացություններն են», առավելագույնս արտացոլում են «այնտեղի» հավերժական արժեքները [Plot., IV, 3, 17, 20]: Եվ նրանք ինքնաբավ են, զի նրանց մատչելի է Միտքը:<sup>76</sup>

<sup>75</sup> Հմմտ. Caluori, 2015, 154-159: Նման հոգիներն են, որ դյուրությամբ ճամփորդում են դեպի Հանուր Հոգին, Բանական հոգին և Բանականը: Եվ ապա՝ հակառակ ուղղությամբ:

<sup>76</sup> Ինչպես բացահայտվում է Պլոտինոսի հետագա տեքստերից, այս հոգին, սակայն, անկարող է հաստատվել վերին տարածքներ-

Ինչ վերաբերում է երրորդ խմբի հոգիներին, ապա դրանք ներկայացնում են տրամագծորեն հակադարձ պատկերը: Ներթափանցելով նյութական խավարի ամենաստորին շերտերը՝ դրանք նմանվում են այն հիվանդներին, «[...] որք, հոգ տանելով սեփական մարմնի մասին [ծառայում] և պատկանում են նրանց», կամ նավավարներին, «[...] որք, փոթորկի ժամանակ հոգ տանելով նավի մասին՝ իսպառ մոռանում են իրենց» [Plot., IV, 3, 4, 45 3, 17, 5]: Եվ այս հոգիներին սկսում են առաջնորդել մարմնական հաճույքները կամ էլ, ընդհակառակը, տառապանքները, «[...] որք, նենգում ու մոլորեցնում են դրանց»՝ սահմանափակելով կենսագործունեությունը միայն մարմնական աճով, զարգացմամբ ու բազմացմամբ [Plot., IV, 9, 3, 20]:<sup>77</sup>

Հավելենք, որ նման հոգիները Պլոտինոսը որակում է իբրև «ստորակարգ կամ վատ» շեշտելով, որ «[...] ըստ դրանց մենք միասնական ենք բոլոր մարմինների հետ» [Plot., II, 1, 5, 20]: Ժամանակի ընթացքում դրանք դադարում են հիշել Բանականի մասին՝ անհաղորդ Գեղեցիկին ու Ճշմարիտին: Ուստի զրկվում են նաև անհատական ընտրության և բանական ճիգի ճանապարհով «այնտեղ» վերադառնալու հնարավորությունից:

Հետևաբար՝ դրանց կյանքի կոչած գոյացություններն անմիջական հարաբերում չունեն բանական տարրերի, մաքուր ձևերի և արքեստիպերի հետ: Կապը միջնորդված է. վերջիններս վերարտադրում են սոսկ երկնային (զգայելի) մարմինները: Տիեզերական հեռանկարում

---

րում: Նրա հանգրվանն այնտեղ սոսկ ժամանակավոր է:

<sup>77</sup> Այս ստորագույն հոգին այլևս գուրկ է կապից վերին Բանական աշխարհի հետ և առաջնորդվում է բացառապես երկրային գրգիռներով ու արժեքներով **Caluori**, 2015, 172-177; հմմտ. **Rist**, 1967, 417-419: Հոգիների այս երեք տարակերպերի էությունն ու գործառույթը բացահայտելու աղագավ Պլոտինոսն օգտագործում է երեք թռչունների իր հանրահայտ այլաբանությունը. առաջինն «այնտեղի» բնակիչ է, երկրորդն ի գորու է լոկ այցելելու «այնտեղ», երրորդի համար այն անհասանելի է [Plot., V, 9, 1, 8]. Տե՛ս **Marsola**, 2016, 82-95:

դրանք սահմանվում են իբրև «վերարտադրությունների վերարտադրություններ» [Plot., IV, 2, 5, 5]<sup>78</sup>:

Ինչ վերաբերում է միջակա դիրք զբաղեցնող երկրորդ խմբի հոգիներին, ապա դրանք ի գորու են հասնելու Բանականի մասնակցության մակարդակին՝ շնորհիվ բացառիկ բանական ճիգի և ինքնահաղթահարման: Սակայն նման վիճակը կայուն չէ. ճիգի փոքր-ինչ թուլացման պարագային նրանք նույնպես դատապարտված են իջնելու նյութական խավարի ստորագույն շերտերը և «մոռանալու իրենց» [Plot., IV, 3, 18, 5]:<sup>79</sup>

Այս ամենի դիտանկյունից՝ Պլոտինոսը նորից է անդրադառնում հոգու և նյութի փոխհարաբերություններին: Եվ այս անգամ, մի կողմ թողնելով ընդհանուր հարցերը, ուշադրությունը սևեռում է մարմնական կրքերի, զգայությունների, հիշողության այլազան խնդիրներին, որպեսզի հետագայում անցում կատարի ճանաչողության ավելի բարձր մակարդակների քննությանը:<sup>80</sup> Ընդամին, նա հրաժարվում է ատոմիստների, ստոիկների և էպիկուրականների պատկերացումներից, որոնք անմիջական և շարունակական աղերսներ էին տեսնում զգայությունների և բանական ճանաչողության միջև:

<sup>78</sup> Երբ Ամելիուս Կվինտիլիանուսը, հրավիրելով նկարչի, փորձեց համոզել Պլոտինոսին՝ թույլ տալու նկարել իրեն, ստացավ հետևյալ մերժումը. «Քեզ համար քի՜չ է այն վերարտադրությունը, որի մեջ դրել է ինձ բնությունը, և ցանկանում ես ստեղծել վերարտադրության վերարտադրություն [...] ասես դրանում դիտարժան որևէ բան կա» [Porphyr., Vita, I, 10]:

<sup>79</sup> Նման հոգիները ապրում են բացառապես հաճույքի ազդակով: Եթե առաջիկաների համար կարևոր է մարմնական հաճույքը, ապա վերջիկաներիս համար՝ զուտ բանականը: Տե՛ս **Marsola**, 2016, 89–90:

<sup>80</sup> Այս մոտեցումը մեծապես ներագրել է վաղ քրիստոնեական ըմբռնումների վրա՝ ուղենշելով կրքերից անցումը առաքինությունների: Այլորեն՝ կրքերը փակուղի չեն. աստվածային առաջնորդության ու մարդկային կամքի հանդիպման պարագային այս անցումը միանգամայն հնարավոր է նկատվում: Տե՛ս **Piretra**, 2019, 268-270:

Հարաբերություններն ավելի բարդ են. զգայությունները լավագույն դեպքում բանական ճանաչողության «շարժառիթը» կարող են հանդիսանալ: Դրանք ի գործու են սուկ խթանելու հոգու «այնտեղից» բերած կարությունները՝ բացահայտելու իրերի էութենական կառույցը: Տվյալ կապակցությամբ իմաստասերը լիովին համաձայն է պյութագորականներին և Պդատոնին՝ կիսելով նրանց «իմաստասիրական ապրիորիզմը» [Plat., Symp., 203a-210b; Phaed., 244a-249a etc.]:

Սկսելով իր քննությունը՝ Պյոտինոսը նախ և առաջ շրջանառում է «այսօրինակ մարմին» (τὸ τοιόνδε σῶμα) եզրը, որում ընդգծվում է հոգու գործառությամբ տվյալ մարմնի կայացման իրողությունը: Ըստ որում, վերջինիս առնչությունը հոգու հետ անմիջական չէ, այլ միջնորդված է մարմնական բնությամբ (τῆ σωματικῆ φύσει): Պյոտինոսի բնութագրմամբ՝ դա մարմնականության սկզբունքն է, որի շնորհիվ տվյալ մարմինը, պահպանելով իր ինքնությունը, կարողանում է վերարտադրել իրեն. «[...] նա գոյություն ունի նախքան այսօրինակ մարմինը, ավելին, ինքն է ստեղծում և ձևավորում դա» [IV, 4, 20, 20]:<sup>81</sup>

Հետագա շարադրանքից պարզվում է, որ մարմնական բնությունը պարառում է նախ և առաջ կենդանի գոյացությունները՝ մարդկանց և բազում արարածները, որոնց ներհատուկ է կրքի վերապրումը (τὸ πάθος): Վերջինիս սահմանային վիճակներն են ցավը (տառապանք) և հաճույքը: Դրանք իրենց հերթին արդյունավորվում են կենսեռանդի (ὁ θυσμός) տարասեռ դրսևորումներով՝ սկսած գայրույթից մինչև ուրախություն

<sup>81</sup> Հանուր և մասնակի հոգիների առնչությունները մարմնի հետ միջնորդված ու բազմաշերտ են: Անցման հոլովություն այս պարագային նույնպես կարող է ամբողջանալ միայն էքստատիկ ընկալմամբ: Ցավոք, այս դիտանկյունը հետազոտողներն ավանդորեն անտեսում են: Տե՛ս Blumenthal, 1971, 8-19:

ու հրճվանք:<sup>82</sup> Համաձայն իմաստասերի՝ յուրաքանչյուր մարմնի բնականոն կենսագործունեությունը հնարավոր է միայն ներհակ կենսեռանդի ու կրքերի հավասարակշռության պարագային. «[...] և բնությունը նման է այն մորը, որը կռահելով իր տառապող [զավակի] ցանկությունները՝ ձգտում է նրան առողջացնել ու վերադարձնել իրեն» [Plot., IV, 4, 20, 30]:

Արիստոտելը և ստոիկները հոգուն (և անգամ բանականությանը) վերագրում էին կենսեռանդի ու կրքերի առանձին տարրեր [Aristot., De animo, II, 12, 424a, 25a; SVF, fr. 16, v. 2, p. 241]: Պլոտինոսը մերժում է այս մոտեցումը և (պլուրազորականների ու Պղատոնի օրինակով) շեշտում դրանց ծայրահեղ ներհակությունը: Ըստ նրա՝ կենսեռանդն ու կրքերը գործառում են բացառապես մարմնի ծիրում. «[...] կրքերը գտնվում են մարմնի մեջ, մինչդեռ դրանց մասին գիտելիքը պատկանում է հոգուն» [Plot., IV, 4, 19, 5]: Ընդամին, տառապանքը մի վիճակ է, երբ մարմինն ինչ-ինչ պատճառներով կորցրել է հոգու պատկերը (τὸ ψυχῆς ἰδéalμα), իսկ հաճույքը՝ երբ այդ պատկերը «նորից ներթափանցել և ներդաշնակորեն ներկա է մարմնի ծիրում» [Plot., IV, 4, 19, 10]:

Հարդյունս հոգու ներուժի և կենսեռանդի «հանդիպման»՝ ծնունդ է առնում զգայությունը: Լինելով գիտելիք կենսեռանդի (ու կրքերի) մասին՝ այն իր բնությամբ միանգամայն տարբեր է դրանցից, «[...] զի կրքին տրված սուրհանդակն ի գորու չէ յուր հաղորդել կրքի մասին կամ էլ այդ բանն անում է չափազանց անհաջող» [Plot., IV, 4, 18, 5; cf. IV, 6, 2, 15]: Տվյալ առնչությամբ իմաստասերը նորից անդրադառնում է Արիստոտելին և ստոիկներին՝ այս անգամ մերժելով նրանց հղացքն այն մասին, թե զգայությունները հոգուն դրոշմված զգայական նշանակներ, պատկերներ կամ կնիքներ են [Aristot.,

<sup>82</sup> Կենսեռանդի տարակերպ ըմբռնումներն առկա էին հունական գրականության, ճարտասանության և իմաստասիրության մեջ: Ի մի էին բերվել Պղատոնի հայեցակարգում, և Պլոտինոսը մեկնարկում է հենց նրա ընկալումներից: Տե՛ս Wilburn, 2021, 65-69.

De animo, II, 12, 424a, 15]: Ըստ նրա՝ մենք չենք ընկալում բուն մարմինները, այլ՝ միայն դրանց պատկերները. «[...] այնպես որ, մարմինները մեկ բան են, իսկ մեր ընկալածը՝ մի այլ բան» [Plot., IV, 6, 1, 30]:

Խոսելով զգայության մասին՝ իմաստասերը դա ներկայացնում է իբրև մի բարդ գործառույթ, որի ընթացքին հոգու՝ Բանականից ստացած գիտելիքը (տեսակի արքեսոիա) լծորդվում է մարմնից եկող «եզական գրգիռներին»: Այլով բանիվ, զգայությունը հոգու և մարմնի ընդհանուր գործն է (τὸ κοινόν ἔργον) [IV, 3, 26, 10]:<sup>83</sup>

Այն սկսվում է զգայական օրգաններից, որտեղ, կենտրոնացած հոգեկան ներուժի ազդեցությամբ, առաջին քայլն է կատարվում մարմնական եզակին և պատահականը բանական ընդհանուրի դիտանկյունից ընկալելու համար: Եվ ծնվում է զգայական տպավորությունը: Ըստ որում, մարմինն այս դեպքում ևս կրավորական է, քանզի զգայության ընթացքին «[...] հոգին հանդես է գալիս նարտարագետի, իսկ մարմինը՝ գործիքի դերով» [Plot., IV, 3, 26, 5]:

Զգայությունների ձևավորման հաջորդ քայլը կապված է զգայական հիշողության հետ (ή μνήμη σοματική): Այն նույնպես հոգեկան ներուժի դրսևորում է, «[...] որի ծիրում զգայընկալվածը ներկա է անգամ այն ժամանակ, երբ բուն զգայությունն արդեն բացակայում է» [Plot., IV, 3, 29, 25]: Սակայն հիշողության տիրույթում զգայությունը (տպավորության փոխարեն) հանդես է գալիս իբրև պատկեր (τὸ φάντασμα), որը միտում ունի իրականությունը պատկերելու անշարժ վիճակներում: Այդ պատճառով նրանում առավել հստակ ձևով են բացահայտվում մարմինների այլազան կապերն ու հարաբերությունները:<sup>84</sup>

<sup>83</sup> Այլորեն՝ զգայընկալման հորվույթը կարելի է հանգեցնել մաթեմատիկական իրավիճակի, որի հիմնագաղափարը խարսխված է բազումի և մեկի բազմաշերտ հարաբերությունների վրա: **Hutchinson**, 2018, 68-74:

<sup>84</sup> Չնայած իր ներքին տարասեռություններին՝ պլոտինյան զգայ-

Բացի զգայական հիշողությունից՝ գոյություն ունի և բանական հիշողությունը (ή μνήμη νοητική), որի բովանդակությունը կազմում են բանական աշխարհի իրողությունները: Այն գիտելիք է հավերժի մասին և ներհատուկ է միայն բանական էակներին: Ըստ որում, վերջիններիս կառույցում նա առկա է լոկ «թաքուցյալ վիճակով»՝ ընդունակ բացահայտվելու տրամախոհության ու տրամախոսության ճանապարհով: Արտահայտելով այս գաղափարը՝ Պլոտինոսը նշում է. «[...] մտըմբռնելիները գալիս են ներսից, իսկ զգայելիները՝ դրսից» [Plot., IV, 6, 2, 20]: Հընթացս դրա՝ գիտելիքն անցում է կատարում «[...] մտածումից դեպի հասկացություն՝ արտացոլվելով, ասես թե, հայելու մեջ» [Plot., IV, 3, 30, 5]:

Զգայությունը հասնում է իր նպատակին այն պահից ի վեր, երբ մտապատկերի տիրույթում համադրվում են բանական և զգայական հիշողությունները, հասկացությունն ու պատկերը, «[...] զի այն, ինչ ճանաչված է բանականության կողմից, մեզ է հասնում սուսկ այն ժամանակ, երբ իջնում է զգայության մակարդակ» [Plot., IV, 8, 8, 5]: Այդ պարագային հնարավոր է դառնում ըմբռնումը (ή αντίληψις), որի գործառույթով միմյանց են ադերսվում մասնակի հոգու երկու ներհակ հատվածները՝ բանականն ու ցանկականը<sup>85</sup>:

Համաձայն Պլոտինոսի՝ զգայության հոգեմարմնական այս գործընթացը լավագույնս ընթանում է, այսպես կոչված, բարեմիտ և ազնվաբարո անհատի (ὁ ἀστεῖος) հոգու ծիրում: Ընդամին, «[...] բանական հատվածը բռնի իրեն է ենթարկում ցանկականը, քանզի

---

ընկալումը միասնական հոլովույթ է իր տրամաբանությամբ և արդյունքներով: **Emilsson**, 1988, 101-106:

<sup>85</sup> Հետևաբար, Պլոտինոսի ըմբռնմամբ, զգայությունը միաժամանակ և՛ մարմնական, և՛ հոգեկան, և՛ բանական գործառույթ է: Այս խնդրում նա առավելագույնս հեռացել է Պրատոնից (և ընդհանրապես, անտիկ պատկերացումներից) կանխագծելով հոգեբանության զարգացման հետագա միտումները: Տե՛ս **Блонский**, 1918, 161–167:

բնությանը ավելի ստորակարգ լինելով՝ վերջինս շատ քիչ բան է պարունակում այն ամենից, ինչ առկա է Բանականի մեջ» [Plot., IV, 3, 32, 20]: Միայն այս դեպքում զգայությունն ի գորու է դառնալու բանական ճանաչողության հիմք: Եվ իբրև առաջին քայլ՝ անմնացորդ շրջվում է առ Բանականը:

Պլոտինյան հոգեբանության մեջ *շրջումը* (ή *ἐπιστροφή*) մի եզրույթ է, որում շեշտվում է մասնակի հոգու հակվածությունը՝ հրաժարելու ամենայն մարմնականից: Մի վիճակ, որը հիմք է ստեղծում նրա՝ բանական Հոգու և Բանականի տիրույթներ *վերադարձի* համար (ή *ἀνάβασις*):<sup>86</sup>

Այս խնդիրներին հանգամանորեն կանդորադառնանք ստորև: Այժմ ուշադրություն դարձնենք հետևյալ հանգամանքին. ո՛չ շրջումը, ո՛չ էլ վերադարձը տեղի չեն ունենում ինքնաբերական մղումով: Դրանք արդյունք են «հոգու բռնի ճիգի», որը նախ և առաջ ենթադրում է մարդու բանական ու բարոյական ընտրությունը նյութի և մտքի, չարիքի և բարիքի, արատի և առաքինության միջև:

Հարդյունս դրա՝ սկզբնավորվում է համատիեզերական բխում-արտահոսքին (վեր-վար) հակընթաց մի շարժում (վար-վեր): Պլոտինոսը դրան վերագրում է փրկարար (սոտերիկ) իմաստ. հակառակ պարագային, անցնելով Մեկի, մեկ-բազումի և բազումի աստիճաններով՝ բխում-արտահոսքն իսպառ կսպառվեր նյութականի տիրույթում, և կհաստատվեր բացարձակ խավար [Plot., IV, 6, 5, 30]: Հենց այս իմաստով պետք է մեկնաբանել իմաստասերի միտքն այն մասին, թե գոյակարգն ամբողջական է՝ իր վարընթաց և վերընթաց շարժումների հարադրությամբ [Plot., II, 1, 8, 25]: Եվ մարդկային ինքնաճանաչողությունն ու ինքնակառա-

<sup>86</sup> *Շրջումն* ընկալվում էր իբրև մասնակի հոգու աստիճանական ինքնահրաժարում: Այն ընթանում էր չորս հիմնական շրջափուլերով, հընթացս որոնց նա աստիճանաբար մոռանում էր ինքնությունը և ի վերջո նույնանում նախազույնին: Տե՛ս **Luchte**, 2009, 159-168:



վարումը դիտարկվում են իբրև գոյակարգի կառուցիկ կայունության երաշխիքներ:

#### 4. Մարդ էակը

Համաձայն Պլոտինոսի՝ համադրական բարդ կառույց է՝ բաղկացած երկու ներհակ բաղադրիչներից:<sup>87</sup> Դրանցից մեկը՝ մարմնացած հոգին (τὸ σῶμα ἐμψυχωμένον), արդյունք է հոգու ցանկական հատվածի և նյութի մերձեցման: Ապրում է առօրեական (կամ հասարակ) կյանքով՝ տրված մարմնական հաճույքներին ու տառապանքներին: Մյուս բաղադրիչը նույնական է հոգու բանական հատվածին, «[...] որը վեր է մարմնից և որին պատկանում են վերընթաց շարժումը, գեղեցիկն ու աստվածայինը» [Plot., II, 3, 9, 20-25]: Դա մարդ էակի հոգեմտավոր բարեկեցության (τὸ εὖ εἶναι) աղբյուրն է, որի շնորհիվ «մենք ինքներս ենք»:<sup>88</sup>

Մարդկային կյանքի գերագույն իմաստն ինքնակատարելագործման ճիգով աստվածակերպ դառնալն է (θεοείδης) [Plot., I, 1, 3, 10]: Ըստ որում, այդ գործընթացն ընթանում է մարդու բարոյական առաքինությունների ձևավորման ճանապարհով, «[...] որպեսզի ամեն ոք ենթարկվի իր [մեջ առկա] կառավարող սկզբին, ինչպես զինվորը հրամանատարին» [IPlot., II, 3, 13, 25]: Անշուշտ, «կառավարող սկիզբը» բանական հատվածն է, որին պետք է ենթարկվի մարմնականը:<sup>89</sup> Այլով բանիվ

<sup>87</sup> Այլոբեն՝ մարդ էակը *ստորին* և *վերին* հոգիների համակցության արդյունք է: Երբ վերջինս ճիշտ է համաբերված, նրա մեջ արթնանում է նախագո Մեկի գիտակցությունը, որին հետևում է նրա մղումն առ վերադարձ: **Hutchinson**, 2018, 149-151.

<sup>88</sup> Այլոբեն՝ այս համաչափությունը մարդու կեցության բարձրագույն նպատակն է: Տե՛ս **Caluori**, 2015, 178: Կրկենք՝ այս հանգույցում հույժ կարևոր է մասնակի հոգու բարոյական դաստիարակությունը: Տե՛ս **Wilburn**, 2021, 77-81:

<sup>89</sup> Տվյալ ըմբռնումը, անտարակույս, բխում է Արիստոտելի հան-

Պլոտինոսը մարդուն դիտարկում է իբրև ենթարկելու և ենթարկվելու հարաբերությունների ամբողջություն:

Սուփեստներից եկող այս տեսությունն ամենայն մանրամասնությամբ մշակված է Արիստոտելի բարոյագիտական ու քաղաքագիտական համակարգում՝ որպես մարդու, ընտանիքի, պոլիսի և հանուր գոյակարգի հիմնական սկզբունքներից մեկը [Aristot., Eth. Nic., II, 4, 119b, 15; Polit., I, 9, 1254a, 30]: Պլոտինոսը մեկնարկում է այս տեսությունից, և մարդկային առաքինությունները (*αἱ ἀρεταί*) նրա գրությունում նույնպես դիտարկվում են իբրև համաստիգերական կարություններ:

Ամենասեղմ բանաձևմամբ՝ «[...] առաքինությունը մարդու կյանքն է ըստ Բանականի» [Plot., II, 2, 3, 15]: Համապատասխանաբար, հակառակ վիճակը կապված է արատի և չարիքի հետ (*τὸ ἀμάροτημα*): Այս խստիվ ընդգծված սահմանների արանքում առկա է մտահոգևոր մի հարթություն, որտեղ մարդն ապրում է հարաբերական կամ արտաքին արժեքով (*τὰ προσηγμένα*) առողջություն, գեղեցկություն, հանույք, բարեկեցություն: Իմաստուն այրն ընտրում է դրանք՝ հրաժարելով հակարժեքներից՝ հիվանդությունից, տգեղությունից, տառապանքից, աղքատությունից:

Այս հայացքը մշակվել է ստոիկյան բարոյագիտության ծիրում:<sup>90</sup> Հակառակ հունական միջավայրում դարերով արմատացած կրոնաիմաստասիրական պատկերացումների՝ ստոիկները մարմինը չէին դիտարկում իբրև հոգու գերեզման (*τὸ σῶμα σῆμα*), այլ մի միջավայր, որտեղ հոգին ծավալում է իր գործունեությունը:<sup>91</sup>

---

րահայտ հղացքից առ այն, որ մարդ էակը (կամ ճշմարիտ քաղաքացին) ենթարկելու և ենթարկվելու հարաբերությունների ամբողջություն է [Aristot., Polit., I, 9, 1254a, 25]:

<sup>90</sup> Կարծիք կա, թե այս հղացքն արդեն առկա էր սուփեստների հայեցակարգում և Պդատոնի միջնորդությամբ հասել էր ստոիկներին: Zeller, 1931, 286.

<sup>91</sup> «Մարմինը՝ հոգու գերեզման» հղացքը հանգամանորեն մշակվել է նախ՝ օրփեական կրոնահայեցողության ծիրում՝ ի հիմ-

Հետևաբար իմաստուն այրը պետք է անպայմանորեն հոգ տանի իր մարմնի մասին՝ չսպրեղով, սակայն, լոկ դրա գրգիռներով: Եվ այս խնդրում Պլոտինոսն լիովին համաձայն է ստոիկներին [Plot., II, 2, 3, 15]:

Սակայն հոգու և մարմնի համաձայնությունը ստոիկները դիտարկում էին իբրև մարդկային գոյության հիմնական նպատակը (երջանկություն): Համաձայն նրանց՝ իդեալական կյանքն ընթանում է ըստ բնության կարգի (*κατὰ φύσιν*), և մարդու խնդիրն է առավելագույնս հարմարվել շրջակա իրականությանը [cf. Seneca, Nat. quaest., II, 2 2-3; De benef., IV, 7, 1]: Մինչդեռ Պլոտինոսի հայեցակարգում պատկերը միանգամայն այլ է: Իդեալական կենսընթացն այստեղ, ինչպես նշվեց, ընթանում է ըստ Բանականի (*κατὰ νοῦν*): Եվ մարմնի ու հոգու կապն արդյունական է լոկ «այստեղ»՝ զգայական աշխարհում: Իսկ մարդկային բացարձակ երջանկությունը (ή εὐτυχία) մարմնից հոգու հրաժարումն է, քանզի «[...] Նախագույնին վերադարձողը [նախ և առաջ] պետք է իրենից հեռացնի զգայությունները և ազատվի ամենայն չարիքից» [Plot., VI, 9, 3, 20]:

Այս դիտանկյունից տրամաբանական է հնչում իմաստասերի պնդումն առ այն, թե միայն վերադարձի պայմաններում է արդարացված ազնվաբարո անհատի ծայրահեղ ասկետիկ պահվածքը:<sup>92</sup> Մինչ այդ նրանից

---

նավորումն այն բանի, որ մարդկային կյանքի իմաստը նրա հրաժարումն է ամենայն մարմնականից: Այն ներմուծվել է պուրթագորականության մեջ և դարձել, այսպես կոչված, հոգիների վերաբնակության ուսմունքի կարևորագույն բաղադրիչներից մեկը: Տե՛ս **Белок**, 1905, 148-149; **Moulinier**, 1955, 21-26; **Nilsson M. P., Croon J. R.**, 1992, 759-760:

<sup>92</sup> «[...] իմաստասերի [բնությունն] առաջին հերթին բացահայտվում է այն բանում, որ նա անհամեմատ ավելի շատ, քան յուրաքանչյուր ոք, իր հոգին ազատում է մարմնի հետ ունեցած աղերսից» [Plato., Phaed., 65a]: Համաձայն Պորփյուրիոսի՝ իմաստասերի այդ հարացույցով է Պլոտինոսն առաջնորդվել իր ողջ կյանքում. «[...] թվում էր, նա մշտապես ամոթ էր զգում այն բանից, որ ապրում է մարմնական կերպարանքով» [Porphyr., Vita, I, 1-3]:

պահանջվում է հավասարակշիռ վերաբերմունք մարմնականի նկատմամբ: Հետևաբար հիմնագուրկ պետք է նկատվեն նրան հասցեագրված «համահարթիչ» քննադատությունները, որոնք հնչում են տակավին Վաղ միջնադարից: Համաձայն Պլոտինոսի՝ ազնվաբարո անհատը մարդկային բարդ կառույց է, որի չափումները նույնական չեն «այստեղ» և «այնտեղ»: Նա անտարբեր է ցավի, հիվանդության և թշվառության նկատմամբ: Բայց և չի տրվում ծայրահեղ հանույքներին: Ուստի մահը նրա համար ողբերգություն չէ [Plot., IV, 4, 3, 10]:

Ազնվաբարո անհատն արդյունք է բարոյական կատարելագործման մի տևական ընթացքի, որը Պղատոնը (թերևս սոփեստների ազդեցությամբ) ենթաբաժանում է հետևողական չորս աստիճանի [Rep., X, 613b; Theaet., 176a]: Եվ Պլոտինոսը լիովին համաձայն է նրան:

*Առաջին* աստիճանը միտված է ձևավորելու ազնվաբարո անհատի քաղաքացիական առաքինությունները (αἰ πολιτικαί): Հընթացս դրա՝ ի հայտ են գալիս մտավորբարոյական այնպիսի արժեքներ, ինչպիսիք են խոհականությունը, իմաստությունը, արիությունը և արդարադատությունը: Դրանք առավելագույնս ներունակ են այն պարագային, երբ համակարգված են ըստ չափի՝ նպատակավ կյանքի կոչելու քաղաքացիական կեցվածքի և գործունեության բարձր մակարդակները [Plot., I, 1, 9, 1-25]: Այդ բանի համար իբրև լավագույն ընկերային միջավայր ճանաչվում է միապետական պոլիսը [Plot., IV, 4, 17, 5]: Ոչ դեմոկրատականը, որի գերագույն կառավարման հաստատությունը՝ ագորան, իմաստասերը բաղդատում է մարդկային հոգու վատթարագույն վիճակի հետ, երբ տիրապետող են նյութական անզուսպ գրգիռները [Plot., IV, 4, 15, 20]:<sup>93</sup>

<sup>93</sup> Համաձայն Արիստոտելի՝ գոյություն ունի պետության երեք հիմնական ձև և յուրաքանչյուրի հակաձևը՝ միապետություն-բռնապետություն, ազնվապետություն-խմբիշխանություն, պոլիտեխաժողովրդավարություն: Ամենից անկատարը ժողովրդավարությունն է, որն առավել քիչ է իրագործում մարդկային համակեցության հիմ-

*Երկրորդ* աստիճանը միտված է ձևավորելու, այսպես կոչված, մաքրագործող առաքինությունները (αἰ καθαρι-  
τικάί), որոնց առաջնահերթ նպատակն է ապահովել  
հոգու տարանջատումը նյութից: Դրանք են՝ անկրքու-  
թյունը, բանականությունը և «ընդհանրապես տրամա-  
խոհության ու մտքի գերակայությունը»: Միասին դրանք  
ծնունդ են տալիս անխառնությանը (τὸ ἄκρατον), որի  
գործառույթյամբ հոգին «[...] կրկին ամենայն հստակու-  
թյամբ գիտակցում է իր այլությունը նյութից՝ պատրաստ  
թողնելու այն» [Plot., 1, 10, 10; cf. Plato, Symp., 210 a]:

*Երրորդ* աստիճանը միտված է ձևավորելու, այսպես  
կոչված, հայեցողական առաքինությունները (αἰ θεωρητι-  
καί), որոնց խնդիրն է նյութից տարանջատված հոգին  
բարձրացնել առ բանական տիեզերք՝ «[...] այնտեղ չներ-  
բերելով զգայական որևէ բան» [Plot., VI, 9, 3, 20]: Ըստ  
իմաստասերի՝ վերադարձը պսակվում է հաջողությամբ  
այն պահից ի վեր, երբ նախորդ առաքինությունների (և  
հատկապես անկրքության) գործառույթով տեղի է ունե-  
նում ազնվաբարո անհատի «շրջումն առ Միտքը», որն  
այնուհետև դառնում է նրա կեցության թե՛ ելակետը, թե՛  
նպատակը: Այդու՛ նա վերածվում է բանական կառույցի  
և ձեռք բերում բանական մարմին: Եվ դա արմատապես  
կերպավորվում է նրան՝ ծնունդ տալով կատարյալ ան-  
հատին (ὁ σπουδαῖος) [Plot., I, 1, 11, 15; VI, 8, 3, 20]:<sup>94</sup>

*Չորրորդ* աստիճանը երևակվում է կատարյալ անհա-  
տի աստվածակերպությամբ, որի հիմամբ ի հայտ է գա-  
լիս *բացարձակ մարդը* (ὁ ἀντοάνθρωπος – ինքնամարդ):<sup>95</sup>

---

նական նպատակը՝ «բարեկեցիկ ու երջանիկ կյանքը» [Polit; III, 1278 b, 25-1279 b, 10; VII, 1328a, 35-40]: Տե՛ս **Fritz**, 1954, 105-112:

<sup>94</sup> Բոլոր աստիճաններին համապատասխանում են անհատա-  
կան ձևերը: Այս գաղափարն առավելագույնս զարգացրել է Պլո-  
տինոսը. թերևս դրանով էլ նա տարբերվում է Պղատոնից, որի  
հայեցակարգում ձևերն ունեն ընդհանրական բովանդակություն և  
իմաստ: Տե՛ս **Rist**, 1963, 229-230:

<sup>95</sup> Հարկավ, նա քիչ առնչություններ ունի նոր դարաշրջա-  
նի իմաստասիրական տարբեր համակարգերում մշակված «բա-

Վերջինիս հատուկ են այնպիսի արժեքներ, որոնք նախորդ բոլոր առաքինությունների արքեպիսկոպոստներն են: Դրանց կարևորագույն չափումներն են միասնությունն ու ինքնաբավությունը, նույնությունն ու այլությունը, ճշմարտությունն ու ներդաշնակությունը, գեղեցկությունն ու բարեկերպությունը: Դրանց ներգործությամբ հնարավոր է դառնում «[...] Բանականի մաքուր հատվածի միջոցով մտահայել Մաքրագույնը (τὸ καθαρῶτατον)» [Plot., VI, 9, 3, 25]: Իսկ դա Նախագույնը կամ Բարիքն է՝ համայն գոյակարգի և մարդկային անհատի լինելության իրական պատճառը:<sup>96</sup> Համաձայն Պլոտինոսի՝ մարդ էակը ի վիճակի է հասնելու այդ ամենին բանական ինքնարարումի (կամ կրթության) հաջորդական երեք շրջափուլերով: Դրանք փոխրացնում են միմյանց և կազմում մեկ միասնական հոլովույթ:<sup>97</sup>

*Առաջին շրջափուլն* աղերսվում է մուսական արվեստին (ή μουσική), որին ծառայողը, մեկնարկելով կոնկրետ մարմնական ձևերից, հնչյուններից ու ռիթմներից, քայլ առ քայլ հանգում է հանուր Հոգուն և դրան ներհատուկ հանուր (մարմնական) Գեղեցիկին (τὸ καλὸν πάντων) [Plot., I, 6, 2, 10]: Վերջինիս ծիրում բացահայտ-

---

ցարձակ մարդու» այլազան հղացքների հետ: Արտահայտում է գոյակարգի ինքնարարման և ինքնաճանաչման գործընթացի մի կարևոր շրջափուլ, երբ վերարտադրությունը վերադառնում է բացարձակ Ձևին: **Rist**, 1967, 83:

<sup>96</sup> Պորփյուրիոսի գրչի ներքո Պլոտինոսի կենսընթացը համաբերված է հենց այս հիմնագաղափարի վրա: Այսինքն՝ իմաստասերն իր իսկ կենսընթացի հեղինակն էր, որի նպատակն էր վերադարձը Նախագույնին: Հմմտ. **Michaelides**, 2018, 83-89; **Strózyński**, 2021, 457-466: Եվ շարժն առ բանական աշխարհի ընթանում է մաքրագործման (կատարսիս) ճանապարհով: Միջոցը առաքինությունների հաստատագրումն է՝ ինչպես գործնական-առօրեական, այնպես էլ մտահոգևոր: Մեկնակետը, կրկենք, օրփեական փորձառությունն էր: Տե՛ս **Barnes**, 1942, 363-374:

<sup>97</sup> Այս ողջ գործընթացի հիմնանպատակը, հարկավ, մարդ էակի ինքնաճանաչումն է, որը երկար ավանդույթ ուներ հունական մտահոգևոր փորձառության ծիրում: Տե՛ս **Remes**, 2017, 78-82:

վում է մարմնական աշխարհի ներդաշնակությունը՝ ուժային, համակարական և համազգացական կապերով ու հարաբերություններով:

*Երկրորդ շրջափուլն* աղերսվում է սիրական արվեստին (ή έρωτικώ), որին ծառայողն սկսում է աստիճանաբար վերացարկվել մարմնական բնությունից և ձգտել առ բանական Հոգին: Ինչպես ցույց տրվեց, վերջինս ընկած է բոլոր գոյացությունների հիմքում՝ թե՛ բանական, թե՛ մարմնական: Եվ այս առնչությամբ «սիրողին» բացահայտվում է բանական աշխարհի ընդհանրական ներդաշնակությունը՝ կառուցված ըստ մեկ-բազումի: Դա Լինելությունը կամ Գեղեցիկն է [Plot., I, 1, 3, 35]:

*Երրորդ շրջափուլն* աղերսվում է մաթեմատիկային և իմաստասիրությանը, որոնք ճանապարհ են հարթում առ ճշմարիտ Գոյը և դրա բազմապիսի դրսևորումները: Տակավին Պյութագորասը և նրա հետևորդները մաթեմատիկան ենթաբաժանում էին երկու կարևոր հատվածի: Առաջինը գործառում էր, այսպես կոչված, բնական (կամ զգայելի) թվերով՝ միտված բացահայտելու զգայական աշխարհի քանակային հարաբերություններն ու համաչափությունները: Երկրորդը, ընդհակառակը, գործառում էր մտընկալելի թվերով՝ նպատակ ունենալով վերհանել բանական աշխարհի հարամնա էությունական հարաբերությունները՝ համակարգված ըստ մեկ-բազումի համաչափության: Այս մոտեցմամբ՝ թիվը ներկայանում էր իբրև բանական գոյացությունների հոմանիշ:<sup>98</sup> Պյութնոսը հետևում է այս հղացքին և բազմիցս օգտագործում մաթեմատիկայի հնարավորություններն «այս» և «այն» աշխարհների պատկերը երփներանգելու համար և ցույց տալու դրանց կապող ուղին՝ իբրև անցում մտքի տրամախոհական մակարդակից դեպի տեսական-հայեցողա-

<sup>98</sup> Պյութագորասական մաթեմատիկայի և նրա միջոցով երկրային ու երկնային համաչափությունների բացահայտման մասին տե՛ս **Heath**, 1921, 32-36: Խորքային իմաստով խոսքը երկու հարթություններում օրինականի, արդարի և գեղեցիկի մասին է: **Huffman**, 1999, 71-74:

կան մակարդակ [Plot., I, 3, 11, 1-15; VI, 6, 2, 5-30 etc.]:<sup>99</sup>

Տվյալ դիտանկյունից, անտարակույս, ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում իմաստասիրությունը: Մեկնարկելով Արիստոտելի տրամաբանությունից՝ Պլոտինոսը շեշտադրում է, որ իմաստասիրական ճանաչողությանն առավելագույն չափով համապատասխանում է մտածողության ապացուցական (ապոդիկտիկ) կերպը: Դա գործառու է «[...] ճշմարիտ և առաջնային [դրույթներով], որոնք արժանահավատ են ոչ թե ըստ ուրիշի, այլ ըստ ինքյանց» [Aristot., Top., 100b, 35; cf. Plot., VI, 7, 10, 10]: Հակառակ սոփեստների՝ այդ դերին ավելի քիչ է համապատասխանում մտածողության տրամախոսական (դիալեկտիկ) կերպը, քանզի գործառու է լոկ ճշմարտանման դրույթներով, «[...] որոնք արժանահավատ են թվում բոլորին կամ մեծամասնությանը, կամ էլ միայն իմաստուն այրերին» [Aristot., Top., 100b, 40; I Analit., I, 24a, 25]: Այլով բանիվ՝ եթե ապացուցական կերպը բացահայտում է ճշմարիտ գիտելիքը, ապա տրամախոսականը՝ լոկ հարաբերականը: Ճանաչողության աստիճանակարգում այն ներկայանում է իբրև (համաձայնողական) կարծիք (ή δόξα) [Aristot., II Analit., VI, 64b; cf. Plot., VI, 7, 33, 15]:<sup>100</sup>

Պլոտինոսն ավելի է մասնավորեցնում խոսքն իմաստասիրական ճանաչողության մասին. ինչպես նշել ենք, նա համոզված է, որ իմաստասիրական խոհը (և ընդհանրապես դպրոցը) բացառիկ դեր ունի գոյակարգի կառուցիկ վիճակի պահպանման գործում: Այդ ճանապարհին, մեկնարկելով մարմնական համաչափություններից, նա բացահայտում է իրերի բովանդակային կառույցը և ներթափանցում Բանականի տիրույթ:<sup>101</sup> Նա

<sup>99</sup> Հիմնախնդրի կրթական-մանկավարժական դիտանկյան մասին ընդհանրական գծերով տե՛ս Ellis, 2017, 135-144:

<sup>100</sup> Այս և հարակա հիմնախնդիրների մասի տե՛ս մանրամասն **Hadot**, 1963, 126-129; հմմտ. **Netz**, 2014, 173-176:

<sup>101</sup> Իմաստասիրական հայեցողության կառուցվածքի, առանձնահատկությունների և ճանաչողական (հանգրվանային և վերջնա-



սկսում է ճանաչել այնտեղի գոյացությունները, և այդու՛ ամբողջովին վերականգնվում են մասնակի հոգու հեռավոր հիշողությունները, «[...] զի որքան շատ է նա ձգտում ի վեր, այնքան շատ բան է մոռանում՝ թերևս [այստեղի] ողջ կյանքը» [Plot., VI, 3, 32, 15]:

Հընթացս այդ վերին ճանաչողության Բանականը բացահայտվում է նախ և առաջ իբրև նախագո սեռերի շարակցություն՝ Գոյ (Միտք-Մտածելի), Նույնություն և Այլություն, Դադար և Շարժում: Դրանցից էլ սերում են տեսակի ստորոգությունները՝ գոյեր կամ էություններ, բանական տարրեր, մաքուր ձևեր, արքեստիպեր: Վերջիններիս հաջորդում են չորս նախատարրերը (հուր, օդ, ջուր, հող), ապա՝ աստղերը, մոլորակները, երկիրը, հավերժական աստվածները, մարդիկ, արարածները, բույսերը: Բոլորն էլ անմարմին գոյացությունների տեսքով [Plot.VI, 11, 25-60; cf. Plato, Phaed., 111a-c]:

Արդյունական է նաև հակընթաց շարժումը՝ ներքևից դեպի տեսակի ու սեռի ստորոգություններ, իսկ ապա՝ առ Բանականը՝ իբրև ինքնաբավ ամբողջություն [Plot., VI, 7, 25, 10-30]: Հակառակ ստոիկների և պերիպատետիկների ուսմունքի՝ այս մտավոր շարժումներն ընթանում են ոչ թե ըստ ձևական, այլ «բնագանցական» տրամաբանության, որի ծիրում առավել քան զորեղ է մտքի արտաձական որակի (ή ἐξάγωγή) գերակայությունը մակաձականի (ή ἐπαγωγή) նկատմամբ:

Պլոտինոսի արտահայտությամբ՝ այս ամենը հիմք է պատրաստում ճանաչողության ավելի բարձր մակարդակի համար, երբ ապաստական ապացույցի (ή ἀπόδειξις ἀποφατική) և պայծառատեսության (ή ἔκστασις) միջոցներով հնարավոր է դառնում մարդ էակի մերձեցումը Նախագույնին, «[...] զի Բարիքին ձգտողը իր մեջ պարառում է Սկիզբը և այդու՛ վերածվում բազումից մեկի» [Plot., VI, 9, 3, 20]: Սակայն այդ բանը հասու է

միայն բացառիկ իմաստուններին: Ուստի իմաստասերը դրա մասին խոսում է հույժ անորոշ ու անմեկին:<sup>102</sup>

Եվ այսպես, գեղագիտության, սիրական արվեստի և իմաստասիրության աստիճաններով մարդն ի զորու է հրաժարելու նյութից ու արտահոսքի հակընթաց շարժմամբ վերադառնալու դեպի Բանականի տիրույթ: Հընթացս, նա ինքնարարման ճիգով վերադառնում է նաև «ինքն իրեն», «[...] զի յուրաքանչյուր [մարդ] երկակի է. մեկը համադրված է [նյութին], իսկ մյուսը հենց ինքն է (ὁ δὲ ἀτόκος)» [Plot., VI, 3, 9, 30]:<sup>103</sup>

Ինչպես նշվեց, այս ճանապարհի սկզբում նա ըմբռնում է գոյակարգն իբրև գեղեցիկի բազմաստիճան կառույց՝ մասնակի գեղեցկություն, հանուր (մարմնական) Գեղեցիկ, բանական Գեղեցիկ և Գոյը. «Պետք չէ մշտապես մնալ այս [մարմնական] և բազում գեղեցկության ծիրում, այլ պետք է բարձրանալ ի վեր՝ ձգտելով այն ամենին, ինչ այնտեղ է: Բարձրանալ ոչ միայն այս երկնքից, այլ նաև մյուսից՝ զարմանալով, թե ով և ինչպես է արարել դա» [Plot., VI, 7, 16, 1-5]:

Տվյալ դիտանկյունից Գոյը կամ էությունը ներկայանում է իբրև գեղեցիկի գերադրական աստիճան՝ կազմակերպված ըստ բացարձակ Բարիքի: Նրանից հավերժորեն արտաբխող մաքուր բանական ձևերով են պայմանավորված գեղեցիկի (τὸ καλόν) ստորակա բոլոր աստիճանները: Դա հիմք է տալիս իմաստասերին գեղեցիկը սահմանել որպես մարմինների՝ բանական աշխարհին մասնակցության կերպ, մակարդակ

<sup>102</sup> Կարծում ենք՝ այս կետում նույնպես խոսքը էքստատիկ մտահոգևոր վերապրումի մասին է, որը չի ենթարկվում տրամաբանական նկարագրության և ապացույցի խստիվ կանոններին: Հիմնախնդրի այս դիտանկյանը մոտեցել են միայն որոշ հետազոտողներ: Տե՛ս Ellis, 2017, 129-135:

<sup>103</sup> Այս լույսով մեկ անգամ էլ հատկանշենք. նյութը բացարձակ չարիք չէ: Այն անհրաժեշտ նախապայման է հատվածական հոգու հակընթաց ընթացքի և, ի վերջո, Նախագույնի հետ վերամիավորման աղազավ: Տե՛ս O'Meara, 2010, 322-323; Pourtless, 2023, 13-14:

և արդյունք: Համապատասխանաբար, առավել գեղեցիկ են նկատվում այն մարմնական գոյացությունները, որոնք ավելի բանական ներուժ են պարունակում: Այս դիտանկյունից գեղեցիկը միանգամայն համադրելի է ճշմարիտին (ή ἀλήθεια) [Plot., V, 3, 10, 5]:<sup>104</sup>

Հակառակ դրան՝ տգեղը (τὸ αἰσχρόν) արդյունք է վերոհիշյալ մասնակցության մասնակի կամ իսպառ բացակայության: Ըստ որում, առաջին դեպքում մարմինները կարող են անգամ ունենալ ներդաշնակության ինչ-ինչ տարրեր, բայց լինելով «վերարտադրությունների վերարտադրություններ»՝ մինևույն է, վերջին հաշվով կեղծ են ու տգեղ: Ինչ վերաբերում է երկրորդ դեպքին, ապա այդ պարագային մարմիններն առավելագույնս մոտ են (կամ նույնական) նյութին, որը, ինչպես նշվեց, չարիքի և ստության բեռն է:

Ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ գեղեցիկի պլոտինյան հղացքում գեղագիտական, բարոյագիտական, իմացաբանական և գոյաբանական հիմնարար արժեքները համարուն են: Սակայն իմաստունի «այնտեղ» վերադառնալու տեսանկյունից առավել կարևորություն ունի գեղեցիկի աղերսը բարոյական կատարելության և երջանկության հետ:

Այս տրամաբանությամբ Պլոտինոսը կրկին անդրադառնում է երջանկության հիմնախնդրին և տարբերակում դրա երկու մակարդակ: Առաջինը բացարձակ երջանկությունն է, որն աղերսվում է վերին ճակատագրին կամ Նախախնամությանը: Հետևելով ստոիկներին՝ իմաստասերը գտնում է, որ դա համատիեզերական բովանդակություն և ընդգրկում ունի: Կա միայն մի նախապայման. բոլոր գոյացությունները (թե՛ բանական, թե՛ մարմնական) պետք է ստուգությամբ կատարեն

<sup>104</sup> Մարմնական գեղեցիկից մինչև բանական գեղեցիկը, որը նաև ճշմարիտն է և արդարը, մտահոգևոր ճանապարհ է, որով մարդ էակը, համաձայն Պլոտինոսի, վերականգնում է իր տիեզերական կարգավիճակը: Տե՛ս **Brisson, Prudeau**, 2006, 593-599; **Gál**, 2022, 24-29, 58-64:

Բնությանը սահմանված իրենց դերը. աստղերը ճառագեն և ցուցանեն այն, ինչ հայնկույս է, բույսերը պտղավորվեն, մարդիկ ապրեն ըստ Բարիքի [Plot., I, 3, 6, 15-20]<sup>105</sup>: Այսօրինակ կյանքի բարձրագույն արտահայտությունը բարօրությունն է (ή εὖζωϊα), որը տանում է դեպի բացարձակ Լինելությունը կամ Կյանքը: Հավելենք, որ մարդկանց պարագային խոսքը բացառապես իմաստունին է վերաբերում, որի համար «[...] այստեղ ապրելիս լավ ու գեղեցիկ է հրաժարվել մարդկային ձգտումներից, համապատասխանաբար՝ նաև հիշողություններից» [Plot., IV, 3, 32, 15]:

Հասնելով Բանականի տիրույթ և ասես երկար դեգերումներից հետո վերադառնալով իր բարեկարգ հայրենիքը՝ «Նա ազատվում է իր այս (մասնակի) հոգուց և ապրում ըստ Նախախնամության: Այդժամ աստղերը նրան սուկ նշաններ չեն տալիս, այլ ինքը վերածվում է [բանական] Հանուրի մի մասնիկի և ամբողջությամբ հետևում դրան» [Plot., III, 3, 9, 30]: Հարդյունս՝ իմաստուն այրը ձեռք է բերում բացարձակ ազատություն: Եվ ինչպես հատկանշել ենք, ծնվում է բացարձակ Մարդը, որը մարդ էակի գոյության գերագույն նպատակն է:

Երջանկության երկրորդ մակարդակը հնարավոր է միայն առօրեական հանգամանքներում: Դա աղերսվում է «ստորին բախտին», և նրա բովանդակությունը կազմում են արտաքին կամ հարաբերական բարիքները: Դրանց միջոցով անհատը հնարավորություն է ստանում լավագույնս կազմակերպելու իր կյանքը զգայական աշխարհում՝ չտրվելով ծայրահեղությունների: Մարդկանց այս տեսակի մեջ գերակա դիրք ունի ցասնական հոգին, որին հասու են զգայական գեղեցկությունը, հանուր Գեղեցիկը և ինչ-որ չափով նաև բա-

<sup>105</sup> Եվ գոյակարգը Պյոտինոսին ներկայանում է իբրև մի համընդգրկուն թատերախաղ՝ ըստ Բանականի «բացարձակ և մաքուր խաղընթացի»: Հընթացս դրա՝ «[...] բազմադեմ Կյանքը տիեզերքում անընդհատ արարում է կյանքի կոչելով ու բազմացնելով գեղեցկատես կենդանի տիկնիկների» [Plot., III, 2, 15, 30-35]:

նական Գեղեցիկը: Հետևաբար, նրանք ի զորու են կտրվելու մարմնական ձևերից, իսկ առանձին դեպքերում՝ հասնելու անգամ Բանականին: Հանդերձ այդու անկարող են հաստատվել այնտեղ: Պատճառն այն է, որ «[...] իրենց հետ վարից շատ բան են վերցնում՝ անկարող հրաժարել դրանից» [Plot., III, 3, 25; V, 8, 1, 15]:

Մարմնական գրգիռներով ապրող մարդիկ մեծամասնություն են կազմում: Նրանց մեջ գերակա դիրք ունի ցանկական հոգին, որին հասու է միայն մարմնական գեղեցկությունը: Նրանք ի զորու չեն կտրվելու մարմնական ձևերից, «[...] քանզի վարից չափազանց շատ բան են վերցրել» [Plot., III, 3, 25]: Ուստի կամ տառապում են, կամ էլ ապրում երջանկության սին պատրանքով:

Հոգիների հետագա ճակատագրին անդրադառնալիս Պլոտինոսը հետևում է օրփեական էզոթերիկայի ծիրում մշակված, իսկ ապա Պյութագորասի և Պղատոնի հայեցակարգերում զարգացված, այսպես կոչված, վերաբնակության ուսմունքին (ή μετεμψύχωσις):<sup>106</sup> Համաձայն դրա՝ մարմնական մահից հետո հոգիները տարվում են Հադեսի անդրշիրիմյան թագավորություն և ենթարկվում դատի. «Այնտեղ նրանք արժանանում են այնպիսի դատավճռի, որին արժանի են, և մնում են

<sup>106</sup> Կրոնամիստիկական մի շարք համակարգերին հատուկ հղացք է: Այն առանձնակի մանրամասնությամբ մշակված էր հին եգիպտական և հնդկական էզոթերիկայի ծիրում: Հունական իրականությունում երևացել է հավանաբար Ք. ա. 7-րդ դ. վերջերին: Ըստ ավանդության՝ առաջին անգամ համակողմանի շարադրվել է Փերեկիդես Սիրացու կոսմոգոնիական առասպելում [Cicero, Tusc. Disp., I, 38]: Կազմել է օրփեական պատկերացումների անկապտելի մասը: Ձևավորվող իմաստասիրական միտքը նույնպես անտարբեր չի մնացել այս հղացքի նկատմամբ: Այն ներառվել է Էմպեդոկլեսի և Պյութագորասի իմաստասիրական համակարգերում՝ բացահայտելով մարդու և գոյակարգի հարաբերությունների նոր համաչափություններ: Նման դեր ու նշանակություն այն ունի նաև Պղատոնի հայեցակարգում [Plato, Rep., X, 614 d-617 d]: Տե՛ս **Majeed**, 2013, 119-130; **Cornelli**, 2016, 3-11:

այնքան ժամանակ, որքան հարկն է: Դրանից հետո, մեկ այլ ուղեկցի առաջնորդությամբ վերադառնում են այստեղ: Եվ այսպես, ժամանակի մեծ ընդհատումներով նույն բանը կրկնվում է նորից ու նորից» [Plato, Phaed., 107c; Plot., IV, 3, 24, 10-25]:

Այլ խոսքով՝ հոգիների և՛ անդրշիրիմյան կյանքը, և՛ վերաբնակությունն ու նոր երկրային կյանքը շատ առումներով պայմանավորված են այս կյանքով: Վերջինիս մտահոգևոր արժեքները, համադրվելով հոգիների բնատուր արժեքներին, պայմանավորում են նակատագիրը: Եվ լավագույն հոգիներն անդրշիրիմյան դատից հետո (որից նրանք շատ քիչ են կախված) հրաժարվում են «իրենց հոգեկանությունից», ապրում Բանականի տիրություն՝ երանելի կյանքով: Ժամանակ առ ժամանակ ենթարկվելով Բնության «համընդհանուր կարգին»՝ նրանք բաժանվում են Հանուրից, իջնում զգայական աշխարհ և մարմնավորվում իմաստուն այրերի տեսքով: Մնացած հոգիների նկատմամբ (ըստ նրանց մակարդակի) դատն անհամեմատ ավելի խիստ է: Նրանց միայն մի փոքր մասն է արդարացվում, մինչդեռ մեծամասնությունը դատապարտվում է անդրշիրիմյան տառապանքների և հետագայում վերաբնակեցվում մարմնական ստորակա գոյացությունների մեջ: Հետևաբար, գոյակարգի կառուցիկ վիճակի պահպանության համար այնքան կարևոր հակընթաց շարժումն ընթանում է իմաստուն այրերի մի սահմանափակ խմբի շնորհիվ:

Նրանց էգոթերիկ մղումն ունի առավելապես բանական բովանդակություն և ներուժ: Միտված չէ փրկելու յուրաքանչյուրին և բոլորին՝ աստվածային կանխատեսությամբ ու կամքով, ինչը հատուկ է կրոնամիստիկական վախճանաբանությանը: Այլ կայանում է իմաստասիրական դպրոցի ծիրում, գրույց-խնջույքի միջոցով, որտեղ իմաստունի անհատականությունն ու ստեղծագործական ճիգն ունեն բացառիկ դեր ու նշանակու-

թյուն:<sup>107</sup>

Ճնորհիվ վերջինիս՝ նախ՝ ուղղակի առնչություններ են ստեղծվում իմաստունի և համայն գոյակարգի միջև, ապա դրանք ուժային և համակարական մղումներով տարածվում են դպրոցի, պոլիսի և ընդհանրապես մարդկային համակեցության վրա: Ճիշտ այնպես, ինչպես պղատոնական իդեալական պետությունում է. կառավարում են իմաստունները, որոնց համար բաց են հայնկուսային ճշմարտությունները, իսկ մնացած բոլորը, ենթարկվելով նրանց, ապրում են ըստ Բարիքի [Plato, Rep., V, 473c-d]: Այդպիսի պոլիս Պլոտինոսը երազում էր հիմնել Կամպանիայում, «[...] որտեղ մարդիկ պետք է ապրեին ըստ Պղատոնի օրենքների ու բարոյական արժեքների, և որը պետք է կոչվեր Պղատոնոպոլիս» [Porphy., Vita, 12, 5]:

Նախագիծը ձախողվեց, բայց դա որեւէ կերպ չխանգարեց իմաստասերին՝ իրագործելու իր բանական և հոգևոր առաքելությունը: Համաձայն Եվստոխոսի՝ մահամերձ Ուսուցչի վերջին խոսքերն էին. «[...] այժմ ինքը կփորձի իր մեջ եղած աստվածայինը միացնել տիեզերքի Աստվածայինին» [Porphy., Vita, 2, 20]: Մյուս աշակերտը՝ Ամելիոս Կվինտիլիանոսը, համոզված էր, որ մահից հետո հայտնվելով «այնտեղ» և ապրելով «վերկենսական կյանքով»՝ Նա հայտնվել էր մի վայրում, «[...] որտեղ հանգրվանել էին Պղատոնի սրբազան ներուժը և Պյութագորասն իր գեղեցկությամբ» [Porphy., Vita, 22,

<sup>107</sup> Միանգամայն անընդունելի պետք է նկատել բոլոր այն մոտեցումները, որոնք պղատոնականությունը և նորպլատոնականությունը դիտարկում են կրոնամիստիկական (այդ թվում և՛ քրիստոնեական) համակարգերին ներհատուկ չափանիշների դիտանկյունից: Տե՛ս **Вл. Соловьев**, 1990, 325-327: Հակառակ իրենց անժխտելի էզոթերիկ բովանդակության, դրանք իմաստասիրական համակարգեր են, որոնց առաջնահերթ խնդիրն է գոյակարգը բացատրել իբրև ապացուցելի իմաստների ու հարաբերությունների համաչափություն: Ուստի ուղղված են ոչ թե հանրային, այլ առանձին անհատներին, ոչ թե համայն աշխարհին, այլ իմաստասիրական դպրոցին: [Plato, Soph., 222 d; 225 b]:

34]: Այսինքն՝ դեմքը միացել էր իդեալական Գիմակին, երկրայինը՝ Երկնայինին: Եվ մարդկությունը հայտնաբերել էր ևս մի ճանապարհ դեպի Հավիտենականը:

### Համաբերում

Պլոտինոս՝ Ք.հ. 3-րդ դարի իմաստասեր. նպատակ ուներ լուծելու անտիկ առաջատար իմաստասիրական դպրոցների սկզբունքային հակասությունները գոյաբանության, իմացաբանության, բարոյագիտության, գեղագիտության տիրույթներում՝ պլուրազորականություն, ստոիցիզմ, պղատոնականություն (իր տարբեր երանգներով), արիստոտելյան հայեցակարգ, էպիկուրականություն և այլն: Գումարած նաև՝ կրոնական վերապրումի էզոթերիկ փորձառությունը: Այս ամենը միտված էր համաբերելու հայեցողական մի մեգահամակարգ՝ կառուցված ըստ տիեզերքի և նրա հիմնական միկրոֆունկցիոնների համակերպության սկզբունքի: Գաղափարի երկրային մարմնավորումը պետք է դառնար այն իմաստասիրական դպրոց-մենաստանը, որն իմաստասերը մտածում էր հիմնել իտալական Կամպանիայում:

Ըստ Պլոտինոսի՝ Գոյակարգի կայացումը և կառույցը միասնական հոլովույթ է, որ բացահայտում է ժամանակի և տարածության խորքային կապը: Այն ակներև է նախ և առաջ տիեզերքի բանական հարթակում, որտեղ տոն են տալիս նրա երեք նախագո հիմքերը՝ Մեկը, Բանականը և Բանական Հոգին: Նրանց միջև առկա է կայացման և գոյության աստիճանակարգային հաջորդականություն, որը նկատվում է իբրև բարոյական Արդարի և գեղագիտական Կատարյալի դրսևորում: Ըստ իմաստասերի՝ այս հոլովույթը հնարավոր է մտահայել Չգոյ-Ունայնի հետ նախագո հիմքերի բազմաչափ հարաբերությունների լույսով միայն:

Պղատոնի հետևողությամբ Պլոտինոսը բանական



տիեզերքին հակադրում է նյութական տիեզերքը: Մակայն նրա հայեցակարգում այս հակադրությունը բացարձակ չէ. երկու աշխարհների սահմանը թափանցիկ է, և դա ներկայացնելու աղագավ իմաստասերը ներմուծել է մի նոր նախահիմք՝ Հանուր Հոգին: Վերջինիս գործառույթով է, որ բանական աշխարհի եզակիությունից գոյանում է նյութական աշխարհի բազմակիությունը՝ մարմնավորված մասնակի հոգիների տեսքով: Հանուր Հոգին միաժամանակ դրանցից յուրաքանչյուրի և բոլորի միության երաշխիքն է:

Բացի վարընթաց շարժից՝ տիեզերակարգին ներհատուկ է նաև վերընթաց շարժը, հընթացս որի մասնակի հոգիներն ի գորու են վերադառնալու առ Նախագո Մեկը: Իսոպը, հարկավ, միայն այն մարդկային հոգիների մասին է, որք ունեն վերադարձի բնական հակվածություն և չեն կորցրել Մեկի պատկերը: Նրանք ինքնաժխտմամբ (մահ) հրաժարում են նախ իրենց մարմնից, մարմնական գրգիռներից ու կրքերից և ապա բանական մղումով կրկին վերագտնում Հանուր Հոգին: Իսկ հետո, նրա միջնորդությամբ, հասնում գոյակարգի նախահիմքերին՝ Բանական Հոգի, Բանական և Նախագո Մեկ: Գեղագիտության լույսով այս շարժը կարելի է բանաձևել իբրև անցում նյութական կրկնօրինակից դեպի հավերժական բնօրինակը:

Սակայն վերադարձի գործընթացը ինքնաբերական չէ. այն ենթադրում է կրթական համալիր ծրագիր՝ կառուցված ըստ վերընթաց շարժման կառույցի ու տրամաբանության՝ սկսյալ նախակրթարանից մինչև բարձրագույն իմաստասիրական դպրոց և հայեցողություն: Այս ուղին մինչև վերջ անցնողը դառնում է կատարյալ մարդ՝ ունակ առ Բարիքն առաջնորդելու իր հոգևոր կամ քաղաքական համայնքը:

Քրիստոնեությունը յուրացրել է նորպատոնականության հիմնադադափարները և այսու իմաստասիրական հեռանկար է հավելել իր վարդապետությանը: Տվյալ առումով հատկապես ներգործուն էին աղեք-

սանդղյան, անտիոքյան ու կապպադովկյան դպրոցները: Հանձին երեք Նախահիմքերի՝ նրանք տեսանում էին ամենակար Հայր Աստծուն, Որդուն ու սբ. Հոգուն: Ճանաչում էին մարդ էակի ազատ բանական և բարոյական ընտրությունը: Նաև կամքը՝ վերագտնելու կապը Աստծու հետ: Սակայն այս շարժն այլևս պարուրված չէր բացառիկության շղարշով, այլ նկատվում էր իբրև հավատացյալի և Աստծո բնականոն հարաբերում:

Այս նոր հանդերձանքով նորայատուկականությունն ստացավ ազդեցության առավել ընդլայն տիրույթ՝ աստվածաբանություն և իմաստասիրություն, քերթողական արվեստ և գեղագիտություն: Վերածննդյան կերպափոխությամբ այն հասավ մինչև արդի մտահոգևոր միջավայր՝ Գ. Հեգելից մինչև Մ. Հայդեգեր, Ռ. Մ. Ռիկեից մինչև Ա. Կամյու: Հավելենք, որ նրա ազդեցությունն աներկբա է նաև իսլամական սուֆիզմի վրա:

# NARRATIVE FICTION IN MOSES KHORENATSI<sup>108</sup> (A conceptual perspective)

## Introduction

This research essay aims to bring together some key results of our previous studies on the “History of the Armenians” by Moses Khorenatsi. Proceeding from specific facts and narrative blocks, we tried to interpret and understand their meaning and logic in a new light.<sup>109</sup> Along

---

<sup>108</sup> Under fiction, modern theory implies the lesson of history. It pursues the aim of overcoming the renowned Aristotelian concept tracing the contradiction between pragmatic (what happened) and artistic-philosophical (what could happen) comprehensions of the past and present. See **White**, 2005, 147-149. For R. Koselleck, historical fiction is based on two forms of activity – *res factae* and *res fictae* – which complement each other and allow the reader to unveil the *possible history*. **Koselleck**, 2018, 11-14.

<sup>109</sup> For this short synopsis on Khorenatsi’s “History”, we decided not to enter into the complicated problem of author’s time and leave aside the detail discussion of the approaches of traditionalists and critics. We suppose, it is quite enough to accept that the nucleus of author’s narrative has been compiled in the fifth century while being “enriched” with interpolations in further centuries. However, the final settlement of the problem demands interdisciplinary studies. In this regard, we quite agree with J. -P. Mahé: “Un jour viendra où les progrès de toutes ces disciplines apporteront une solution du problème qui s’imposera définitivement: soit qu’on puisse choisir entre les différentes dates proposées,

with this inductive approach, we apply the deductive approach as well while discussing the author's work as a narrative system with a quite obvious scenario with its beginning, development, and end. In this way, we hope to come to (in some senses) a different but again adequate understanding of the author's vision of Armenian history. We mean the understanding that modern scholars frequently consider the lesson of history.<sup>110</sup> In this regard, we decided to apply the concepts of Classical Greek, Hellenistic, Biblical, and Early Christian intellectual trends<sup>111</sup> and combine them with historical perceptions implanted in Armenia long before by numerous unknown and known writers.<sup>112</sup> In this way, we find it effective to recon on not only the direct and obvious sources (quotations, references, and allusions) but also on the *intellectual plasma* in which Khorenatsi and his generation lived and carried out their creative activity. An approach that is used in modern historical investigations with undoubted success.<sup>113</sup> As

---

soit qu'on s'oriente vers une hypothèse tout à fait différente, par exemple celle d'un auteur du Ve siècle remanié utérieurement, comme le furent Agathange, Lazar de P'arpi et, dans une certaine mesure, Korioun [...]". **Mahé**, 1993, 91.

<sup>110</sup> Modern scholars explain the lesson of history while introducing the concept of historical perspectives. See in detail **Seixas, Morton**, 2013, 140-148. Cf. **Gaddis**, 2002, 85-87.

<sup>111</sup> In this view, the experience of P. -L. Zekiyan is very noticeable. See **Zekiyan**, 1988, 381-390.

<sup>112</sup> See in detail **Սարգսյան**, 1969, 107-126; cf. **Stepanyan**, 2018, 72-87.

<sup>113</sup> Best of all this concept is formulated by M. Bloch "[...] le temps de l'histoire, au contraire, est *le plasma* même où baignent les phénomènes et come le lieu de leur intelligibilité." See **Bloch**, 1993, 84. The intellectual plasma of Early Medieval Armenia made up the translations of Christian and Classical authors, on the one hand, – from Origen, Irenaeus, Cyril of Alexandria to Eusebius of Caesarea and Cappadocian Fathers and Socrates Scholasticus, on the other hand, – from Plato, Aristotle and Philo of Alexandria, to Dionysus Thrax, Porphyrius,

to the secondary sources, we tried to understand their information while bringing together the results of different fields of modern humanities – history and political science, philology and narratology, religious studies and philology. They are useful in discussing, interpreting, and understanding our basic problem concerning the narrative structure and semantic code of the “History” by Khorenatsi. For this purpose, the works of modern scholars are of apparent interest – G. Sargsyan, N. Garsoïan, J.-P. Mahé, K. Beledian, and (especially) P.-L. Zekiyán. We have referred to their key assumptions while compiling our approach to the “History”. Consequently, in this study, we plan to demonstrate and interpret three aspects of that: on the one hand, the grasp of historical time, on the other hand, the metamorphoses of Armenian identity across centuries (ethnos, polity, God’s covenant), on the third hand, the genres of compiling narrative clusters and blocks (epic story, rationalistic annals, conceptual narrative, metaphysical perception of the past and present). In the narrative of the “History”, they are intersected while being in a dialogical relationship each with other. This makes up the author’s creative fiction capable of carrying forward the scenario of Armenian history. The last point, which we would like to touch on in this introduction, is about the *collage method* of investigation: through numerous quotations from primary sources (of course, first of all, Moses Khorenatsi) we try to uncover their profound information usually *invisible to common readers*. They make up the text blocks attainable only when a reader has a good acquaintance of the ideas, concepts, and understandings of the author.<sup>114</sup>

---

Iamblichus and many others. See in detail Արևշատյան, 1973, 29–34; Տեր-Պետրոսյան, 1984, 8–13. To them, the works of Koriwn, Eznik, Agathangelos, Buzand, Parpetsi, Elishē, and Khorenatsi are to be added.

<sup>114</sup> To this aspect of the “History”, P. -L. Zekiyán came up in his numerous papers. We mean first: Zekiyán, 1987, 471-485; Zekiyán, 1988, 381-390; Չեփյան, 1993, 27-34; Zekiyán, 2000, 193-204. As

## 1. Time algorithms in the History

Historical time is considered the pivot that determines the coherent course of Khorenatsi's narrative as a well-reasoned scenario.<sup>115</sup> It is multidimensional and makes up the main point of the author's experience while composing the fiction of Armenian history aimed at the transition from a bare description of events to their interpretation and understanding. Respectively, the understanding demands a multidimensional research strategy comprising data from different fields of modern humanities. Usually, such an approach is recognized as interdisciplinarity.<sup>116</sup> In this vein, let us point again out, – the departing point of our comprehension of the “History” is the tripartite historical time.<sup>117</sup>

a. *Long duration.* Khorenatsi was the only representative of his generation who pursued the goal of composing the whole history of the Armenians from the formative period up to the fifth century AD.; more correctly – to the fall of the Armenian Arsacids in 428: “[...] from the time of confusion at the building of the tower to the present” [Khor., I, 3, 10].<sup>118</sup> This long duration of history he had to formulate as a narrative unit in accordance with skills and

---

was pointed out above, some modern scholars define a similar phenomenon as “possible history”. See **Koselleck**, 1985, 270.

<sup>115</sup> For this understanding, the approach of E. H. Carr seems quite applicable: “Present and past are not merely passively given but are actively constructed and interpreted as a situation conducive to and calling for certain actions.” See **Carr**, 1990, 9-11.

<sup>116</sup> See **Mañé**, 1993, 91.

<sup>117</sup> See **Степанян**, 1991, 160-165.

<sup>118</sup> Some scholars explain such broad coverage of the history by Christian historians from the perspective of the Old Testament: “The purpose of such narratives is to articulate the people's corporate identity, to account for the nature of their present plight and to suggest their ultimate destiny”. See **van Seters**, 2002, 15.

understandings of Hellenistic rhetoric and historiography, social philosophy and theology, poetics and hermeneutics. And first of all, he had to outline its narrative plot while singling out its edge borders – the beginning and the end.<sup>119</sup>

At first sight, the essential correspondence of the edge poles of the plot of the “History” comes to the fore. Both of them are about the decay and chaotic corruption comprising all layers of life – from the cosmos to plants, animals, and human beings, from social institutions to customs, laws, and moral values.<sup>120</sup> In this regard, the first idea that comes to mind is about the *eon* well-known in Greek, Hellenistic, and biblical intellectual traditions. It was thought of as a long cosmic duration from one global catastrophe to another – conflagration or flood.<sup>121</sup>

The first pole of cosmic chaos Khorenatsi describes in full accordance with the biblical narrative. Most probably, following Philo of Alexandria, he tries to combine Hellenistic and Christian traditions in this event. Among other

---

<sup>119</sup> Despite Aristotle’s authority, Hellenistic intellectual tradition recognized this approach and defined it as a *tragic history*. **Walbank**, 1960. 25-29. This approach was well-known to King Artavazd II. **Stepanyan**, 2015, 118-119. Meanwhile, modern scholarship formulates it as *narrativistic history* – more exactly a kind of that: “[...] it is used to distinguish histories that “tell stories” from those that do not, stories understood as stories with beginning, middle, and end.” **White**, 2010, 112-113.

<sup>120</sup> The idea of cyclic world history reaches back to epic tales of ancient Near East, Zoroastrian, and biblical religious experiences to Classical and Hellenistic philosophical systems and early Christian worldview. In Armenian mentality, it is traceable in the epos *Sasna Tsrer*. On all these problems see in detail **Stepanyan**, 2021, 85-109.

<sup>121</sup> It is accepted that the Stoics and Plato (following Heraclitus and Empedocles) brought to completion the concept of *eon* [Plato, *Tim.*, 33a, 35c, 39d; *Leg.*, 273b; cf. *Aristot.*, *Phys.*, VIII, 1, 250b, 25]. Philo combined the data of biblical theology and classical philosophy. **Runia**, 1986, 458-460.

This opposition played an important role in the divinization of Hellenistic kings starting from Alexander of Macedonian. They denied earthly goods to acquire sacred royalty through Dionysus's important attributes of epiphany and salvation.<sup>190</sup> In this regard, the moral of the tragedy may be summarized as underscoring that human truth is only an illusion. The last *stasimon* of the chorus confirms this pivotal idea:

*And the end men looked for cometh not,  
And the path is there where no man thought [...]  
[Eur., Bacch., 1390-91].*

This plot and its general idea (γνώριμα) were most probably present in the reverse perspective of the participants of the Artaxata performance, and the director was prepared to model his vision of the day's event after it.<sup>191</sup> More exactly, he planned to demonstrate in what way the Parthian expedition of Crassus ended as a tragedy (ὡσπερ τραγωδίαν τελευτήσαι) [Plut., Crass., XXXIII, 4, ]. Plutarch's narrative contains sufficient information for outlining this new tragic plot.

---

<sup>189</sup> Pentheus is "a king who is too royal, too tyrannical, a male who is too virile, a Greek who is too convinced in his superiority over barbarians, a man of the city who turns reason of state into a narrowly positivistic concept, **Vernant**, 1990, 403.

<sup>190</sup> **Smith R.**, 1993, 207. In the image of Alexander and his successors, Plutarch underlines the bright sides of Dionysus – the world conqueror, the bringer of joy, cf. **Mossman**, 1998, 87.

<sup>191</sup> Taking into consideration the fact that the secret manipulator of the plot of the *Bacchae* was Dionysus, one may conclude that Artavazd II imitated this role. Cf. **Vernant**, 1990, in MTAG, 390.

Tragic actors and a chorus were invited for this purpose. Did they make up an itinerant artistic association (τεχνῖται Διονυσιακοί), or did they live permanently at the court of Artaxata? The question still has no answers.<sup>192</sup> In any event, the group played the roles prescribed to it by the director, and the leading position belonged to Jason of Tralles who played the roles of both Agave and Pentheus.<sup>193</sup> Most probably, the performance was not designed to reproduce the *Bacchae* in its entirety, but only some fragments appropriate to the day's event. By this approach, Jason first played the role of Pentheus presenting, evidently, his refusal to recognize Dionysus's divinity. The second fragment began with his song preparing the entrance of Agave. The participants likely had to restore the connection of the two fragments from memory.

The deviation from Euripides' plot began in the third fragment.<sup>194</sup> The messenger of General Surena came up to the door of the banqueting hall: "[...] and after a low obeisance cast the head of Crassus into the center of the company" [Plut., *Crass.*, XXXIII, 2]. From this point on, a new tragic plot began in the conventional scene of the hall. With applause and shouts of joy, the audience accepted the main idea of the director about the identity of Pentheus and Crassus. In this light, the Roman general looked as tyrant-

---

<sup>192</sup> However, the second preposition seems more possible: the fragment by Plutarch tells about the association of itinerant actors who performed tragedies in cities and courts of the East. Cf. **Mikalson J. D.**, 2006, 211; **Evans**, 121-22.

<sup>193</sup> In theatrical terms, Jason was performing a travesty. See **Laskarēs**, 1923. *Theatikon*, 317, s. v. *Travesti*.

<sup>194</sup> Obvious or allusive deviations were characteristic of Hellenistic (particularly political) performances. However, this was an important feature of all Classical and Hellenistic cultures – literature, philosophy, rhetoric, drama, etc. In the previous research essay, we discussed this phenomenon in the background of the reverse perspective of Greek citizens consisting of textual networks.

nous, lawless, and selfish as the antihero whose evil destiny was inevitable.

Jason of Tralles continued in this vein, discarding the costume of Pentheus and “assuming the role of the frenzied Agave, sang these verses as if inspired:

*‘We bring from the mountain  
A tendril fresh-cut to the palace,  
A wonderful prey’ [Eur., Bacch., 1170-72].  
[Plut., Crass., XXXIII, 3]*

Following Euripides’s plot, the audience would come back to the image of the unhappy mother who had killed her son. In the case of Crassus, Rome would have been imagined in the role of Agave. According to this logic, the ideology of the tragic performance would have coincided with that of the ritual procession in which Rome represented the pole of evil. As was shown above, the procession probably reflected the official Parthian interpretation formulated in the ideological center of the king of kings.<sup>195</sup> However, such expectations did not come to pass. The deviation from the standard plot continued, and Agave came up to her renowned dialogue with the chorus:

*Who slew him? (Chorus)  
Mine is the honour. (Agave) [Plut., Crass., XXXIII, 4].*

Suddenly, one of the Parthian grandees, Pomaxathres:<sup>196</sup> “[...] sprang up and laid hold of the head, feeling that it was more appropriate for him to say this than for Jason” [Plut., Crass., XXXIII, 3]. On this occasion, the new interpretation of the plot became apparent; Mother-Rome had no part in the murder of Crassus. The author of this tragic

<sup>195</sup> On this center see **Neusner**, 1963, 42.

<sup>196</sup> Most probably the name derived from Νομαζάθρης (=Av. *Nāmōxāthra*) which denoted a power over a tribal or administrative unit. See **Justi F.**, 1895, 254.



incident was a Parthian grandee.<sup>197</sup> In Plutarch's words, the Parthian king was delighted and bestowed rich gifts upon both Pomaxathres and Jason. Supposedly, this interruption was a *surprise* for him. The director of the new plot had to legitimize the alteration through the previous course of actions of the antihero. He would have to make it per the canon of the tragic plays, looking particularly for the point when the *change of fortune* occurred.<sup>198</sup> Keeping in mind the fact that tragedy represented a complete action, he would have to come back to the beginning of the Parthian expedition of Crassus.<sup>199</sup>

## 6. Beginning as a model for a tragic end

The beginning of Crassus' expedition, according to Plutarch's narrative, was marked by dramatic events. In 55 BC, Crassus held the consulship with Pompey, and Syria fell to him for the forthcoming five years by lot. He accepted this with great exaltation and began thinking: "[...] he would not consider Syria nor even Parthia as the boundaries of his success, but thought to make the campaigns of Lucullus against Tigranes and those of Pompey against Mithridates seem mere child's play, and flew on the wings of his hopes as far as Bactria and India and the Outer Sea" [Plut., Crass., XVI, 2].

Crassus boasted in this manner among the intimate circle of his friends but the rumor soon spread in Rome. Of these

---

<sup>197</sup> The director, obviously, departed from the idea that the form and context of the performance of a tragedy made the audience "[...] view the same characters and circumstances in a consciously constructed drama that pointed to a world beyond the theatre," **Rehm R.**, 1994, 46.

<sup>198</sup> Proceeding from the theory of Classical tragedy, this *change of fortune* could be formulated as *peripety*.

<sup>199</sup> Let's remember that this principle implied dialogical correspondence of the beginning and end of every poetic composure. Cf. **Smith**, 1968, 10-14.

rumors, the political opponents initiated attacks against him. The plebeian tribunes<sup>200</sup> were the most active in opposing Crassus. Invested in a sacred power of veto in the borders of the City, they did their best to stop the expedition. They justified their denial by divine and human justice: “[...] and a large party arose which was displeased that anyone should go out to wage war on men who had done the state no wrong (οὐδὲν ἀδικοῦσιν), but were in treaty relations with it (ἀλλ’ ἐνσπόνδοις)” [Plut., Crass., XVI, 3].<sup>201</sup> They particularly pointed out the fact that “[...] in the decree which was passed regarding his mission there was no mention of a Parthian war” [Ibid.]. Caesar and Pompey, on the other hand, supported and encouraged Crassus.

On the day of the departure, the multitude was summoned by the plebeian tribunes to block Crassus’s passage out of the city. The latter had foreseen such a possibility and had sought the support of Pompey who had great influence in Rome.<sup>202</sup> Pompey joined Crassus’s procession and when the people saw his presence, “they were mollified and gave way before them in silence” [Ibid.].<sup>203</sup> One

---

<sup>200</sup> The Collegium of plebeian tribunes was probably established in 494 BC. It contained ten members who were charged with the defense of the lives and property of Roman citizens (*ius auxilii*). The person of the tribunes was sacrosanct (*sacrosanta potestas*), and nobody could insult or harm them without severe punishment. If unanimous, they could exercise a veto (*ius intercessioni*) against the acts of magistrates, laws, elections, and *senatus consulta*. They could also hold *comitia tributata* and pass decrees. The authority of the tribunes was valid only in the borders of the City. See **Momigliano**, 1992, 1092; **North**, 2010, 264-266.

<sup>201</sup> On the vicissitudes of state relations between Rome and Parthia in the previous period, see in detail **Keaveney A.**, 1981, 195-212.

<sup>202</sup> On Pompey’s influence on the political situation in Rome in 60-50-s BC. see **Chilver**, 1992, 858; **Seager**, 2002, 127-129.

<sup>203</sup> Pompey understood very well that the campaign was fraught with great dangers that could cause it to end in disaster. However, he supported Crassus since such an outcome would not contradict his own future plans; apparently, the same was true about Caesar’s support.

of the plebeian tribunes, Ateius, “on meeting Crassus, at first tried to stop him with words, and protested against his advance; then he bade his attendant seize the person of Crassus and detain him” [Plut., Crass. XVI, 4]. The other tribunes did not support him, and Crassus trod to the gate of the City. But Ateius did not give up and “[...] he ran on ahead to the city gate, he placed there blazing brazier, and when Crassus came up, cast incense and libations upon it, and invoked curses which were dreadful and terrifying in themselves and were reinforced by sundry and dreadful gods whom he summoned and called by the name” [Plut., Crass., XVI, 5]. The populace found fault with Ateius for casting these curses for, although he tried to obstruct Crassus for the sake of the City (δι’ πόλιν), the curses were believed to harm Rome as well.

Indeed, it was an impressive change of fortune: Mother-Rome tried unsuccessfully to stop the plans of Crassus, her insane son, but he had already set up a triumvirate with Caesar and Pompey intending to make “themselves sole masters of the state” [Plut., Crass., XIV, 5.]. In other words, the Mother herself was in great danger and was not responsible for the evil actions of her son.<sup>204</sup>

*Plutarch gives evidence that the Parthians (probably, through their intelligence service) were informed about this. King Orodes II (Arsaces) in his brief message to Crassus emphasized: “[...] that if the army had been sent out by the Roman people, it meant war without truce and treaty; but if it was against the wishes of his country, as they were informed, and for his own private gain that Crassus had come up in arms against the Parthians and occupied their territory, then Arsaces would act with moderation, would take pity on the old age of Crassus, and release to the Romans the men whom he had under watch and ward rather than watching over him.” [Plut., Crass., XVIII, 1].*

---

<sup>204</sup> Apparently, the director of the performance shared the *anti-tyrannical stance* of the old Roman aristocracy and connected his expectations with the old Republic.

From this perspective, the beginning and the end of Crassus's life tragedy seemed to consist of equivalent narrative units.<sup>205</sup>

According to such an interpretation, Rome was no longer imagined as the pole of evil, and the Parthian expedition of Crassus appeared as an unfortunate accident engendered by personal avarice and vainglory. With the catastrophe and murder of the antihero, the restoration of peace and harmony could now be possible. This message to Rome was uttered at the Armenian court through the deviation from the plot of the *Bacchae* of Euripides.

### Abstract

The Parthian expedition of Crassus placed Artavazd II in a very complicated situation. His main problem was to secure the sovereignty of Greater Armenia by striking a balance between two super-states. After some hesitation, the king decided to continue the political line adopted by Tigran II in the last years of his reign. This policy implied the friendly relations (*amicitia*) of Greater Armenia with both Rome and Parthia and bestowed upon the country a duty to support neither of the conflicting sides against the other.<sup>206</sup> Thus, while the triumph over Crassus was cele-

---

<sup>205</sup> Based on Aristotelian theory, modern scholars have postulated the concept of *retrospective patterning* according to which: "[...] endings have, or appear to have an interpretative authority since the point of closure may be seen as the point at which the audience can finally look back at a completed action and read it fully." **Roberts**, 2005, 137.

<sup>206</sup> Above, we discussed the problem of *amicitia* in light of ancient international law. Now, we would like to add to that a new nuance while underlying that friendship occupied a very important position in the hierarchy of human moral values. By the principle of isomorphism of individuals and state forms, it was applied to interstate relations. See **Konstan**, 1997, 72-78.

brated by the Parthians with a pompous procession whereby they glorified their military and moral superiority over the coward and base Romans, the tragic performance held at the Armenian court contained a different message releasing Rome from responsibility for Crassus's expedition and its catastrophic outcome. Instead, Rome was imagined as a Mother mourning her insane son who had violated the common peace and friendly relations between the two polities. We now come to the last point of the present investigation concerning the authorship of the performance in Artaxata. Indeed, who directed the semantic development of the historical play and the skillful deviation from the plot of the *Bacchae*? The answer to this question can only be tentative and based on the common logic of the situation which, as demonstrated above, was that the palace performance and the artistic representation of the exoneration of Rome sought the restoration of the policy of friendship of Greater Armenia with both super-states. The text of Plutarch may help point us in the right direction as it contains a rather transparent allusion to the authorship of the performance. Embellishing the portrait of Artavazd II, the author points out that the Armenian king “[...] actually composed tragedies, and wrote orations and histories” [Plut., Crass., XXXIII, 2]. It is well-known that the king had been tutored under the supervision of the Greek intellectuals who had found refuge at the court of Tigran II.<sup>207</sup>

Moreover, Plutarch states that some of the works of Artavazd II were still preserved (ὅν εἶναι διασώζονται) [Plut., Crass., XXXIII, 2]. Plutarch was writing in Greece more than a hundred years after the events under consideration, and it would not be an exaggeration to state that the works of the Armenian king continued to hold the interest

---

<sup>207</sup> Among them, as it was stated above, the philosopher Metrodorus of Scepsis and the orator Amphicrates of Athens were the most renowned [Plut., Luc., XXII, 2].

of Greek intellectuals. Does Plutarch's statement indicate that he had actually used Artavazd's works? While an absolute answer again remains tentative, there is a high degree of probability that he did.<sup>208</sup> This conclusion finds additional proof in Plutarch's final considerations of the destiny of the persons involved in the black-and-white clash of super-states. According to him, "[...] worthy punishment overtook both Orodes for his cruelty and Surena for his treachery" [Plut., Crass., XXXIII, 5]. This happened in accordance with global justice (*δική*) which governs both the universe and human lives,<sup>209</sup> but one detail raises a surprise: Artavazd II is not mentioned among these names, despite the steady tradition of Roman historiography accusing him of treachery. Presumably, Plutarch was satisfied by the political arguments of the king and agreed with them.

Plutarch's information about Artavazd II's literary activity, his observation that these works were still available a century later, and his omission of the Armenian king from the fitting punishment that was meted out to the Parthian king and general suggest that the Armenian court worked out its approach to the Parthian campaign of Crassus which it attempted to articulate through a tragic performance. This approach circumvented the opposing positions of mutual alienation and hatred, victory, and defeat by endorsing a compromise, the equivalent of the existential and moral mean (*τὸ μέσον*).<sup>210</sup> This analysis

---

<sup>208</sup> George Goyan has reached a similar conclusion, although without sufficient philological and historical argumentation. See **Гоян**, 1952, 129-135.

<sup>209</sup> **Hall**, 2004, 72-76. The idea of isomorphism between the earthly and cosmic cities was developed by the Stoics, see **Schofield**, 1999, 760-769. In social communities, global justice was paralleled with respect (*αἰδώς*). Together they generated the law (*νόμος*)—the main regulator of social relations. Euripides shared these ideas of the Sophists, see **Adkins**, 1972, 104-105.

<sup>210</sup> According to Aristotle, the mean marked the desirable middle of

of Plutarch's fragment further suggests that Artavazd II may have composed a tragic history based on Artaxata's court performance that also served as Plutarch's source. A tentative synopsis of this lost history would have looked as follows: the three most influential politicians of Rome, Caesar, Pompey, and Crassus, establish the triumvirate to subdue the Republic. Once in power, they divide the empire. Crassus obtains Syria by lot and fosters a plan to overpower Parthia, Bactria, and India to reach the Outer Sea. Through the plebeian tribunes Rome tries to stop this insane plan but in vain, and the Parthian campaign of Crassus ends in a catastrophe at Carrhae. The Parthians celebrate their victory with great pomp, while the kingdom of Greater Armenia adopts a middle position, which implied friendly relations with the opposing sides. The Armenian king, Artavazd II, adhering to the concept of friendship that demands neutrality between the two opponents, comes to terms with the Parthian king and hopes to find an adequate response from the Romans.

---

two extremes which corresponded to virtue excellence, and beauty, Aristot., *Nic. Eth.*, II, 1106b, 19-29.

**Հանգույց Գ**

**Part III**

**ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԾԻՐՈՒՄ**

**PHILOSOPHY IN HISTORY**



**ՍԱԼԼՈՒԲՍԻՈՒՄ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՀՌՈՄԻ ՃԳՆԱԺԱՄԸ  
(ներկայի, անցյալի և հնարավոր  
ապագայի լույսով)**

**Ներածություն**

Հետազոտողներին առայսօր էլ հանգիստ չի տալիս մի հիմնախնդիր. ինչպե՞ս Տիբեր գետի առափնյա բլուրներին ծվարած փոքր ու աննշան հռոմեական համայնքը դարձավ պատմության հզորագույն տերություններից մեկը և շատ առումներով կանխորոշեց նրա հետագա ընթացքը: Բերվում են բազում հիմնավորումներ՝ մտահոգևոր և արժեհամակարգային, բարոյական և կրոնական, իրավական և քաղաքական, տնտեսական և տեխնոլոգիական: Առանձին վերցրած՝ դրանք (թեպետ ճշմարիտ) բավարար չեն իսկությունը բացահայտելու համար: Իսկ համագումար՝ անհարկի հստակ են, տրամաբանական, մտացածին և զանց են առնում պատմության իռացիոնալ-անդրական հատկագիծը: Ամեն նոր հետազոտող (բացահայտ կամ թաքուցյալ) հայտ է ներկայացնում՝ հաղթահարելու այս թնջուկը: Բացարձակ առումով, հարկավ, խնդիրը լուծում չունի, սակայն ոմանք մոտենում են դրան, և նրանց արդյունքները համարվում են նորություն: Ներկա հետազոտական ակնարկի նպատակն է ներկայացնել հռոմեական

պատմության սահըը՝ մեկնարկելով նախորդ հետազոտողների «նորություններից»:

Քննության կիզակետը Ք.ա. 1-ին դարի հռոմեական ականավոր պատմագիր Մալլուստիոսի գրությոն է. ի մասնավորի՝ «Կատիլինայի պատերազմը» լուսաբանված ըստ դարաշրջանի մտահոգևոր պլագմայի՝ պատմագրություն և քաղաքական իմաստասիրություն, բարոյագիտություն և կրոն, քերթողական արվեստ և ճարտասանություն, ծես, թատրոն: Դրանք անձնավորված են՝ Գրաքուսներ և Լ. Սուլլա, Գն. Պոմպեոս և Մ. Կիկերոն, Կատոն Կրտսեր և Հ. Կեսար, Ս. Կատիլինա և Կլոդիոս: Նրանք այն սոցիալական ողբերգության դիմակներն էին, որը կոչվում էր Ուշ Հռոմեական Հանրապետություն: Այն երկունքի ցավերի մեջ էր: Ծնունդ էր առնում համակեցական մի նոր համակարգ՝ պրինկիպատը (հանրապետական միապետությունը):

## 1. Պատմության ավգորիթները

**ա. Կայացում և կերպափոխություն.** համաձայն ավանդության՝ Քաղաքը հիմնադրվել է Ք. ա. 753 թվականին լեգենդար Հռոմուլոսի ձեռամբ: Նախապես կառավարում էին արքաները, որոնց իշխանությունը հավասարակշռվում էր Ծերակույտի և Աշխարհաժողովի իրավասությամբ: Բացառություն էր վերջին արքան՝ Տարկվինիոս Գոռոզը, որի իշխանությունն ընդունեց միահեծանության երանգ և հակադրվեց հանրույթին:<sup>1</sup>

<sup>1</sup> Արքայական դարաշրջանի վերաբերյալ մեր տեղեկույթը սահմանափակ է և առասպելաբանական: Գայիս է հինավուրց տարեգրային ավանդությունից: Հնագիտական նյութի և գրավոր աղբյուրների (Տիտուս Լիվիոս, Վարրոն, Դիոնիսիոս Հալիկարնասցի, Պլուտարքոս, Դիոն Կասսիոս) քննական ուսումնասիրության հիմամբ հետազոծվում է ընկերային և իշխանական կառուցվածքի, սովորության իրավունքի և կրոնական կազմակերպությունների ընդհանրական պատկերը: Տե՛ս **Cornell**, 1995, 119–130; **Forsythe**, 2005, 93–108:

Դա էլ տեղիք տվեց համաժողովրդական շարժման, և արքան արտաքսվեց: Հաստատվեց հանրապետական վարչակարգ (*res publica*): Արմատական տեղաշարժը տեղի ունեցավ Ք. ա. 510 թվականին, օրվա հերոսը Լուկիուս Յունիուս Բրուտուսն էր: Ավանդությունը նրան էլ համարում է Հանրապետության հիմնադիր (*conditor rei publicae*):<sup>2</sup> Ընտրվելով կոնսուլ՝ նա պահանջեց հռոմեացիներից երդվել, որ այլևս չեն հանդուրժի բացարձակ իշխանություն: Liv., II, 1, 9:

Այդուհանդերձ, Հանրապետությունը ժողովրդավարական չէր, այլ աստիճանակարգային: Վերին հարթակին գտնվում էր պատրիկների ներփակ հանրախումբը՝ համաբերված հռոմեական հնագույն տոհմերի ներկայացուցիչներից: Նրան էին պատկանում բոլոր հիմնարար իրավունքները, որք նաև պարտականություններ էին՝ զինվոր լինելու, հող ունենալու, ընտանիք կազմելու, տարասեռ գործարքներ կնքելու: Նաև՝ Աշխարհաժողովին մասնակցելու, «կյանքի ու մահվան» հարցերով վերջինիս դիմելու և ամենամյա պաշտոններ զբաղեցնելու:<sup>3</sup> Ընկերային աստիճանակարգի ստորին հարթակն զբաղեցնում էին պլեբեյները, որք զրկված էին այս իրավունքներից: Կարծիք կա, որ նրանք հետագայում էին ներգաղթել Քաղաք, ուստի առնչություն չունեին նրա ավանդական տոհմիկ կառույցի հետ:

Հետագոտողները (հետևելով Պոլիբիոսին) հստակ գուգահեռներ են տեսնում հին Սպարտայի և Հռոմի հանրակարգերի միջև. երկուսն էլ ծայրահեղ աստիճանակարգային էին [Polyb., VI, 10, 12]: Սակայն, ի տարբերություն Սպարտայի, Հռոմն ուժ գտավ հաղթահարելու իր կաստայականությունը: Դա տեղի ունեցավ ի

<sup>2</sup> Treves, 1992, 183: Հանրապետությունը Կիկերոնը բանաձևում է իբրև *ժողովրդյան գործ – est res publica res populi* [Cicero, De rep., I, 39]: Հմմտ. Asmis, 2004, 573–582:

<sup>3</sup> Վաղ Հանրապետության իրավաբաղաբական կառույցի և, ի մասնավորի, քաղաքացիական իրավունքի ընդհանրական գծերի մասին տե՛ս Abbott, 1901, 245–265:

հետևանս ավելի քան երկուհարյուրամյա ներքին հակասությունների և բախումների (Ք. ա. 490–286 թթ.): Դրանք հայտնի են *Դասերի պայքար* վերտառությամբ, հրնթացս որի պլեբեյներն աստիճանաբար իրենց իրավունքներն ընդլայնեցին և հավասարեցրին պատրիկների իրավունքներին, և կազմավորվեց միացյալ *հռոմեական ազգը* (populus Romanus):<sup>4</sup> Հայսմ հռոմեական գիտակցության և գործառույթի մեջ ներբերվեց *փոխազջումը*<sup>5</sup> իբրև հանրային կյանքի կարգաբերման կարևորագույն գործիք:

Այս ընթացքին արձանագրվեցին էական կերպափոխություններ նաև հռոմեական իրավունքի ու սահմանադրության մեջ:<sup>6</sup> Ասվածը նախ և առաջ վերաբերում է, այսպես ասած, *լքում–հեռացումներին* (secessiones plebis). իրավագուրկ պլեբեյները լքում էին Քաղաքն ու հեռանում հարակից բլուրները: Աստ նրանք հրավիրում էին իրենց Աշխարհաժողովը (Comitia plebis tributa) և ընդունում օրենքներ իրենց կյանքի վերաբերյալ: Ընտրում էին պաշտոնյաներ՝ տասը *ժողովրդական տրիբուն* (tribunes plebis)՝ օժտելով նրանց անձեռնմխելիությամբ: Նաև՝ վետոյի իրավունքով, որով նրանք ի գորու էին կանգնեցնելու պլեբեյներին առնչվող պատրիկների ցանկացած որոշում:<sup>6</sup> *Դասերի պայքարի* ավարտին այս եր-

<sup>4</sup> Այս երկարատև պայքարի շրջափուլերի և հիմնարար արդյունքների մասին նորագույն ուսումնասիրություններից տե՛ս **Raaflaub**, 2005, 185–197, 214–223; **Richard**, 2005, 107–127:

<sup>5</sup> Այս և այլ տեղերում մենք օգտագործում ենք *սահմանադրություն* եզրույթը՝ հետևելով արդի գիտական ավանդույթին: Հարկավ, հռոմեացիները դեռ չունեին համաբերված ու գրավոր ամրագրված միասնական տեքստ՝ հանգույն ժամանակակից սահմանադրություններին, սակայն նրանց բազում և բազմիմաստ օրենքներում միանգամայն ակներև էին «համակեցական ընդհանրական խաղի» այն կանոնները, որք սովորաբար ներկայացնում են նման փաստաթղթերը: **Lintott**, 2002, 27–40; **Straumann**, 2011, 284–290:

<sup>6</sup> Փաստորեն, պլեբեյներն ստեղծում էին պաշտոնական Հռոմին գուգահեռ պետություն միևնույն տարածքի վրա: Տե՛ս **Cornell**, 1995, 258–264:

կու հաստատություններն օրինականացվեցին և դարձան հռոմեական պետական կառույցի անբաժան մասը: Եթե հավատանք Սալլուստիուսին, վաղ հռոմեական Հանրապետությունը շարունակում էր վայելել իդեալական արքաների ցանած սերմերի պտուղները: Դրանցից կարևորագույնն ընկերային համաձայնությունն էր (*concordia*):<sup>7</sup> Այժմ այն նոր բովանդակություն ուներ, և դրա երաշխավորը եռամիասնական Հանրապետությունն էր, որ միավորում էր միապետության, ազնվապետության և ժողովրդավարության հիմնատարերը [Polyb., VI, 11–14]:

Արդ, վերադառնանք մեր հիմնահարցին. ի՞նչ հանգամանքների ներքո Հռոմն ընտրեց փոխգլխման ուղին: Հետազոտողները հակված են պատասխանը փնտրելու ուժերի փոխհարաբերության այն համատեքստում, որում ընթանում էր հռոմեական պատմության վաղ շրջափուլը: Քաղաք–պետությունը թույլ ու անպաշտպան կանգնած էր ընդդեմ Լատինական գորեղ ռազմակրոնական միության: Գումարած էտրուսկները, սարելները, գալլերը և այլք: Եվ իրենց անվտանգային հարցերը լուծելիս հռոմեացիները միշտ չէ, որ հաջողակ էին:<sup>8</sup> Ուրեմն՝ սպարտացիների համեմատությամբ նրանք արմատապես այլ վիճակում էին և ստիպված էին ավելի մեծ ուշադրությամբ վերաբերել իրենց ներհանրության համաձայնության խնդրին: Նաև՝ մշակույթին, նաև՝ տեխնոլոգիաներին: Սալլուստիուսի վկայությամբ՝ նրանք սովորեցին սովորել իրենց հարևաններից և (անգամ) թշնամիներից: Sall., Cat., LI, 37–38; հմմտ. Polyb., VI, 25, 11: Մինչդեռ սպարտացիներ-

<sup>7</sup> Կոնկորդիան միաժամանակ նաև աստվածուհի էր, որ մարմնավորում էր համաչափությունը, խաղաղությունը և արգասավորությունը: Նրա տաճարը (*Aedes Concordiae*) կառուցվել էր Փորոնի արևմտյան հատվածում Ք. ա. 367 թվականին, երբ առաջին նշանակալից քայլը կատարվեց պատրիկների և պլեբեյների համաձայնության ճանապարհին: Տե՛ս **Rose**, 1992, 277:

<sup>8</sup> Այս երկարուձիգ պատմության մասին տե՛ս մանրամասն **Mommsen**. 1864, 464–482:

րը շարունակեցին իրենց պատմական ուղին ինքնաբավության պարագծում:

Անփոփենք ասվածը. հռոմեական պատմագիրները Ք. ա. 3–րդ դարը և 2–րդի առաջին կեսը ներկայացնում էին իբրև Հանրապետության ծաղկման շրջան. ավարտվել էր *Դասերի պայքարը*, հաստատվել էր հանրախմբերի նոր համաձայնություն, եռամիասնական պետական կառույցը հաստատ էր ու կայուն: Կյանքի բոլոր հարթակներում տիրում էին չափավորություն և օրինականություն:

Անկախ իրենց տարբերություններից՝ քաղաքացիները գտնվում էին փոխարացման ընկերային հարաբերությունների մեջ: Հազնում էին վուշի կոպիտ գործվածքից ներքնահագուստ (*tunica*) ու արտահագուստ (*toga*), անմշակ կաշվից (կամ փայտից) սանդալներ: Սակավապետ էին. ուտում էին գարի, վարսակ, ցորեն, ոսպ, սիսեռ, ընդեղեն, իսկ հազվադեպ նաև՝ միս: Խմում էին թթու կաթ, քացախահամ գինի: Հարուստազդեցիկների և հասարակ-խոնարհների կենցաղը քիչ էր տարբերվում: Տարբերությունն առաջին հերթին քաջության, արդարադատության և առաքինության մեջ էր: Աշխույժ էր ընկերային շարժը. մարդիկ ի գորու էին բարձրանալու համակեցական ավելի բարձր հարթակ և զբաղեցնելու պաշտոններ՝ շնորհիվ իրենց անձնական հատկանիշների ու հեղինակության:<sup>9</sup>

Հարկավ, սա իդեալական պատկերն էր: Իրականում հռոմեական հանրությունը բավական ներունակ էին տոհմիկ տարասեռությունները և արյունակցական

<sup>9</sup> Տե՛ս **Mommsen**, 1864, 393–412; հմմտ. **Matz**, 2002, 23–35: Որոշ արդի հետազոտողներ այս հատկանիշը տարածում են անգամ ուշ Հանրապետության նկատմամբ՝ բանաձևելով դա իբրև *meritocrazia* – *իշխանություն ըստ վաստակի*: Տե՛ս **Hölkesskamp**, 2004, 264–266: Կարծում ենք՝ ասվածը շիտակ է միայն վաղ և (մասամբ) միջին Հանրապետությունների վերաբերմամբ: Կարծում ենք նաև՝ հենց այդ ժամանակից էլ սկսել է շրջանառել Հռոմի ամենատարողունակ սահմանումը՝ *Ծեղակույտը և հռոմեական ազգը [միասին]* – *Senatus populusque Romanus*: Տե՛ս **Lintott**, 2002, 86–89:

կապերը: Հանդերձ այդու, ամենուրեք տիրում էր քաղաքացիական համաձայնության ոգին, և հանրույթը գերծ էր ակնհայտ անձնակենտրոն խթաններից: Ասվածի լավագույն դրսևորումը հռոմեական բանակն էր, որն ամենօրյա ծանր մարզումներով հասնում էր վարժանքի բարձր մակարդակի: Իր անվանումն իսկ վկայում էր այս մասին՝ *exercitum*, որ ծագում էր «վարժանք» գոյականից: Ռազմակարգում ամեն զինվոր գիտեր իր տեղն ու անելիքը, անվերապահ ենթարկվում էր հրամանատարին: Մինչդեռ մարտի ժամին ազատ էր բանեցնելու քաջության տարատեսակ հնարքներ: Հավելենք՝ բանակի ունիվերսալ միավորը լեգիոնն էր, որն իր հերթին ենթաբաժանվում էր ավելի մանր միավորումների՝ կոհորտ, կենտուրիա, այլ: Հանրապետական դարաշրջանի լեգիոնը բաղկացած էր 4.200 հետևակ և 300 հեծյալ զինվորից:<sup>10</sup> Հրթրացս ժամանակի հանրային ու ռազմական այս կառույցները տվեցին իրենց արդյունքները. Հռոմը գերակայության հասավ մոտակա և հեռավոր հարևանների նկատմամբ և իր տիրապետությունը հաստատեց ողջ Իտալիայի նկատմամբ (490–274 թթ.)՝ Ռուբիկոն գետից մինչև Միկիլիա: Սակայն չձևավորեց միասնական–մոնոլիտ պետություն, այլ համադաշնություն՝ բաղկացած գրավյալներից, դաշնակիցներից ու բարեկամներից: Պաշտոնական քաղաքական միտքն իրավիճակը սահմանում էր «բաժանիր և տիրիր» բանաձևով: Մինչդեռ քարոզչությունը փորձում էր համոզել ենթականերին, թե իրենք հարաբերություններ են հաստատել «ավելի շատ տալով, քան ընդունելով» [Sall., Cat., VI, 5]:<sup>11</sup>

Իտալիայից հետո հռոմեացիներն իրենց հայացքն ուղղեցին դեպի Միջերկրածովքի հորիզոններ: Նրանք

<sup>10</sup> Այս մասին տե՛ս Stout, 1921, 424–429: Հանապազ կրկնությունների հոգեբանությունը վերաբերում էր հռոմեական ընկերային կյանքի բոլոր հարթակներին. այն ներկայացվում էր իբրև նախնյաց *օրինակներ կամ քարքեր* (*exempla et moria majorum*): **Hölkeskamp**, 2004, 176–190:

<sup>11</sup> Հռոմեական համադաշնության ձևավորման և իրավաքաղաքական կառույցի մասին տե՛ս Beloch, 1880, 177–194:

հույժ նպատակամետ էին ու հետևողական: Նախ՝ երկու պատերազմով (264–241, 218–201 թթ.) խոնարհեցրին Կարթագենը, որին առավել վտանգավոր ախոյան էին նկատում: Ապա պատմական ասպարեզից հեռացրին Մակեդոնիան (198–167 թթ.): Ապա «ազատագրեցին» Հունաստանը: Ապա հաղթանակ տոնեցին Սելևկյան տերության նկատմամբ (189–187 թթ.): Այս ընթացքին վերահսկողություն հաստատեցին Եգիպտոսի նկատմամբ: Վերջակետը դրվեց Ք. ա. 146 թվականին, երբ Հռոմը հեռացրեց իր ճանապարհի «մանր խոչընդոտները» Կորնթոսը, Հռոդոսը և (արդեն թուլացած ու հուսահատության գիրկն ընկած) Կարթագենը:

Դժվար չէ նկատել, որ տպավորիչ էր ծավալումի հատկապես վերջին շրջափուլը: Հենց դա էլ նկատի ունի Պոլիբիոսը՝ հատկազօծելով, որ Հռոմը տերության է վերածվել մարդկանց ընդամենը մեկ սերնդի ընթացքում: Եվ այս մարդակերպությանը հավելում է նաև մի երանգ՝ ընդգծելով, որ Հռոմը դարձավ Միջերկրածովքի արդեն անկենդան մարմնի կենսատու հոգին. «[...] այս ժամանակից ի վեր պատմությունը վերածվում է կապակցված ամբողջության, զի Իտալիայի և Լիբիայի անցքերը լծորդվում են Ասիայի և Հունաստանի անցքերին: Եվ ամենայն ինչ միտվում է առ միասնություն»: Polyb., I, 3, 15: Հարկավ, կրկին քարոզչություն է, որը, ինչպես հայտնի է, մշակվել էր ականավոր պետական գործիչ Պուրբիուս Կորնելիուս Սկիպիոն Էմիլիանուսի մտավորական խմբակում:<sup>12</sup> Դրա անդամները հակված էին ծավալումի դարաշրջանը լուսաբանելու ըստ Արիս-

<sup>12</sup> Ք. ա. 150–130-ականների Հռոմի ամենաազդեցիկ ռազմական և քաղաքական գործիչն էր: Թեպետ որդեգրված էր, բայց իրեն համարում էր Սկիպիոն Ափրիկացու և նրա քաղաքական գծի հավատարիմ հետևորդը: Կործանել և հողին էր հավասարեցրել Կարթագենը, իսպանական Նումանտիան: Ներքին քաղաքականության մեջ լուսավորյալ պահպանողականության ջատագով էր: Դեմ էր Գրաքուսների «ամբոխավարությանը»: Astin, 1992, 963; Scullard, 1982, 60–64:



տոտելի քաղաքական տեսության: Այս հարցում նույնպես կարևոր էր Պոլիբիոսի ազդեցությունը:<sup>13</sup>

Տվյալ մոտեցման արդյունքները պահպանվել են հեղինակի «Համընդհանուր պատմության» էջերում: Համաձայն դրա՝ Միջերկրածովքի պետությունների մեծ մասը (Մակեդոնիա, Սելևկյան տերություն, Եգիպտոս, Պերգամոն) *պարզ պետական ձևեր* էին (πολτεία ὀρθαί), որք, անցնելով ծագումի, զարգացումի և ծաղկումի շրջափուլերով, արդ գտնվում էին անկման վիճակում: Բացառություն էր Կարթագենը, որը, հանգույն Հռոմի, ուներ բարդ կամ *խառն պետական կառույց* (ή πολτεία μικτά): Այսինքն՝ համադրում էր միապետության, ազնվապետության և ժողովրդավարության հիմնատարրերը: Polyb., VI, 12–14:<sup>14</sup> Այսօրինակ համակեցական միավորները, հարկավ, կայուն էին անկումի և քայքայումի նկատմամբ, բայց ոչ լիովին զերծ դրանցից: Գործընթացն ավելի է դանդաղում: Հետևելով Արիստոտելին՝ Պոլիբիոսը համոզված էր, որ ծագումի շրջանում գերակայում է մենիշխանության բաղադրիչը, ծաղկումի շրջանում՝ ազնվապետության, իսկ անկումի՝ ժողովրդավարության: Հռոմի հետ հակամարտության պահին Կարթագենն արդեն անցել էր առաջին երկու շրջափուլերը և գտնվում էր ժողովրդավարական անկումի վի-

<sup>13</sup> Պոլիբիոս՝ հույն պատմագիր ու իմաստասեր (200–118 թթ.): Ստացել էր ժամանակի փայլուն կրթությունը, սպա հոր հետևողությամբ ծառայության անցել Աքայական միությունում: Վերջինիս՝ Հռոմից կրած պարտությունից հետո (168 թ. ), ի թիվս հազար պատանդների, բերվել էր Իտալիա: Աստ հանդիպել էր տակավին պատանի Սկիպիոն Էմիլիանոսին և դարձել նրա խորհրդատուն: Միասին այցելել էին Ափրիկա, Իսպանիա, Գալլիա: Եղել էր Հռոդոսում, Եգիպտոսում և այլուր: Էմիլիանոսի պահանջով շարագրել է իր «Համընդհանուր պատմությունը»՝ ըստ հռոմեական դիտանկյան: Հանդերձ այդու՝ համոզված էր. «Ճշմարտությունը պատմության համար նույնն է, ինչ աչքի լույսը՝ կենդանի էակի»: Polyb., I, 14, 6:

<sup>14</sup> Պոլիբիոսի պետական–քաղաքական ձևերի այս *բնական շրջապտույտի* տեսության մասին տե՛ս **Podes**, 1991, 577–583; **Степанян**, 2014, 217–221; **Mouritsen**, 2017, 7–13:

ճակում: Դրան հակառակ՝ Հռոմը գտնվում էր երկրորդ՝ ծաղկումի ազնվապետական շրջափուլում: Համաձայն Պոլիբիոսի՝ հենց դա էլ ապահովեց նրա ծանր, բայց համոզիչ հաղթանակը: Polyb., VI, 51, 6:<sup>15</sup>

Հեղինակի պատմասիրական համակարգը հուշում է, որ վաղ թե ուշ նույն ճակատագիրն սպասում էր նաև Հռոմին: Սակայն նա որոշել է չծանրանալ այս խնդրի վրա:<sup>16</sup> Նրա համար Հանրապետությունը *քնակեցված աշխարհի Բախտն* էր (ή τόχη τῆς οἰκουμένης), զի Ծերակույտի իմաստնությամբ կապված էր հանուր տիեզերական Բանականին (ὁ λόγος):<sup>17</sup> Սակայն տակավին Էմիլիանուսի և Պոլիբիոսի աչքի առաջ ընթանում էին իրադարձություններ, որք չէին տեղավորվում այս տեսլականի ծիրում:<sup>18</sup> Մնում է հիշել հին ճշմարտությունը. պատմությունն անաչառ է, նրան հնարավոր է շրջանցել սոսկ կողմնակալ գրույթների մեջ, բայց ոչ իրական կյանքում:

**բ. Ծգնաժամ:** Ասվածն առնչվում էր Հանրապետության մյուս երեսին: Իսնդիրն այն է, որ ծավալումն ու տերության կազմավորումը եկան խարխլելու հանրապետական կյանքի ավանդական իդիլիան: Հռոմեացի-

<sup>15</sup> Այս անկման և նրա ընկերային ու տնտեսական, հոգեբանական և բարոյական դրսևորումների մասին տե՛ս **Lintott**, 1972, 626–638; **Lintott**, 1992, 36–39; **Scullard**, 1982, 11–18.

<sup>16</sup> Եթե ավելի ճշգրիտ լինենք, պետք է արձանագրենք, որ իր գրույթում Պոլիբիոսն անգամ խոստանում է անդրադառնալ Հռոմի անկմանը հատուկ աշխատությամբ: Polyb., III, 4, 12–13: Սակայն դա չի իրագործել: Տե՛ս **Walbank**, 1965, 1–4: Հավանաբար խուսափել է Քաղաքում տիրող «անսանձ հայրենասիրությունից»:

<sup>17</sup> Խորքային առումով Ծերակույտը ներկայացնում էր հռոմեացիների ընդհանրական բանականությունը՝ ունակ նրանց (և Հանրապետությունը) կապելու տիեզերական Բանականին:

<sup>18</sup> Հապացույց բերվում էր մի հին ավանդագրույց, թե, նայելով իր իսկ ավերած Կարթագենին, Սկիպիոն Էմիլիանուսը արցունք էր թափում: Երբ Պոլիբիոսը հարցրել է պատճառը, պատասխանել է՝ տրտմում է իր երկրի համար: App., Punica, 132; հմմտ. Polyb., XXX-IX, 22, 3:

ները չդիմացան հաղթության փորձությանը. Քաղաք սկսեցին ներհոսել մեծաքանակ ոսկի, արծաթ, ստրուկներ: Եվ դրանք հասանելի դարձան հիմնականում ընտրախավի ներկայացուցիչներին: Ի շարս նրանց շուտով սկսեց առանձնանալ, այսպես կոչված, *գորեղ փոքրամասնությունը* (*pauci*)՝ շուրջ մեկ տասնյակ ընտանիք, որք իրենց ձեռքն էին կենտրոնացրել նորագյուտ հարստության առյուծի բաժինը՝ օգտագործելով իրենց հանրային ազդեցությունը և պետական ու քրմական բարձր պաշտոնները: Եվ իրենց կամքն էին թելադրում թե՛ ծերակուտականներին (*patres*), թե՛ ձեռներեցներին (*eques*), թե՛ հասարակներին (*plebs*): Հռոմն ասես վերադառնում էր կաստայական աստիճանակարգության մակարդակի: Սալլուստիոսի խոսքերով՝ փոքրամասնության ներկայացուցիչները. «Ուտելիքի և հաճույքների աղագավ ծովերն ու ցամաքներն էին քրքրում, քնում էին առանց դրա պահանջի, ո՛չ քաղց ու ծարավ, ո՛չ էլ ցուրտ ու թալկություն չէին զգում. ամեն բան կանխորոշված էր ըստ շվայտության մղումի» [Sall., Cat., XIII, 3]: Մինչդեռ հասարակները, որոնց արյամբ ու եռանդով ստեղծվել էր տերությունը, ընդհակառակը, տնանկացան և վերածվեցին ամբոխի. «[...] Հռոմի քաղաքային զանգվածը հասել էր ծայրահեղ վիճակի՝ բազում պատճառներով: Նախ և առաջ այն, որ ամենուրեք գերակայում էին հանցավոր ու լկտի անձինք: Հետո՝ նրանք, որք մութ գործարքների հետևանքով զրկվել էին հայրենի ժառանգությունից, ի վերջո նրանք, որոնց անպատվությունն ու չարագործությունը քշել էին տնից–տեղից: Սրանք եկել–լցվել էին Հռոմ՝ ասես կեղտաջրի փոսի մեջ» [Sall., Cat., XXXVII, 4–6]:<sup>19</sup>

<sup>19</sup> Թերևս սա ավելի բարդ գործընթացի փոքր–ինչ պարզեցված պատկերն է: Հետագոտողները հատկանշում են նաև մանր ու միջին հողատերերի սնանկացման այլ պատճառներ: Ի մասնավորի այն, որ սկսյալ Ք. ա. 181 թվականից՝ Հանրապետությունը հրաժարվել էր Իտալիայում նոր գաղութների հիմնումից՝ ձգտելով չխթանել հակահռոմեական տրամադրություններ: Եվ հետո՝ ան-

Անկումը համակարգային էր՝ պարառելով հռոմեական համակեցության բոլոր հարթակները. այս բանաձևումը կրկին պատկանում է Սալլուստիոսին, որն արդեն ապրում էր Պոլիբիոսի գուշակած ժողովրդավարության գերակայության դարաշրջանում: Եվ նրա գրույթի հիմնաթեման հենց այս ցավալի տեղաշարժն է՝ թանձրացյալ «Կատիլինայի պատերազմը» երկասիրության էջերում:

Սալլուստիոսից ավելի քան կես դար առաջ Հռոմում ի հայտ էին եկել մարդիկ, որք գործում էին Էմիլիանոսի խմբակին զուգահեռ: Ի տարբերություն դրա ներկայացուցիչների՝ լուրջ տազնապած էին ճգնաժամի նախանշաններից: Նրանք էլ ստեղծեցին իրենց մտավորական խմբակը՝ Ապպիոս Կլավդիոսի գլխավորությամբ, և գտնում էին, որ ծառացած հիմնախնդրի լուծումը պետք է փնտրել անցյալում: Բայց ոչ իդեալականացված ու անշարժ, այլ հակասական ու դրամատիկ տեղաշարժերով առկեցուն *Դասերի պայքարի* դարաշրջանում, երբ հույժներունակ էին հասարակները և նրանց առաջնորդները՝ արտակարգ լիազորություններով օժտված ժողովրդական տրիբունները:<sup>20</sup> Դարեր անց բանաձևելով այս թևի ներկայացուցիչների գործը՝ Պլուտարքոսը նշում էր. «Նրանք առաջ էին քայլում՝ նայելով հետ»:

Ք. ա. 130–120-ականներին այս հետհայաց ծրագրի իրագործման առաջամարտիկ դարձան Գրաքոս եղբայրները. նախ՝ Տիբերիոսը, ապա՝ Գայոսը: Ծագում էին Հռոմի ամենափառապանծ երկու տոհմից: Մայրական կողմից՝ Հաննիբալին ու Անտիոքոս Գ–ին հաղ-

---

դրծովյան ռազմարշավները տևում էին տարիներ, և զինվորները, հիրավի, հնարավորություն չունեին զբաղվելու իրենց տնտեսությամբ: Տե՛ս **Rosenstein**, 2004, 26–31; **De Ligt**, 2012, 293–297:

<sup>20</sup> **Badian**, 1992, 247: Իրականում ժողովրդական տրիբունների իշխանության վերահաստատման փորձն սկսվել էր փոքր–ինչ վաղ՝ Ք. ա. 151 և ապա 138 թվականներին. վերջիններս անգամ ձերբակալել էին գործող կոնսուլներին՝ պաշտոնեական դիրքի չարաշահման մեղադրանքով: Տե՛ս **Taylor**, 1962, 19–20:

թող Սկիպիոն Ափրիկացուց: Սակայն նրանք ոչ միայն կրկնում էին անցյալը, այլ նաև առաջարկում ծրագրեր ի լուծումն նոր ծագած մարտահրավերների: Այս առումով առավել ներգործուն էր կրտսեր եղբայրը՝ Գայուսը:

Երկուսն էլ նախընտրում էին ժողովրդական տրիբունի պաշտոնը և գործում համախումբ մյուս ինը պաշտոնակիցների հետ: Իրենց օրինագծերն անցկացնում էին Աշխարհաժողովով՝ շրջանցելով Ծերակույտը և անդ գերակայող գորեղ փոքրամասնությանը: Եվ օրինադրեցին հող տրամադրել տնանկ քաղաքացիներին՝ հիշեցնելով, որ, համաձայն Հանրապետության սահմանադրության, այն պատկանում է հռոմեական ողջ հանրության (ager publicus), և յուրաքանչյուր քաղաքացու իրավունք-պարտականությունն է տնօրինել և խնամքով մշակել իր հողաբաժինը (jus occupationis):

Հուսով էին, որ նման ճանապարհով կկարողանան վերականգնել միջին ունեցվածքի հռոմեացուն՝ պետության կայունության երաշխավորին: Եվ շատ տնանկներ հող ու դրամական օժանդակություն ստացան ու լքեցին Հռոմը: Բայց շատերն էլ հրաժարվեցին այս հեռանկարից՝ նախընտրելով ապրել Քաղաքում մակարոյժ կյանքով՝ «հացի ու կրկեսային խաղերի» ակնկալիքով:<sup>21</sup>

Ինչպես նշեցինք, Գայուսը հեռուն գնաց՝ առաջարկելով. *ս. հաղթահարել Աշխարհաժողովի ունեցվածքային-աստիճանակարգային կառույցը, խառնել ընտրադասերը և դրանց նոր կազմը վերահաստատել գաղտնի քվեարկությամբ, բ. ավանդական աշխարհագրի փոխարեն ստեղծել արհեստավարժ բանակ, գ. հռոմեական գաղութներ հիմնել անդրծովյան տիրույթ-*

<sup>21</sup> Հետազոտողներից ոմանք այն կարծիքին են, թե Տիբերիուսի հողային բարեփոխությունը վերաբերում էր ոչ միայն հռոմեական քաղաքացիներին, այլ նաև իտալիկներին: Տե՛ս **Richardson**, 1980, 1-6: Հուսկ նրանք կապ են տեսնում Գայուսի այն օրինագծի հետ, որը նպատակ էր դրել վերջիններիս տալ քաղաքացիություն: **Stockton**, 1979, 42-46:

ներում, դ. իտալիկների իրավունքները համահավասարեցնել՝ տալով նրանց հռոմեական քաղաքացիություն: Բացի սրանցից, առաջարկում էին «ընթացիկ բարեփոխություններ». ամբոխին տալ էժան հաց, իսկ գործարարներին՝ «խառն դատարաններ»:՝<sup>22</sup> Ծերակուտական վերնախավն սկսեց քարոզարշավ՝ մեղադրելով եղբայրներին միապետական նկրտումների մեջ: Եվ կազմակերպեցին նախ՝ Տիրերիուսի (133 թ.), իսկ ապա՝ Գայուսի սպանությունը (121 թ.): Սալյուստիուսը խուսափում է Գրաքուսներին անդրադառնալ մանրամասնորեն հավանաբար խորշելով նրանց և Կատիլինայի շարժման հնարավոր աղերսներից:

Գրաքուսները հեռացան, սակայն պատմությունը շատ առումներով սկսեց ընթանալ նրանց նախանշած ուղիով: Այսինքն՝ Հանրապետության կյանքում սկսեց թափ առնել տարերային կամ կանխագծված վերանորոգչական ճիգը, որը կորցրել էր ներուճակությունը *Դասերի պայքարից* ի վեր: Ինչպես ցույց տվեց պատմությունը, այն ուներ թե՛ կառուցիկ, թե՛ քայքայիչ ներուժ: Ամեն բան կախված էր իրագործողների նպատակներից և անձնական հատկանիշներից:

Նախ՝ զորավար Գայուս Մարիուսն արմատապես վերակառուցեց հռոմեական բանակը՝ դարձնելով արհեստավարժ (106–101 թթ.): Հենց այդժամ էլ պարզ դարձավ, որ այն կարող է դառնալ ինքնակա՝ ենթարկվելով նախ և առաջ իր հրամանատարի կամքին ու շահերին: Չորեղները հասկանում էին, որ շուտով Հանրապետության ներքին կյանքում կարևորվելու է մի նոր խաղացող՝ հաղթանակած բանակի զորավարը: Սակայն նրանք զննեցին այս քայլին, զի Ք. ա. 2–րդ դարի վերջին տասնամյակին պետությունը հայտնվել էր աննա-

<sup>22</sup> Գայուս Գրաքուսի գործունեության վերոհիշյալ դիտակկյունների մասին տե՛ս մանրամասն **Sherwin-White**, 1973, 217–218; **Stockton**, 1979, 122–129, 131–137, 156–459; **Schullard**, 1982, 20–24, 27–30:

խաղեպ վտանգի առջև՝ հզոր թշնամիներ (Յուզուրտա, գերմանական վայրի ցեղեր), որոնցից աշխարհագրային բանակը կրում էր պարտություն պարտության հետևից: Գնացին նաև այլ զիջման թույլ տալով, որ Մարիուսը (հակառակ հռոմեական սահմանադրության) վեց անգամ անընդմեջ ընտրվի կոնսուլ: Կատարվեց նաև երրորդ զիջումը՝ ընտրեցին մեկին, ով *նոր մարդ* էր (*homo novus*)՝ ծագումով Իտալիայի տեղական ընտրախավից: Ընտրախավ, որի նկատմամբ Հռոմում առկա էր «բարյացկամ անվստահություն»:<sup>23</sup>

Արդեն Ք. ա. 1–ին դարի սկզբներին ընտրախավի և ամբոխացող հասարակների միջև նոր թափ առնող հակասության պայմաններում քաղաքական կյանքի առաջին հարթակ դուրս եկան ժողովրդական տրիբունները: Դրանք սովորաբար ընտրախավի կրտսեր ներկայացուցիչներն էին կրթված ու ճարտասանական աներկբա ունակություններով: Ունեին պահվածքի երկու ներհակ դիմակ. մի կողմից՝ հանդես էին գալիս ի լուծումն հանրության հուզող կարևոր հիմնախնդիրների, մյուս կողմից՝ հետապնդում էին եսակենտրոն նպատակներ՝ ազդեցություն, պաշտոն, հարստություն:<sup>24</sup>

Առաջինը Լուկիուս Ապպուլեուս Սատուրնինուսն էր, որի թիրախը անդրծովյան գաղութների հիմնումն էր, ուր տնանկ քաղաքացիները և բանակի վետերանները կստանային հողակտոր, ունեցվածք, ինքնավարություն և ապահով կյանքի հեռանկար: Ապա հանդես եկավ Մարկուս Լիվիուս Դրուսուս Կրտսերը, որն իտալիկներին հռոմեական քաղաքացու իրավունքներով օժտելու պայքարի շահատակն էր: Սպանվեց ծպտյալ հակառակորդների ձեռամբ, և իտալիկները դիմեցին զենքի: Սկիզբ առավ, այսպես կոչված, *Դաշնակցային պատերազմը* (91–87 թթ.): Այնքան գորեղ էին իտալիկնե-

<sup>23</sup> Badian, 1992, 648:

<sup>24</sup> Հարցերի այս շրջանակի մասին ավելի մանրամասն տե՛ս **Hil-dinger**, 2002, 117–123; **Garland, Dillon**, 2010, 9–28; **Flower**, 2009, 69–71, 84–85; **Potter**, 2014, 66–74:

րը, որ Հանրապետության հայրերը հասկացան՝ պատերազմը ռազմական ելք չունի: Ուստի խոստացան ի կատար ածել իտալիկների պահանջը, եթե նրանք զենքը վայր դնեն: Հայսմ ավարտվեց այս «տարօրինակ պատերազմը», երբ հաղթողները կատարեցին պարտվածների պայմանները: Իտալիկներն ստացան քաղաքացիություն, և Հռոմն սկսեց Միջերկրածովքը կառավարել ողջ Իտալիայի նյութական ու մարդկային պաշարով:<sup>25</sup> Ականավոր ժողովրդական տրիբուններից երրորդը Պուբլիոս Սուլպիկիոս Ռուփուսն էր: Պայքարում էր, որպեսզի նոր քաղաքացիները հավասարապես բաշխվեն ըստ բոլոր ընտրադասերի (tribes) և հնարավորություն ունենան ներագդելու Աշխարհածողովի տրամադրությունների վրա: Եվ ոչ բաշխված ըստ մի քանի հավելյալ ընտրադասի և գրկված այդ հնարավորությունից: Հավելենք, որ ամբոխը և նրա առաջնորդները հակամարտության մեջ էին ոչ միայն *գորեդ փոքրասանություն*, այլև քաղաքական ասպարեզ իջած հաղթական զորավարների հետ: Սուլպիկիոս Ռուփուսն ընկավ զորավար Սուլլայի ձեռքից:<sup>26</sup>

Հաղթանակած զորավարի կերպարը նոր չէր: Հետա-

<sup>25</sup> Սովորաբար այս հիմնախնդիրը դիտարկվում է իտալիկներին հռոմեական քաղաքացիություն տալու շրջանակներում միայն, մինչդեռ այն ուներ նաև այլ կարևոր դիտանկյուններ: Ի մասնավորի՝ խոսքն այն մասին է, որ իտալիկներին տրվում էր նաև հողի (jus occupationis) և (նահանգներում) գործարքներ կնքելու և իրագործելու իրավունք (jus commercium): Տե՛ս **Badian**, 1958, 152–153; **Salmon**, 1962, 112–114; **Brunt**, 1965, 101–106:

<sup>26</sup> Կրկենք մեկ անգամ էլ՝ սա արդեն Պոլիբիոսի «գուշակած ժամանակաշրջանն» էր՝ հռոմեական խառն պետական-քաղաքական համակարգի այն շրջափուլը, երբ սկսում է գերակայել նրա ժողովրդավարական (ամբոխավարական) բաղադրիչը: Հետագոտողները երբեմն դա սահմանում են իբրև հեղափոխությունների դարաշրջան: Տե՛ս **Mommsen**, 1866, 89–97; **Abbott**, 1901, 101–103: Հիշյալ շարժերի վերաբերյալ Հռոմում շրջանառում էին ներհակ ըմբռնումներ՝ պարսավից ու ժխտումից մինչև համակրանք ու օրինականացում: Տե՛ս **Wiseman**, 2009, 25–41:



գոտողներն առանձնացնում են Սկիպիոն Ափրիկացուն, ականավոր պետական այր, որ, հաղթանակ տոնելով Հաննիբալի նկատմամբ (201 թ.), առաջիկա տարիներին (մինչև ի մահ՝ 185 թ.) տոն էր տալիս Հանրապետության ներքին կյանքին: Արտաքո պահպանվում էին նրա սահմանադրության ոգին ու տառը, բայց բոլոր կարևոր պաշտոններին ընտրվում էին զորավարի մտերիմները և անցկացնում նրա քաղաքական գիծը՝ միտված արդիականացնելու Հռոմը ըստ տերության առջև ծառայած մարտահրավերների՝ կառավարման համակարգ, տնտեսություն, գաղափարախոսություն:<sup>27</sup> Տասնամյակներ անց նույն խնդրին մոտեցավ և Մարիուսը, թեպետ ընդգրկումն ավելի համեստ էր և առնչվում էր միայն բանակին: Սակայն Ափրիկացու նման նա ևս հավատարմություն էր ցուցանում Հանրապետության հանդեպ և ձգտում ի գործ դնել իր իշխանական նկրտումները՝ խուսանավելով ամբոխի և զորեղների միջև: Հույժ ճկուն էր՝ անգամ անսկզբունքայնության աստիճան, զի նրանում անձնակենտրոնությունը գերակա խթան էր դարձել: Դա էլ պայմանավորեց նրա պարտությունն ու մահը:<sup>28</sup>

Այլ ուղի ընտրեց Լուլիուս Կորնելիուս Սուլլան: Առաջին Միհրդատյան պատերազմում (88–85 թթ.) հաղթանակ տոնելով՝ նա վերադարձավ Իտալիա, սակայն չցրեց բանակը և չներկայացավ Հռոմ՝ Աշխարհաժողովին և Ծերակույտին հաշվետվություն տալու և սպասելու հնարավոր շքահանդեսին (triumphus): Այլ տարավ բանակը Քաղաքի դեմ, որի դարպասների մոտ

<sup>27</sup> Սկիպիոն Ափրիկացու գերակայության և նրա դեմ ծերակուտական համախմբման վերաբերյալ ձևավորվել էր քարոզական կլիշե՝ ներհակ երկու բևեռներով: Առաջինը մարմնավորում էր զորավարը իր հելլենիստական նկրտումներով, երկրորդը՝ Կատոն Ավագը, մաքրակենցաղ–պահպանողական: Տե՛ս **McDonald**, 1938, 160–164; **Syme**, 2016, 18–20:

<sup>28</sup> Գ. Մարիուսի ռազմական բարենորոգումների ընկերային հետևանքների մասին տե՛ս **Harris**, 1985, 48–50:

ճակատամարտ տեղի ունեցավ նրա և ավանդական հանրապետականների միջև (82 թ.): Երկու կողմից ընկավ շուրջ 40 000 զինվոր: Միայն վերջին շնչով Սուլլան պոկեց հաղթանակը: Եվ տեղի ունեցավ այն, ինչ սպասելի էր. հլու գորավարի կամքին՝ բանակը գրավեց իր իսկ մայրաքաղաքը: Եվ գորավարը հաստատեց ռազմական միահեծանություն (*dictatura*)՝ պայքարի պաքն ուղղելով թե՛ գորեղների, թե՛ ամբոխի առաջնորդների դեմ: Մինչդեռ հանգույն վերջիններիս՝ նա էլ խոսում էր *հին ու բարի Հանրապետության* անունից:<sup>29</sup> Եվ դա նրան հետ չէր պահում ծայրահեղ գործողություններից. «Բայց երբ Լուկիուս Սուլլան զենքի ուժով տիրեց պետությունը, նախնական լավ վիճակից բերեց–հասցրեց վատ արդյունքի: Հաղթողներն սկսեցին փախցնել–քաշել [ամեն բան]. մեկն աչք էր տնկել ուրիշի տան, մյուսը՝ հողի վրա: Ո՛չ չափ ունեին, ո՛չ սահման. համաքաղաքացիների նկատմամբ թշնամանքով ու դաժանությամբ [լցված] հանցանքներ էին գործում» [Sall., Cat., XI, 4–6]: Այս հանուր թոհուրբոը մեկ անուն ուներ՝ *ul. gnegalknter* (*proscriptiones*): Դրանք կազմվել էին նախապես և ընդգրկում էին բռնապետի քաղաքական հակառակորդներին, իսկ հանախ՝ պարզապես հարուստ մարդկանց: Նրանց ոչնչացնելով՝ սուլլայականները մեծ ունեցվածք կուտակեցին:<sup>30</sup>

Այս հետնախորքին Սուլլան անցկացրեց «բարենորոգումներ». ա. իր ստրկալույծներին տվեց քաղաքացիություն և մտցրեց Աշխարհաժողով՝ ի հակակշիռ ավանդական ամբոխին, բ. համարյա ի չիք դարձրեց ժողովրդական տրիբունների լիազորությունները՝ արգելելով նրանց օրինագծեր առաջադրել Աշխարհաժողովին՝

<sup>29</sup> Տե՛ս **Badian**, 1992, 1021–1022:

<sup>30</sup> Տասնամյակներ անց Տիտուս Ամալիուս Բալբուսը (հեգնական տոնով) Սուլլայի շուրթերին էր դնում հետևյալ խոսքերը. «[...] պետությունը ոչինչ է՝ անուն առանց մարմնի ու ձևի: Մարդիկ արդ պետք է ավելի շրջահայաց լինեն՝ դիմելով իրեն և համարեն իր խոսքերն իբրև օրենք» [Suet., Sulla, 77, 1]:

առանց Ծերակույտի համաձայնության, գ. Ծերակույտի կազմը կրկնապատկեց՝ 300-ից մինչև 600՝ ի հաշիվ իր սպայակազմի և զինվորների: Չինվորների, որոնց մեծ մասը հազիվ տառաճանաչ էր: Հարկավ, նպատակն էր հեղինակագրկել այս պետական հաստատությունը: Բանակի սատարմամբ Սուլլան իրեն ամենակար էր զգում: Այդուհանդերձ, հասկանում էր, որ Հռոմում հանրապետական ավանդույթը տակավին զորեղ է, և վիճակը կարող է անակնկալ փոխվել: Ուստի որոշեց հրաժարվել իշխանությունից՝ հայտարարելով, թե կատարել է իր գործը: Հեռացավ Կամպանիայի իր դղյակը, որտեղ էլ կնքեց մահկանացուն: Ք. ա. 79 թվականն էր:<sup>31</sup>

Սա ռազմական միահեծանության առաջին քայլն էր, որը խոր կնիք թողեց հռոմեական հանրության վրա: Ծիշտ է, հետագայում նախկին սուլլայականներ Գն. Պոմպեուսը և Մ. Կրասսուսը իրենց համատեղ կոնսուլության ընթացքին (70 թ.) ի չիք դարձրին դրա անմիջական հետևանքները, սակայն հանրային հոգեբանության մեջ արդեն արմատավորվել էր հիմնախնդիրները ուժային միջոցներով լուծելու մտայնությունը: Այն նոր ազդակ ստացավ Սպարտակի գլխավորությամբ ստրուկների ապստամբության օրերին (73–71 թթ.):<sup>32</sup>

Ք. ա. 60–ականների սկզբին ընտրախավին մի պահ թվաց, թե դժվարություններն արդեն անցել են: Սակայն, ինչպես հաստատեցին հետագա իրադարձու-

<sup>31</sup> Սուլլայական «բարենորոգումների» կապակցված շարքի մասին տե՛ս **Abbott**, 1901, 103–105; **Baker**, 1927, 268–280; **Schullard**, 1982, 67–72; **Bringmann**, 2002, 63–69:

<sup>32</sup> Իրավիճակը հետսուլլայական Հռոմում մնում էր հույժ լարված. թե՛ բռնապետի հետևորդները, թե՛ հակառակորդները խոսում էին «հին ու բարի» Հանրապետության անունից: Բախումից առաջ նկատվում էր ուժերի «հավասարակշռություն»: Ստրուկների ապստամբությունը Սպարտակի առաջնորդությամբ (73–71 թթ.) ի ցույց դրեց, թե որքան փխրուն է այս կայունությունը: Հենց դրանով էլ պետք է բացատրել սուլլայական Պոմպեուսի և Կրասսուսի հակասուլլայական բարեփոխումները: Տե՛ս **Marin**, 2009, 55–74:

թյունները, նման լավատեսության համար լուրջ նախապայմաններ չկային: Հիրավի, Հանրապետությունը չէր լուծել իր առջև ծառայած ընկերային և ոչ մի կարևոր խնդիր: Հանրույթը մնում էր տարասեռված ու տարտամ: Կրկին միմյանց դեմ հանդիման կանգնած էին ընտրախավն ու ամբոխը՝ իրենց այլազան ենթադասերով:<sup>33</sup> Սակայն հիմա հարաբերությունների սևուսպիտակին գումարվեց մի նոր՝ համաբերման երանգ: Եվ դա, մեր համոզմամբ, կապվում էր առաջին հերթին Լուկիոս Սերգիոս Կատիլինայի ղեկավարած շարժման հետ: Այն պատմությանը հայտնի է իբրև Կատիլինայի պատերազմ կամ (ավելի կողմնակալ ձևակերպմամբ) դավադրություն:

#### գ. Հակադրությունից դեպի համաբերման ճիգ:

Կատիլինան մասնակցել էր Սուլլայի բռնիշխանությանը և կուտակել մեծ կարողություն: Մսխել էր: Ք. ա. 66–62 թթ. հետամուտ էր կոնսուլ ընտրվելուն՝ մերթ սահմանադրական–ընտրական, մերթ էլ բռնի–ռազմական ճանապարհով: Այս շրջանի գործունեության վերաբերյալ կարևոր են նրա դեմ ուղղված Կիկերոնի ճառերը և Սալլուստիոսի «Կատիլինայի պատերազմը»: Կիկերոնը Կատիլինայի շարժումը համարում է դավադրություն (conjuratio)՝ ուղղված օրինական կարգերի տապալմանը: Այլ է Սալլուստիոսի պարագան. նրա գրությամբ, ճշմարիտ է, գերակայում է կիկերոնյան կիշեն, սակայն տեղ–տեղ երևակվում է նաև հակառակ կողմի մոտեցումը: Համաձայն դրա՝ շարժումն սկզբնավորվել էր ընդհանուր քայքայումի և ապօրինության պայմաններում, և Կատիլինան խնդիր ուներ ձևավորելու մի նոր և արդար Հանրապետություն: Այս նպա-

<sup>33</sup> Ք. ա. 60-ականներին ի դերև ելան բոլոր պատրանքները. տարբեր քաղաքական հավատամքի ներկայացուցիչներն սկսեցին հակվել «Հանրապետության բժշկման գաղափարին», որը ենթադրում էր զորեղ անհատի և քաղաքական հարկադրանքի հնարավորությունը: Այս տասնամյակի ներքաղաքական թոհուրոհի մասին տե՛ս մանրամասն Seager, 2002, 63–74; Flower, 2009, 142–149.

տակով օգտագործել էր սահմանադրության ոգին ու տառը: Նաև՝ պատմությամբ սրբագործված լքում–հեռացումների ավանդույթը:

Հետազոտողներից ոմանք մտածում են, թե սա քարոզչական հնարք է: Մակայն անաչառության պարագային այդպիսին կարելի է ճանաչել նաև Կիկերոնի ձայնը. չպետք է մոռանալ, որ տարիներ անց (Ք. ա. 58 թ.) ժողովրդական տրիբուն Պ. Կլոդիուսը նրա դեմ սկսեց հետապնդում՝ հռոմեական քաղաքացիներին առանց դատ ու դատաստանի մահապատժի ենթարկելու մեղադրանքով: Եվ փաստարկներն այնքան զորեղ էին, որ նա ինքնակամ հեռացավ արքուր:<sup>34</sup> Այլոքեն՝ երկուստեք գործ ունենք քարոզչության հետ: Մեկի պարագային դիտարկվող շարժումը միաչափ է. Կատիլինան և իր կողմնակիցներն աներկբա թշնամի են: Մյուսի պարագային՝ բազմաչափ է, զի այն միավորել է հանրայթի տարբեր շերտեր և ունեցել իր ճշմարտությունը:

Կարծում ենք՝ Սալլուստիուսի գրույթը հենց այս մասին է, երբ հիշատակում է Կատիլինայի շուրջ համախմբվածների՝ ձերականությաններից, հեծյալներից, զավառական վերնախավի ներկայացուցիչներից մինչև տնանկ ու հուսարքված ամբոխը [Cat., XVII, 1–7]: Նրանց մի մասը դեմ չէր Սուլլայի փորձը կրկնելուն, սակայն քիչ չէին և նրանք, ովքեր ցանկություն ունեին փրկելու Հանրապետությունը: Հարկավ, շարժման խթաններից էր նաև դեկավարների իշխանատենչությունը: Չտրվենք մանրամասնություններից. Կատիլինայի շարժումը ճնշվեց, սա-

<sup>34</sup> Այս իրադարձությունը շատ աղերսներ ու ենթաշերտեր ուներ: Պոմպեոսը ոչինչ չարեց իր բարեկամին փրկելու համար, իսկ Կեսարը, որ երկու տարի առաջ նրան առաջարկել էր լինել իր եռապետության «չորրորդ անդամը», բավարարվեց միայն ցուցադրական գործողություններով: Հարկավ, չէին ուզում իրենց կապել նրա «անօրինությանը», թեպետ քաջ հայտնի էր, որ նա գործել է ըստ Շեքսպիրյանի համաձայնության: Կար մի հանգամանք ևս. ցանկանում էին Կիկերոնին «դնել իր տեղը»: Հմմտ. **Baldson**, 1992, 235; **Wiedemann**, 1994, 50–51; **Seager**, 2002, 106–108:

կայն տեսանելի սպագայում Հանրապետության բոլոր ականավոր գործիչները (այս կամ այն չափով) հիշյալ բազմաչափության հետևորդ էին:

Ասվածը, որքան էլ տարօրինակ հնչի, վերաբերում է նաև Կիկերոնին: Հավանաբար վերլուծել էր Կատիլինայի շարժման պատմությունը և վերարժևորել իր դերակատարությունը: Այո, Ծերակույտը և *գորեղ փոքրամասնությունը* բարձր էին գնահատել իր գործունեությունը և անգամ շնորհել *հայրենյաց հայր* (pater patriae) պատվանունը: Սակայն Ք. ա. 62 թվականին Ատրիքից Հռոմ ժամանող Գն. Պոմպեուսին հղած նամակում նա առաջարկում էր բժշկել հիվանդ Հանրապետությունը հաղթանակած զորավարի և Ծերակույտի համագործակցությամբ: Իրեն վերապահում էր գաղափարի տեսական հիմնավորողի դերակատարությունը [Cicero, Fam., 5, 7, 2]:<sup>35</sup> Տարիներ անց այս մոտեցումն իր արտացոլումը պետք է գտներ նրա հանրահայտ «Հանրապետության» էջերում (54-51 թթ.):

Առաջին պլանին արդ Գն. Պոմպեուսն էր, որը հմուտ ռազմավարությամբ և դիվանագիտությամբ Ք. ա. 67–63 թվականներին աննախադեպ ընդարձակել էր հռոմեական գերակայության ծիրն Արևելքում՝ Կովկասյան լեռներից մինչև Եգիպտոս:<sup>36</sup> Հաղթության փառքով և մեծ ավարով նա ժամանեց Իտալիա, և ընտրախավը զարհուրած էր, զի համոզված էր, որ, հանգույն Սուլլայի, նա բանակը կտանի Քաղաքի դեմ և կհաստատի իր միահեծանությունը: Սակայն Պոմպեուսն իրեն պահեց իբրև օրինապահ քաղաքացի. կանգնեցրեց բանակը Կամպանիայում և սպայակույտի հետ առանց զենքի (ինչպես պահանջվում էր սահմա-

<sup>35</sup> Նամակի քաղաքական համատեքստի մասին տե՛ս Mitchell, 1973, 8–10:

<sup>36</sup> Այդ ողջ տարածաշրջանում Պոմպեուսը ոչ միայն հաստատել էր հռոմեական գերակայություն, այլ նաև հռոմեական խաղաղություն (pax Romana) կարգավիճակ և օրենք, իրավունք և պարտավորություն: Տե՛ս Eilers, 2003, 90–102; Ստեփանյան, 2012, 129–139:

նադրությանը) ներկայացավ Ծերակույտին և Աշխարհաժողովին՝ հաշվետվություն ներկայացնելու համար: Աստ նրա բոլոր հակառակորդները՝ ամբոխից մինչև ծերակուտականներ, ոգի առան. փորձում էին նսեմացնել նրա հաղթանակները և ստորացնել անձը:<sup>37</sup>

Չորավարը, հարկավ, կարող էր զինվորներին կանչել Քաղաք և լուծել իր խնդիրները, սակայն չգնաց այդ քայլին: Չուսպ էր ու նպատակամետ: Չգում էր, որ միագիծ առնակատումը փակուղի է: Ուստի պատրաստ էր ժամանակավոր զիջումների: Եվ առիթը շուտով ներկայացավ. Ք. ա. 60 թվականին Հուլիոս Կեսարը նրան և Մարկոս Կրասսուսին դիմեց քաղաքական դաշինք ձևավորելու առաջարկով՝ նպատակավոր իրենց վեր դնելու Հանրապետությունից: Եվ դա միանգամայն հնարավոր էր, զի միասին նրանք ներկայացնում էին հռոմեական ամբոխը (Կեսար), բանակը (Պոմպեոս) և գործարար դասը (Կրասսոս): Երեքի այս ոչ պաշտոնական միությունը պատմությանը հայտնի է իբրև *Առաջին եռապետություն*: Ք. ա. 59 թվականին Կեսարն ընտրվեց կոնսուլ և, լռեցնելով իր ընդդիմադիր պաշտոնակցին, իրականացրեց դաշնակիցների պահանջները: Ի մասնավորի՝ հաստատվեցին Պոմպեոսի՝ Արևելքում ընդունած բոլոր որոշումները, և նա ստացավ շքահանդեսի իրավունք:

Ք. ա. 58-ին Կեսարը նոր համագրված զորքով հեռացավ Գալլիա՝ կուսակալ հինգ տարով, արտակարգ լիազորություններով: Երկիր, որի միայն հարավային ինչ-ինչ շրջաններ էին Հռոմի ներքո: Առաջիկա տարիներին նա պետք է համառ կռիվներով գրավեր այն և անգամ ափ իջներ Բրիտանիա: Եվ հռոմեական ամբոխի հովանավորից ծնվեց հմուտ ու փորձառու գորավար: Ծնվեցին նրա երկաթյա լեգիոնները: Իր բացակա-ներկայությանը նա աշխատում էր ներագդել

<sup>37</sup> Այս և հարակա այլ խնդիրների մասին մանրամասն տե՛ս Մինայան, 2013, 198–211:

Քաղաքում ընթացող զարգացումների վրա՝ օգտագործելով գալլական ոսկին և հին կապերը: Պոմպեոսն ու Կրասսոսը Քաղաքում էին և նույնպես զբաղված էին իրենց նկրտումների իրագործմամբ: Հարկավ, ավելի ներունակ էր Պոմպեոսը. Իսպանիայի կուսակալն էր, բայց այն կառավարում էր հանձնակատարների ձեռամբ: Ք. ա. 57–ից նրա ձեռքին էր Հռոմը եգիպտական հացով մատակարարելու գործը, որը լրացուցիչ խթան էր ազդեցության համար: Այդուհանդերձ, Կեսարի բուռն գործունեության հետնախորքին իրեն ստվերված էր զգում: Իսկ Կրասսոսը համարյա խաղից դուրս էր: Մակայն Կեսարին եռապետությունը տակավին անհրաժեշտ էր, և Ք. ա. 56–ին կազմակերպեց եռապետերի նոր հանդիպում: Հարդյունս երկարաձգվեցին նրա արտակարգ լիազորությունները Գալլիայում, Պոմպեոսը պահպանեց այն, ինչ ուներ, Կրասսոսին խոստացան Արևելքը՝ Պարթևստանի դեմ պատերազմ վարելու, «կրկնելու Ադեքսանդր Մակեդոնացու սխրանքը և հասնելու մինչև Հնդկաստան» [Plut., Cras., XVI, 4]:<sup>38</sup> Իսկ մինչ այդ Պոմպեոսն ու Կրասսոսն ընտրվեցին կոնսուլ (55 թ.) և համարյա ոչինչ չարեցին հանրային հուզող խնդիրները լուծելու ուղղությամբ: Իսանգարում էին փոխադարձ անվստահությունն ու մրցակցությունը:

Ի շարս այս ամենի, թվում էր, Պոմպեոսին շրջանցել են: Բայց այդպես չէր. Կեսարը նրան տվել էր այն լավագույնը, ինչ ուներ՝ իր մանկամարդ դստեր՝ Հուլիայի ձեռքը: Միակ զավակն էր՝ բնությունից առատորեն օժտված, որ ստացել էր դասական կրթություն: Կրասսեր էր Պոմպեոսից շուրջ երեսուն տարի, բայց

<sup>38</sup> Եռապետերի փոխադարձ անվստահությունն ակներև էր դարձել: Ասվածն առավելաբար վերաբերում էր Պոմպեոսի և Կրասսոսի հարաբերություններին: Ուստի նոր համաձայնությունը կայացավ նախ՝ մասնավոր հանդիպումների և բանակցությունների շնորհիվ՝ Կեսար–Պոմպեոս, Կեսար–Կրասսոս: Goldsworthy, 2006, 260–262:



շուտով շատերը հասկացան, որ սա հերթական հաշվենկատ ամուսնությունը չէ [Plut., Pomp., LIII, 3]: Հռոմից ոչ հեռու՝ Ալբանական բլրին կառուցված դոյակում, նրանք սկսեցին ընդունել հանրահայտ այրերի՝ իմաստասերներ, ճարտասաններ, բանաստեղծներ, պատմագիրներ: Հրավերքներն ուղեկցում էին նրբանաշակ հյուրասիրությամբ և խորհմաստ գրույցներով: Աստ կազմակերպվում էին թատերական ներկայացումներ: Ծերակույտն էլ երբեմն–երբեմն հրավիրում էր իր նիստերը: Հընթացս ժամանակի ընտրախավի շրջանում սկսեց մեղմվել Պոմպեոսի նկատմամբ բացասական վերաբերմունքը:<sup>39</sup> Դժվար է գուշակել, թե ուր կտանեին այս փոփոխությունները, սակայն կատարվեց անսպասելին. Հուլիան մահացավ ծննդաբերության ժամանակ: Մահացավ նաև երեխան: Կեսարն ու Պոմպեոսն անդառնալիորեն հեռացան միմյանցից:<sup>40</sup>

Այս միջոցին Հյուսիսային Միջագետքի տափաստաններում՝ Խառան քաղաքի մոտակայքում, Կրասուսի բանակը շրջափակվեց պարթևներից: Մեծ մասը կոտորվեց կամ գերի ընկավ, իսկ զորավարի գլուխը ուղարկվեց Արտաշատ, ուր տոնում էին պարթև արքայազնի և հայոց արքայադստեր հարսանիքը: Բ. ա. 53 թվականն էր: Պատմության հարթակին մնացին երկու դերակատար՝ Պոմպեոսը և Կեսարը:

Իսկ իրավիճակը Հռոմում քառտիկ երանգներ էր ընդունում: Ամբոխի մի հատվածը Կլոդիոսի առաջնորդությամբ կաթվածահար էր անում պետական հաստատությունների աշխատանքը: Կասկածներ կային, թե նրա թիկունքին Կեսարն էր: Ծուտով նրա դեմ ի

<sup>39</sup> Բ. ա. 54–50 թվականների իրադարձություններն իրենց վայրիվերումներով, ժամանակավոր դաշինքներով ու թշնամանքով կարևոր են Հանրապետության վերջին շրջափուլի հարիր մեկնաբանության համար: Հետազոտողները դրանք երբեմն ներկայացնում են իբրև *Պոմպեոսի գերակայության տարիներ*: Տե՛ս **Syme**, 1939, 38–46; **Leach**, 1978, 159–174:

<sup>40</sup> **Leach**, 1978, 167–171:

հայտ եկավ Միլոնն իր ջոկատով: Նրան էլ կապում էին Պոմպեոսի հետ:<sup>41</sup> Եվ Քաղաքը դարձավ բռնարարքների ու սպանությունների թատերաբեմ: Բանը հասավ նրան, որ Ք. ա. 53 թվականի աշնանը հնարավոր չեղավ կազմակերպել հաջորդ տարվա պաշտոնետության ընտրությունները: Թափ էր առել մի եսակենտրոն մտայնություն՝ «որքան վատ, այնքան լավ»:

Եվ ծերակուտական վերնախավը քայլ կատարեց. դիմեց Պոմպեոսին՝ փրկելու հանրապետական կարգը՝ տալով նրան մեծ լիազորություններ:<sup>42</sup> Նա ընտրվեց *կոնսուլ առանց պաշտոնակցի* (consul sine collega): Հանրապետության սահմանադրությամբ նման բան նախատեսված չէր և երբևէ չէր եղել նրա պատմության ընթացքին:<sup>43</sup> Հավանաբար Պոմպեոսին առաջարկել էին ավանդական արտակարգ պաշտոններ՝ *միջարքա* կամ *դիկտատոր*, բայց նա նախընտրել էր նորը, որի պարագային շեշտադրվում էր գորեղ անհատականության և Ծերակույտի համագործակցությունը:<sup>44</sup> Իրեն ներհատուկ եռանդով Պոմպեոսն անցավ գործի. հավատարիմ զինակիցների և հանձնակատարների օգնու-

<sup>41</sup> Արդի հետազոտողները սովորաբար ավելի զգույշ են նման որակումներում: Գտնում են, որ ամբոխավարների գործելակերպը հաճախ զուգահեռվում էր Կեսարի և Պոմպեոսի շահերին, բայց նրանք հիմնականում անկախ քաղաքական ուժ էին: Ասվածն ի մասնավորի վերաբերում է Կոդիուսին: Տե՛ս **Lintott**, 1967, 168–169; **Chilver**, 1992, 687:

<sup>42</sup> Ք. ա. 52 թվականի սկզբին Միլոնը ճանապարհային մի ընդհարման ժամանակ սպանեց Կոդիուսին: Գազազած ամբոխն իր առաջնորդի դին տեղափոխեց Քաղաք և հրո ճարակ դարձրեց Ծերակույտի շենքը (curia Hostilia): Դրանից հետո միայն ծերակուտական վերնախավը որոշեց զիջումներ կատարել հօգուտ Պոմպեոսի: Տե՛ս **Gruen**, 1995, 233–234:

<sup>43</sup> Տե՛ս **Abbott**, 1901, 137:

<sup>44</sup> Պաշտոնապես Ծերակույտում առաջարկն արեց Կատոն Կրոստերը, որը հայտնի էր իր հակապոմպեական ծայրահեղ պահվածքով: Համաձայնության բովանդակության ու իրավական հենքի մասին տե՛ս **Ramsey**, 2007, 304–308:

թյամբ ընդամենը մի քանի օրում Քաղաքում հաստատեց խաղաղություն, վերականգնեց մատակարարումը և վերացրեց շուկայական նենգությունները: Պետական բոլոր հաստատությունները վերսկսեցին բնականոն աշխատանքը: Ծուտով հանդարտության ու ապահովության ալիքը տարածվեց ողջ Իտալիայում: Հարկավ, այս ամենը կատարվում էր նաև բռնության միջոցով, բայց այլ կերպ հնարավոր չէր:<sup>45</sup> Կային մարդիկ, որք քայքայումը դիտարկում էին իբրև անձնական շահի հնարավորություն:

Ինչևէ, մի պահ թվաց, թե Պոմպեուսը (և նրա կողքին՝ Կիկերոնը) երկարամյա զիջումներից հետո հասնում է իր նպատակին. Հանրապետությունը վերականգնվում է նոր հանդերձանքով՝ ըստ գորեղ անհատականության և Ծերակույտի համագործակցության: Չորավարն սպասում էր, որ Ծերակույտը իրավականորեն կամրագրի այս իրավիճակը և փոփոխություններ կմտցնի սահմանադրության մեջ: Սակայն վերջինս չգնաց այդ քայլին: Ավարտելով իր պաշտոնավարությունը և ապահովելով հաջորդ տարվա պաշտոնետության ընտրությունները՝ Պոմպեուսը վայր դրեց լիազորությունները: Ք. ա. 51 թվականին Հանրապետությունը կրկին ընկղմվեց ծայրահեղ անկայունության մեջ: Ակներև էր՝ ձերակուտական ընտրանու ավանդական կառավարումը մոտենում էր ավարտին:

Հավանաբար Պոմպեուսը տակավին հույս ուներ, թե ձերակուտականները կվերադառնան ընդհատված երկխոսության մեկնակետին, մանավանդ որ Կեսարը շարունակում էր սատարել ամբոխին՝ պատրաստ միջամտելու Քաղաքի ներքին գործերին նաև այլ միջոցներով: Հանձնակատարների միջոցով նա պահանջում էր Ծերա-

<sup>45</sup> Պոմպեուսի հակառակորդներն շտապեցին նրա այս գործողությունների մեջ տեսնել «սուլլայական հետք»: Այս քարոզչությունը տեսանելի է Սալլուստիոսի գրությունում, որտեղ *սուլլայական դեպքերի կիշին* տարածվում է Պոմպեուսի գործողությունների վրա [Sall., Cat., XXXVII, 1–4; Ep., I, IV, 1–2]:

կույտի համաձայնությունը՝ ընտրվելու կոնսուլ *առանց իր ներկայության* (*ratio absentis*): Գիտեր, որ դա սահմանադրության խախտում է, բայց և հասկանում էր, որ եթե Քաղաք ժամանի իբրև մասնավոր անձ, ապա չի խուսափի դատական հետապնդումներից՝ պաշտոնեական չարաշահումների մեղադրանքով (*de repetundis*): Ծերակույտն այս հարցում ևս անդրդվելի մնաց:<sup>46</sup>

Այս հողի վրա ծերակուտական վերնախավի ու Կեսարի հարաբերություններն սկսեցին շիկանալ: Պոմպեուսը հետևում էր դեպքերին թերևս ոչ առանց բավականության: Բայց ինչ հետագայում կատարվեց, անդին էր նրա երևակայությունից. Ք. ա. 49 թվականի հունվարի 10–ին Կեսարի բանակն անցավ Ռուբիկոն գետը և մտավ Հռոմեական Հանրապետության վարչական տարածք: Տարածք, որ, համաձայն սահմանադրության, ապառազմականացված էր: Սուլլայից հետո սա երկրորդ դեպքն էր:

Սկսվեց քաղաքացիական պատերազմ (49–46 թթ.), որին Պոմպեուսն ու Ծերակույտը միանգամայն անպատրաստ գտնվեցին. համոզված էին, թե Կեսարը չի գնա այդ քայլին, զի փակուղի է: Պատահական չէր, որ զորավարի հավատարիմ զորքերը գտնվում էին Իսպանիայում: Մինչդեռ Կեսարը շարժվեց Հռոմի դեմ և ռազմակալեց այն: Սակայն իր գործողություններում ավելի զուսպ էր: Չկրկնենք պատմության հանրահայտ մանրամասները. Կեսարին հաջողվեց ճնշել հակառակորդների դիմադրությունը և իր գերակայությունը հաս-

<sup>46</sup> Հարկավ, իրադրությունը շատ անգամ ավելի բարդ էր. Կեսարը երկյուղում էր, որ ներկայանալով Հռոմ իբրև մասնավոր անձ՝ կհայտնվի ծերակուտական պահպանողականների և Պոմպեուսի համատեղ հարվածի ներքո: Ինքը կլինի մասնավոր անձ, իսկ Պոմպեուսը՝ օժտված բարձրագույն իշխանությամբ (*imperium*): Ի վերջո, երբ կրքերը ծայրաստիճան շիկացան, Կիկերոնը, հարկավ, Պոմպեուսի համաձայնությամբ, առաջարկեց միջակա տարբերակ. երկու զորավարներն էլ արձակում են իրենց բանակները և վայր դնում արտակարգ ռազմական իշխանությունը: Սակայն Կեսարը չհամաձայնեց: Տե՛ս **Morstein-Marx**, 2007, 167–178:

տատել ամբողջ Հռոմեական տերության նկատմամբ՝ Ջիբրալթարից մինչև Եփրատ, Բրիտանիայից մինչև Հյուսիսային Ափրիկա: Համաձայն պատմական ավանդության՝ երկու հակառակորդի մահ է սգացել՝ Պոմպեուսի և Կատոն Կրտսերի:

Վերադառնալով Հռոմ՝ Կեսարը Ք. ա. 44 թվականին հռչակվեց *ցլյանս դիկտատոր* (dictator aeternus): Ձեռնարկեց բարենորոգումներ, որոնք (հակառակ Մալլուստիուսի խորհուրդների) համընդգրկուն բնույթ չունեին. *ա.* կիսով կրճատեց պետությունից «էժան հաց» ստացողների թվաքանակը, մնացածների համար ստեղծեց աշխատատեղեր, *բ.* սկսեց գաղութներ հիմնել անդրծովյան տիրույթներում, *գ.* մասամբ թեթևացրեց պարտապանների վճարումները, *դ.* հռոմեական քաղաքացիություն տվեց Այսրալայան և Նարբոնական Գալլիաների բնակիչներին, *ե.* ընդլայնեց ծերակուտականների թիվը՝ հասցնելով 900–ի, *զ.* մտցրեց նոր (հուլյան) տոմար:<sup>47</sup>

Այս ընթացքին ամրապնդեց և իրավական հիմնավորում տվեց իր մենիշխանությանը: Միաժամանակ ցանկանում էր ցուցանել, թե հանրապետական կարգի ջատագով է. ուստի Ք.ա. 48, 46, 45 թվականներին ընտրվեց կոնսուլ: Որոշեց շեշտադրել կապը ամբոխի հետ և ընդունեց *ցլյանս ժողովրդական տրիբունի* իշխանություն (tribunica potestas): Գտավ նաև լծակ ներազդելու հանրայթի բարոյական կերպարի վրա. ստեղծեց նոր պաշտոն՝ *հանրային բարքերի պահապան* (tribunus morum), և ինքն էլ դարձավ դրա առաջին կրողը: Անսահման էր հեղինակությունն ու ազդեցությունը, և կարծում էր, թե այլևս մրցակիցներ չունի: Ուստի որոշեց իմաստնություն և մեծահոգություն (clementia) ցուցաբերել հակառակորդների նկատմամբ. արտոնեց, որ նրանք վերադառնան Քաղաք, վերադարձրեց ունեցվածքը, ընդգրկեց Ծերակույտի կազմում:

<sup>47</sup> Կեսարի նորամուծությունների մասին տե՛ս **Abbott**, 1901, 135–138; **Scullard**, 1982, 121–125; **Gardner**, 2009, 57–66:

Ի վերջո, նրա մեջ հաղթական զորավարը կրկին սկսեց գերակայել քաղաքական գործչի նկատմամբ: Մտածում էր Քաղաքի համար արդեն կատարել է այն, ինչ անհրաժեշտ է: Եվ սկսեց նախապատրաստվել արևելյան մեծ արշավանքի. «Ծրագրել էր և նախապատրաստել ռազմարշավ ընդդեմ պարթևների: Նրանց ենթարկելուց հետո մտածում էր շրջանցել Էվքսինյան ծովը և Հյուրկանիայի վրայով հասնել Կասպից ծով, ապա ներխուժել Սկյուրթիա: Ապա գրավել Գերմանիայի հարակից երկրները, ապա բուն Գերմանիան և վերադառնալ Գալլիա: Ավարտել իր տերության շրջանցումը, որը բոլոր կողմերից պետք է երիզվեր Օվկիանոսով» [Plut., LVIII, 6–7]: Ենթադրվում էր վերադառնալ Հռոմ և այն համայն աշխարհի կենտրոն հռչակել, հարկավ, իր իշխանության ներքո: Հիրավի, մոտավոր աշխարհագրական պատկերացումների և նույնքան էլ երևակայական ռազմավարության արդյունք էր այս ծրագիրը: Սակայն Կեսարը հավատացած էր, թե այն միանգամայն իրագործելի է: Ուստի ընտրեց առաջիկա երկու–երեք տարիների պետական բոլոր կարևոր պաշտոնյաներին, պատրաստության բերեց բանակը և Ք. ա. 43-ին պատրաստ էր սկսելու ռազմարշավը:<sup>48</sup>

Խորքային առումով այս ուտոպիզմը, հարկավ, նույն փակուղային իրավիճակի մասին էր վկայում: Բռնապետը կտրվել էր իրականությունից՝ վստահելով շրջապատի պատեհապաշտներին: Թերահավատ էր, թե Հռոմում կարող են տակավին կենսունակ լինել հանրապետական գրգիռները: Եվ կատարվեց այն, ինչից կարողացել էր խույս տալ Մուլլան. Ծերակույտում հասունացավ դավադրություն, որի մասնակիցները Ք. ա.

<sup>48</sup> Այս տեղեկությոը պահպանվել է միայն Պլուտարքոսի գրությունում: Հետազոտողներից ոմանք գտնում են՝ այն ծագում է Կեսարի ժամանակակիցների շրջանակից, որք թերահավատ էին նրա ծրագրերի նկատմամբ: Ի մասնավորի, մատնացույց են անում Կատոն Կրտսերին, որի համոզմամբ՝ պատերազմի իրական և բարոյական որևէ հիմք (causa belli) չկար: Տե՛ս Malitz, 1984, 33:

44 թվականի մարտյան իդուսների ժամանակ (մարտի 15–ին) սրախողխող արեցին Կեսարին հենց Ծերակուտարանում: Ըստ Պլուտարքոսի՝ նրա անշնչացած դին ընկավ Պոմպեուսի կիսանդրու մոտ [Plut., Caesar, LXVI, 9, 12]: Ճակատագիրը մի վերջին անգամ հանդիպեցրեց նրանց...

Դրանից հետո Հռոմը կրկին ներքաշվեց քաոսի մեջ. սկսվեց *Երկրորդ քաղաքացիական պատերազմը* (42–30 թթ.): Կեսարականները միավորվեցին վերջին հանրապետականների դեմ՝ ձևավորելով մի նոր եռապետություն՝ Մարկուս Անտոնիուս, Մարկուս Լեպիդուս, Գայուս Օկտավիանուս: Տարան հաղթանակ, բայց հետո գեներլ ուղղեցին միմյանց դեմ: Վերջնական հաղթանակն ուղեկցեց Օկտավիանուսին, որին Կեսարը ճանաչել էր ժառանգորդ: Երիտասարդ էր՝ թույլ առողջությամբ, անփորձ, առանց էական կրթության: Բայց կրում էր մարտիրոսված բռնապետի անունը, որին ամբոխն աստվածացնում էր: Եվ ինքն էլ ներկայանում էր իբրև աստծո որդի (*filius divi*):<sup>49</sup>

Սկսվում էր Գայուս Հուլիուս Կեսար Օկտավիանուս Օգուստուսի դարաշրջանը (Ք. ա. 27 – Ք. հ. 14 թթ.), երբ պատմական ժամանակը հակված էր սահուն ընթացքի, իսկ մտածողությունը՝ փոխաբերության: Փոխվել էին ժամանակները, սակայն անփոփոխ էր մնացել հանրույթի նկատմամբ արտաքո պարտադրանքը. գորեղ անհատի ուժին արդ գումարվել էր նրա հեղինակությունը (*auctoritas*)՝ իրավական և մշակութային տարասեռ հիմնավորումներով:<sup>50</sup> Սկսվում էր *հանրապետական*

<sup>49</sup> Օգուստուսյան դարաշրջանում մշակված և կյանքի կոչված «ազգային ծրագրի» մասին մանրամասն տե՛ս Ռ. Մայմի ընդհանրացնող ակնարկը, **Syme**, 1939, 440–458:

<sup>50</sup> Մենք չենք մտնում Օգուստուսի իշխանության իրավաբանական և քարոզական հիմնավորման մանրամասների մեջ: Դա մեր խնդիրը չէ: Նկատենք միայն, որ իր անձով նա մարմնավորում էր իշխանության մի քանի համալիրներ՝ հիմնված սրբազան (*jus sacrum*), քաղաքացիական (*jus civile*) և ռազմական (*jus militum*) իրա-

միասպետության դարաշրջանը (պրինկիպատ): Դրան տարբեր ուղիներով (ներհայեցողությամբ կամ սթափ դատողությամբ) մոտեցել էին թե՛ Գրաքուսները, թե՛ Պոմպեյուսը, թե՛ Կատիլինան, թե՛ Կեսարը: Սակայն կյանքի կոչվեց Օգուստուսի եռանդով, որն իր անձնական հատկանիշներով, որքան էլ տարօրինակ հնչի, զիջում էր նրանց: Այլ խոսքով՝ վերոհիշյալ գործիչների փորձառությունը (գնահատված դրական, թե բացասական) կարևոր էր Հռոմի պատմական ընթացքի դիտանկյունից:

Այս առումով, կարծում ենք, հարիր է անդրադառնալ «Կատիլինայի» ավարտական հատվածին: Վճռական ճակատամարտում ընկել էին թե՛ Կատիլինան, թե՛ իր մերձավորները, թե՛ հասարակ զինվորները. ոչ ոք գերի չէր ընկել կամ նահանջել: Հաղթանակած կառավարական զորքից «Շատերը, որ ռազմաճամբարից դուրս էին գալիս հսկողության կամ ռազմավարի աղագավ, շուռ տալով հակառակորդի դիակը՝ գտնում էին մերթ բարեկամի, մերթ հյուրընկալի, մերթ ծանոթի: Երբեմն էլ ճանաչում էին թշնամու» [Sall., Cat., LXI, 8]: Մոտավորապես նույն փոխլրացման հարաբերությունները տարածելի են նաև վերոհիշյալ պատմական գործիչների նկատմամբ:

Մնում է մեկ անգամ էլ հիշեցնել. պատմությունը բազմաչափ է և խորքային իմաստով չի ապացուցվում սև ու սպիտակի պարզ համաչափությամբ: Օգուստուսն ականջալուր էր այս դասին, զի, ի տարբերության նախորդների, մտածում և գործում էր համակարգի չափույթով:

---

վունքների վրա: Եվ միաժամանակ կամ ժամանակ առ ժամանակ զբաղեցնում էր հանրապետական բոլոր բարձր պաշտոնները՝ Ծերակույտի պրինկեպս, Ժողովրդական տրիբուն, կոնսուլ, գլխավոր քուրմ: Ցկյանս պրոկոնսուլ էր, որով ճանաչվում էր բանակի գերագույն հրամանատար: Տե՛ս **Momigliano**, 1992, 149–151; **Eck**, 2007, 59–75; **Goldsworthy**, 2014, 148–167:



## 2. Գրույթի պոետիկան. Մալլուստիուս. «Կատիլինայի պատերազմը»

Մալլուստիուսը (86–35 թթ.) Հանրապետության պատմության վերջին արարի ականատեսն էր, մասնակիցը և տեսաբանը: Հռոմում *նոր մարդ* էր (homo novus) Լատիումի Ամիտերնում համայնքից: Հավանաբար տեղական ընտրախավից էր: Ստացել էր հիմնավոր կրթություն՝ քերականություն, ճարտասանություն, իմաստասիրություն: Քիչ բան է հայտնի նրա վաղ հանրային առաջընթացի մասին: Գիտենք, որ Ք. ա. 52 թվականին՝ Պոմպեոսի միանձնյա կոնսուլության ժամանակ, ժողովրդական տրիբուն էր և կեսարանպաստ պահվածք ուներ: Ծուտով դա համագործակցության վերածվեց, որի հետևանքով Ք. ա. 50 թվականին նա վտարվեց Ծերակույտից [Dio, XL, 63, 2–5]:

Քաղաքացիական պատերազմի սկզբին կեսարականների շարքերում էր՝ իբրև լեգիոնի հրամանատար [Oros., VI, 15, 8]: Ք. ա. 47–ին Կեսարի օժանդակությամբ ընտրվեց պրետոր [Dio, XLII, 52, 1]: Այս ընթացքին օգնեց նրան զորք տեղափոխելու Ափրիկա և կազմակերպելու դրա անխափան մատակարարումը: Ինչպես հայտնի է, աստ Կեսարը ջարդեց վերջին հանրապետականներին, գրավեց Նումիդիան և վերածեց կուսակալության՝ Africa nova: Մալլուստիուսը դարձավ դրա առաջին կառավարիչը [App., BC., II, 100]: Մի ամբողջ տարի, եթե հավատանք լուրերին, զբաղված էր պաշտոնական չարաշահումներով ու կողոպուտով: Երբ վերադարձավ Հռոմ, իր դեմ դատական հետապնդում սկսվեց (de repetundis), որից փրկվեց միայն Կեսարի միջամտությամբ [Dio, XLIII, 9, 2]:<sup>51</sup> Դրանից հետո բռնապետը նրան այլևս մոտ չթողեց: Հավանաբար նրանց շփումները շարունակվում էին, բայց ունեին գուտ հայեցողական բովանդակություն:

<sup>51</sup> Տե՛ս Paul, 1992, 946:

Կեսարի սպանությունից հետո Սալլուստիուսը կորցրեց հետաքրքրությունն ընթացիկ անցուդարձի նկատմամբ և անցավ հայեցողական կյանքի (*ad curam rei publicae otium meum dedicavi*): Եվ փակված իր շքեղ դղյակում՝ սկսեց ի մի բերել նախորդ գրույթները և հեղինակել նորերը: Հենց այս ուղիով էլ հասավ ճանաչման և մնաց պատմության մեջ:<sup>52</sup> Նյութապաշտ հանրային գործչին փոխարինելու եկավ տաղանդավոր մտածողն ու պատմագիրը, որն իդեալականացնում էր *հռոմեական անկաշառ և պահպանողական անցյալը*:<sup>53</sup> Նա հույն մեծագույն պատմագիր Թուկիդիդեսի ազդեցության ներքո էր և իր հերթին էլ ներագրել է հռոմեական մեծագույն պատմագիր Տակիտուսի վրա: Երկու դեպքում էլ ճարտասանական հնարքը հույժ կարևոր էր, զի հերոսներն «իրենք էին բացում» իրենց գործողությունների հետնախորքն ու շարժառիթները:

Սալլուստիուսից մեզ հասել է երեք երկասիրություն՝ «Կատիլինայի պատերազմը (*Bellum Catilinae*)», «Յուգուրթական պատերազմը (*Bellum Jugurthinum*)» և

<sup>52</sup> Հռոմեացիներն ազատ քաղաքացու կյանքում առանձնացնում էին երկու հնարավոր կենսակերպ: Առաջինը՝ *negotium*, գործուն կյանքը՝ ի մեջ մասնագիտական և հասարակական պարտականությունների (*officia*): Երկրորդը՝ *otium*, որը զերծ էր առտնին հոգսերից՝ տրված *հայեցողական հաճույքներին* և ստեղծագործությանը: Տե՛ս **Balsdon**, 1960, 43–50; **Bragova**, 2016, 45–49: Այլով բանիմ Սալլուստիուսը հատկանշում է իր վերածնությունն ի նոր կյանք: Անցման բարոյական կողմի մասին նա խոսում է ինքնաձաղկման մի քանի նախադասությամբ, իսկ մնացյալը վերագրում է Բախտի քմահաճ խաղերին [Sall. Cat., III, 3–5, IV, 1–3]: Հմմտ. **Syme**, 1964, 47–48:

<sup>53</sup> Այդ անցյալը Սալլուստիուսի գրույթում ունի հավաքական դիմակ, որ պատկանում է Ք. ա. 2–րդ դարի նշանավոր պետական գործիչ Մարկուս Պորկիուս Կատոն Ավագին՝ հայտնի իր խստաբարո կենցաղով և հռոմեական անցյալի պաշտամունքով: Դեմ էր նորամուծություններին և զտնում էր, որ ծառայած հարցերի պատասխանը պետք է փնտրել անցյալում: Այս մասին էր նրա «Ծագումներ (*Origines*)» երկասիրությունը, որից մեծապես օգտվել է Սալլուստիուսը: Տե՛ս **McDonald**, 1992, 214–215:

«Պատմությունը (Historiae)»: Նա պատմագիրների այն դասից էր, որ խնդիր ուներ պատմական կարճ տևողություններում բացահայտելու կարևոր իրողություններ, տեղաշարժեր և պատճառներ: Հուսկ երկերից առաջինը վերաբերում է Ք. ա. 60–ականների Հռոմի ներքաղաքական ճգնաժամին, երկրորդը՝ 112–106 թվականներին Հյուսիսային Ափրիկայում (Numidia) ծագած պատերազմին, երրորդը՝ Հռոմի պատմությանը 78–67 թվականների միջակայքում:<sup>54</sup> Արտաքինից դրանք պատմության «կետ–գծային խոցումներ» են, սակայն խորքային առումով անքակտելի միասնություն են կազմում, զի վերաբերում են Հանրապետության համակարգային ճգնաժամին՝ ընտրախավ (boni), ձեռներեցներ (eques), հասարակներ (plebs):<sup>55</sup> Պատկերավոր արտահայտությամբ՝ խոսքն անկման և քայքայման պոետիկայի մասին է: Իբրև մտահոգևոր ապրումի դրսևորում՝ այն համադրելի է այլ մշակույթներում հայտնի *պատմական ողբերկին*:<sup>56</sup> Մինչդեռ հռոմեական միջավայրում եղավ և մնաց տվյալ ժանրի եզակի օրինակը, որին հետագոտողները սովորաբար չեն անդրադառնում:

<sup>54</sup> Դժվար է ճշգրիտ որոշարկել, թե երկասիրություններից յուրաքանչյուրը երբ է գրվել: Հետագոտողներն էլ խուսափում են դրանից: Մոսկ ենթադրելի է, որ «Կատիլինան» պետք է համաբերված լիներ Կեսարի սպանությունից հետո, նախքան նրա պաշտոնական աստվածացումը (Julius divus): Առավել հավանական է՝ Ք. ա. 43 թվականին, զի աստ Կատոն Կրտսերը Կեսարին հավասար (եթե ոչ առավել) մեծություն է: Տե՛ս **Syme**, 1964, 121: «Յուզուրթական պատերազմը» գրվել է 41–40–ին, իսկ «Պատմությունը»՝ հետագա չորս–հինգ տարում:

<sup>55</sup> Սալյուստիուսը գիտի ճգնաժամի տարասեռ պատճառների մասին՝ տնտեսական, քաղաքական, իրավական: Սակայն դրանք բոլորը համաբերում է նախ և առաջ մշակութային և բարոյական հակարժեքների տիրույթում: Տե՛ս **Earl**, 1961, 41–60:

<sup>56</sup> Ծիսական գործառնության ընտղ այս ժանրը ներհատուկ էր դասական հունական, հինկտակարանային, բյուզանդական (քրիստոնեական) գրական միջավայրերին: Տե՛ս **Alexiou**, 1974, 83–101; **Berlin**, 2002, 15–22: Հայոց պատմական ողբերի մասին տե՛ս **Խաչատրյան**, 1969, 34–36:

Ի լրումն ասվածի՝ նշենք, որ առաջին երկու երկասիրությունները պահպանվել են ամբողջությամբ, իսկ երրորդից մնացել են սոսկ առանձին հատվածներ: Մալլուստիոսին է վերագրվում նաև երկու «Թուղթք առ ծերն Կեսար ի վերայ պետության (Epistulae ad Caesarem senem de republica)»: Դրանք իրենց ոճային հատկագծերով տարբերվում են նրա այլ գործերից: Եվ նախորդ սերնդի հետազոտողները դրանք սովորաբար չէին մտցնում հեղինակի ժառանգության մեջ: Սակայն նորերի ուշադրությունն արդեն ավելի ու ավելի սևեռվում է «Թղթերի» իմաստային կողին, որի առնչությունները «Կատիլինայի» հետ աներկբայելի են:<sup>57</sup> Մենք այս միտումի համակիրն ենք, ուստի խնդիր ենք դրել թարգմանելու այս երկու գործերը՝ մեկնություններով և ուսումնասիրությամբ:

Նշենք, որ ձեռնարկն այս կապված է նաև որոշակի «տեխնիկական» դժվարությունների հետ, զի Մալլուստիուսը սովորական պատմագիր չէ: Նրա գրույթում առավել կարևորվում են իրադարձությունների զուգորդային, տիպաբանական և իմաստային լծորդումները, իսկ ժամանակային կապերը զգալիորեն սովերված են: Նույնը վերաբերում է նաև պատումի աշխարհագրական չափույթին. տեղանքի անունները երբեմն բացակայում են, երբեմն էլ խճողված են: Այս ամենին գումարած ոճական հնարանությունները (արխայիզմ), որք սոսկ զարդանախշեր չեն, այլ պատումի իմաստային բանալիներ: Այլով բանիվ՝ Մալլուստիուսի գրույթը ենթադրում է մեկնության նորանոր հնարավորություններ: Լոկ պահանջվում է համապատասխան ընթերցող՝ հառաջացած անտիկ պատմության և իրավունքի, լեզվի և մեկնարվեստի, ճարտասանության և իմաստասիրության այլևայլ տիրույթներում:

**ա. «Կատիլինայի» իմաստային խաղընթացը:** Մալլուստիուսը խնդիր ունի ձևակերպելու Ք. ա. 60–ական-

<sup>57</sup> Այս մասին տե՛ս Ramsey, 2007, 415–416: Համաձայն հեղինակի՝ նամակները գրված են Ք. ա. 50 և 48 թվականներին:

ների Հռոմում ծավալված ընկերային և քաղաքական, բարոյական և հոգեբանական ճգնաժամն իբրև պատումային միջավայր: Միտումն է բացահայտել ժամանակի խորքային կապերն ու առնչությունները և գրույթի միջոցներով, նախ՝ կարգ ներմուծել իրադարձությունների քառտիկ ընթացքի մեջ, ապա ուրվագծել դրա հաղթահարման ուղիները: Այդորեն՝ հեղինակի նպատակն է քառտիկ առօրեականությունը բանաձևել իբրև խաղընթաց և ուրվագծել դրա ձևական և իմաստային սկիզբը, ընթացք-զարգացումը և հանգուցալուծում-ավարտը:

Իրականության և գրույթի փոխհարաբերությունների այս հիմնախնդիրը հարացուցանված էր տակավին Արիստոտելի «Պոետիկայում» և մեծ ազդեցություն ունեւր հելլենիստական, իսկ ապա նաև հռոմեական մտավոր միջավայրերում:<sup>58</sup> Եվ Մալլուստիոսը բացառություն չէր. թռուցիկ հայացքն իսկ ի գորու է «Կատիլինայում» հետագծելու նման խաղընթացի առկայությունը՝ հարկավ պարուրված հռետորաբանական և իմաստասիրական տարասեռ նրբերանգներով: Ուստի որոշարկել յուրաքանչյուր շրջափուլի հստակ սահմաններն ըստ երկասիրության ձևական կառուցվածքի (ենթաբաժիններ) համարյա անհնարին է, բայց միանգամայն հնարավոր՝ ըստ իմաստային սահքի: Պատահական չէ, որ որոշ հետազոտողներ՝ տրված «Կատիլինայի» զուգորդական (ասոցիատիվ) ընկալմանը, պարզապես զանց են առնում այս խնդիրը: Ոմանք էլ տարիմաստ տարբերակներ են առաջարկում՝ մեկնարկելով տեքստի ընկալման իրենց կերպից՝ ի՞նչ դիտանկյուն, ի՞նչ մեթոդաբանություն, ի՞նչ ըմբռնումներ:<sup>59</sup>

<sup>58</sup> Համարվում էր, որ իրականության և գրույթի հարաբերությունների համապարփակ դրսևորումը ողբերգությունն է. «Արդ, ըստ մեր սահմանման, ողբերգությունը մի գործողություն է, որն ամբողջական է և ունի որոշակի ծավալ [...]: Իսկ ամբողջն այն է, որն ունի սկիզբ, զարգացումը և ավարտ» [Arist., Poet., 1451a, 8–11]:

<sup>59</sup> Ավաժծի դիտանկյունից, կարծում ենք, առավել հատկանշելի է արդի հետևյալ հեղինակների հետազոտական փորձառությունը.

Ստորև մենք պատրաստվում ենք նույն բանն անել՝ մեկնարկելով հեղինակի պատումի պոետիկայից՝ կառուցված ստոիկյան և (մասամբ) էպիկուրական դպրոցների արժեհամակարգերի վրա՝ հարկավ, համեմված դասական իմաստասիրության և ճարտասանության, թատրոնի և քերթողական արվեստի ձեռքբերումներով:

*Հրնթացս Սալլուստիուսի տեքստի քննության մենք անդրադառնալու ենք ստոիցիզմի հիմնարար արժեքներին: Սակայն անելու ենք դա Մեկնությունների մեջ՝ ի տեղի, կոնկրետ իրադարձությունների և հերոսների (կամ հակահերոսների) առնչությամբ: Բսկ արդ մեկ-երկու խոսք Դպրոցի մասին: Հիմնվել է մոտ Ք. ա. 300 թվականին՝ Չենոն իմաստասերի նախաձեռնությամբ: Անցել է զարգացման երեք շրջափուլ՝ Վաղ Ստոիա՝ մինչ Ք. ա. 2-րդ դարի կեսերը, Միջին Ստոիա՝ մինչ Ք. ա. 1-ին դարի վերջը, Ուշ Ստոիա մինչ՝ Ք. հ. 3-րդ դարի վերջը: Այս ընթացքին ձևակերպվել են Դպրոցի հայեցողական երեք կարևոր տիրույթները՝ տրամաբանություն, գոյաբանություն և բարոյագիտություն: Ընդամին, Վաղ Ստոիան կենտրոնացած էր տրամաբանության և (հատկապես) գոյաբանության վրա՝ մեկնարկելով Հերակլիտեսից, Էմպեդոկլեսից և Պդատոնից: Միջին Ստոիան նախապատվությունը տալիս էր բարոյագիտության և քաղաքական իմաստասիրության հիմնահիմնդիրներին: Աստ կարևորվում էին սոփիստների և Արիստոտելի գաղափարներն ու հղացքները: Շեշտադրվում էին մարդ էակի և նրա համակեցության տիեզերական առնչությունները, որոնց կենտրոնական բաղադրիչը տիեզերական Հուր-Բանականն էր: Դրանից էին արտածվում Օրենքը և Արդարությունը, Հանաչափությունը և Բախտը, Գեղեցկությունը և Առաքիտությունը: Բանական սերմի շրջանառությամբ վերջիններս ներթափանցում են գոյակարգի բոլոր հարթակներ՝ սկսյալ աստղերից մինչև մարդ էակ և նրա ընկերային միջավայր՝ ապահովելով դրանց բնականոն կենսակյացը: Սակայն Միջին Ստոիան, ի տարբերություն Վաղ Ստոիայի, ճանաչում էր նաև մարդու բարոյական ընտրության իրավունքը և պատասխանատվությունը հանուր կարգի համար: Ծանաչում էր, որ բարոյական անկումը կարող է խաթարել ինչպես անհատի, այնպես էլ հանրույթի*

կենսորնթացր: Այդ պարագային Բախտը դառնում էր անկանխատեսելի ու քմահաճ: Մյուս կողմից՝ քայքայումը հնարավոր է մեղմել և (անգամ ժամանակավորապես) ի չիք դարձնել ականավոր գործիչների իննովացիոն ծրագրերով: Հանդերձ այդու, անխաթար է մնում գոյակարգի հիմնարար սկզբունքը՝ ամենայն գոյացություն վաղ թե ուշ հանգելու է իր ավարտին: Ավաճին հավելենք, որ Միջին Ստոիան (Հնորիվ Պանետիոսի, Պոլիբիոսի և Պոսիդոնիոսի) լայն տարածում ստացավ հռոմեական միջավայրում, և նրա գաղափարները լավագույնս ներկայացված էին Կիկերոնի, Կատոն Կրտսերի և Սալլուստիոսի գրույթներում:<sup>60</sup> Այդ մասին գիտեք տակավին Սկիպիոն Էմիլիանուսը, որը, կանգնած ավերված Կարթագենի փլատակների, ողբում էր Հռոմի բախտը:

Նախաբանը «Կատիլինայի» խաղընթացի տեսական մոտքն է, որը, մեր մոտեցմամբ, պարառում է նրա I – XIV ենթազուլխները: Մեկնազաղափարը ստոիկների տեսությունից է, որը հստակ զուգահեռներ էր տեսնում մարդ Էակի և նրա ընկերային–քաղաքական միջավայրի միջև: Ք. ա. 2–րդ դարի պատմագիր Պոլիբիոսն այն կիրարկում էր նաև համաշխարհային պատմության նկատմամբ: Հավատացած էր՝ ընկերային–քաղաքական ձևերը նման են կենդանի օրգանիզմների, զի անցնում են ծագումի, ծաղկումի և անկումի շրջափուլերով [Polyb., VI, 2, 5].

Հուսկ ամենևին էլ պատահական չէ, որ Սալլուստիոսն իր գործն սկսում է մարդ Էակի քննությամբ՝ հատկանշելով նրա կառույցի երկու հակադիր բևեռները՝ մարմինը և հոգին (corpus et animus): Եվ հատկապես հոգու վերին հատվածը՝ *բնական/քանական ձիրքը* (ingenium), որի գերակայությամբ նա ունակ է կտրվելու կենդանական զանգվածից և կապվելու աստվածային ոլորտին: Վերջինիս առաջնորդությամբ էլ մարդ Էակն ի գորու է լեցնելու իր մարմնական կրքերը և ապրելու հավասարակշիռ կյանքով՝ *առանց գայրույթի և մղումի*

<sup>60</sup> Հարցերի այս շրջանակի մասին տե՛ս մանրամասն Zeller, 1931, 209–226; Утченко, 1977, 86–98; Inwood, Donini, 1999, 682–684, 714–723; Schofield, 1999, 756–764; Inwood, 2003, 7–32.

(sine ire et studio): Համաձայն ստոիկյան ըմբռնումների՝ դա ինքնաբավ և բնական կյանքի ճանապարհն է: Եվ ոչ միայն մարդ էակի, այլ նաև ընկերային–պետական ձևերի և (ընդհանրապես) պատմության:

Մարդ էակը սովորաբար ապրում է միջակա–անորոշ արժեքներով՝ առողջություն կամ հիվանդություն, հարստություն կամ տնանկություն, ուրախություն կամ տրտմություն, անհայտություն կամ փառք: Այս հարթակից նա ի գորու է բարձրանալու դեպի առաքինություններ (virtutes)՝ չափավորություն, ինքնատիրապետում, արություն, արդարադատություն, իմաստնություն: Արժեքներ, որք զուգորդվում են համապատասխան գործողությանին կամքով: Մարդուն առաջնորդում է բանական ձիրքը, և ամենևին էլ պատահական չէ, որ դրա բացակայությամբ նա անկում է արատի հարթակ (vitia)՝ ընչաքաղցություն, զեխություն, որկրամոլություն, խարդախություն, մարդադավություն, իշխանատենչություն: Այս բանը Սալլուստիուսը ներկայացնում է իր և Կատիլինայի օրինակով:

Ինքը պատանեկությունից տրվել է արատին՝ ապրելով ստորակա նյութական գրգիռներով: Սակայն հրնթացս տարիների կարողացել է հասկանալ սխալը և բռնել առաքինության ուղին, զի առողջ էր ծնունդով իրեն տրված բանական ձիրքը: Եվ արդ ձեռնարկել է «Կատիլինայի» գրությունը՝ ըմբռնելու Հռոմը պատուհասած խորագույն ճգնաժամը և ուրվագծելու ելքը դրանից: Ինչ վերաբերում է Կատիլինային, նա նույնպես պատանեկությունից բռնել է արատի ուղին, սակայն ի գորու չի եղել հեռանալու ստորակա կրքերից, զի թույլ և արատավոր էր իր բանական ձիրքը: Հարդունս ձեռնարկել է պետության բռնի հեղաշրջման գործը՝ իր շուրջ համախմբելով նմաններին:

Հաջորդ տրամաբանական անցումը հարց է հարուցում՝ ի՞նչպես էին *նմանները* հայտնվել Հռոմում: Պատասխանը հեղինակը որոշել է փնտրել հռոմեական անցյալի հեռանկարում՝ կրկին մեկնարկելով մարդ էակի



և նրա ընկերային–պետական կառույցի համակերպության սկզբունքից: Վաղ հռոմեացիները, ըստ նրա, գոյացել են երկու թափառ ցեղերից, որք ազատ էին, բայց անկիրթ ու անսանձ: Մեկը տրոյացիների ժառանգներ էին, մյուսը՝ տեղաբնիկներ: Համաբնակվելով միևնույն քաղաքի պատերից ներս՝ նրանք դյուրավ միավորվեցին և ձևավորեցին ընդհանուր բարքեր, օրենքներ և կառավարման հաստատություններ: Մարդկային չափույթով՝ խթանը կրկին գալիս էր բանական ձիրքից, որն ունակ է հանրույթը առաջնորդելու առ հանուր Բախտը և Արդարությունը: Նման զարգացումն Արիստոտելը որակում էր իբրև անցում դեպի քաղաքակրթություն (πολιτεία) [Aristot., Polit., I, 1253a, 15]:

Այս առնչությամբ ցանկանում ենք հասկանալ, որ անդրադառնալով Հռոմի պատմության ընդգրկուն պատկերին՝ Սալլուստիուսը խուսափում է հիշատակել (անգամ ականավոր) պատմական դեմքերին: Չկան առանձին հերոսներ, կա լոկ մի հերոս՝ հռոմեական ազգը (populus Romanus): Անտարակույս, այս մոտեցումը նա ժառանգել էր Կատոն Ավագից, որն իր «Ծագումներ (Origines)» գործը շարակարգել էր հենց այս սկզբունքով: Սկզբունքին հավատարիմ՝ Սալլուստիուսը Վաղ Հռոմի պատմությունը ներկայացնում է իբրև կերպափոխությունների մի ընդհանրական շարք: Պատմական ընթացքը նա դիմավորում է սուկ իր (կամ դրան մերձ) ժամանակներում:

Հռոմի *արքայական դարաշրջանը* Սալլուստիուսը ներկայացնում է իբրև միապետություն, որին ներհատուկ է ազնվապետության աներկբա երանգ, զի «[...] ընտրյալ այրերը, որոնց մարմինը հընթացս տարիների թալկացել էր, իսկ բանական ձիրքը՝ զորացել իմաստնությամբ, հոգ էին տանում պետության մասին» [Sall., Cat., VI, 6]: Խոսքը, հարկավ, ծերակուտականների մասին է, որք բավական ներունակ էին ընտրովի և ոչ բացարձակ իշխանությամբ օժտված արքաների կողքին: Բանական ձիրքի միջնորդությամբ Բախտն առաջնոր-

դում էր հռոմեացիներին:

Ճամանակ անց, սկսյալ, Բախտը լքեց նրանց, և հանրային սկսեց հետադիմել. արքայական իշխանությունը վերածվեց «գոռոզ բռնատիրության»: Եվ պատճառը նախ և առաջ համակարգային էր. Պոլիբիոսի հետևողությամբ Սալլուստիուսը մտածում է, որ պարզ ընկերային–պետական ձևերը, ըստ բնության կարգի, վաղ թե ուշ վերասերվում են իրենց հակաձևերի (ή ἀναβολή τῶν πολιτεῶν ὀρθῶν) [Polyb., VI, 5, 10–15]: Համակեցական կարգն ու անդորրը «[...] գորացնելու աղազավ [հռոմեացիներն] ամենամյա իշխանություն հաստատեցին՝ ընտրելով երկու իշխանավորի» [Sall., Cat., VI, 6]: Խոսքը Զ. ա. 510 թվականի հեղաշրջման մասին է, հարդյունս որի Հռոմում հաստատվեց հանրապետական կարգ (Res publica):

Հավատարիմ իր հետազոտական սկզբունքին՝ Սալլուստիուսը Հանրապետությունը նույնպես ներկայացնում է մարդկային չափույթով: Հանուր մասնակցումի ընկերային միջավայրը քաղաքացու պահվածքի նոր խթաններ էր պարունակում: Մեկնակետը փառքի ծարավն էր (gloriae libido), որը նրանց առաջնորդում էր առ *գործք արության և իմաստնության*. «Հանուն փառքի [բողորը] բուռն մրցակցում էին միմյանց [...]: Համարում էին, որ հենց դա է իրենց ունեցվածքը, հենց դա է իրենց բարի անունն ու գերագույն հռչակը: Պապակ էին գովեստի, ազատ՝ փողի [զայթակողությունից]. ձգտում էին լոկ արժանի փառքի և ազնիվ [վաստակած] ունեցվածքի» [Sall., Cat., VII, 6]: Ի հավելումն «Նրանց միջավայրում բարի արդարությունը պահպանվում էր ոչ այնքան օրենքներով, որքան բնական խթանով» [Sall., Cat., IX, 1–2]: Հարդյունս հռոմեացիները «[...] հարգում էին աստվածների տաճարները և փառքով զարդարում իրենց տները» [Sall., Cat., XII, 4]: Նրանք կրկին գտել էին ճանապարհը դեպի հանուր բնական (և բանական) միջավայր, որը ստոիկները նույնացնում էին աստվածային արդարության և համաչափության հետ:

Եվ նրանք ծավալվեցին նախ՝ Իտալիայում: Մալլոստիոսի իդեալական բանաձևմամբ՝ «Մկսեցին բարեկամություն հաստատել՝ ավելի շատ տալով, քան ընդունելով» [Sall., Cat., VI, 5]: Այա Բախտը նրանց առաջնորդեց դեպի հեռուն: Եվ ինչպես հատկանշեցինք վերը, հընթացս ընդամենը մեկ սերնդի կենսատևողության հասան տիրապետության ամբողջ Միջերկրածովքի նկատմամբ:

Մակայն աստ հռոմեացիներին պատում էին փորձություններ՝ ինչպես անձնական, այնպես էլ համակարգային: Դարձյալ կենտրոնում մարդ էակն էր: Ահռելի հարստություն սկսեց ներհոսել Հռոմ, և միատարր հանրույթն անպատրաստ գտնվեց նման գայթակղությանը: Այն նախ ճաքեր տվեց, ապա բևեռացավ, գի բարիքներից սկսեց օգտվել միայն ընտրախավը՝ լավերը (boni): Այա առանձնացավ նրանց մի նեղ շրջանակ՝ *լավագույնները* (optimi) կամ *փոքրամասնությունը* (pauci). «Ազահությունը խաթարեց հավատարմությունը, ազնվությունը և զանազան բարիքներ, իսկ դրանց փոխարեն մտցրեց բարձրահոնությունը, դաժանությունը, աստվածների նկատմամբ արհամարհանքը: Մովորեցրեց ամեն ինչ ծախու համարել»: Հեղինակի պատկերավոր խոսքով՝ տրված մարմնական կրքին ու ազահությանը՝ նրանք սկսեցին «քանդել–հարթել լեռները և ենթարկել ծովերը» [Sall., Cat., X, 4; XIII, 1]:

Այս գործընթացի հակառակ երեսն առնչվում էր հասարակներին (plebs), որք իրենց եռանդով և զոհերով ապահովեցին այսօրինակ ծավալումը: Նրանք, ընդհակառակը, կորցրին իրենց ինչքը (հայրենի հողակտորներ) և խճճվեցին պարտքերի մեջ: Քշվեցին տներից, դարձան անարգ թափառական՝ օտարված հանուր բարիքի գիտակցությունից: Եվ սրան հետևեց բարոյական անկումը. նախկին հողագործ–գինվորները դարձան օրինազանց ու խարդախ, չարագործ ու մարդադավ և սկսեցին հակվել հանրակարգի հեղափոխման մտքին: Ամեն ոք, «[...] որ արբեցողությամբ, խաղամոլությամբ, ձեռնա-

ծուրթամբ և որկրամոլությամբ մսխել էր իր հայրական ժառանգությունը և վառվում էր ծանր պարտքերի ներքո, այս կերպ փափագում էր ի չիք դարձնել իր անպատվությունն ու չարագործությունը» [Sal., Cat., XIV, 2]:

Ըստ հեղինակի՝ սա արդեն իր դարաշրջանի հիմնագիծն էր, երբ հռոմեական հանրույթը կրկին կանգնեց ընկերային հետադիմության հեռանկարի առջև: Ցամաքում էր նրա բանական ձիրքի պաշարը: Եվ Բախտը կրկին դառնում էր անկանխատեսելի ու թշնամական: Հուսկ պարզ դարձավ, որ «բոլոր վատ բաները ծագում են լավ բաներից»: Այստեղ էլ ավարտվում է «Կատիլիինայի» խաղընթացի առաջին շրջափուլը:

*Ընթացք-գարգացումը.* համաձայն մեր մեկնաբանության՝ պարառում է «Կատիլիինայի» XV–XXXIII ենթագլուխները: Նպատակ ունի բացահայտելու հռոմեական հանրույթի ծայրահեղ բևեռացումը և դրան առնչվող հանգամանքները՝ պատմական, իմաստասիրական, հոգեբանական: Հիշեցնենք, որ աստ Սալլուստիուսի տարտամ–ընդհանրական պատումը դառնում է առարկայական ու դիմավորված: Նաև աներկբայորեն թատերայնացված է՝ կառուցված հերոսների և հակահերոսների հակադրության տրամաբանությամբ: Բախում, որը, սակայն, ի գորու է կերպափոխելու իր բևեռների արժեքանությունն ու զարգացման հեռանկարը: Շատ բան կախված է դիտողի (կամ ուսյալ ընթերցողի) դիտանկյունից՝ ունակ առտնին խոսքերի, ժեստերի, գործողությունների ներքո տեսանելու խորքային իմաստներ ու զարգացումներ:

*Բախումի արժեքանությունը.* առաջին հայացքն իսկ բավարար է՝ պնդելու, որ խաղընթացի այս հատվածը համաբերված է ընդդեմ թե՛ լավերի, թե՛ հասարակների: Այսինքն՝ խոսքը կրկին համակարգային խաթարումի մասին է: Սակայն հեղինակի խոսքն ուղղված է առաջին հերթին վերասերված հասարակների դեմ, որք տարբեր տեղերից եկել–լցվել էին Հռոմ և վերածել այն *կեղտաջրի փոսի*. «զի [ցանկացած] հանրույթում կան

մարդիկ, որք, ոչինչ չունենալով, նախանձում են լավագույններին և փառաբանում ստորներին, ատում են ամենայն հինը և առաջ մղում նորը, ունեցածի նկատմամբ հակակրանքից ձգտում են փոխել ամեն բան» [Sall., Cat., XXXVII, 3]: Սակայն անաչառ աչքն ավելին է տեսնում. լուսանցքայնացած այս զանգվածին (տարբեր նկատառումներով) հարում էին այլևայլ հանրախմբերի ներկայացուցիչներ՝ ծերակուտականներ, հեծյալներ, արհեստագործներ: Նաև՝ իտալիկներ, գաղութաբնակներ, նախկին զինվորներ: Նաև՝ բարեկեցիկ ընտանիքների պարմանիներ, որոնց ձգում էր փոփոխությունների տարտամ հրապույրը:

Այս իրողությունն իր հետքը թողել է հեղինակային տեքստի վրա: Արտաքինից տպավորություն կա, թե Սալլուստիուսն անվերապահորեն հետևում է Կիկերոնի հակակատիլինյան ճառերի ոգուն ու տառին: Այդուհանդերձ, առկա է նաև թաքուցյալ, իսկ երբեմն էլ թանձրացյալ և բավական հստակ ուրվագծի պատումային մի շերտ, որ կառուցված է ըստ հակառակ կողմի (կատիլինյան) փաստարկների: Ասվածի բարձրակետը հեղինակի միտքն է առ այն, որ գործի հանգամանքները տակավին կարիք ունեն լուրջ քննության. «Իսկ մենք մտածում ենք՝ իր կարևորությամբ հանդերձ՝ այս գործը քիչ է բացահայտված» [Sall., Cat., XXII, 3]:

Մեկնարկելով այս ըմբռնումից՝ Սալլուստիուսը դիտարկվող իրադարձությունները ներկայացնում է իբրև երկու ընկերային-քաղաքական համալիրների բախում. մի կողմից՝ պաշտոնական Հռոմը, մյուս կողմից՝ նրա հակապատկերը: Երկուսն էլ կազմակերպված են համարյա թե նույն սկզբունքով՝ Աշխարհաժողով, Ծերակույտ, բանակ, պաշտոնություն: Հարկավ, կատիլինյան կողմի կազմակերպվածությունը կայացման փուլում է տակավին: Սակայն միտումն անժխտելի է. հակահերոսն իր շուրջն է համախմբել լուսանցքայնացած հանրազանգվածը խնդիր դնելով նրանից վերաձևել մի նոր Հռոմ: Այս առումով հատկանշելի է նրա

հրավիրած հանրահավաքի տեսարանը (contio), նաոր, իսկ ապա առաջարկը՝ ընտրելու իրեն առաջնորդ [Sall., Cat., XVII, 1–7]:

Ներկաները, ամենայն հավանականությամբ, ընդունել են հակաիշխանական գործողությունների ծրագիր և Կատիլինային էլ օժտել արտակարգ լիազորություններով: Պատահական չէ, որ նա հետագայում ուր էլ գնար, իր հետ տանում էր կոնսուլական իշխանության խորհրդանիշները՝ արծիվները և խրճուռը [Sall., Cat., XXXVI, 1]: Հայսմ հիմք կա պնդելու, որ մասնակիցներն իրենց հանրահավաքը դիտարկում էին իբրև Աշխարհաժողով: Համաձայն Մալլուստիոսի՝ ավարտելով խոսքն ուղղված բոլորին՝ Կատիլինան առանձնացել է մտերիմների նեղ շրջանակով՝ կազմակերպական խնդիրներ քննարկելու աղագավ: Մնացյալ մասնակիցները գիտեին այս մասին և, հավանաբար, այն զուգահեռում էին Ծերակույտին: Հենց այս նեղ կազմի համախումբն էլ կայացնում էր կարևորագույն ռազմավարական և մարտավարական որոշումները:

Լուսանցքայնացած զանգվածը, հակառակ Մալլուստիոսի քարոզչական հավաստիացումներին, քառտիկ, անսանձ ու աննպատակ չէր: Երբ Հռոմի Ծերակույտը որոշում կայացրեց, որ պատրաստվող դավադրության մասին տեղեկության համար մարդիկ կպարգևատրվեն՝ ստրուկները՝ ազատությամբ և 100 000 սեստերցով, ազատները՝ անհանցապարտությամբ և 200 000 սեստերցով, Կատիլինայի շրջապատից ոչ ոք չգնաց այդ քայլին [Sall., Cat., XXX, 6; XXXVI, 5]: Եվ հետո, ի հակադրություն պաշտոնական իշխանությունների՝ նա հրաժարվեց իր շարժման մեջ ընդգրկել ստրուկներին, թեպետ ցանկացողների պակաս չկար. «[...] նա չէր ընդունում ստրուկներին, որոնց հոժ ամբոխն սկզբում իր մոտ էր գալիս–խոնվում. հույսը դրել էր դավադրության ուժերի վրա և մտածում էր, որ անհարիր է իր ծրագրին, եթե ի հայտ գա, որ [ազատ] քաղաքացիների գործին մասնակցում են փախստական ստրուկներ»

[Sall., Cat., LVI, 5]: Ավելին՝ Կատիլիանան և իր կողմնակիցները միտում ունեին ներկայանալու իբրև համազգային շահի մարտիկներ՝ պատրաստ ինքնագոհողության հանգույն վաղ հռոմեական պլեբեյների: Ինչպես նշվեց վերը, իրենց լքում—հեռացումներով նրանք ստիպում էին պատրիկներին գնալու զիջումների և բարեփոխելու համակեցական կյանքի հիմերը.«[...] մենք զենք չենք բարձրացրել ո՛չ ընդդեմ հայրենիքի, ո՛չ էլ այլոց վտանգելու համար, բայց մեր թշվառ ու սնանկ անձը հանուր ապօրինությունից փրկելու նպատակով» [Sall., Cat., XXXI, 1]:

Ասվածը ստիպում է մտածելու, որ լուսանցքայնացած զանգվածը միագիծ ու միատարր չէր: Կատիլիանային հարած հատվածն արմատապես տարբերվում էր Հռոմում խոնվածներից՝ տարտամ, անորոշ ու կանացի: Վերջինս ապրում էր առտնին կյանքով՝ անհոգության և զվարթության մեջ, բայց ճգնաժամի պահին կերպափոխվում էր միանգամայն: Կատիլիանյան ճգնաժամի ընթացքին նրա անդամներն «սկսեցին անապարել ու դողալ՝ հավատ չընծայելով որևէ տեղանքի, որևէ անձի. ո՛չ պատերազմի մեջ էին, ո՛չ խաղաղության, վտանգն էլ չափում էին ըստ իրենց վախի» [Sall., Cat., XXXI, 2]: Եվ վախի ներքո էլ սկսեցին հավատ չընծայել «ո՛չ իրենց, ո՛չ էլ հայրենիքին»:

Արդարև, երկու հակադիր ձայն կա «Կատիլիանյում». մեկն առերևույթ է՝ ընդդեմ շարժման, մյուսն անդրական՝ հանուն դրա: Կրկնենք մեկ անգամ էլ. դրանք պատկանում են Հռոմի թատերայնացված պատմության երկու հիմնաքվեներին: Նրանց արժեքանությունը (տարբեր տոնայնությամբ) առկա է «Կատիլիանյում», և ուսյալ ընթերցողին է թողնված կայացնելու իր համար առավել ընդունելի որոշումը: Այլ խոսքով՝ թե՛ պատմական ժամանակն ու իր հերոսները, թե՛ դրանք արտացոլող գրույթը հատկանշվում են անկայունության աներկբա երանգներով:

*Բախումի գործողությանին ընթացքը.* Կատիլիանայի

իշխանական նկրտումներն ընդգրկում էին բավական տևական մի ժամանակաշրջան՝ Ք. ա. 66 – 62 թվականները: Մինչև 63–ը նա աշխատում էր հասնել նպատակին սահմանադրական ճանապարհով՝ փորձելով ընտրվել կոնսուլ: Սակայն հանդիպեց *գոյեղ քչերի* (pauci) պատին, որը բոլոր (օրինական, կիսաօրինական և ապօրինի) միջոցներով փակել էր նրա ուղին: Հանրույթին վախեցնում էին նրա սուլլայական անցյալով, թեպետ իրենցից շատերը նույնպես մասնակցել էին դրան: Այս ընթացքին Կատիլինան ձևավորեց մերժվածների և դժգոհների իր հանրախումբը (societas) և, ինչպես նշեցինք, փորձեց դրան տալ հաստատության կառույց: Նպատակն էր Հռոմը կանգնեցնել հակա–Հռոմի դիմաց: Այս կերպ, հիշեցնենք, գործել էին տակավին իտալիկները *Դաշնակցային պատերազմի* ընթացքին՝ Ք. ա. 91–87 թվականներին, և հասել հաջողության՝ ստանալով հռոմեական քաղաքացիություն և հավասարեցնելով իրենց քաղաքական իրավունքները հռոմեացիների հետ: Արդեն վերջին ընտրություններից հետո, ըստ Սալլուստիուսի, Կատիլինան սկսեց հակվել հարցի լուծման այս ուղուն: Եվ սկսեց ուժեր ձևավորել ինչպես Հռոմում, այնպես էլ Իտալիայի տարբեր հատվածներում:

Բախումն իր բարձրակետին սկսեց մոտենալ Ք. ա. 63-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, երբ հերթական անգամ Կատիլինան տանուլ տվեց ընտրությունները: Պաշտոնական Հռոմի գործողությունները համակարգում էին Կիկերոնը և Ծերակույտը: Սալլուստիուսի ներկայացմամբ՝ կոնսուլը (սկանավոր մտածողն ու ճարտասանը) համարյա համր է, միայն գործում է: Ուղիղ դեմքով չի բացահայտում իր գործելակերպի շարժառիթները. *ուսյալ ընթերցողը* դրանք պետք է փնտրի նրա ճառերի մեջ: Միայն դրանից հետո վերադառնալով «Կատիլինայի» տեքստին՝ կարողանա լսելի դարձնել կոնսուլի ձայնը և գնահատել նրա ազդեցությունը դեպքերի ու գրույթի վրա:

Իսկ մինչ այդ առաջին պլանին է Ծերակույտը: Ծիշտ



է, արդեն վաղուց միասնական չէ. *ազդեցիկ քշերը* (pauci) մնացյալներին պահում են իրենց քաղաքական, տնտեսական, քարոզչական ազդեցության ներքո: Սակայն Կատիլինայի դեմ միավորվում է, զի խնդիրն իրենց հանուր տիրապետության մասին է: Եվ Ծերակույտը համախումբ ընդունում է ծայրահեղ իրավիճակներին հարիր որոշում. «Թող ջանան կոնսուլները, որ Հանրապետությունը կորուստ չկրի: Համաձայն հռոմեական սովորույթի և Ծերակույտի որոշմամբ՝ այսու [գերագույն] պաշտոնյային տրվում էր արտակարգ իրավունք զորք համագրելու, պատերազմ վարելու, ամեն տեսակի հարկադրանք կիրառելու դաշնակիցների և քաղաքացիների նկատմամբ, ունենալու բարձրագույն ռազմավարչական ու դատական իրավունք տանը և ռազմի դաշտում» [Sall., Cat., XXIX, 2–3]: Այս նույն տրամաբանությամբ էլ Կատիլինան ճանաչվում է *հռոմեական ազգի թշնամի* (hostis populi Romani): Հայսմ ավարտվում է կողմերի *խաղաղ բախումի շրջափուլը*:

*Ավարտ–հանգուցալուծումի* շրջափուլն ընդգրկում է գրույթի XXXIII–LXIII ենթագլուխները: Խոսքային մենամարտերին զուգահեռ զորանում են իրական բախման նախապատրաստությունները: Այս նպատակով Կատիլինան իր ամենափորձառու կողմնակիցներին (Գայուս Մանլիուս, Գայուս Փլամինիուս) հղում էր Իտալիայի տարբեր շրջաններ՝ զինուժ համագրելու: Նույն բանը Քաղաքում անում է պրետոր Պուբլիուս Կորնելիուս Լենտուլուսի առաջնորդությամբ: Սակայն շուտով հեռանում է Հռոմից, և նրա քարոզչությունը քայլ արեց՝ շարժումը հռոմեական «փառավոր անցյալով» օրինականացնելու ուղղությամբ՝ պատկերելով այն իբրև ավանդական լքում–հեռացում:

Չայսու ժամանակավ պաշտոնական Հռոմը նույնպես սկսեց գործնական քայլեր ձեռնարկել: Բացի վերոհիշյալ երկու օրենքներից, Ծերակույտը Կիկերոնի առաջարկով բեկանեց Քաղաքի և Իտալիայի սպառնալուծականության սահմանադրական սկզբունքը: Իր

հերթին Իտալիայի տարբեր հատվածներ հղեց ռազմական գործի հմուտ գիտակաների՝ Գայուս Անտոնիուսին, Կվ. Մարկիուս Ռեկսին, Կվ. Մետելլուս Կելերին և այլոց՝ զորք համագրելու և մարտական գործողություններ ձեռնարկելու լիազորությամբ: Վերջիններս իրենց կողմը գրավեցին անգամ ստրուկ-գլադիատորներին:

Երկու կողմերն էլ սպասում էին, թե ինչպիսին կլինի պայքարի ելքը Հռոմում: Կատիլինականների հեղաշրջման փորձը տապալվեց, իսկ ղեկավարները ձերբակալվեցին: Քաղաքի անկայուն ամբոխը, «[...] որը, նախկինում հեղաշրջման կրքին տրված, տռփում էր դավադիր պատերազմի [գաղափարով], փոխեց իր միտքը և որոշեց նզովել Կատիլինային, իսկ Կիկերոնին՝ երկինք հանել» [Sall., Cat., XLVIII, 1]: Մինչդեռ Կատիլինան մտածում էր, որ հիմնական մեղավորը Լենտուլուսն է. ինքնուրույն խաղ էր սկսել, քանզի համարում էր, որ «Հռոմում իշխանությունը պետք է պատկանի Կորնելիուսների տոհմին, որ Կիննան և Սուլլան արդեն ունեցել են դա, իսկ ինքը երրորդն է, ում Բախտը նախատեսել է Քաղաքը տիրելու» [Sall., Cat., XLVII, 2]:

Ծերակույտում ծայր առան բանավեճեր՝ ի խնդիր դավադրության ղեկավարների ճակատագրի: Ձևակերպվեց երկու ներհակ մոտեցում. մեկը ներկայացնում էր Կեսարը, մյուսը՝ Կատոն Կրտսերը: Հաջորդիվ հանգամանալից կանդրադառնանք նրանց ըմբռնումներին, իսկ արդ՝ միայն նշենք, որ հաղթեց Կատոնի տեսակետը, և դավադիրները պրետոր Լենտուլուսի գլխավորությամբ մահվան դատապարտվեցին:

Կատոնի ճառի հպանցիկ դիտարկումն իսկ բացահայտում է մի պարադոքսալ փաստ. նրա և Կատիլինայի մոտեցումները ճգնաժամի վերաբերյալ ընդհանուր գծերով համընկնում են: Երկուսն էլ գտնում են, որ այն համակարգային է, և նրա ծիրում ընդգրկված են հռոմեական բոլոր հանրախմբերը՝ առանց բացառության: Երկուսն էլ համարում են, որ անհրաժեշտ է հանրույթի համակարգային բարենորոգում և ընկերային

նոր համերաշխության ձևավորում: Այլոքեն՝ բախումի երկու բևեռների հակադրությունը, ինչքան էլ տարօրինակ հնչի, խորքային իմաստով հարաբերական է:

Հենց այս տարօրինակ դիտարկումն էլ ճանապարհ է հարթում «Կատիլիինայի» պատումի վերջին դրվագի համարժեք հասկացումի համար: Հայտնի է՝ հետապնդյալ պաշտոնական իշխանություններին հավատարիմ երկու բանակներից՝ Կատիլիինան որոշեց տալ վճռական ճակատամարտ Էտրուրիայում, Պիստորիայի մոտակայքում՝ սեղմված Ապենինների բազուկների արանքում: Դիմեց իր զինվորներին. «[...] հորդորում եմ ձեզ՝ լինել հոգով գորեղ ու վճռական, և երբ մարտի մոտեք, հիշեցեք, որ ձեր ափի մեջ է ձեր հարստությունը, պատիվը, փառքը, նաև՝ ազատությունն ու հայրենիքը»: Ապա հիշեցրեց նաև. «[...] մեզ և նրանց միևնույն մղումը չի առաջնորդում. մենք կռվում ենք հանուն հայրենիքի, ազատության ու կյանքի, նրանց [մղումն] անիմաստ է՝ կռվել մի խումբ անձանց իշխանության համար» [Sall., Cat., LXVIII, 8; 11]: Մինչդեռ պաշտոնական գորքի հրամանատար Մարկուս Պետրեոսը պաթետիկ խոսք չունի. զինվորները նրան լիովին վստահում են, զի փորձառու և անբասիր սպա է և անձամբ գիտի նրանցից շատերին:

Սկսվեց մարտը: Կողմերը կռվում էին խիզախությամբ. ոչ ոք չէր զիջում և խնայում իր անձը: Իսկ Կատիլիինան էլ ասես ամենուրեք էր. միաժամանակ թե՛ խիզախ զինվոր էր, թե՛ հմուտ հրամանատար: Շուտով, սակայն, զգացվեց, որ ուժերն անհավասար են: Կատիլիինայի զինվորներն աշխատում էին բացը լրացնել քաջությամբ. «Երբ ճակատամարտն ավարտվեց, այդժամ միայն պարզ դարձավ, թե որքան քաջություն և որքան հոգու արություն ունեն Կատիլիինայի զորքը: Չի այն տեղը, որը յուրաքանչյուրը զբաղեցնում էր կռվելիս, այժմ՝ հոգու հեռանալուց հետո, զբաղեցնում էր մարմինը» [Sall., Cat., LXI, 1–2]: Պարզվեց նաև, «[...] որ մարդկային այս զանգվածից ոչ ոք (զի ազատ քաղաքացի էին) մարտադաշտում

կամ նահանջի պահին գերի չի ընկել: Բոլորը հավասար էին գնահատում ինչպես իրենց, այնպես էլ հակառակորդի կյանքը»: Հայտնաբերվեց և Կատիլինայի դին. «[...] դեմքին նույն վայրի հանդգնությունն էր, որն ուներ, երբ կենդանի էր» [Sall., Cat., LXI, 5–6]:

Եվ ճակատամարտից հետո, կրկնենք մեկ անգամ էլ, երբ հաղթողները նայում էին ընկածներին. «[...] շուռ տալով հակառակորդի դիակը՝ գտնում էին մերթ քարեկամի, մերթ հյուրընկալի, մերթ ծանոթի: Երբեմն էլ ճանաչում էին թշնամու» [Sall., Cat., LXI, 7]: Այլոքեն՝ մահը խաղաղություն և համերաշխություն հաստատեց մեռածների և կենդանիների միջև: Մա է «Կատիլինայի» խաղընթացի բարձրաճ հանգուցալուծումը (κάταρασις): Հավանական է նաև մեկ այլ (ավելի առարկայական) հանգուցալուծում. Սալլուստիոսն էական տարբերություն է գծում Կատիլինայի և Սուլլայի գորքերի միջև: Այո, Կատիլինան մասնակցել է վերջինիս բռնատիրությանը, սակայն Պիստորիայի մատույցներում կանգնած նրա գորքը ոչ մարդադավել է, ոչ թալանել մասնավոր ու հասարակական վայրերը, ոչ էլ պղծել սրբատեղիները [հմմտ. Sall., Gat., XI, 4–7]: Ավելին՝ իր կազմակերպվածությամբ, մարտարվեստով և բարոյականությամբ այն ձգտում է նմանվել լեգիոնին: Ասվածին հետևում է հեղինակի ավարտական խոհ-դիտարկումն առ այն, որ պաշտոնական Հռոմի բանակը հաղթանակից հետո լցված էր «[...] տարասեռ զգացումներով՝ ուրախություն ու տրտմություն, սուգ և խինդ» [Sall., Cat., LXI, 7]:

Նման կերպափոխությունը ներհատուկ էր ոչ միայն Կատիլինային, այլև Հանրապետության վերջին սերնդի համարյա բոլոր ներկայացուցիչներին: Այլոքեն՝ նա արդեն արքեսիպ էր ինչպես պատմության ողբերգության, այնպես էլ զավեշտախաղի համար:

**բ. Խաղընթացի դիմակները:** «Կատիլինայի» գրույթում գործող անձինք բազում են՝ ամենատարբեր ընկերային հարթակների ու բարոյական արժեքների անձինք,

որը այսպես թե այնպես ներագրում են իրավիճակների վրա: Սակայն նրանցից քչերն են մարմնավորում ճգնաժամի իմաստային հանգույցները և հայտանշում դրա պատճառներն ու հաղթահարման տարբերակները:

Այս դիտանկյունից, կարծում ենք, առաջին հերթին առանձնացնելի են հետևյալ գործող անձինք՝ Կատիլինան, Կիկերոնը, Կեսարը և Կատոն Կրտսերը: Տարբեր ներուճակությամբ (իրենց հեռակա–ներկայությամբ) իրադարձությունների ընթացքին ներագրում են նաև Կատոն Ավագը, Գրաքունները և հատկապես Մուլլան: Մալլուստիոսի թատերայնացված գրությունը նրանք ներկայացնում են դիմակների յուրահատուկ մի խաղ: Կան նաև հավաքական դիմակներ՝ Կատիլինային հարող զանգվածը, հռոմեական ամբոխը, Ծերակույտը, որոնց մասին առիթ ունեցանք խոսելու:

*Կիկերոնի դիմակը (106–43 թթ.)* «Կատիլինայի» գրությունը, բացի համրությունից, նաև համարյա անշարժ է: Հռոմում «նոր մարդ» է և չէր հասնի իշխանական բարձունքների, եթե չլիներ ծայրահեղ իրավիճակը: Համոզված է, որ Կատիլինան պետական դավաճան է, իսկ նրա շարժումը՝ դավադրություն՝ ամբոխի եսակենտրոն նկրտումներին հազուրդ տալու աղագավ: Ուստի արժանի է մահապատժի: Միաժամանակ, սակայն, գիտակցում է, որ ամբոխի մեծամասնությունը հռոմեական քաղաքացիներ են, և նրանց նկատմամբ ծայրահեղ պատիժն առանց Աշխարհաժողովի որոշման «[...] բեռ է լինելու իր, իսկ անպատիժ թողնելը՝ պետության համար» [Sall., Cat., XLVI, 2]: Այլորեն անգամ աներեր կոնսուլի հոգում առկա է անորոշության կայծը: Ասվածին հավելենք, որ Կիկերոնը մտածում էր, թե համակարգային ճգնաժամը կարելի է հաղթահարել հարդյունս Ծերակույտի և զորեղ անհատականության համագործակցության: Թեպետ Մալլուստիոսն այս մասին անմիջականորեն չի վկայում, բայց քաջ հայտնի է, որ խոսքը Գն. Պոմպեոսի մասին է:

*Կեսարի դիմակը (100–44 թթ.)* բացահայտվում է Ծե-

րակույտում արտասանած իր ճառում [Sall., Cat., LI, 1–43]: Կասկածներ կային, թե կապի մեջ էր կատիլի- նյան շարժման հետ և հաջողության պարագային դեմ չէր օգտվելու դրա ձեռքբերումներից: Հին պատրիկական ընտանիքի շառավիղ էր, ուներ հատկանիշներ (գեխու- թյուն, իշխանատենչություն), որք ստոիկյան բարոյա- գիտության դիտանկյունից բացասական երանգ ունե- ին: Ընդունում էր կատիլիանյան ղեկավարների մահացու հանցանքը, սակայն համոզված էր, որ նրանց նկատմամբ հարկ է ցուցաբերել մեծահոգություն (clementia): Նրա խոսքով՝ այս հատկանիշը հատուկ էր հռոմեացիներին հնուց անտի և նրանց ուժի դրսևորումն էր: Նման կերպ նրանք նախ և առաջ վերաբերում էին իրենց հա- մաքաղաքացիներին՝ ազատելով մարմնական պատժից և իրավելով (հանցանքի պարագային) ինքնակամ հեռա- նալ արքոր: Ուժով էլ հռոմեացիները ստեղծել էին իրենց տերությունը՝ ամենուր պարտվածների նկատմամբ ցու- ցանելով մեծահոգություն: Չկա անդրժիրիմյան աստ- վածային դատ. ամեն բան որոշվում է այս կյանքում: Եվ դրանում աներկբա է գորեղ անհատի դերակատարու- թյունը: Անտարակույս, նկատի ունի նախ և առաջ իրեն:

*Կատոն Կրոսերի դիմակը (95–46 թթ.)* նույնպես բա- ցահայտվում է Ծերակույտում արտասանած իր ճառում [Sall., Cat., LII, 1–36]: Հին պլեբեյական ընտանիքի շա- ռավիղ էր՝ Կատոն Ավագի ծոռը: Սակայն իմաստային կապն ավելի անմիջական էր, զի վերջինիս նման շիտակ, անաչառ և անկաշառ էր: Ձաղկում էր բոլոր խոտորյալ- ներին, առաջնորդվում *բարի ու հին Հանրապետության* տեսլականով: Կասկած իսկ չուներ, որ Կատիլինան և իր կողմնակիցները հանցագործ են: Սակայն գտնում էր, որ դավադրության պատճառները խորն են ու հա- մակարգային, զի դրա ծիրում ընդգրկված են հռոմեա- կան հանրույթի բոլոր դասերը՝ ձերակուտականներից մինչև տնանկ հասարակներն ու ստրուկները: Համա- ձայն նրա՝ իրենց պետությունն ու տերությունը հռոմեա- ցիներն ստեղծել են բարոյական բարձր հատկանիշնե-

րով և նոր միայն ուժով: Եվ առկա ճգնաժամն էլ նախ և առաջ բարոյական անկումի հետևանք է, զի ընդհատվել է հռոմեացիների անդրական կապը Հանուրի հետ: Հավատում էր անդրշիրիմյան կյանքին և աստվածային դատին: Հավատում էր նաև, որ (մաքրագործված) Ծերակույտի խնդիրը պետք է լինի վերականգնել ընդհատված կապը Բախտի և Արդարության հետ՝ արմատախիլ անելով չարիքն ի դեմս Կատիլինայի և իր կողմնակիցների:

*Կատիլինայի դիմակը (108–62 թթ.)*. համաձայն Մալուստիուսի՝ ճկուն է և շարժուն: Հեղինակը չի էլ փորձում լռեցնել նրա բնավորության տարասեռությունները, զի հավատացած է, որ պատճառը բանական ձիրքի տկարությունն է: Ձիրք, որ ունակ է միավորելու մարդ էակի (ու հանրության) այլազան բաղադրիչները և առաջնորդելու առ Բարիքը: Ուստի Կատիլինայի կերպարը հատվածական է. մի կողմից՝ կապված է Մուլլայի բռնատիրության հետ (անցյալականություն), մյուս կողմից՝ ականջալուր է հանրային պահանջին՝ Հռոմը դուրս բերելու համակարգային ճգնաժամից (ներկայականություն), երրորդ կողմից՝ ցանկանում է ձևավորել հանրային համերաշխության նոր հարացույց (ապագայականություն): Համոզված է, երբ ճառով դիմում է կողմնակիցներին՝ ներկայացնելով ահագնացող ճգնաժամը, երբ փորձում է իր շարժումը պատկերել ավանդական լքում–հեռացումի (secessio) տեսքով, երբ մարտի դաշտում զինվորներին առաջնորդում է ի մահ: Մինչդեռ հակառակորդը (Կիկերոն) միավորում է նրա այս և այլ կետագծերը եսակենտրոն մղումների շուրջ և ստանում անկայուն ու հակասական մի կերպար՝ պատրաստ հրո ճարակ դարձնելու Հռոմը հանուն իր և շրջապատի օգուտի: Հավելենք՝ Մալուստիուսը մինչև վերջ չի վստահում կիկերոնյան վարկածին: Հավատացած է՝ խնդիրն ավելի բարդ է և կարիք ունի վերիմաստավորման:

*Հեղինակի դիմակը (86–35 թթ.)* նույնպես միանշանակ ու միագիծ չէ: Առաջին հայացքից նա հակասում է ինքն իրեն. «Կատիլինայի» սկզբում ծայրաստիճան

հակակատիլինական է և համամիտ Կիկերոնի գնահատականներին: Սակայն հրնթացս պատումի վերաբերմունքը զգալիորեն փոխվում է ցուցանելով այլ (ըմբռնումի) երանգներ: Եվ դա հասնում է զագաթնակետին վերջին դրվագում, երբ հավասարեցվում են բախումի ծիրում ներքաշված բոլոր մասնակիցները: Հետագոտողներն այս կերպափոխությունը սովորաբար անտեսում են: Մինչդեռ այն ունի խորքային բացատրություն, և այս առնչությամբ, կարծում ենք, հարկ է վերադառնալ Սալլուստիոսի մեկնագաղափարին՝ մարդակենտրոնությանը, որը, ինչպես հատկանշել ենք, միավորում է գոյակարգի բոլոր հարթակները: Արդ, հեղինակն այն տարածում է նաև իր գրույթի նկատմամբ՝ հիմք ընդունելով սեփական փորձառությունը: Հիշենք՝ ունեցել էր առողջ բանական ձիրք, սակայն պատանեկությունից տրվել էր մարմնական գայթակղություններին և իշխանատենչությանը: Եվ միայն հասուն տարիքում էր ուժ գտել հրաժարվելու դրանցից և վերադառնալու Բանականին: Գտնում է, որ իր գրույթը հենց այս վերադարձի արգասիքն է, զի կրկնում է իր կյանքի ընթացքը՝ դեպքերի առտնին–քարոզչական նկարագրությունից դեպի խորքային ըմբռնում: Այս ճանապարհին նա կարևորում է իրադարձությունների վերաբերյալ տարակարծությունների ներկայացման անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է իրեն, ապա հաճախ բավարարվում է *չեզոք դիտորդի* կարգավիճակով՝ անուղղակի առաջնորդելով *ուսյալ ընթերցողին* դեպի եզրակացություններ, որք հազիվ նշմարելի են տեքստում. առ այն, որ համակարգային ճգնաժամը պահանջում է համակարգային լուծումներ, այն էլ՝ զորեղ անհատականության առաջնորդությամբ: Այս դերում Սալլուստիոսը տեսնում է իդեալական հերոսի՝ ունակ համադրելու Կատոն Կրտսերի և Հուլիոս Կեսարի լավագույն հատկագծերը [Sall., Cat., LIV, 1–6]:



## Համաբերում

Ընդլայն իմաստով Սալլուստիոսի գրույթն անհատականությունների մասին չէր, այլ համակեցական կյանքի և կառավարման համակարգի տիպաբանության: Այս ըմբռնումը, ի վերջո, կյանքի կոչվեց Կեսարի հոգեզավակ Գայուս Հուլիոս Կեսար Օկտավիանոսի (Ք.ա. 27 – Ք.հ. 14 թթ.) ջանքերով: Նա պատմությանը հայտնի է Օգոստոսու (Պայծառացեալ) կրոնաքարիզմատիկ պատվանվանումով, որը վերջ դրեց Հանրապետության հարյուրամյա ճգնաժամին՝ հաստատելով կայունություն և բարգավաճում: Այն հայտնի է իբրև *հռոմեական խաղաղություն* (Pax Romana):

Պաշտոնական քարոզչությունը վստահեցնում էր, թե վերականգնվում է բարի և հին Հանրապետությունը ընդ առաջնորդությամբ ականավոր առաջնորդի: Ավելին՝ դա հրամցվում էր իբրև համակեցական մի միջավայր, որ ներհատուկ էր Հռոմին իր պատմության արշալույսին, երբ նա տակավին ամփոփված էր յոթ բլուրների ծիրում: Այսինքն՝ կատարելով պատմական յոթհարյուրամյա շրջապտույտ և անցնելով բազում փորձությունների միջով՝ Հռոմը վերադառնում էր իր պատմական մեկնակետին: Այս գաղափարի հիմնավորմանն էին ուղղված Օգոստոսի դարաշրջանի ականավոր մտավորականների ստեղծագործ ջանքերը՝ Վերգիլիոս, Հորատոս, Տիտոս Լիվիոս:

Արդի ականավոր հռոմագետներից Թ. Մոմմզենը գտնում էր, որ Հռոմում տեղի է ունեցել աննախադեպ կերպափոխություն. ձևավորվել է համակեցական մի նոր հարացույց, որը հարկ է բանաձևել իբրև «հանրապետական միապետություն»: Գիտական գրականության մեջ այն շրջանառում է *պրինկիպատ* եզրույթով, այսինքն՝ առաջին քաղաքացու իշխանություն: Եվ հետագա պատմությունը հաստատեց, որ նման ըմբռնումը կարող է հավակնել ճշմարտության:

Միով բանիվ (հակառակ Սուլլայի և Կեսարի փորձերի)՝ ռազմական բռնատիրությունը Հռոմում չուներ ապագա: Նրան պատշանում էր հանրակարգերի մինոր համախմբում՝ ըստ վերջիններիս շահերի համակարգային կառավարման: Սա է այն ողբերգության հիպերտեքստային ավարտը, որը Սալլուստիուսի «Կատիլինայի» պատումային հենքն է:

**NARRATIVE FICTION IN EĻISHĒ  
VARDAPET:  
“About Vardan and the Armenian War”**

**Introduction**

EĻishĒ Vardapet, an outstanding historian, philosopher, rhetorician, and theologian of the Hellenizing School, exercised indisputable influence on the intellectual history of early medieval Armenia. His principal work has been commented on and interpreted by many modern scholars, including M Abeĵian, B. Kiwleserean, N. Akinean, E. Tĕr-Minasean, V. Nalbandyan, and K. Yuzbashyan. The text has usually been analyzed from the point of view of textual criticism, history, realpolitik, and (in some cases) biblical theology. Two scholars, S. Arevshatyan and R. W. Thomson show a clear desire for a holistic approach to combining the mentioned aspects and supplementing them with the essential data of antique philosophy and rhetoric. This approach will be advanced in this paper.<sup>61</sup>

---

<sup>61</sup> **Thomson**, 1982, 1-53. Although Arevshatyan has no specific study on EĻishĒ, his ideas about the main characteristics of the mentality of the époque are quite in this vein. **Аревшатян**, 1973, 43-48 **Аревшатян**, 1984, 19-32.

At the same time, we plan to proceed from the viewpoint of a reader versed in different areas of antique humanities. This involves the interpretation of the author's narrative through the prism of his ideas and reflections. In modern theory, this experience is usually defined as the *reverse perspective* of investigation.<sup>62</sup>

When discussing problems of the early medieval Armenian intellectual experience (and especially historiography), it is necessary to take into account not only the translations into Armenian of famous antique (classical and Hellenistic) and Christian authors but also the intellectual plasma of the époque – a system that included the basic data of grammar and rhetoric, history and geography, philosophy and theology.<sup>63</sup>

In this vein, it should be pertinent to notice that the translations were only a small part of the works that were in circulation in the intellectual centers of Armenia. Therefore, in order to determine the scope, content, and influence of this intellectual plasma, we must proceed from the original texts of Armenian authors in order to identify their explicit and implicit parallels, references, and allusions to antique and Christian intellectual traditions.

In other words, we propose to shift the focus of consideration and give preference to the hypertextual expansion of the narratives of Armenian authors. We take the traditionalist approach and accept that the representatives of the Hellenizing School actually went through the curricula of the famous centers of education in Alexandria, Athens, Antioch, and Constantinople and were sufficiently versed in the basic ideas and concepts of antique and Christian

---

<sup>62</sup> This method of investigation, the *reverse perspective*, was first conceived by P. Florensky in his art theory. Further, it has been adopted by many fields in the humanities. See **Florensky**, 2006, 213-219.

<sup>63</sup> We follow the concept of M. Bloch, who formulates intellectual plasma as historical time, comprising all its component phenomena in intelligible forms. **Bloch**, 1993, 84.

intellectuals. Of course, what has been said concerns also Elishē Vardapet.<sup>64</sup>

We are going to analyze Elishē's narrative about the great anti-Sasanian war of 450-451 as a global crisis rooted in the contradictory and corrupted nature of earthly human beings. In line with our main concern, we also chose the following basic issues for discussion: *a.* the isomorphism of human beings with the cosmos consisting of the body, soul, and reason, *b.* the four primary elements – the earth, water, air, and fire – together composing the equilibrium of human nature. *c.* the theatricality of human history developing through three basic phases – the beginning, middle, and end, *d.* the efforts of righteous men to overcome the global crisis and restore peace and harmony under God's leadership.

Applying the research method of *collage*, we bring together different accounts and passages of Elishē in order to *give him an opportunity* to communicate with his heroes and anti-heroes on the one hand, and with his Patron and himself on the other. Meanwhile, we will not touch on the problem of Elishē's (formal and semantic, narrative and typological) dialogues with the other Armenian historians of his time has been studied sufficiently in modern scholarship.<sup>65</sup> Instead, we will focus on the dialogues of Elishē with the antique and Christian intellectuals on the key issues of human beings, society, and the universe. In our

---

<sup>64</sup> Traditionally, Elishē is considered one of the younger disciples of St. Mashtots and Sahak Partev, who, like Moses Khorenatsi, completed his education in Alexandria while studying and interpreting the works of Classical and Hellenistic authors for comprehending the *deep essence* of Holy Scripture and the ideas of Christian intellectuals. Աբեղյան, 1944, 322–323.

<sup>65</sup> We refer primarily to Łazar Parpetsi, whose the “History” also covers the events of the great anti-Sasanian war of 450-451. On the parallels of the narratives of these authors, see in detail Ալիսեան, 1932, 17–30, 74–93; Thomson, 1982, 3-15; Юзбашян, 2001, 36-49.

case, this primarily concerns Aristotle, Dionysius Thrax, Aphthonius, Philo of Alexandria, Gregory of Nyssa, Porphyrius, and other authors well-known in early medieval Armenia. We hope to combine their voices for extending the boundaries of EĪshĒ's narrative.

## 1. The anthropomorphic constant of EĪshĒ's narrative

Three narrative layers are apparent in the main treatise of EĪshĒ: *a.* the description of historical events (pragmatic history), *b.* their combination and interpretation in accordance with antique poetry and rhetoric (tragic history), *c.* the comprehension of their essential background through philosophical and theological perceptions (metaphysic history).<sup>66</sup> Together they comprise a unity, which, according to the author, indicates an *intellectual movement* from the “visible to invisible” data of history [EĪshĒ, At the request, 9].<sup>67</sup>

Even a quick glance is sufficient for outlining the real background of this structure – it is based on the concept of the global isomorphism of human beings, society, and the cosmos. Undoubtedly, EĪshĒ keeps this in mind when he emphasizes: “And if this is the case for a single person, how much more so for a whole nation” [EĪshĒ, IV, 4]. Certainly, he primarily means *the true human being* thought of as a miniature of heaven (the cosmos): “[...] God, being minded to unite in intimate and loving fellowship the beginning and end of his created things, made the heaven the beginning and man the end, one the most perfect of imperishable objects of sense, the other the noblest of things earthborn and perishable, being in very truth a miniature

<sup>66</sup> Stepanyan, 2018, 176-197.

<sup>67</sup> In this process, Philo of Alexandria singles out the role of the *mental eye* capable of penetrating into the depths of bodies, since “It comprehends the nature of incorporeal beings” [Philo, De virt., 12].

heaven (βραχόν οὐρανῶν)” [Philo, Op., XXVII, 82; cf. Greg. Nyss., *Creatio hominins.* IV, 1].<sup>68</sup> Assuredly, Elishē considers just this type of man while stating: “Only man and angel have been left free in their own will, for they are rational” [Elishē, II, 179].<sup>69</sup>

The ground for this understanding is made of the belief that both man and the cosmos consist of the same primary elements – the body, soul, and reason.<sup>70</sup> Proceeding from this idea, Elishē states: “The soul is the life of the whole body, but the mind steers both body and mind” [Elishē, II, 11]. Antique and Early Christian intellectuals worked out the conception of the transition of these elements each into another. For a human, it was a series of self-denials (deaths) on the levels of passions, emotions, and everyday reason, “as life is limited by death and light by darkness” [cf. Gr. Nys., *Vita Mos.*, 5]. In this way, a human was thought of to proceed from his *nothingness* to reach the *divine-eternal Reason* [Phil, Op. XXIII, 69].

Elishē bears clear evidence on the last phase of this initiation while emphasizing: “[...] like high-soaring birds, we pass through all the harmful tempestuous atmosphere, and gradually absorbing the pure upper air, we receive knowledge for the salvation of our souls and glory of the

---

<sup>68</sup> Gregory of Nyssa most probably comes from Philo of Alexandria, who distinguished three types of men – the worthless (ὁ φαῦλος), the advanced (ὁ προκόπτος) and the perfect (ὁ τέλειος). See **Runia**, 1998, 62-64.

<sup>69</sup> The following fragment of Philo fully explains the meaning of this idea: “Others again have a partnership with virtue only, and have no part or lot in the vice. Such are the heavenly bodies; for these are said to be not only living creatures but living creatures endowed with mind, or rather each of them is a mind in itself (ὁ νοῦς αὐτός)” [Philo, Op., XXIV, 73]. This heavenly man plays an exceptional role in the moral theory of Philo, which in turn influenced the Christian mentality. See **Wedderburn**, 1973, 308-311.

<sup>70</sup> The concept was best formulated by Plato in his cosmology and anthropology. See **Zeller**, 1886, 145-153.

all-victorious church” [EĬishĕ, At the request, 17].<sup>71</sup> Supposedly, the well-known dictum of the author is about the same initiation: “death understood is immortality” [EĬishĕ, II, 2]. He completes this idea while depicting the image of true martyrs: “Their lives reckoned as death, and their death as life” [EĬishĕ, III, 121].<sup>72</sup> Certainly, for Christians, the greatest evidence of this initiation was the death and resurrection of Christ on the Cross. With Father and Holy Spirit, He composed the tripartite spiritual Heaven of eternal law and justice, beauty, and harmony.<sup>73</sup>

<sup>71</sup> The image of the sacred birds in spiritual training is well attested in the Classical and Hellenistic philosophical traditions beginning from Plato (Theaetetus., 197d-199d, 200b-c, etc). It reached its completion in Plotinus, who traced parallels between men and birds on the way to heaven: “They are like the heavier birds which have incorporated much from the earth and are so weighted down that they cannot fly high for all the wings [...]. Others do indeed lift themselves a little above the earth; the better in their soul urge them from the pleasant to the nobler, but they are not of power to see the highest and so, they fall back [...]. But there is a third order of those godlike men who, in their mightier power, in the keenness of their sight, have a clear vision of the splendor above and rise to it from among the cloud and fog of earth and hold firmly to that other world” (Plot., Enn., V, 9, 1,8). The image of a *heavenly bird* is active in the Vision of Gregory the Illuminator: “[...] a man tall and fearful who governed the front and the rear guards [...] flew swiftly in the likeness of a *fleet-winged eagle* (ըստ նմանութեան արագաթռելի արծուի)” [Agath., 735]. EĬishĕ’s source could also be Philo of Alexandria [cf. Vita Contempl., 90, 12].

<sup>72</sup> The meaning of this phrase seems to be in a keen relationship with the following maxim of Philo of Alexandria: “The death of worthy men (ἀστέιος) is the beginning of other life. For life is twofold; one is with a corruptible body; the other is without a body and incorruptible. So that the evil man dies by death even when he breathes before he is buried [...]. The decent and worthy man, however, does not die by death, but after living long, passes away to eternity, that is, he is borne to eternal life” [Philo, QS, I, 16]. The most precise formulation of the concept sounds as: “[...] some people are dead while living, and some alive while dead” [Philo, De fuga, X, 55].

<sup>73</sup> The hagiographic account of Moses Khorenatsi on Gregory the Illuminator – corporal birth and Christian education, consecration and



However, spiritual heaven was not available to everyone. It depended on man's character. The interpretation of this aspect of Elishē's anthropomorphism requires a new approach to the problem of the human being designed to clarify his *natural constitution*. This approach was rather popular in early medieval scholarship and went back to pre-Socratic philosophy, particularly to Empedocles. The principal idea of that was about the four primary elements – the earth, water, air, and fire – constituting every real thing, beginning from stars and planets to plants, animals, and men.<sup>74</sup> Regarding this isomorphism, Philo states: “[...] in accordance with a certain natural sympathy, the things of the earth depend on the things of heaven” [Philo, Op., XL, 117].

According to Elishē, “This world is material, and the elements are different and opposed to each other. The Creator of these opposites is one, and he brings them into harmony by persuasion. Just as he crushes and softens the heat of fire by the chill of the air, and the cold solidity of the air by the warmth of the fire – so too he grinds up the fine earth and kneads it with the moisture of water, while the natural tendency of water to flow downwards he solidifies and hardens by the binding effect of the earth” [Elishē, II, 167].<sup>75</sup> The reverse condition was considered the break

---

enlightenment mission, death, and reunion with God – is patterned in full accordance with this paradigm of initiation. See in detail **Stepanyan**, 2021, 238-248.

<sup>74</sup> The theory of Empedocles of the four primary elements in ontological and social, theological, and philosophical aspects influenced the Greek mentality. Particularly, the Stoics explained the unity of the universe as a result of the overall emanation flowing from the Logos to all forms of being. See **White**, 2003, 129-131; Cf. **Kirk, Raven, Schofield**, 1983, 283-321. In this case, also, the most probable source of Elishē is to be recognized as Philo of Alexandria. See particularly, *De incorrupt.*, XXI, 107; *Spec. leg.*, I, 40, 329. Philo calls this emanation the incorporeal powers of the Logos.

<sup>75</sup> This account is in full accordance with the following statement of Philo: “For land and water, air and fire, and all plants and animals which

of this symmetry and the turbulent separation of primary elements. It causes global chaos when one of the elements – usually water or fire – gains dominance over the others. The situation is best described by Moses Khorenatsi in his renowned the “Lament”: “What then does this demonstrate, save that God has abandoned [us] and that the elements have changed their nature? Spring has become dry, summer very rainy, autumn like winter, and winter has become very icy, tempestuous, and extended. [...] The earth is barren of fruit and living creatures do not increase, but there are earthquakes and shakings” [Khor., II, 68, 39-40].<sup>76</sup> Global chaos corrupts social relations as well. In particular, “The kings are cruel and evil rulers, imposing heavy and onerous burdens and giving intolerable commands. Governors do not correct disorders and are unmerciful. Friends are betrayed and enemies strengthened” [Khor., III, 68, 42].

Proceeding from the same comprehension, EĪshĕ compiles his narrative of destruction while focusing attention on societies and eminent historical actors. They have been divided into two opposite groups in accordance with black-and-white axiology.<sup>77</sup> The first group is comprised of the *pagan* Zoroastrians and Armenian apostates. Base passions are typical for them – lavishness and gluttony, cowardness and treachery, cruelty and vainglory. Under their impetus,

---

are in them, whether mortal or divine, yea and sky and circuits of sun and moon and revolutions and rhythmic movements of the other heavenly bodies, are like of some flock under the hand of God, its King, and Shepherd” [Philo, Agr., XII, 51].

<sup>76</sup> The text of Khorenatsi, is undoubtedly inspired by Philo [Op., 58]. See **Stepanyan**, 2009, 191-193.

<sup>77</sup> Continuing Philo, Gregory of Nyssa points out that this division is rooted in the free will and choice of people: “We are in some manner our parents, giving birth to ourselves by our free choice in accordance with whatever we wish to be [...], molding ourselves to the teaching of virtue or vice” [Greg. Nyssa, Vita Mos., II, 3]. Cf. **Carson**, 1981, 154-162.

representatives of this group are egocentric evil-doers. For Elishē, the first of them is the shahanshah Yazdegerd II (438-457). His nature is spoiled due to the breach of equilibrium of his composite primary elements.<sup>78</sup> Water and fire dominate in his person: “Then the king became more bitter than gall. He spewed forth the sea of the willful bile in his stomach; from his nose and mouth issued hot vapor like thick smoke from a heated furnace” [Elishē, II, 268]. As a result, he looks like a wild animal – sometimes a furious lion, sometimes a poisonous serpent.<sup>79</sup> Of the Armenian apostates, the Marzpan Vasak occupies the first place.<sup>80</sup> Contrary to the naturalism of the portrait of Yazdegerd II, Vasak’s portrait is compiled on moral anti-values: “Then he began to deceive some with money and others with blandishing words. By threatening all common people

---

<sup>78</sup> In the cosmic understanding, this breach caused global fire or flood. According to classical Greek assumptions, crises occurred periodically, at the end of every cosmic period (eon). Philo adopted this theory in order to explain the biblical Flood and the story of Noah and his descendants. However, he shadowed the philosophical context of that in order to emphasize God’s absolute will to cleanse mankind from corruption and cause a rebirth. This approach was typical of Christian perceptions. See in detail **Harill**, 2010, 15-123.

<sup>79</sup> This animalism is in contrast with Philo’s moralism. He characterizes this kind of man as the boastful, vainglorious, and asocial vagabond (ἀλάζων): “Slaves he treats like beasts, friends like slaves, relatives like strangers, friends like flutters, fellow-citizens like foreigners” [Philo, *De virt.*, 173-174]. In his definition, Gregory of Nyssa is more exact: “Being a man by nature and becoming a beast” [Greg. Nyssa, *Vita Mos.*, II, 70].

Meanwhile, Sasanian propaganda portrayed Yazdegerd II as a brave warrior and wise ruler benevolent towards all Zoroastrians. It was also believed that his glory came from the legendary Kayanid dynasty. **Dayraee**, 2009, 24.

<sup>80</sup> However, attempts were made to justify Vasak as a champion of the restoration of the Armenian kingdom through a flexible real policy. The most professional of them is that of N. G. Adonts. **Адонц**, 1904, 122-130.

with fearful words, he dishonored them. He continually increased allowances of the banqueting hall, he expended the music of jollity, stretching out the nights in drunken singing and lascivious dancing. He amused some with music and pagan songs, he heaped great praise on the king's religion. He had brought from the treasury a mass of wealth and secretly distributed bribes [...]" [EĪshĕ, III, 85-87].<sup>81</sup>

Discussing this matter, EĪshĕ focuses his attention on the social problems of the Armenians. It is quite probable that he again proceeds from the experience of Philo of Alexandria.

*It is well attested that the philosopher recognized the following forms of communal consolidation: ancestral, social, political and religious (Philo, Spec. leg., IV, 159).<sup>82</sup> They existed in parallel and one of them gained a prominent position under certain historical conditions.<sup>83</sup> At the same time, and this must be particularly emphasized, each righteous form had its corrupted anti-form.*

Corrupted societies are also represented in this vein. EĪshĕ is especially eloquent in describing the Armenian apostates' quasi-covenant. It was set up according to the Sasanian Shahanshah's plan to destroy the traditional social ties of the Armenians: "[...] he, therefore, began to give

---

<sup>81</sup> Such men, according to Philo "[...] are of mixed nature (τῆς μικτῆς φύσεως), a man who is liable to contraries, wisdom and folly, self-mastery and licentiousness, courage and cowardice, justice and injustice and (in a word) to things good and evil, fare and foul, to virtue and vice" [Philo, Op., XXIII, 69]. In adverse conditions, as happened in Armenia, the vice took the upper hand. Polyb developed it and applied it to the real events of global history.

<sup>82</sup> Certainly, in the forms of social consolidation, Philo utilizes the theory of Aristotle regarding the natural evolution of state forms [Aristot., Eth. Nic., 1160a 31-b22; Polit., 1279a 28-b5]. Polyb developed it and applied it to the real events of global history [Polyb., VI, 5 4 – 9,9]. See **Podes**, 1991, 578-585.

<sup>83</sup> Cf. **Zekiyan**, 1988, 385-386.

precedence to the junior over the senior, to the unworthy over the honorable, to the ignorant over the knowledgeable, to the coward over the brave. [...] All the unworthy he promoted and all the worthy demoted, until he had split father and son from each other” [Elishē, II, 25; IV, 21-23]. First of all, he tried to achieve this through material goods. He promised gold and silver, estates, and high administrative positions to his associates. Seduced by these bribes, the apostates forgot about high spiritual values and abandoned Christianity for Zoroastrianism. Due to that, “[...] he brought disturbance and confusion to Armenia, with the result that he split many of blood brothers each from other, did not leave father and son united, and brought tumult in the midst of peace” [Elishē, IV, 59].<sup>84</sup>

The opposite pole is represented by a series of positive historical actors – the Roman emperor Theodosius II, the sparapet Vardan Mamikonean, the acting catholicos Yovsep, and their entourage. They set up a true covenant, every member of which was an image of the almighty Lord for his absolute loyalty to Christian faith and values.

In this regard, it seems quite appropriate to consider the author’s narrative as a scene of collective initiation – through somatic death to spiritual resurrection. And this is equally true both for eminent nobles and commoners of the anti-Sasanian war. The priest Levond refers to exactly this kind of initiation when he asserts: “[...] after rising to such a height, let us not fall back to earth, but let us make a firm stand here on high. Although we may look down on the lower region of this earth, we see it filled with all kinds of corruption and foul impurities” [Elishē, V, 91].<sup>85</sup> In this

---

<sup>84</sup> Undoubtedly, in destruction texts, Elishē proceeds from biblical narrative patterns. The experience of Khorenatsi suggests that the most probable source could be the prophet Jeremiah. See in detail Մարգարյան, 2006, 127–139.

<sup>85</sup> Undoubtedly, Levond means the *practitioners* (ἄσκηταί), who, as was noticed above, were able to reach the heights of spiritual heaven,

view, he reminds the reader of the biblical patriarch Moses who became a mediator between heaven and earth (միջ-նորդ եղևւ երկնի եւ երկրի) [EĪshĕ, V, 67].<sup>86</sup>

The covenant of God (նախն Աստուծոյ) is of tripartite composition, including the three principal social classes – commoners, clergy, and rulers.<sup>87</sup> Prince Vardan is the leader of this indissoluble unity due to his absolutely relevant personal qualities. He believes: “[...] the foundations of our [Christianity] are set on unshakeable rock, not on earth, but above in heaven where no rains fall, no winds blow, and floods rise” [EĪshĕ, V, 30]. According to EĪshĕ Vardan is quite comparable with the eminent military leaders of the Maccabees – Joshua, Gideon, Jephthah, and the others: “On account of their unwavering righteous conduct – as they never hesitated in their intentions – the sun and the moon, which have no ears, heard and fulfilled their command” [EĪshĕ, V, 80].<sup>88</sup>

Along with these eminent generals, the sparapet was surrounded by a group of devoted clergymen who put forth great efforts toward consolidating the righteous members of Armenian society into God’s covenant comparable with the early Christian communities: “They urged the populace to assemble – the men and women, peasants and nobles, priests and monks. They exhorted and reinforced

---

but cannot gain a stable foothold there. The words of this hero are to be discussed in light of Plotinus’ fragment about spiritual birds.

<sup>86</sup> On this topic, Gregory of Nyssa gives an additional explanation: “The multitude was not capable of hearing the voice from above but relied on Moses to learn by himself the secrets and to teach whatever doctrine he might learn through instruction from above. This is true of the arrangement in the Church” [Gr. Nyssa, *Vita Mos.*, I, 160].

<sup>87</sup> It is important to note that this corresponds to Philo’s religious commonality (εις θεός), a biblical term that he has formulated in a specific sociological concept.

<sup>88</sup> The military experience and ideology of the Maccabees in the war against Seleucid domination were very popular in early medieval Armenian historiography. See in detail **Thomson**, 1975, 329-341.

them, and made them all soldiers of Christ” [Elishē, III, 34].<sup>89</sup> In other words, despite differences in their social ranks, they were absolutely equivalent and identical units within the covenant.<sup>90</sup>

According to the author, the completion of the covenant was reached when “Every man was a church for himself, was himself a priest. Each one’s body was a holy altar, and their souls an acceptable sacrifice” [Elishē, VI, 23]. Let us again pay attention to the fact that these men were on the way to leaving earthly passions and were ready to join divine reason and law, justice, and eternity. As noted above, they preferred death to corrupted and impure material life.

In this regard, the vision of the priest Levond appears to be a synopsis of the theme of the global isomorphism of human beings and his initiation for reaching immortal values. He sees his vision after the battle of Avarayr, during the dogmatic battles and torture of the Armenian clergy in the Persian jail: “A luminous staircase appeared to him, which led from earth to heaven. Numerous groups of soldiers were climbing up; and their appearance was extraordinary and handsome, awesome and wonderful, like the appearance of angels. [...] They came close so that he recognized three of them: Vardan, and Artak, and Khoren” [Elishē, VII, 74-76].<sup>91</sup>

---

<sup>89</sup> Here, it is quite relevant to remember Philo’s words about the covenant of the Hebrews. They are ascribed to the Arabs, who were very unfriendly to them: “You see how boundless is the number of the Hebrews. But a defense more troubling than their number is their *concord and unanimity* (ἡ ὁμόνοια καὶ συμφωνία) and the highest and greatest source of that concord is their belief that there is one God, and as from a spring, they have obtained a unifying and unbreakable friendship with one another” [Philo, *Virt.*, 35].

<sup>90</sup> Only at the beginning of the second century, under the spiritual authority of bishops and archbishops, did visible signs of hierarchy emerge in Christian communities. See **Humphries**, 2006, 36-38, 146-151.

<sup>91</sup> The *luminous staircase* was a *locus communis* of biblical theolo-

## 2. The tragic plot of EĻishĕ's narrative

For EĻishĕ, his mission of compiling the narrative of “Vardan and the Armenian War” is full of metaphysical meaning. He considers it “[...] as a token of the *heavenly love* (երկնաւոր սիրոյ նշանակ) and not of earthly vainglory” [EĻishĕ., At the request, 11]. This love is designed for departing from everyday passions and gaining immortal values.<sup>92</sup> The best personification of this idea is the spiritual bird mentioned above. In this connection, the *Geschichtsschreibung* also appears to be a process of initiation. Consequently, it needs to be arranged in the perspective of continuous development with a clear layout of its main phases and results. In turn, this statement touches on the theme of narrative fabula (ὁ μύθος).<sup>93</sup>

While revealing the principal characteristics of EĻishĕ's narrative, even a cursory analysis confirms the following ideas. *First*, it represents the genre of *point history* since covers a short period of the Armenian war against the Sasanian domination in 450-451. *Second*, it is designed

---

gy and was well-known in the Armenian spiritual experience primarily through the *Vision of Gregory the Illuminator*: “And in the likeness of minute specks of dust which in the sunny springtime play in their myriads in the rays passing through windows or sky-lights, so too these hosts filled everything below with their light, and as the light streamed forward so did the host with it” [Agath., 734]. See **La Porta**, 2014, 297-301.

